




842

L III 5







# ՄԱԿՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Բ

№ 7-8 1896

ՅՈՒԼԻՍ-ՕԴՈՍՈՍ

1896 № 7-8

ՈՒԹԵՐՈՐԴ ՏՎԱՐԻ


Երես

1 ԲԱԲԿԵՆՑ, Գ...	895	Նորեկ (վէպ. շարունակ.),
2 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ . . . . .	921	Մեղակ քեզ, Աստած ... (բանաստ.) .
3 ԱԴԵԼԵԱՆ, Ա. . . . .	923	Տգիտութեան գոհեր (վէպ, շարուն.),
4 ՇԱՆԹ . . . . .	950	Թաթիկներուդ մէջ (բանաստ.) .
5 " "	951	Լուռ. (բանաստ.) .
6 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ . . . . .	952	Ապահովագրութեան գործը:
7 ԲԻԼԵՐԱՊՈՆ/ց ՅԱԿՈԲԵԱՆ . . . . .	958	Կանաչ տիրեալվ... (բանաստ.) .
8 ՖՐԻԲԵՐԴ/ց ՎԱՆՑԵԱՆ . . . . .	960	Գիւղական համալսարաններ
9 ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՃԱԿ . . . . .	968	Մի թափեք, աչեր... (բանաստ.) .
10 " " . . . . .	970	Խելագարի օրագրից (բանաստ.) .
11 ԳՆՈՒՆԻ, ՅՈՎՀ. . . . .	972	Գոյութ. կոխը վէպի մէջ: Օժեղօ:
12 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա. . . . .	987	Կուսակց. կոխները Ֆրանսիակում:
13 ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀ. . . . .	1003	Հեօքալի/ի «Ճ» սերք բնակ. զիտ.»:
14 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ՄԱՐՏ. . . . .	1005	Շանթի «Գոյ» արցիները»
15 ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ . . . . .	1013	Բուրժեի «Une idylle tragique».
16 ԱՐՅՈՒԽԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ. . . . .	1018	Ժամանակ. Տեսութիւն.—Հակական լինգրի արզի զրութիւնը—Թշւա- ռութիւնը և նպաստների գործը— Դրան զործողութ. —Արտապատու- թիւններ.—Անգլիա. —Ռուսիա. Կ. Պալսից: Պատրիարքակ. փոփոխ.
17 ԽԱԶ-ԳԱՊԵԱՆ. . . . .	1026	0գոստոսի 14-ի մեծ խոռվաթիւն.
18 . . . . .	1033	Կրետէ:
19 Ա. Ա. . . . .	1044	Գաւառական նամակներ.
20 ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՄԱԴԱԹ . . . . .	1051	Հայ ուսանողութիւնը Սոսկալում:
21 ՍԱՐԴԱՐԵԱՆ, ԳԱՐ. ԲԺՇ. . . . .	1057	Նամակներ Անգլիակից ՎԼ.
22 ՓԱ.ՓԱ.ԶԵԱՆ, Վ. . . . .	1061	Արտասահմաննեան քրոնիկ.
23 " " . . . . .	1072	Զանազան լուրեր:
24 ԽՄՐ. . . . .	1082	

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ԱՕՏԻՆԵԱՆՑԻ

Տիոգրաֆիա Մ. Դ. Պոտինանց, Գօլ. պր., ձ. № 41.



# ՄԱԿՐԾ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԿԳՐԱԿԱՆ

ԱՄՍՈՎԻՔԻՐ

№ 7—8 1896

ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՒ

1896 № 7—8

ՈՒԹԵՐԴՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊՈՐՈՒ Մ. Դ. Ա-ՕՏԻՒՆԵԱՑԻ

Տիպոգրաֆիя Մ. Դ. Ռոտնանց, Գօլ. պր. և. № 41.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 3-го Августа 1896 г.

# Ն Ո Ր Ե Կ

Ա Հ Պ

Գ. ԲԱԲԻԿԵՆՅԱ

(Շաբուճակութիւն <sup>1)</sup>)

ԴԼ. Հ.

Տասեհինդ, տասնեւվեցերորդ գարերում, Հայաստանը, շնորհիւ  
երկար պատերազմների, զանազան փոքր գաղթումների, հայերի բա-  
րոյական և մտաւոր անկման, կրօնի միակողմանի ազգեցութեան և  
Շահ-Աբաս I ի ձեռքով կատարած մեծ զաղթականութեան՝ դատարկ-  
ւեց ժողովրդից։ Երբեմն հարուստ քաղաքներն ու դիւզերն աւերակ  
էին դառել և գագանների որջ։ Զրատար առուները, ուռոգութեան  
ջրամբարները փուլ էին եկել և ծածկւել հեղեղների բերած տիղմով։  
պողաւէտ-մշակած գաշտերը խոսպանացել էին—ծածկւել եղեղնով,  
չայերով, մացառուաներով և յարմար էին միայն թափառաշրջիկ ազ-  
գերի բնակութեանը՝ որպէս հարուստ արօտառեղի։ Ծնորհիւ երկրի  
դատարկանալուն և նրան իրենց շահերին նպատող ազգերով բնակեց-  
նելու ցանկութեան՝ պետութիւնների կողմից՝ ամայացած Հայստան  
սկսեցին տեղափոխւել հարաւից քրդական, հիւսիս և արևելքից՝ Կով-  
կասեան խառնիճաղանճ և թուրք-թաթարական ցեղեր, որոնք գրա-  
ւեցին մեր աշողաբեր գաշտերը՝ և ընդ միշտ տեղաւորւեցին այդ-

<sup>1)</sup> Տես «Մուլճ» 1896 թ. № 5, 6:

տեղ։ Այդ ցեղերը մինչև այժմս դեռ գոյութիւն ունին և նրանց ցեղապեսները Թուրքանիս նահանգի յայտնի թուրք բէկական աներն են կազմում։ Սարաջլու, Քէրիմբէկլու, Հաջիբէկլու, Մաղանլի, Այրումլի, Մելլի, Շահաբ, Կարաչուլու, Քէնդէրլու, Բայիաթ, Քհօլանի Շոլլի և այլն՝ այն ժամանակւայ քրդական ու թաթարական ցեղերն են, որոնք ժամանակով շնորհիւ մահմեդականութեան՝ ձուլւեցին և այժմ իրենց մուսուլմաններ են անւանում։ Գաղթականները սկզբներում չգիտեին հողագործութիւն և սպարապում էին միայն խաչնարածութիւնով և աւազակութիւնով, բայց անցած երեք տարիների շնորհիւն նոքա համեմատաբար մեծ քայլեր արեցին քաղաքակրթութեան ասպարիզում։ իրենց զրացի հացերից ու պարսիկներից նոքա սովորեցին հողագործութիւն, զրազիառութիւն, ստեղծեցին ժողովրդական էպոս, իսկ այժմս ստեղծում են և աղգային լեզու ու զրականութիւն։

Վինելով աւելի թարմ և առողջ քան հայերը, աւելի ազատ վաս հասկացւած կրօնքի բթացուցիչ ազդեցութիւնից, մասսմբ ինքնավար և ազատ, այս ցեղերը միշտ աւելի լաւ են կարողացել օգտել երկրում եղած փոփոխութիւններից և քաղաքական հանդամանքներից։ Այժմ նոքա բնական կերպով, թէպէտ քիչ զանդաղ, քաղաքակրթում են, հարստանում և թշնամական դիրք բռնած հայերի դէմ՝ սպառնում են խեղդել նրանց իրենց հայրենիքում։ Հայստան զաղթելով՝ այս արիւնարբու և աւազակարարոյ ցեղերը իրենց հետ բերեցին և իրենց միտումները, խորամանկութիւնը, ընկան սպարսիկների ազդեցութեան տակ, որոնցից սովորեցին խարեբայութիւն և կեղծաւորութիւն, խստամականութիւնից ընդունեցին անշարժութիւն, մոլեռանդութիւն և նսխապաշարում, որոնք ներկայումս, գժբաղդաբար, կարում են նրանց քաղաքակրթական լնթացքը և վայր դցում։

Ահա այս ցեղերից մէկն էր, ծագումով խառնուրդ քրդականի ու թաթարականի, անունով Կարաչուլու, որը բնակում էր Խնութդիւղին զրացի նախկին հայկական Կոր-Աւան դիւզում և որի ցեղապետների տունն էր ներկացիս Ճաթիխան ուշաղիներին ընտանիքը։ Այս դաւանի ամենայն մի բնակիչ լաել է և գիտէ, որ այդ Ընտանիքը վաղուց, շատ վաղուց ապրում է այս գաւառում և ամենա-

ուժեղ տունն է։ Այս տան ցեղապետը և հիմնադիրը Ղափլան Սուլթանը, ինչպէս պատմում են անգամ երեխաները իրենց հեքեաթներում, սարասփի է զցած եղել թէ այս, թէ մօտակայ զաւոների և անգամ Թուրքանիսի ամբողջ խանութեան վրայ։ Նա իր գիւղացիներով, որոնք կազմում էին նրա զօրքը, ձիաւորները, կտրում էր կարաւաններ, կողոպտում էր գիւղեր, նւաճում էր քաղաքներ, որոնցից և ստանում էր հարկ։ Նորա սերոնդից մէկը, Ֆաթիխանը, որի անունով կոչւում է այժմ այդ ցեղը, ռուսական նւաճման ժամանակ այս գաւառում էր, որտեղից փախաւ Պարսկաստան, յետոց վերագարձաւ, կորցրեց իր կալածքների մեծ մասը և վայր ընկաւ Թուրքանիսում եղող իրեն հաւասար խաների դիրքից։ Բայց այս անկումը միայն դրամսկան էր, բէկութեան տեսակէաից նա նոյն յարգանքն ունէր՝ ինչ միւսները, որովհետեւ բոլորն էլ գիտէին նրա Ղափլան Սուլթանից ծագում ունենալը։

Այժմ այս ընտանիքը բաղկացած է մօտ յիսուն տանից, որոնք բոլորն էլ ապրում են Կոր.Աւան գիւղում։ Սոքա մեծ մասով պարապում են հողագործութիւնով, խաշնարածութիւնով և մասամբ էլ առեւտուրով։ Կոր.Աւանի բէկը, Ֆաթիխան ուշաղին, ամեն տեղ յայտնի է իր բարձր հասակով, գեղեցիկ գէմքով ու կազմածքով և կեղծաւոր, քաղաքավարի վարմոնքով։ Նա լաւ ձիաւոր է, լաւ հրացան ձող, որսկան, և հարկաւոր եղած ժամանակ լաւ գող, աւագակի։ Ֆաթիխան ուշաղին սովոր չէ չարաչար աշխատութեան։ Նա իր կարող վատ հագնեւել և ապրել, իսկ երկու կին պահելը անհրաժեշտ է նրան։ շատ արու զաւակներ ունենալու համար և մանաւանդ, որ նա այս աշխարհումն բէկին վայել մի ցլազաթե տանի։ Չնայելով՝ որ Թշւառոց գաւառը Թուրքանիս նահանգի ամենաաղքատներից մէկն է, Ֆաթիխան ուշաղին կարողանում է համարեա իր բոլոր ցանկութիւններին բաւականութիւն տալ։ Նա ընտանիքում աւանդաբար ստացել է սովորութիւն, ուսել է ձևեր հեշտ հաց ճարելու և ուրիշի հաշուով ալրելու։ Հարեւանի ջուրը կորել, հողին զօրով տիրանաւ, անցնող ճանապարհորդին պլոկել, գողանաւ, յափշտակել—նրա գործն է։ Նա կ'անի ամեն բան, ինչ որ պառահի, միայն թէ միջից շատ կամ քի։ բաւականութիւն ստանայ։ Պարսկաստանցի թուրքին իրեն ծառայ է վարձում և երկու տարի

աշխատեցնելուց յետով՝ սպանում Պարսկաստանից կոնտրաբանդ բերում, թուղթ կեղծում, սուս վկաց լինում, կաշառակեր զատաւորին, փաստաբանին, բժշկին և գիւղացուն միջնորդ լինում. վերջապէս ամենայն կերպ հեշտ աշխատանքի ընդունակ է նաև բոլորիցն էլ օգտառում է:

Այս ցեղի ամենամեծ նեցուկը «թասիբն» է: Բաւական է մի մարդ մնասի, կամ անպատճի ֆաթիխան ու շաղներից մէկին, ամբողջ ցեղի անդամները թասիբը կը քաշեն: Եթէ մենք իրար չպաշտպանենք, մենք ապրել չենք կարող, ասում է ամեն մէկը նոցանից:

Այս տան թասիբը քաշում են և Թուրքանիսի բոլոր աղնւական թուրք տները, որոնց հետ նա կապւած է ազգականութեան կապերով, և Թշւառոցի ամբողջ թուրք ազգաբնակութիւնը, որը սովոր է այս ցեղի վրաց նայել իբրև գաւառիս մահմեդականութեան ներկայացուցչի վրաց:

Ֆաթիխան ուշաղին ունի և իր լաւ կողմերը ժողովրդի աշքում: Նա շատ հիւրասէր է և միշտ պատրաստ՝ աստիճանաւորին օգնի և անդամ ծառալի: Եթէ մէկը առանց նորան կամ նորա ցեղակցի համաձայնութեան գողութիւն է անում, ֆաթիխան ուշաղին իսկոյն իր ծանօթների և բարեկամների միջոցով գողացած ապրանքը գտնում, տիրոջն է վերադարձնում: Եթէ մէկի կայքը պարտքերի համար պէտք է ծախւի, բաւական է որ ֆաթիխան ուշաղին պահանջի, ոչ մի մարդ աճուրդի դուրս չի գնալ, և քաղաքացին կը զրկւի իր պահանջին բաւականութիւն ստանալուց: Եթէ երկու ընտանիքներ թշնամանում են, ամենալաւ հաշտեցնողը ֆաթիխան ուշաղին է: Նա օրերով կը թողնի իր տունը, կը գնայ ուրիշ գիւղ, որտեղ նորան լաւ կերակրում են, և այնտեղ երկու հակառակորդներին կը համոզի, կը խնդրի, կ'աղաչի, կը վախեցնի, վերջապէս կը սովիպի, որ հաշտեն: Ի հարկ է, մեղք ծախողը՝ մասները կը լիզի, նա ինքն էլ այստեղ մի օգուտ կ'ունենայ, բացի մի քանի օր բէկավարի կ'ապրի ուրիշի հաշւով:

Ֆաթիխան ուշաղիների ցեղասլեռը այժմ Փիր-Մուրադ-Սուլթանն է, մօտ 65 տարեկան մարդ: Նա ունի ֆաթիխան ուշաղիների բոլոր յատկութիւնները: Քանի քանի նահանդապետներ է ճանապարհ գցել: Քանի աստիճանաւորների, գատաւորների, քննիչների,

դատախազների՝ կաքաւով, նապաստակով ու զանազան որսերով լուսել, գրաւել, նրանցով օգտւել է և իր ուղեցածը արել: Քանի ուստական ընտանիքում ներկայացել է նա ինչպէս մի քաղաքավարի, բարի, սրամիտ և առատաձեռն ազնւական, որը թէպէտ՝ զժբաղդութիւնների և ուսում չունենալու պատճառով՝ առանձին դիրք չունի, բայց գարձեալ իր մէջ կրում է ազնիւ և կորովի սիրու Քանի մարդկանց նա աւազակութեան ձանապարհի վրայ է դրել, և երկար ժամանակ նրանց պահելով օգտւել Քանի մարդիկ է նա աղքատացրել, քանիսին սպանել տեղ. ի՞նչ կարող է Թշւառոցում լինել՝ առանց նրա համաձայնութեան: Ո՞վ կարող է տանուտէր կամ դիւզական զատաւոր ընտրւել, զանգաստ գնալ, աղջիկ փախցնել առանց նրա օգնութեան: Նա զաւառիս ամենափորձւած մարդն է: Կեանքի ամեն մի հարցում ու զէպքում՝ Թշւառոցի զաւառացին դիմում է նրա խորհրդին և օգնութեան:

Փիր-Մուրադ Սուլթանը և իր երկու եղբայրները ապրում են Պլխաւորապէս միրաւութիւնով: Թէսլէտ նոքա վերջին սահմանաչափական կոմիսիայի գալու ժամանակ՝ շնորհիւ մի հայ աստիճանաւորի և մի հայ փուտաբասնի՝ զատարանով զանձարանից տարան մի քանի խոշոր կտոր պետական հողերից՝ ինչպէս բացառիկ սեահականութիւն, սակայն այս հողերը գեւ մշակւած չեն, կարօտ են մեծաքանակ ծախսերի և դոցանով նոքա ներկայումն ապրել անկարող են: Միրաւութիւնն է այս երեք եղբայրների գլխաւոր ապրուսությ Թշւառոց զաւառում, որտեղ մօտ 30 գիւղ ապրում են մի փոքր գետի ջրով, որով միայն ջրում են իրենց բոլոր հանգերը և այգիները և որը գաւառին անգամ կիսով չափ բաւականութիւն չի տալիս, միրաւութիւնը ունի շատ մեծ նշանակութիւն: Միրաւը բաժանում և ծախսում է ջուրը, մէկից խլում՝ միւսին է տալիս, մի գիւղից վերցնում, միւսին է յատկացնում և իր այս փափուկ պաշտոնավարութեան ժամանակ՝ հարկաւ, իր սեփական շահերն էլ անուշաղիր չի թողնում: Նա ունի իրեն յատկացրած մշտական մի ձեռք ջուր <sup>1)</sup>, որը նա ծախսում է ում կը կամենայ՝ իր օգտին: Բացի

<sup>1)</sup> Ծանօթութիւն: Շնորհիւ 1893 թ. կանոնադրութեան՝ միրաւի իրաւունքները սահմանափակւել են:

սրանից՝ միրաւութիւնը պահում՝ է նրա ազգեցութիւնը, դիրքը ժողովրդի մէջ, որը, ինչպէս Պարսիկները ասում են, աւելի սիրում է ձնշւել։ Ամեն մի գիւղում Փիր-Մուրադ-Սուլթանը ունի իր տները, մարդիկ, որոնց նա ջուր է տալիս, օգնում, բարձրացնում է ժողովրդի առաջ, որոնք նրան քւէ են տալիս միրաւ ընտրելու ժամանակի։ Նա այս ընտանիքների հետ կապւած է շատ սերա կապերով, որոնց կորելը անկարելի է։ Բայց միրաւութիւնից Փիր-Մուրադ Սուլթանը մշտական միայն ինքը չէր օգտառմ։ Նա իր երկու եղբօր հետ, երբ մի անգամ նոյն մէջ հակառակութիւն ծագեց և ամեն մէկն ուզում էր ինքն լինի միրաւ, դաշինք կապեցին, որ ամեն մի տարի մէկը լինի։ Այս տարի Փիր-Մուրադ Սուլթանի հերթն էր, որ պէտք է ընտրւէր։

## ԴԼ. ԹՌ.

Հատ լիցքի ժամանակն էր։ Այն ժամանակը, երբ ցորենը իր հատը լրցնում է հիւթով և պէտք է վերջին անգամ ջրել արար՝ ջրի կաթիլը արեան կաթիլ է զառնում։ Առաւտօնեան մօտ ժամի տասն էր։ Նրել մաքուր, սպիտակ փայլում էր երկնքի վրայ։ Համարեա բոլոր գաշտերը ծածկւած էին կէս կանաչ և կէս կարմրած հասկերով։ Դաշտում բուրում էր մի առանձին անուշահոտութիւն, որը, ինչպէս շինականները ասում են, մարդու հոգին էր փառաւորում։ Զրկալի ծտերը ուրախ-ուրախ ճթճթեցնելով բարձրանում են վերև օդի մէջ խաղում ու իջնում։ Օդը մաքուր էր և բաւականին զով, որովհետև գեռ արել չէր տաքացրել։ Դաշտում ամենուրեք փռւած էին բանւորներ, զրկալներ և վեցքաւորներ։ Իսկ շատերը եկել էին միայն արտերը նայելու և նրանցով ուրախանալու։ Կարաւան տանող ճանապարհով, ձին հեծած, կամաց-կամաց գնում էր Աւետիսը։ Նա մի ինչ որ մոտածողութեան մէջ խորասուզւել էր և չէր նկատում ոչ գեղեցիկ դաշտերը, ոչ էլ ճանարհով անցուդարձ անողներին։ Ե, ինչ դրութեան մէջ է նա լնկել։ Առաջ միշտ կարող էր առանց նրա նախագծի առաջարկել հասարակութեան վճռել հարց, կամ առանց նրա օգնութեան մտածել քւէ ստանալ։ Ո՞վ է տիրացու-Վարդանը, Աւանը, որ ժողովուրդը նրանց ընտրեց։ Ե, ժողովուրդ, ժողովուրդ, դու ինչքան անհաւատարիմ

ես! Միթէ քեզ վրայ կարելի է յուսալ, քեզ հաւատ ընծայել: Ալէքսանդրը եկաւ թէ չէ, Աւետիսի ճրագլ մարաւ, մէջ եկաւ Շէղ-Մէլիքը: Է, հեն եղբայր, այդ բոլորը, ինչ անցեալ օրը պատահեց, քո պատրաստութիւններն էին: Ոչ թէ չընտրեցին ինձ, այլ պահանջեցին, որ քւէի էլ շգնեն: Դարեշը ջանը աշխմ քոնն է, Շէղ-Մէլիք! Իսկ դուք, յիմար, ոչխար գիւղացիներ, սպասեցէք: Աւետիսի էլի մի օր կ'ուժեղանայ:

Նա գնում է Փիր-Մուրադ Սուլթանի մօտ: Սուլթանը ամեն տարի այս ժամանակ կանչում է նրան, թէկուզ ինքն էլ միրաւ շլենի, և տալիս է նրա արտերին ինչքան ջուր հարկաւոր է: Երեք եղբայրներ պայմանաւորւել են, որ իրար մարդկանց էլ պահեն: Երէկ ջւարը եկաւ և նրան յացանեց, որ Սուլթանը կանչում է: Բայց Աւետիսը աշխմ գնում է Սուլթանի մօտ ոչ թէ ջուր ստանալու, այլ մի ուրիշ, աւելի նշանաւոր, աւելի մեծ նալատակով: Նրան հարկաւոր է Սուլթանի խորհուրդը, Սուլթանի օգնութիւնը, թէ ոչ նա կորած է:

Փիր-Մուրադ Սուլթանը բնակում է Երեք փոքր սենեակներից բաղկացած մի տան մէջ, որից ոչ հեռու ու միենոյն բակում շինւած են նրա տաւարի, ոչխարի, ձիերի գոմերը: Երեկլի են նրա լայն բակի և նրան կից այգու պարիսպները: Մօտ չորս սաժէն բարձրութեամբ և մի սաժէն հաստութեամբ նոքա մի ամրութիւն են կազմում թշնամու արշաւանքներից: Հեքիաթներում ասում են, որ սոքա մի հայի ասպետի պարիսպներն էին, որոնց տիրացաւ Լափլան Սուլթանը, և իբր թէ այս բակում կայ մի ծակ, որը ստորերկեաց ճանապարհով դուրս է դալիս մօտակայ ձորը և որի միջով Սուլթանենք առնում են այս տներում սպանւած մարդկերանց դիակները՝ դէն զցում: Խակ Ֆաթի խան ուշաղիները հաւատացած են, որ սա Ասլան Սուլթանի որդին է կառուցել թշնամիների առաջն առնելու համար:

Երբ Աւետիսը բակի դռնից ներս մտաւ, Սուլթանը ձիերի գոմի մօտ կանգնած էր:

Փիր-Մուրադ-Սուլթանը մի վայելչակազմ և բարձրահասակ տղամարդ էր: Լայն թիկունքը, բարակ մէջքը, երկար թևերն ու ոտքերը, դիւրաթեք իրանն ու աղատ շարժւածքը բաւականին գեքերը:

զեցկութիւն էին տալիս նրան։ Նրա դէմքը մի ինչ որ խառնուրդ էր քրդի և թաթարի տիպերի և, շնորհիւ ոչ ուղիղ գծադրութեան, համարեա տգեղ էր։ Նրա դար ճակատն ու վերև բարձրացած կոպալ քիթը մի կերպ զրկում էին ուշագրութիւնից նրա մեծ ու խելօք սև աչքերը, որոնք հանդարտ նայում էին ճակատի տակից։ Շատ քիչ էր պատահում, որ այս աչքերի մեջ երեար կայծ, և այդ ժամանակ Սուլթանին նայողը, չգիտէք ինչ պատճառով, սկըսում էր նրան համեմատել գայլի հետ Միրուքը նա խուզում էր և հինա դնում, իսկ բեխերի հետ թողել էր և փոքրիկ բեխառակեր, որոնք համարեա չէր ոլորում։ Նա առհասարակ հագնում էր իսաս ժապատէններով սև կապա, արխալուխ, եւրոպական կոշիկներ և գլխին դնում էր պարսկական ձևի գոտակ։ Խօսում էր շատ հանդարտ և ցած ձայնով, ձեռքերի ու գլխի մեղմ ու չափած շարժւածքներով, և յաճախ ասածները համեմատում էր սրամիտ անեկդոտներով։ Յաճախ նա սիրում էր, մանաւանդ ուաշտօնեաների մօտ, ծաղրել իր արած մի բանը, և լսողները, ինչպէս ասում են, ծիծաղից փորիսոց էին լինում։

— Օ, բարով, Աւետիս, բարով ես եկել, ինձ մոռացել ես։ Ելի ես եմ քեզ մոտաբերում, ելի Փիր-Մուրադ Սուլթանը։

— Սուլթան, ինչ ես ասում, առանց քեզ Աստւած ինձ մի օր կեանք չտայ։ Դեռ շատ բան հարկաւոր է, որ մենք քո պատիւը լիովին հասկանանք։

— Եհ, զեռ բարով ես եկել, գնանք սենեակը. կինդ, երեխաներդ մնց են, լաւ են։

— Գնանք, Սուլթան, նրանք քո ծառաներն են։ Քանի քո ձեռքի հովը մեր գլխին է, կ'ապրենք։

Նոցա մտած սենեակը մի լայն սրահ էր առանց պատուհանի և մի կողմից առանց պատի։ Սրահի երկու կողմը բացւում էին երկու փոքրիկ դռներ, որոնցից մէկը տանում էր Սուլթանի առանձնասենեակը, հիւրասնեակը, իսկ միւսը՝ հարեմսանէն, որից մի գուռ բացւում էր հայտնունը և մառանը։ Մօտ հինգ սաժէն երկարութեամբ և երկու սաժէն լայնութեամբ սրահը ծածկւած էր թաղիքներով և գորգերով։ Պատի մօտ գրած էին մի քանի մութաքաներ, իսկ մի անկիւնում՝ արեելեան կալեանը իր պարագաներով։

Գաջած պատերը ծածկւած էին պարսկական ճաշակի ամանիքի, ծաղիկների և թուզունների նկարներով։ Աչքի էին լնկնում Շահնամեի և պարսկական ժողովրդական հերոսների մեծ պատկերները։ Մութաքաներից մէկի վրայ նստելով, Փիր-Մուրադ Սուլթանը հրաւիրեց Աւետիսին, որը չոգեց ծնկների վրայ սրահի համարեա դռան մօտ։

—Եկել ես ջուր տանես, էլի... լնդհատեց Սուլթանը փոքրիկ լուսութիւնը։

—Կը տաս էլ՝ դու զիտես, չես տայ՝ էլի դու զիտես. ես եկել եմ քեզ այցելութիւն, վաղուց զուրկ էի քո տեսութիւնից։

—Ասամ... դու ուրիշ բան էլ ունես... զիտեմ ինչու ես եկել։

—Դէ որ զիտես, էլ ի՞նչ ասեմ, քեզ քաջ յայտնի է։

—Ես Փիր-Մուրադ Սուլթանն եմ, միայն իմ մեռնելու օրը չգիտեմ։ Նոր պրիստաներուդ հետ ոնց էք վարւում, շարունակեց նա կամացուկ ձայնով։

—Նոր պրիստաներնեմ!.. Այս խօսքերը արտասանելուց, Աւետիսի աչքերը բարձրացան և հանդիպեցին Սուլթանի աչքերին։ Նորքա երկուսով էլ իրար հասկացան։

—Մտաբերնում ես, Աւետիս, որ տասն և երկու տարի սրանից առաջ, երբ ես և դու գնացել էինք քաղաք և այդ տղան էլ նոր էր մոել ուսումնարան, մենք նրան պատահեցինք, ես այն օրը քեզ ասացի—մի քանի տարուց յետոյ մենք դրան էլ պէտք է աղաւ ասենք։

—Մտաբերնում եմ, Սուլթան, լաւ մտաբերում եմ։

—Դէ, էլ ի՞նչ ես ասում, Աստւած քեզ նոր աղա է տւել։

—Ասա տեսնենք, ըսկի ինչեր է ասում։

—Ի՞նչ ասեմ, նստում կանգնում է Մէլիքի ու այն Աւան գեազի խօսքերով։

—Զթո կարող դրա հետ բարեկամանալ։

—Ի՞նչպէս օձը խարազանի հետ։

—Լաւ չեղաւ։

—Մի ճար արա, քանի վաղ է, թէ ոչ ես էլ, դու էլ ձեռքից կը գնանք։

—Մի երկմտի, երիտասարդ է, շուա կը գցենք։

—Որ մի քիչ էլ երկար մնայ, էլ ոչինչ չենք կարող անել: Շանուրդին շատ բարի է, դուրեկան, խելօք և փող չսիրող: Եթէ այստեղ նա մի տարի ապրի՝ ժողովրդի սիրելին կը դառնայ, և մենք կորած ենք:

—Մի վախենալ: Սիրադ հանդիսաց պահի: Գոմեշի հետ մանեկողի դաները պէտք է լայն լինեն: Այնպիսի մարդկանց հետ թշնամութիւն անողը պէտք է շատ համբերող լինի: Դու ինձ մի լաւ պատմի, անսեմբ, դա իսկի ինչ է անում:

—Ասում է, ես պէտք է գողութեանը, աւազակութեանը, կաշառակերութեանը վերջ տամ, չթողնեմ, որ հարուստները աւելի հող ու ջուր ունենան, պէտք է ուսումնարաններ շինել տամ և ժողովրդի աչքը բաց անեմ, որ աղքատները միանան ու հարուստներին խեղեն: Վերջապէս նա ասում է, պէտք է մինչեւ այժմ միրաւ, տանուտէր ու գատաւո՞ններ ընարւող մարդկանց փոխարէն ուրիշներին առաջ բերեմ:

—Լաւ:

—Էլ Բ'նչ, պատրաստութիւն ունես, տես:

—Դու գնա, առ այժմ ինչ կ'ասի, սուս մնա, ֆրսանդներս կ'ընկնի և դրան մի կ'սունահարենք:

—Վախում եմ չկարողանանք:

—Ոչինչ, շուտով ընարութիւններ են լինելու տանուտէրի, միրաւի, և դէպք կը պատահի: Դու դրան հաւատացուր, թէ ընտրութիւնները խաղաղ կ'անցնեն և այսպէս բաներ ասս, որ նա իր վրայ մեծ կարծիք ունենայ, իր ոյժերին հաւատայ:

—Նրան ծուղակի բերելը դժւար է, չեկ շանորդին նրա մօռն է:

—Մի վախենայ, այրւած սրտերը հեշտ տաքանալուց՝ վռագում ու շշկլում են, իսկ մելիքին մենք այրել ենք:

—Ասուած քո ձայնը լսի:

Աւետիսը մի միջահաս, բարակ, սևամորթ մարդ էր, մեծ ու խելօք աչքերով, կեռ քթով ու արագ շարժւածքով: Նա իր կարծ ընչացքները սղալում էր դէպի ականջները և աշխատում իր դէմքին աւելի առնական տեսք տայ: Նա արտաքինով ոչ մի բանով երեկոի չէր, միայն նրա աչքերում երեսում էր մի ինչ որ

կրքոտութիւն, նախանձոտութիւն, որը մարդու կարծես առում էր թէ այս պարոնը ոչ մի քայլի առաջ չի կանգնի:

Վերջին խօսքերը ասելուց նո հանեց ծխախոտը, վաթաթեց թղթի մէջ, հարեց ծխաքարշի վրայ և տխուր նստած ծխում էր, մինչեւ Սուլթանը նրան ճաշով հիւրասիրեց և երկար ու բարակ խօսակցութիւններից յետոյ սիրո առած, համբերութիւն գտած, վերադարձաւ Խուռաթ:

### ԳԼ. Ծ.

**Փիր-Մուրագ Սուլթանը** ծալապատիկ նստած, խոհուն, բայց համնգիստ դէմքով պապիրոս էր շինում: Նրանից քիչ հեռու ներքեւում չոքել էր Սլօ զաշազը, որը փոքրիկ փայտով թաղկք էր քրքրում:

— Սլօ, գիտես քեզ ինչու եմ կանչել:

— Ի՞նչ իմանամ, Սուլթան:

— Երեկ ոչ միւս օր ես քալբալայուն ասեցի, որ Սլօն որտեղ որ լինի, շուտով հասցուր ինձ. դոչաղ քալբալայի, ասածս լաւ է կատարել:

— Սուլթան, երեկ կէսօրին ոչխարը կթում էինք, որ քալբալային մատ մեր օրէն: Հարցնում եմ բարի է,— պատասխանում է բարի—բայց Սուլթանը առում էր, որ դու դլուխդ այստեղ թրջես, այնուեղ կնդիս: Աղախնիդ, մեր աղջկանը, ասեցի. Գուլէ—դէ շուտ արա, նախրից սե մատակ ձին բեր: Մի կէս ժամ չքաշեց մենք հեծանք և լուսը նոր բացւած՝ հասանք այստեղ: Ճանապարհում ձիանքը միայն մի տեղ ենք հանգստացրել:

— Ողջ լինես, ուրեմն գեռ Սուլթանին չես մոռացել:

— Սուլթան, մի՞թէ այդ կարելի է:

— Սլօ, լաւ պատահմունք կայ, մեր նոր պըխտաւը շատ երխուսարդ է, գործեր բաց անել դեռ. չի կարողանում: Մի չօգտուենք:

— Ես, Սուլթան: Աշխարհքը քեզնից է բան հարցնում, դու լինձնից:

— Զէ, էլ այդպիսի պատահմունք դժւար թէ լինի, շուտ արա մի քանի տղերք պատրաստի. գնացէք:

— Տղերքին ինչ, տղերքը պատրաստ են: Այ Քալբալայի Շիւքիւրը, Ասլան-բէկը, մեր Ֆակին սոված սկըրթում են, երեխաներն էլ տկլոր:

—Ես մի լաւ էլ բան եմ մտածել։ Մի երեք օր սրանից առաջ ինձ լուր հասցրին, որ այս օրերս պէտք է Տրավիդոնից տրանզիտի ապրանքը դուրս գայ. ասում են կամ Բայազդայ ու Սալմաստի մէջ տեղում, կամ Բայազդայ ու Կարնոյ, տանք այդ տրանզիտի վրայ։

—Բայց տրանզիտի թալանելը դժւար է, մանաւանդ մինչև մեզ մօտ հասցնելը։

—Բա Սլոյի գլուխը մեռել է։

—Էդ չէ, արի, մի քանի թուրք վաճառականներ կան, նրանց հետդ տար, թող այն կողմում մաքսի ապրանք գնեն, և դուք անց-կացրէք այս կողմը։

—Զէ, Սուլթան, այդ ձեր գիւղի մարդի բանն է, ես վաճառականի ծառայի զեր չեմ կատարիլ։ Իմն այն է, որ տղամարդագարի հօտեր, զիւզեր տրանզիտ թալանեմ, ով էլ լսի, ասի պկց-ցես, Ալօ։

—Ուրեմն, դու գիտես։

—Որ այլպէս է, Սուլթան, ես ճանապարհին Քալբալայի Շուր-քիւրին ասել եմ, հիմա էլ կ'ասեմ, որ տղերոնց հուաքի, մի երկու օրից յետոյ դուրս դանք։

—Ասուած աջողի։

—Շնորհակալ եմ։ Ասուած կ'աջողի, եթէ քո ձեռքի հովը մեզ վրայ լինի։ Դժւարը բերելն է, բայց նոյնքան դժւար է և պարտակելը, եթէ դու չլինե՞՞ ով մեզանից կարող է իր բերածը ծածկել։

—Դու Մայրակը անցկացրու, նրանից յետոյ գործ չունիս, մինչև անգամ նահանգապետի մօտ էլ մարդ ունիմ, և ամենայն բան կը ծածկենք։

—Դէ, ուրեմն մնաս բարով։ Այս խօսքերի հետ Սլօն վերկացաւ, ցածր զլուխ իշեցրեց Սուլթանին։ Սուլթանը պարզեց նրան երկու ձեռքը և իր ձեռքերի մէջ առնելով նրանը՝ գնաս բարով, Ասուած բարի ճանապարհ տայ, թշնամուց չամաչացնի, շեշտելով ասաց նրան։

Սլօն գնալուց յետոյ, Սուլթանը երկար ժամանակ լուռ ու մունջ թիկնել էր թիկնաբարձի վրայ և իր մարջանի տէրողորմեան քաշում։ Աւլունքների միապաղաղ չլիոցը զւարճացնում էր նրա լսելիքը և մտածողութիւնը հանդսացնում էր վերջը նա վճռական։

բայց քածր ու հանդարտ ձայնով մրմնջաց. — «Զիկ-չիկ էդան նալ-  
չաղը, իշբիթիրան ակամպըր» (ձայն հանողը պայտն է, գործ  
կառարողը—փողը): Նրան մտածողութիւնից հանեց Քալբալազի  
Շիքիւրը:

Բարեւ ձեզ, Սուլթան, ասելով նա նստեց թաղիքի վրայ:

—Ձեզ էլ բարեւ, Քալբալազի, —ինչ կայ:

—Սուլթան, Սլօյի հետ դնամ:

—Գնա, ես էլ սպասում եմ, մինչև սարից աեր, կարագ, աղ-  
դակ և մի խոյ բերեն, որ գնամ նոր պրիստափի մօտ և մինչև ձեր  
զալը ինչ որ հարկաւոր է՝ այսոեղ կը դրսում: Զէնք, ձի սարքի  
պատրաստի ունես: Այժմեան ձեր արշաւանքը մեծ դժւարութիւն-  
ների հետ է կապւած: Հա, չմոռանաս էդ ծռին—Սլօյին—հաս-  
կացնես, որ սպասում եմ սարից եկող ընծաներին, որ գնամ պրիս-  
տափի մօտ:

—Սարսորիները եկել են և մի լաւ խոյ են բերել, ես էլ  
Սլօյին կասեմ, որ Սուլթանը մաքսի մի մասը տալիս է պրիստա-  
փին,—վերջացաւ գնաց: Ծնաս բարով, Սուլթան:

—Այ խելօքս, գնաս բարով: Աստւած քեզ մի տումիդ  
հասցնի:

Այս խօսքերի ժամանակ Քալբալազին մօտեցաւ Սուլթանի ձեռքը  
բռնեց, որ համբուրի, բայց սա չժողեց:

—Քալբալազի, գոռաց Սուլթանը գնացող Շիքիւրին, որը  
խսկոյն յետ նայեց, կնոջդ ու տղիդ ասա, որ մինչև քո զալը ամեն  
մի գործում ինձ զիմեն:

—Ողջ լինես, Սուլթան, հարկաւ, իմ յոյսս վերեւում Աստ-  
ւած է, իսկ ներքեւումը զու:

Սարից բոլոր բաները բերողն էր Սուլթանին նւիրւած, նրա  
զրացի կարճ-Մամաղը: Նա իրեն հետ մի անյացտ անձն էր բերել  
Սուլթանի աեսութեանը:

—Օ, բարով մուկս, եկամ, դարձաւ Սուլթանը գէպի ներս  
եկող կարճ-Մամաղը, որ զեռ երիտասարդ մարդ էր:

—Ծառադ եմ, Սուլթան, խորը զլուխ իջեցնելով պատսսխա-  
նեց Մամաղը, եկայ և ինչ որ հրամայել էիր՝ հետս բերեցի:

—Զօրանաս, տղէս, էլ ինչ լուր ունես:

—Հետո մի զարաբաղցի մարդ էլ եմ բերել, քաջ երիտասարդ է ու բան էլ ձեռիցը լաւ գալիս է:

—Ի՞նչ կարող է անել:

—Ամեն ինչ. լաւ արի ու ժիր զող է:

—Դուն էլ համա գնում ես քեզ ընկեր ես գտնում:

—Բայց մնց, Սուլթան: —Նմանը նմանին որ չգտնի, օրը մի ու վայով կ'անցնի:

—Ի՞նչու ես բերել:

—Եթէ քո կամքը լինի, ասում եմ, Ղարաբաղցի լաւ ձիեր թոցնի բերի հասցնի ինձ հովհանները, ես բերեմ աշտոեղ քեզ մօտ. կամ ումն հրահացես, նրան յանձնեմ. կամ աւելի լաւ ախտեղից տանի Ղարաբաղ:

—Իսկ ձեռիցը կը դայ, թէ սուտ փահլէվան է:

—Ապա արևեսոն ինչ է. ես միշտ տեսել եմ, որ զրանով է պարագում:

—Տեսնենք, կանչի ինձ մօտ:

Մի քանի րոպէից յետոյ ներս մտաւ Սիւնեաց գաւառի յացտնի գող-Ալին: Նա մօտեցաւ թէ չէ, իրեն զցեց Սուլթանի ոտերի վրայ, գոռալով—տունդ եմ ընկել, Սուլթան:

Փիր-Մուրադ Սուլթանը, որի գէմքը այնպէս փոխւեց, որ կարծիս ասում էր. «Այն, հասկացայ, շատ լաւ վեր կաց, ոչինչ, Աստւած ողորմած է», —Մրմնջալով բարձրացրեց նրան:

Զարմացած էր միայն կարճ-Մամադը:

—Մամադ, որդի, դարձաւ դէպի նա Սուլթանը, դու գնա, ասա մի քիչ հաց պատրաստեն և սպասի, որ նրբ պատրաստ լինի, բերես, իսկ ես մեր նոր հիւրի հետ մի քիչ հարցուբարե լինեմ:

—Են, որդի Ալի, բարե ես եկել, որտեղացի ես, նստիր, զաւակու:

Ես Բօ-Ահմատցի եմ, Սուլթան, ոտքի վրայ պատասխանեց Ալին և միայն Սուլթանի երկրորդ ու երրորդ հիւրեքից յետոյ նստեց:

—Սուլթան, քո անունը տարածւել է ամենայն տեղ, քո տունը ամենայն մարդ գալիս է, իբրև Մարգարէի որդոյ տուն: Աղջիկ փախցնող, տուն կտրող, քարւան աւարող ու վերջապէս մարդասպանը կարող է քո տանը զողաշոպանութիւն գտնել, ես էլ ընկել

Ֆմ քո օջախը, աղատի, քանի ապրում եմ, գոմումդ ձիապանութիւն կ'անեմ:

—Ի՞նչ է պատահել, իբրև քո ծնող հօրը ուղիղ ասա:

—Սուլթան, ես նաքու բանւոր էի: Մի օր մի հայ, որը իմ աղէս էր, ինձ անպատւեց, ես նրա հետ կռիւ ունեցայ և պատահմունքն ինձ բռնեց, խանչալով տւեցի նրան սպանեցի ու ինքս փախաց այսուեղի Այժմ Ասոծոյ ու Մարզարէի սիրոցն՝ ինձ պէտք է այսուեղ մի պարսկաստանցու անւամբ քո տանը ծառայ պահես:

—Լաւ, զաւակս, պատահմոնք է, մանաւանդ գեաւուրի սպանելը: Մեր գրքերումը գրած է, որ զեաւուրը եթէ Խոլամին վնասի, հարկ է նրան սպանել. և շատ լաւ էլ արել ես. և դրա համար գըլխաւորապէս և մէկ էլ, որ դու իմ օջախն ես. ընկել, իմ կեանքը կը տամ, քեզ չեմ տայ:

—Ասուած քո որդիները բախչի, մէկդ հազար անի:

—Գնա Մամադի մօտ, նա քեզ գործ ցոյց կը տայ, կառարի և մեր տանն էլ ապրի իբրև մեր ծառայ—Մուրթուզալի անունով: Մի քանի բոսկէից յետոյ Մահմադը ճաշը բերեց և Սուլթանը ապսպեց նրան, որ պատրաստի վաղը իրեն հետ նոր պրիստաւի մօտ գնալու:

### ԴԼ. ԺԱ

Ալէքսանդրը արդէն ընուելացել և յարմարւել էր իր նոր կեանքին: Նա առաւօտը վաղ վեր էր կենում և հարկաւոր պաշտոնական թղթերը գրում Յետոյ ընդունում էր գանգատաւորներին, որոնց լսում էր ամենայն լրջութեամբ, յետոյ ճաշում էր, ճաշից յետոյ քիչ հանգստանում, երեկոյեան զնում էր նայում ուսումնարանական նորակառոց շէնքը և իրիկունը կամ զիւղացիների հետ զբոյց անում, կամ գարձեալ գործով զբաղում: Գիւղական կեանքը արդէն ազդել էր նրա վրայ: Նրա աչքերի փայլը աւելացել էր, երեսի և ձեռքերի կաշին կոշտացել ու կարմրել. և ինքն էլ ասես աւելի զիրացել էր և ոսկոռոտացել: Նա յաճախ պատահում էր որ մի քանի ժամով զնում էր և շրջում գաշտերում, պառկում արտերի մէջ, ծառերի տակ, քնում կամ մտածողութեան մէջ ընկնում: Աերջի ժամանակները նա կարծես թոյլացել էր, կորցրել էր իր

եռանդը, և աւելի երկար ժամանակ թաւալում էր տեղաշորերում՝ գաշտերում կանաչների մէջ։ Երկար նստում էր առւակների ափում, ձեռքերը բանում և ջրի հետ խաղում։ Նրա զէմքի վրայ արդէն սկսել էր արացայտել դիւղացու հոգեկան անդորրութիւնը և պակասել էին մայրաքաղաքի այս ջղացին շարժումները։

Յունիսի վերջն էր։ Բոլոր գաշտերը կանաչ էին։ Արտերը՝ ցորինի և գարու արդէն սկսել էին կարմրել։ Առուների վրայի ծաղիկները դեղին, կապոյտ, ալկարմիր և սպիտակ գլխիկները, երբ արեւը նոր բարձրացել էր երկնքի վրայ և դեռ չէր դուրս քշել առաւտեան զովք։ Ալէքսանդրը առաւտեան թէյը խմելոց յետոց զնաց գաշտերը ման գալու։ Նա մօտեցաւ առւակին, լացւեց նրա ջրովը՝ յետոց շարունակում էր քայլել արտերի միջով։ Նա զիառում էր ցորենի կիսակարմիր հասկերը, բազմագոյն ծաղիկները, օղում թուշով թրու։ չուններն ու զետնի վրացի զանազան մեծ ու փոքր միջանները։ Անա, նրա մօտից փախաւ խլեզը, քիչ հեռւում սողուլոյ մտաւ արտի մէջ օձը։ Սուակների վրայ և խոզաններում հօտազները արածեցնում էին իրենց լծկան գոմեշներն ու եզները, և կթան կոմը ու մատակը, գառներն ու ուլերը ծառերի շւաքում իրենց փոքրիկ բերաններով հաւաքում էին ծաղիկները։ Ամբողջ բնութիւնը կենդանի էր և ապրում էր։ Մարդն իրեն համար, գոմեշը, եզը, ոչխարը իրեն համար, մրջիւնը, կիրերան, օձը, խլեզը, տատրակը, դոլոնը, ջրկալի ծիտը, ագուաւը, ամէն մէկը իրեն համար ապրում էին և կերակրում։ Հասկ գցած ցորենն ու գարին, սուսամբարը, վարդն ու փուշը, ծառն ու ծաղիկը նոյնպէս ապրում էին իրենց համար։ Բոլորը սոքս անվարձ օգուում էին գիշերւայ զովացուցիչ շաղերով, արեի առաւտեան կենսատու ցողերով, մաքուր և անուշանոս օգով ու կարկաչանոս ջրերով։ Մոքա բոլորը յղիանում էին, ծնում, բուժնում, աճում, բազմանում և վերջապէս սիրում ու սիրւում։ Թշնամի օձը նոյնպէս իր կեանքն ունի, որպէս և վարդն ու մանիշակը։

Ալէքսանդրը նայում էր այս բոլորին ու զանազան մտածողութեանց մէջ լնկղմնում։ Ի՞նչ իրաւունքով մարդը սպանում է օձին, կամ ի՞նչու օձը խացթում է մարդուն։ Ի՞նչ իրաւունքով մարդն

սպանում և ուտում է եղին, կրվին, ցորենն ու խնձորը, օձը կուլ է տալիս գորտին, իսկ բաղեղը փաթաթւում և ուտելով չորացնում է նորատունկ ծառին: Ինչ կարիք կայ, որ սրանք իրար վնասեն, թող ամէն մէկը սոցանից ապրի իրեն համար և ուրիշի կեանքին չվեա-սելով: Ինչ կարիք կայ չայիրին, որ ուժեղանալով խեղդում, թու-լացնում և յետոյ բոլորովին չորացնում է բամբակի նորաբոյս սի-րունիկ մայառը. թող չայիրը իրեն քիչ զստի, որ բամբակին էլ օդուի հողից և կարողանայ ապրել և բախտաւոր լինել: Միթէ մարդկացին հասարակութիւններն էլ այսպէս են: Միթէ աքողջ բնութեան մէջ տիրում է կուի և իշար ուտելու անհրաժեշտու-թիւնը: Միթէ սա բնական օրէնք է: Վերջապէս ինչ է բնական օրէնքը: Միթէ մարդուն տւած խելքը չի կարող համոզել նրան, որ զսպի իրեն և իրեն նմաններին չուտի: Ոչ, ոչ, ոչ. սա բընա-կան օրէնք է, բայց ոչ մարդու համար, որի արարմունքը հետե-անք է և մոքի ազդեցութեան, բարոյականութեան մէջ ընտելա-նալուն: Սա Որմզդի և Ահրիմանի բարւոյ և չարի կոիւն է, որը մարդկութեան հասարակութեան մէջ ժամանակաւոր է, մինչև բա-րին յաղթի: Մարդս ինչպէս բանական կենդանի այս բանը պէտք է լաւ հասկանայ: Ժատականը ժամանակաւորի հետ չշփոթելով, առա-ջինին հետևի և երբեմն ընկերին սիրի ու իրեն զսպի:

Այս մաածողութիւններից դուրս բերեց Ալէքսանդրին գղիր Գառպարը, որը յայտնեց, թէ Փիր-Մուրադ Սուլթանը ընծանե-րով եկել է նրան տեսութիւն:

Երբ Ալէքսանդրը ներս մտաւ բակը, Սուլթանը, որ պատշզամ-բում զրած բազմոցի վրայ նստած տէրողորմեա էր քաշում, վեր ցատկեց ու ընդ առաջ գնաց ցածր գլուխ իշեցնելով:

—Բարով, Սուլթան, բարով էք եկել:

—Բարով, աղէս, դուք էլ բարով էք եկել, մեր աչքի, մեր դլուի վերայ:

—Համեցէք, Սուլթան, համեցէք այս բազմոցի վրան էլ նըս-տենք, հով է:

—Ենորհակալ եմ, համեցէք, դուք վերեւում նստեցէք, ես այս ներքեւում կը նստեմ:

— Գասալար, ասա՞ թող մի սուրճ պատրաստեն:

— Սղէս, ի՞նչ նեղութիւն էք կրում, մենք մշտական ձեր հօր հացը կերել ենք, սուրճն ու թէյլ խմել:

— Եհ, Սուլթան, այդ ի՞նչ նեղութիւն է դուք կրում էք, ի՞նչ, խոյ էք բերել, սեր, կարադ, աղդակ:

— Ինչ նեղութիւն, դուք պէտք է մեղ ներէք, ես պէտք է աւելի պատով գազի ձեր տեսութեանը: Աստծու աջողութեամբ մինչեւ աշունք, մի քուռիկ ունինք, լաւ կը գերանաց և ինքն էլ լաւ ցեղից է ու արժանի ձեզ. ես ասել եմ տոնը, որ սարում լաւ պահեն, աշունքը պէտք է ձեր նւաստից այն ձին ընծայ ընդունէք:

— Սուլթան, շատ շնորհակալ եմ, ես չեմ կարող ձեր ընծայ ձին վերցնել, որովհետեւ ձեղ հետ զեռ շատ քիչ եմ ծանօթ և ոչ ձեզ, ոչ ձեր հասարակութեանը զեռ մի ծառացութիւն էլ չեմ արել:

— Սիսալ էք, եղբայրա: Ներողութիւն որ ձեզ ասում եմ սիսալ էք, ես ձեր հօր հասակին եմ և ծերերին շատ բան ներելի է: Ես վաթսունից աւել մարդ եմ և տեսել եմ շատ գաւառապետներ, օդնականներ, հաշտարար դաստաւորներ, քննիչներ, որոնք ձեր աղօթքի պատով ինձ յարգել են, բայց ես ոչ մի դէպքում այնքան ուրախ չէի կարող լինել, որքան ներկայումս, որովհետեւ այժմ մեր մէջ գալիս է մեր որդին, եղբայրը, երկրացին, որը ճանաչում է մեր լաւն ու վատը, դէպի մեզ յաճախ ներողամիտ կը լինի: Այս, ձեր հայրը ձեզ կ'ասի. Դաշտանում մենք ընկեր էինք նրա հետ, լաւ ժամանակներ ենք անցկացրել, միշտ իրար սիրել ենք. ի հարկէ այժմ, այս հասակում, երբ հասկանում եմ, որ այս աշխարհումս ամենայն բան ունացնութիւն է, փառքը, հարասութիւնը, և հետներս մի լաւութիւն այստեղից կը տանենք, ի հարկէ այս հասակում ես միշտ աղօթարար կը լինեմ ձեզ համար և ոչ թէ միայն ձեզ համար, այլ և բոլորի համար: Սայդադին ասում է՝ «Այս շէնքը ոչ ոք դլուխ չտարաւ. անհաստատ սիրուհուն բարեկամ մի վերցուր, այս խաբեբան բարեկամութեան արժանի չէ»:

— Սուլթան, դուք շատ հասակով չէք և դէմքով էլ առողջ:

— Բայց ժամանակը ծերացրել է:

— Ինչպէս:

— Ժամանակը վաստացել է, սպանութիւնները, դողութիւններն

ու աւազակութիւնները բազմացել են, ժողովուրդը բոլորը խաբեբայց են դառել ու սուտ երգում ուսողներ։ Հարուստն աղքատին ճնշում է, հզօրը անզօրին ուսում, և այս բոլորը տեսնում ենք, ուղղում ենք առաջն առնել, բայց անոյժ ենք, ոչինչ անել չենք կարողանում, սիրաներս ցաւում է, բայց ձեռքներումն ճար չկայ, ահա մեր վաղաժամ ծերանալու պատճառը։

—Այս, ուրիշի վրայ մտածելը մարդուս աւելի թանգ է նշատում, քան իրեն վրայ մտածելը։ Այս, ես մի մարդ եմ, միշտ կարող եմ իմ գլուխը լաւ պահել և ոչ մի հոգս չունենալ, բայց ուրիշների վրայ հոգս տանելը ինձ ստիպել է, որ այստեղ ապրեմ և գիշերը ինձ քուն, ցերեկը հանգստութիւն չի տալիս։

—Շատ լաւ էլ անում էք, միայն լաւութիւնն այս աշխարհքումը կը մնայ մեզ ։ Եւ դուք կարող էք մեծ լաւութիւններ անել նախ երիտասարդ էք և փառք Աստուծոյ մեզ նման անուս չէք, երկրորդը ձեռքներումդ իրաւունք կայ։ Դուք պէտք է մեզ նմաններին առաջնորդ լինէք և մեր պարտաւորութիւնն է ամենայն մի բանում ձեզ լսիլ և ձեզ ու աղքատներին ծառայել, որովհետև թէ ձեզ՝ մեզ վրայ մեծ անողը, թէ աղքատին աղքատ—Աստւած է։

Ալէքսանդրը զարմացել էր։ Միթէ նրա հետ խօսողը այն հռչակաւոր Փիր-Մուրադ Սուլթանն է։ Միթէ իր բոլոր լսածները սուտ են կարելի է տարիներն են նրան փոխել։ Ո՞վ է հասկանում։ Բայց հաւանական է, որ իբրև հաւատացեալ մարդ, նա զգալով մահւան մօտենալը, վախում է Աստծուց և կամենում է այժմէն միայն բարութիւններ անել. ով գիտի, կարող է այդպիսի փոփոխութիւն լինել, ինքն իրեն մտածում էր նա։

—Սուլթան, ես ուրախ և բախտաւոր եմ, որ ձեզ տեսնում եմ այժմ այզպէս բարի և Աստւածավախ։ Ես յոց ունիմ, որ դուք ձեր դիրքով և փորձւածութիւնով ինձ կ'օգնէք։

—Ե, բարեկամ, իմ ձեռքիցը ինչ կը գայ, ով ինձ կը լսի, ուսում չունիմ, իրաւունք չունիմ, ծերութիւնս յաղթելու վրայ է, բ յց էլի պատրաստ եմ ձեզ ծառայելու։

—Շնորհակալ եմ, Սուլթան։ Հարցը նրանումն է, որ իմ կար ծիքով անհրաժեշտ է, որ ամենայն մարդ ծառայի հասարակունանը, առանց նայելու թէ այդ հասարակութիւնը ինչ ցեղի կամ

կրօնի անդամներից է բաղկացած։ Ինձ վիճակունց այստեղ պաշտօն ունենալ, որտեղ տասն և հինգ գիւղ թուրք էք, միայն մի գիւղ հայ կայ։ Ես անկեղծաբար և բոլոր սրտով ուզում եմ այդ թուրքերին ծառայեմ, որ նոքա ուսում առնեն, զարգանան, թողնեն աւազակութիւնն ու գողութիւնը, պարապեն արւեստով, պանրագործութեամբ, կաշւեգործութեամբ, մրգեր պատրաստեն, արտահանեն Եւրոպա և այնու Ես ուզում եմ ցոյց տամ նրանց այն վեամները, որ հասցնում է երկու կին առնելը, աղջկան 10—12 տարեկան հասակում ամուսնացնելը և այլն։

—Կեցցես եղբայր, փառք Աստուծոյ, որ քո նման մի իշխանաւոր ունեցանիք։ Հազար փառք, որ գուեկար մեր մէջ։ Մտածածներդ Աստուած յաջողի։

—Պէտք է մի բան անկեղծօրէն խոստովանեմ, որ թէսլէտ ես չերմ սրտով ցանկանում եմ այս բոլորը կատարել, բայց նպատակիս հասնելուն ձեւ չեմ կարողանում գտնել, ահա այդ բանը դուք ինձ ասէք։

—Ի հարկէ այդ բանը դուք ինձանից լաւ կ'իմանաք, իսկ յամենայն դէսս դուք ինքներդ այդ բաները գիւղացիներին միշտ քարողէք, խրատեցէք։ իսկ ինչ կը վերաբերի ուսումնարանին, կառավարութեանը խնդրեցէք որ թուրք գիւղերից մէկում մի ուսումնարան բաց անի։

—Եւ դուք խոստանում էք բոլոր այսպիսի հարցերում ինձ օգնէք։

—Անպատճառ և միշտ։

Ալէքսանդրի ու Սուլթանի խօսակցութիւնը ընդհատեց Օվանէս աղէն, որը մի քանի ստարակ ձեռքին, հրացանը ուսին ու բարակ ները ետեւին դարպասից ներս եկաւ։

—Տօ, սատանա, դու այստեղ ես։

—Բարով, Օվանէս աղա, աչքդ լոյս լինի, Աստուած քո ևս միակ որդին բախչի, որ եկել է։

—Ենորհակալ եմ, Սուլթան, Աստուած քո որդիներն էլ բախշին նու<sup>1)</sup>, Ալեօշա, ի՞նչ լաւ տատրակներ են։ Էս մէկը, էս մէկը, հա

1) Նու (այ) ոռւսերէնից վերցրած խօսք է և նշանակում է «ողէն»։

անիծածը, ինչքան ինձ չարչարեց. բայց լաւ համ կ'ունենան:

Սուլթան ևս եւր զոշաղ, թէ իմ տղէն:

—Այ, հողն իմ էլ, քո էլ զլիսին, էլ մեղ քաջութիւնը որտեղից լինի, երկուսով էլ ծերացել ենք:

—Է՞, զուրակ լիմար, ես եմ ծերացել: Աստւած վկայ, որ կ'ուզեմ պատերազմ լինի, որ ես մէկ էլ կուլի մէջ մանեմ:

—Է, Օվանէս աղա, գնաց այն կուլը, որ առաջ կար, այժմ քաջ մարդը գրչով է կուռում և, այ—զօրանայ. քո տղէն է:

—Տո զու մոռացել ես, որ Բէհրութովլ մի անդամ քեզ ասաւ շէլթան Մուրադ:

—Տօ, էն Բէհրութովլ չէր, մի հաշտարար դատաւոր էր:

—Այ, այս բիւնոյնն է:

Մի քանի բոսէ այսպիսի խօսակցութիւնից յետոյ, Փիր-Մուրադ Սուլթանը ցտեսութիւն արաւ, թախանձելով, որ Ալէքսանդրը իր ունամուտով նրա տունը լուսաւորցնի: Երկու օր չանցած կարճ-Մուրադը, որը բոլոր խօսակցութեանը վկայ էր, ամբողջ դաւառամասում տարածեց, թէ ինչպիսի լնծաներով Սուլթանը գնաց պրիստաւի մօս, թէ ինչպէս պրիստաւը նրան լաւ ընդունեց. և բոլոր գաւառամսսի կարծիքն էր, որ Սուլթանի նման հին ու խելօք մարդը շուտով ջահել պրիստաւին լեզով, կաշառքով կը դրաւի և էլի կը տիրի ամեն մէկի վրայ:

Գլ. ԺԲ.

**Ճողովրդի մէջ արդէն կարծիք էր կազմակերպում նոր պրիստաւի մասին:** Խնութի հայերը իրենց սիրած Ալէքսանդրին պաշտում էին: Մէկի կինը կամ երեխան հիւանդ լինէր, Ալէքսանդրը իմանար թէ չէ, իսկոյն հարց ու փորձ կ'անէր և խորհուրդներ կը տար, իր սեղանից սլատրաստի կերակուր կ'ուղարկէր: Մէկը գոմէշ չունենար, իսկոյն իր ռոճիկից նրան գոմէշի փող կը տար, որ ցանքից յետ չընկնի: Գիւղացիները նրան սիրում էին մանաւանդ նրա խօսակցութեան համար: Արեւ մտնում էր թէ չէ, բանատեղից վերադարձ գիւղացիները ծեր ու երիտասարդ ժողովում էին Օվանէս աղենց տունը, նրան զանազան հարցեր տալիս և նա մտարե-

բում է իր սովորածն ու լսած տեսածը, մտածածը գիւղական-  
բարբառով նրանց բացատրում էր ու հասկացնում: Մանաւանդ շատ  
ժամանակ անցնում էր այն խրատների վրայ, թէ Բնչակէս վարւի-  
կեանքի մէջ գիւղացին: Ոճրագործութիւնը վատ բան է, պատմում  
էր նա, որովհետև վնասում է թէ ենթակային և թէ գործողին,  
սպառում է ամբողջութեան ոյժը, խաբելը վնասաբեր է նոյն իսկ  
խաբողին, որը գրկում է հաւատարմութիւնից, ամենազլիսաւոր  
միջոցից տնտեսական առաջադիմութեան. սորուկ ու վախկոտ բնա-  
ւորութիւնը վնասակար է, որովհետև ոչ մի կառավարութիւն չի-  
կարող միշտ պաշտպանել իր հապատակին, եթէ սա ինքն իրեն-  
չպաշտպանի: Ամենայն մարդ պետք է զգայ և թանգ գնահատի-  
իր արժանաւորութիւնը և չքաւորութիւնը, տանջանքն ու մահը  
չարագործութիւնից, արատաբեր գործից աւելի բարւոք համարի:  
Խաչօն մի օր գիւղամիջում ասում էր, որ ես մեր աղի ասածները  
լսելուց յետոյ չորս բոլորս իմ աչքում կարծես փոխում  
ուրիշ մարդ եմ զառնում և իմ աչքում այնքան լաւ ու բախտաւոր  
եմ երեւում. իսկ զզիր Գասպարը հաւատացնում էր, որ աղի խօսքը  
շատ ճշմարիտ է, որ եթէ արտատէրերը թուրքերին թակեն, սրանք  
այլ ևս չեն յանդզնի նոյնա արտերը կերցնելու: Չնայելով որ Ալէք-  
սանդրը իր ուոճիկից զատ պարտքեր էլ էր անում, բայց նա ապ-  
րում էր համեմատաբար քիչ աւելի լաւ քան հասարակ գիւղացին.  
Թանէ բրթոյն ու սպասը, մածնով մարուն և շաբաթը մի երկու  
անգամ մասվ կերակուրը — ահա նրա սեղանի կերակրացոցը. խմիչքի,  
թղթախաղի և ծխելու վրայ նա մի կոպէկ էլ է չէր ծախսում:  
Բացի իր ծառացութեան զգեստները, նա ուրիշ զգեստներ չունէր,  
և քանի Ռուսաստանից եկել էր, նոր կոշիկներ չէր գնել, հներովը  
մի կերպ գիւղումը վարւում էր: Նա մտածում էր, որ գրքեր գնի-  
ընթերցանութեան համար, բայց երբէք գրպանում փող չէր կա-  
րողանում ունենալ. «Ես Բնչակէս կարող եմ փողն ուղարկել գրքիր,  
երբ իմ զրացի, վաղուցւայ մի ծանօթ Գրիգորի տանը հաց չկայ:

Աւելի լաւ չի լինի, որ այս փողերը տամնրա երեխաներին հացիւ:

Այսպէս էր գասում Ալէքսանդրը: Բայց վերջին օրերը նա նկատեց  
գրքերի անհրաժեշտութիւնը ընթացիկ հասարակական հարցերը  
հասկանալու համար և գրում էր գրավաճառանոցները, որ իրեն-

և վերապիր վճարով՝ գիրք ուղարկեն, որպէս զի ստիպւած լինի պարագ տալու պատճառով՝ գրքի փող ուղարկել:

Ալէքսանդրի անհուն ու անկեղծ բարութիւնը սկսեց արևի լոյսի նման ամենայն տեղ և ամենայն ազգի վրայ փայլել: Մի անգամ մի գիւղ գնալուց, նա պատահեց մի տասնուհինգամեաց կիսամերկ քրդուհու, որը, մարմինը բաց լինելու պատճառով, նրան տեսաւ թէ չէ, իսկոյն կուշ եկաւ գետնի վրայ: Ալէքսանդրը՝ մօտը փող չունենալու պատճառով, իսկոյն ձիուց վայր իջաւ և իր փոխ նորդը պայուսակից հանելով, նրան ընծայեց:

Մի անգամ թիւրքերի գիւղը գալով Ալէքսանդրը լսեց մի խեղճ թուրքի անել գրութիւնը: Նրա կնոջ ու երկու երեխաների աչքերը ցաւում էին արախումայով և նա չքաւորութիւնից անկարող էր նոցա բժշկել: Ալէքսանդրը իր հաշւով նրանց ուղարկեց մօտակայ գիւղը, որտեղ կային բժիշկ և գեղատուն, և հիւանդներին նա իր հաշւով մօտ երեք ամիս բժշկել էր տալիս, մինչև որ նոքա առողջացան:

— Այսպէս մարդ չի լինի, սա հրեշտակ է, ասում էր իր դրացիներին մի օր Քալբալայի Աբգուլ Հուսէցնը:

— Նատ լաւ մարդ է, Ասուած նրա բանն աջողի, ասում էր Մաշալի Մամադ Քէրիմը:

— Մեր օրէնքների մէջ գրւած է, որ հայը կարող է լաւ լինել—բայց միայն հայից, իսկ գեաւուրին անալայման լաւ ասել՝ անկարելի է, միջամտեց Սխունդ մոլլա Մամադ ԶաՓարը:

— Ափասո, որ դա իսլամական չէ:

— Բայց, ինչ անես, քրիստոնեաների ու մահմեդականների մէջ խարութիւն չի գնում:

— Եհ. մի հաւատացէք, անկարելի է, մեր մարգարէն ասել է, մի հաւատացէք գեաւուրին, ինչպէս օձին, օձը առզում է, խեղճ է, փախչում է, բայց միշտ պատրաստ է ձեզ կրկին խարելու:

— Մեռնեմ մարգարէի խօպին, բայց մինչև հիմա չենք տեսել, որ այդ մարդը խարութիւն դնի:

Այսպէս խօսում էին թիւրքերը, բայց գաւառամասնի քրդերը դատում էին այլ կերպ:

—Քոլօ, ասում են, որ մեր նորեկ պրիստաւը շատ գթոս մարդ է:  
—Օ, շատ գթոս է, իսկ Ասուուծոյ մարդն է:

—Մեր պապերը միշտ ասել են, հայը թուրքից լաւ կը լինի:  
Լսկի այդպիսի մարդ թուրքերի մէջ տեսել էք. ըսկի ռուսի մէջ  
էլ չի լինի: Ռուսը յիմար կը լինի: Եղբայր, կի հայ ազգը, Աստ-  
ւած հայի մէկը հազար անի:

—Ասում են նոր պրիստաւը քրդին էլ շատ է ռւզում:

—Ո՞սց չէ, նա իրեն պահող Զէյնոցին մօր չափ սիրում է,  
իսկ Զէյնօցի տղա Սլօցին եղբայր է ընդունում:

—Բանօկցի քրդերը գնացել էին մօտը և յայտնել էին, որ  
կամենում են մի գիւղում աեղաւորւել և հողագործութեամբ պա-  
րապել: Նրանց խոստացել էին օգնի, ճանապարհ էր ցոյց տւել  
ուժը և ինչպէս խնդիր տան: Բանօկցիք ասում էին, որ մեզ հետ  
վարւեց մեր հօր նման:

—Տանուտեր Աթոքն կանչել էր և ասել, որ նրան կը պատժի,  
եթէ քրդի աղքատ ժողովրդին նեղութիւն տայ և կաշոք ու-  
աւելի հարկեր առնի:

Սլէքսանդրի բոլորի հետ կարեկցաբար վարւելը բացաւ նրա  
դռները ժողովրդից ամենքի համար, և յաճախ նրա մօտ գալիս էին  
միայն խորհուրդների:

—Աղա, իմ տղէն թուղթ է խաղում, հարբում է, կանչես  
նրան մի երկու ապասկ խիես: —Աղա, իմ հարսը մի քիչ չվարւող է  
և քո քոյրն ու որդին է, կանչես մի խրատես: —Աղա, իմ տղէն  
այսինչ աղջկան ուզում է, հայը չի տալիս, տաես հօրը, որ տայ  
և այնու եւ բոլոր այսպիսի խնդիրներին Սլէքսանդրը պատախա-  
նում էր կարեկցաբար և կարելոյն չափ օգնում:

Սլէքսանդրի գատաստանով մեծամասնութիւնը բաւական էր  
մնում, որովհետեւ նա շատերին հաշտեցնում էր, իսկ սխալներ էլ  
անելուց լինում էր անկեղծ. և այս անկեղծութիւնն ու նրա գրա-  
ւիչ բարութիւնը փակում էին բոլորի լեզուն և ոչ ոքի թոյլ չէին  
տալիս նրա մասին վատ խօսելու: Միայն շըշուկ կար, որ իբր թէ  
նա դեռ շատ երիտասարդ է, այս երկրի սատանայութիւնները  
չգիտէ և յաճախ վատը լաւից զանազանել անկարող է:

Սլէքսանդրի առատաձեռնութեան և փող չպահելու մասին

գիւղացիներից շատերը, մանաւանդ աղքատները, նրան գովում էին, իսկ լսելոքները վիեդմով ասում էին, որ պատանութիւն է անում և վերջը կը զջայ:

—Պու էլ, Սաշա (Ալէքսանդր), ինձ նման աղքատ կը մնաս, ասում էր Օվանէս աղէն: Ե, ողորմի քեզ, Բէհրութովը քանի անգամ ինձ օգտաւէտ գործեր ուեց և կ'ասէր. գուռակ (չիմար) Օվանէս. հարստացի. իսկ ես ինչ աշխատէի—կը ծախսէի: Բայց ես տղամարդի նման քէֆի կը տացի, իսկ դու կ'ասես Քրիստոսի տղէն լինես—միշտ աղքատներին: Փողը տար, քեզ համար լաւ ձի, հացան, ատրճանակ առ, քէֆեր արա, ՅՈՒՏ տեօն խօրոш: Տիկին Ծաղիկը բոլորովին այլ կարծիք ունիր: Նա, ինչպէս տան տիկին և տան կառավարիչ, փորձել էր մարդկանց: Նա գիտէր, թէ լայն օրւայ բարեկամները նեղ օրերում ինչպէս մարդուց փախչում են, և կրկնում էր իր ասածը—քանի այգում ծիրան կայ, բարի լոյս և բառի իրիկուն կայ, այգում ծիրանը վերջացաւ, բարի լոյս բարի իրիկունն էլ վերջացաւ: Նա ասում էր թէ որպիսի տանջանքներ, կոկիծ ու անբախտութիւններ է բերում իր հետ չքաւորութիւնը:

—Որդի, ասում էր նա յաճախ Ալէքսանդրին, քո վերջի օրւայ համար էլ մուածի, փող հաւաքի, աշխարհը միշտ այսպէս չի մնայ, հիւանդութիւն կայ, անաջողութիւն կայ, դու պէտք է հիմայ մի քիչ մտածես քո գալիք դաւն օրերի մասին:

—Ոչինչ, մայրիկ, պատասխանում էր Ալէքսանդրը, ես ինչպէս էլ լինի կ'ապրեմ և լաւն ու վատը չեմ հարցնի: Ինձ համար լաւը նա է, երբ ես ուրիշներին օգնում եմ, իսկ վատը, երբ ես քարասիրտ եմ դաւնում և, ուրիշներին նեղութեան մէջ տեսնելով, ես փող եմ ժողովում:

—Զբարկանաս, որդի, սխալում ես: Ես չեմ ասում ուրիշներին մի օգնի, միայն սատանան է, որ միայն իր համար է մտածում, իսկ քրիստոնեան պէտք է չունեւորներին օգնի: Բայց լաւ չի լինի, որ հիմա քիչ քիչ փող յետ զցես, որ կարողանաս յետոյ էլ օգնել:

—Միթէ, մայրիկ, ես անկարող եմ իմ գլուխը պահել:

—Միթէ դու պէտք է միշտ այգպէս մնաս. քեզ հարկաւոր է պսակւել, երեխայ կ'ունենաս, կ'հիւանդանայ—դեղ է հարկաւոր,

ցաւերիդ մէկը հազար կը դառնայ, — տեսնեմ այն ժամանակ ինչոք կարող ես օգնել ուրիշին: Քանի չես պատկւել, մոտածիր ապագացիդ համար, ջահէլութիւն մի՛ արա:

Այս խօսքերին Ալէքսանդրը պատասխանում էր առհասարակ մի խորը հոգոցով, իսկ տիկին Ծաղիկը սուս էր կենում, իրեն սփոփելով, որ Աստւած նրա Ալէքսանդրին նրա բարեգործութիւնների փոխարէն կը վարձատրի:

(Շարունակելի)

## ՄԵՂԱՅ ՔԵԶ, ԱՍՏԻԱԾ...

(ՅԱՏԵՐԻՑ ՄԵԿԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ)

ԱԼՔԹՍԱՆԴՐ ԺԱՏՈՒԻՌԵԱՆԻ

Կուշտ եմ և առողջ, կեանքից բաւական,  
Սեղանըս առատ, ճաշըս պատւական,  
Բայց թէ ինչպէս եմ այդ կեանքին հասած—  
Այդ մի՛ հարցընեք... Մեղայ քեզ, Աստւած...

Շատ կարճ միջոցում ես հարուստ դառայ,  
Հողեր, կալւածներ, կառք ու ձի առայ,  
Բայց թէ ինչ փողով, ինչպէս վաստակած—  
Այդ մեր մէջ մընայ... Մեղայ քեզ, Աստւած...

Տներ շինեցի շքեղ, փառաւոր,  
Ապրում եմ մէջը, ինչպէս թագաւոր,  
Բայց քանի՛ մարդու ես տուն եմ քանդած—  
Այդ մեր մէջ մընայ... Մեղայ քեզ, Աստւած...

Խանութ բացարի, գործ ըսկսեցի,  
Կարճ ժամանակում մեծ գանձ զիզեցի.  
Բայց քանի՛ անգամ ես կոտր եմ ընկած—  
Այդ մեր մէջ մընայ... Մեղայ քեզ, Աստւած...

Կեանքում ես գտայ մի «աղնիւ ընկեր»,  
Գործիս մէջ զըրեց տասնետկ հաղարներ.

Բայց վերջը... վերջը նա քաղցած մընաց,  
իսկ ես կշտացայ... Մեղայ քեզ Ասուած...

Ես միշտ ասում եմ և միշտ քարոզում.  
Աղքատն էլ մարդ է, ուտել է ուզում.  
Բայց քանի մարդ եմ ես աղքատ թողած—  
Այդ մեր մէջ մընայ... Մեղայ քեզ, Ասուած...

Երբ տեղն է գալիս՝ սուրբ եմ ձեանում,  
Ժամում ծնկաչոք աղօթք եմ անում:  
Բայց հոգիս վազուց սատանին ծախած՝  
Աշխարհք եմ խաբում... Մեղայ քեզ, Ասուած...

Թէ մէկը պատիս դիալչի աշկարայ,  
Ես կրակ կը թափեմ այդ մարդու վերայ.  
Բայց ծածուկ ինչքան ես թոք եմ կերած—  
Այդ մեր մէջ մընայ... Մեղայ քեզ, Ասուած...

Ե՛ս, բաւական է դլուխները տանեմ,  
Ալսըր զորն ասեմ, զորն խոստովանեմ...  
Ոտով ու դլխով մեղքի մէջ թաղւած  
Ես մի հըրէշ եմ... Մեղայ քեզ Ասուած...

5 մարտի, 1896 թ.  
Մասկուտ:

## ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՈՒՅԵՐ

Վէպ գիւղական կեանքից

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն) <sup>1)</sup>

Թ. ԴՀՈՒԽ

Գալուստի գործերը այս անգամ Բաբւում լաւ էին ընթանում: Երկու տարի ծառայելով մի վաճառականի մօտ, 300 ո. փող էր վաստակել: Երկու հարիւր ռուբլի էլ և սագէշինից <sup>2)</sup> պարտք վերցնելով, իւր համար մի խանութ էր բացարել: Խանութը գտնում էր քաղաքի յետ ընկած, խուլ և մութ անկիւններից մէկում և իւր մէջ պարունակում էր դլիսաւորապէս չթեղէն ու մասամբ մանր-մունր մթերքներ: Գալուստի առուտուրը յաշողակ էր, մուշտարիներ շատ ունէր, որովհետեւ նա դիւր էր գալիս քաղաքի յեռ ընկած մասի բնակիչներին իւր համեստ բնաւորութեամբ և սիրալիր վարողութեամբ: Բացի այդ, նա միշտ լաւ ապրանք էր պահում և թանգ դնով չէր վաճառում:

— Նատ լաւ խանութպան է, ասում էին միմեանց մուշտարիները, այդպէսին մենք գետ չենք տեսել:

Ամեն ամսւայ վերջում հաշիւ էր տեսնում Գալուստը, և հաշից երևում էր, որ բաւականաչափ օգուտ է ստանում: Այդ օգուտի

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1896 թ. № 5 և 6:

<sup>2)</sup> Խաղէին անւանում են գործատիրոջ:

մի մասը յետ էր դցում պարտքը վճարելու, իսկ մնացածը գործադրում էր առևետրի վրայ:

Ուրախ էր Գալուստը և իրան բախտաւոր էր համարում: Երկու կամ երեք տարի կը պահէ խանութը, և եթէ տնից չկանչեն, պարտքը, ի հարկէ, շուտով կը վերջացնի ու այնուհետև օգտի մի մասը շարունակ բանկը կը դնի: Երեք տարուց յետոյ խանութը կը ծախի և գրադաւով փողով լի կը վերադառնայ տուն: Ուրախ կը լինի ինքը, բախտաւոր կը լինի հայրը և սիրով՝ եղբայրը: Այնուհետ նրանց բերանից էլ չի լսել ոչ մի նախատական խօսք, ոչ մի տրատնջ և իւր վրա այնուհետ բաց ճակատով, բացւած ունքերով և պարզ երեսով կը նայեն: Նարունակ անբաւականութիւնը տեղի կը տայ գոհունակութեան: Դալուստը խղճով հանգիստ կը լինի, կատարած լինելով որդիական պարտականութիւնը: Նա կը ստանայ հօր օրհնութիւնը, կամուսնանայ իր սիրած աղջկայ հետ և այնուհետև երջանիկ կեանք կը վարի գիւղումը:

Այսպիսի օրեր էր երազում Գալուստը, աչքի առաջ ունենալով իւր ներկայ յաջող դրութիւնը: Բայց ինչեր չեն բերում ժամանակն ու հանգամանքները: Բախտը, ասեք, երբէք չէր ժապում այդ խեղճ երխտասարդի երեսին և ճակատագիրը նրան կրկին նետեց ձախորդութեան գիրկը:

Խանութ դրած օրից չորս ամիս էր անցել, որ մի երեկոյ Գալուստի մօտ եկաւ նրա ծանօթ գործակատար Սարգիսը: Սա նոյն պէս դուրս էր եկել իւր խաղէցինի մօաից, ունէր ձեռքում մի փոքրիկ գումար և նոյնպէս ցանկանում էր սիփական խանութ ունենալ: Գալուստն ու Սարգիսը վաղեմի և մտերիմ ծանօթներ էին դեռ այն ժամանակւանից, երբ Գալուստը առաջին անգամն էր օտարութիւն եկել: Բացի այդ, վերջին տարիներում երկուսի խաղէցինների խանութները գտնուում էին միմեանց հանդէս, և երկու ծառայողները յանախ այցելում էին իրար, գիշերները երկար ժամանակ նստում, զրոյց անում: Խօսակցութեան նիւթը վաճառականներն էին լինում և նրանց գործերը: Նրանք հիանում էին մի վաճառականի հարստութեան վրա, զարմանում էին, թէ ինչպէս մի ուրիշը յանկարծ բարձրացաւ անյայտութիւնից և աշխատում էին լուծել իրանց համար այդ գաղտնիքը, որովհետեւ իրանք ևս նոյն

ձգումն ունէին: Յանկարծ բարձրանալը ամեն մի վաճառականի իդէալն է համարւում:

—Ինչպէս է բարձրացել. շատ հասարակ կերպով, բացատրում էր Սարգիսը. Ռուսաստանից ահազին քանակութեամբ ապրանք է բերել նիսիա, ծախել է, յետոյ իրան մնանկ յայտարարել և փողերը զրել գրանումը: Ի՞նչ պիտի անեն: Քանիսներն են էդ-ոլիսով հարստացել:

Երիտասարդ վաճառականները ապշում էին և լուռ ու խորհրդաւոր կերպով միմեանց երեսին նայում: Ծիծազում էին հարստութեամբ քայքայւած վաճառականների վրա, որոնք քարշ էին գալիս կոտրած սայլի նման: Հպարտ ու լնդնաբաւական եղանակով աւելացնում էին, թէ իրանց խազէցինների գործերը շատ յաջողակ են գնում:

Եւ ոգևորութեան գագաթնակէտին հասած՝ բռունցքով խփում էին սեղանին և բացականչում—

—Ա՞ս, երբ կը լինի մենք էլ մի փառաւոր մագազին <sup>1)</sup> ունենանք:

Իսկ Սարգիսը շարունակում էր.

—Դէ մենք միանդամից չենք կարող բարձրանալ, դա մեր հունարը չէ. մենք պիտի փոքրից սկսենք և կամաց-կամաց գործներս լայնացնենք, լայնացնենք: Մեզ նմանները իսկի մենակ էլ չեն կարող բարձրանալ. կամ պիտի մի կերպ տակով անել, հա, էն ժամանակ կարելի է. բայց դա էլ ախր վտանգաւոր է: Ամենից լաւն է սկզբում ընկերովի առուտուր անելը: Յետոյ որ տեսար, թէ գործերդ արդէն բաւականին լաւացել են, կարող ես բաժանելը Մեծմեծ վաճառականներ կան, որոնք զետ ընկերութեամբ են շարունակում իրանց գործերը:

Արդիսը անհամեմատ փորձւած և հմուտ էր վաճառականութեան մէջ, քան Գալուստը: Առաջինին խաբելը, որ վաճառականական նպատակների համար ամենագլխաւոր և ամենաընդունւած միջոցն է ճանաչւած, դժւար էր. բայց երկրորդին շատ հեշտ՝ նրա միամտութեան ու խեղճութեան պատճառով:

<sup>1)</sup> Խանութ:

Խաղէցինը շատ անգամ Գալուստի մի որ և է սխալ գործի համար կը նկատէր.

—Այ տղա, դու հենց զօռով ուզում ես վաճառական դառնալ, իսկի կը լինի ախր:

Գալուստը կարմրում էր և ամաչկոտ ձայնով ասում:

—Ինչու չի լինիլ:

—Դէ եղիր, ոչինչ չունիմ ասելու, միայն դոչաղ կաց, դոչաղ, վաճառականը որ դոչաղ չեղաւ ու կտրուն, նրա բաները վատ կը գնան:

Սարգսի ձեռքում գտնւող գումարը ընդամենը 200 ռուբլի էր, աւելի քիչ, քան Գալուստի կարողութիւնը, չնայած որ նրանք մը ժամանակայ ծառայողներ էին: Դրա պատճառը այն էր, որ Սարգսը մօտ 300 ռուբլի էր հօրն էր ուղարկել գիւղում մի նոր բնակարան կառուցանելու համար: Խսկապէս Սարգսի աշխատածի ամբողջ գումարը Գալուստի աշխատածից շատ էր:

Նատելով Գալուստի խանութի յետևում գտնւող սենեակի մէջ, նա մի փոքր զրոյցից յետոյ վերջապէս յայտնեց մոքինը: Նա առաջարկեց, որ Գալուստը իրան ընկերացնի իւր գործի մէջ: Նա յայտնեց իւր գնելի գումարի քանակութիւնը և մեծ յոյսեր տւեց Գալուստին: Գալուստը սկզբում տատանւում էր ընդունել վաղեմի ծանօթի առաջարկութիւնը, բայց յետոյ, աչքի առաջ ունենալով այն, որ զրանով գործը աւելի կընդարձակւի և առուտուրի ծաւալը մեծ դիրք կը ստանայ, նշանակութիւն տալով այն հանգամանքին, որ նրան ընկեր էր լինելու Սարգսի նման մի դոչաղ ու փորձաւած գործակատար, ընդունեց նրա առաջարկութիւնը:

—Մեզ նմանները, ասում էր Սարգիսը ուրախացած, առաջպիտի ընկերովի գործ սկսեն, որ յետոյ կարողանան մի բան զառնալ: Ես միշտ էղ եմ ասել:

—Ի հարկէ, ճշմարիտն ես ասում, պատասխանում էր Գալուստը:

—Դէ մի շիշ զինի բեր իմ հաշուին, շնորհաւորինք ու օրհնենք մեր ընկերութիւնը:

—Ի՞նչ հարկաւոր է:

—Բեր, օրհնւած, ինչպէս թէ ինչ հարկաւոր է. բեր, որ շնոր-

հաւորենք, յաջողութիւն բարեմազթենք, որ սիրով լինենք, միմեանց հաւատարիմ... այ, փողը:

Սարգիսը գրպանից 30 կոպէկ հանելով գցեց սեղանի վրա:

Գալուստը ծիծաղը երեսին վերցրեց փողը, հանդարտիկ վերկացաւ տեղից ու գնաց գինի բերելու:

— Լաւ յաջողւեց, մտածում էր Սարգիսը ինքն իրեն, իսկի չէի հաւատում, որ կարող եմ բան գլուխ բերել: Սա մի քիչ խակ մարդ է, Աստած հեռու տանի, որ զլուխը մտաւ թէ չեմ ուղում, էլ պրծաւ:

Կարճ ժամանակից յետոյ վերադարձաւ Գալուստը շիշը և մի թեթև զգակուսկաւ ձեռքին: Նրանք երկուսով դատարկեցին ամբողջ շիշը, վայելելով միմեանց կենացը, գործին յաջողութիւն բարեմազթեցին, իսկ իրանց սէր, միութիւն և հաւատարմութիւն: Այնուհետ Սարգիսը վերկացաւ տեղից և, շնորհակալութիւն յայտնելով, դուրս գնաց: Սարգիսի ուրախութեանը սահման չկար: Այդպիսի մի ընկեր նա չէր երազում գտնելու: Նա այնքան ուրախ էր, որ փողոցում գնալիս երբեմն ինքնաբերաբար թռիչքներ էր դործում:

Ուրախ էր և Գալուստը, որ իրան ընկերացել էր Սարգիսի նման մի հմուտ և կտրուն առևտրական:

### Ժ. Գլուխ

Սարգիսի ընկերանալուց յետոյ գործերը աւելի յաջող ընթացք սուացան և խանութը բաւականին ընդարձակւեց: Սրա յետեին գտնելող սենեակը, որտեղ առաջ բնակում էր Գալուստը, պէտք եղաւ խանութի համար և մեր երիտասարդ առևտրականները խուլ անկիւնի մի այլ մասում սենեակ վարձեցին ու սկսեցին միասին ապրել:

Անցնում էին ամիսներ, առևտուրը իւր յաջող ընթացքով առաջ էր գնում, բայց զրա հետ միասին մի գաղանի միտք մեր զոշաղ ու հմուտ գործակատարի գլխում՝ քանի գնում աճում, որոշ կերպարանք էր սուանում և արգէն մօտենում էր գործադրութեան րոպէին: Հաւատարմութիւն և սէր բարեմազթող Սարգիսը վճռել էր մի չար ու անաղնիւ խաղ խաղալ Գալուստի գլխին, որ ացդպիսով կարողանայ մի թռիչքով հարստութեան գիրկը նետւել: Նա մոտա-

զրւել էր դեկտեմբեր ամսի վերջերին, երբ ընկերները պիտի հաշվի նստէին խանութիւն գործերը պարզելու համար, պատրաստի մարդկանց միջոցով կողոպտել խանութը: Գողացած ապրանքը սկզբում կը մնար մի ծածուկ և ապահով տեղում, իսկ յետոյ այդտեղից Սարդիսը մաս-մաս կը տեղափոխէր իւր ծանօթ վաճառականներից մէկի խանութը:

Դեկտեմբեր ամիսը մօտենում էր իւր վախճանին: Մութն և ձմերային մի ցուրա գիշեր էր: Օրւայ եռացող կեանքը վաղուց արդէն իւր հանգիստն էր վայելում: Ամբողջ քաղաքում տիրում էր խորին լուսութիւն: Միայն երբեմն հեռւից, շատ հեռւից լսում էր սրընթաց կառքի դզրոցը կամ շոգեկառքի սուր և վիթխարի վըշշոցն ու շոցը: Լապտերները ամեն տեղ հանգցրած էին: Քաղաքի յետընկած մասում, որտեղ գտնւում էր մեր ծանօթների խանութը, տիրում էր միշտ գիշերային խաւարը: Այդ մասում մի լապտեր միայն կար, այն էլ լայն ու երկար փողոցի ծացրին մի հարուստ բէդի տան առջև:

Գիշերային այդ պահուն Սարդիսը վերագառնում էր հարսանքատնից: Խանութիւն մօտ նրան սպասում էին մի քանի ծպտեալ անձինք: Տեղ համելով նա թրքերէն լեզով կամացուկ ասաց.

—Տղերք, Էստեղ էք:

—Պատրաստ ենք, եղաւ պատասխանը և մի քանի մութն ու մե դէմքեր մօտեցան նրան:

Դոքա թուրքեր էին, գողութեան և աւազակութեան մէջ եփւած մարդիկ: Այդ էր դոցա փեշակը և ապրուստը դրանով: Սարդիսը աւազակներին 60 ոուբլի փող էր խոստացել, եթէ նրանք ապրանքը յաջողութեամբ տեղափոխէին մի անյատ ու յետ ընկած մառան:

—Սկսենք, հարցրին թուրքերը շշուկով:

—Սկսեցէք, պատասխանեց Սարդիսը, որքան կարող էք՝ արագ շարժւեցէք:

—Այդ մենք հասկանում ենք:

Մի քանի րոպէ ևս, և ահա խանութիւն դուռը արդէն բաց էր: Գողերը արագութեամբ ներս մտան, ներսից փակեցին դուռը և սկսեցին կապոտել ապրանքը: Սարդիսը շտապեց դէպի կասան և

նրա մէջ գանւող փողերը վերցրեց։ Մի ժամկից յետոյ դուրս էին տանում ապրանքը, իսկ կէս ժամաց լնթացքում խանութը համարեա թէ դատարկեց։ Դռները պահեցին բաց, իսկ կողպէքն ու երկաթները կոտրտած և վայր գցած։ Ապրանքը նշանակած տեղը տարան, որ շատ հեռու չէր և խոստացած վարձից տասը ռուբլի էլ աւելի ստանալով, թուրքերը արագութեամբ անյայտացան խաւարի մէջ։

—Երբ էլի գործ ունենաք, մենք պատրաստ ենք, ասաց գողերի զլիսաւորը և հետեւեց ընկերներին։

Սարգիսը վերադարձաւ խանութ, մի շիշ գինի կար այնոտեղ մնացած, դատարկեց՝ զլիսին քաշելով և ամեն ինչ նոցն դրութեան մէջ թողնելով, գնաց գէպի իւր բնակարանը։ Դինին ուղեղին էր խփել, մանաւանդ որ Սարգիսը հարսանիքումն էլ էր խմել։ Նա հարբած էր և օրորւելով էր գնում։

Այս ու այն պատին կպչելով, նա վերջապէս տուն հասաւ։ Նա հաղիւ էր բարձրացել տան սանդուղքներով և ոտը նոր էր գրել սենեակի շէմքի վրա, որ յանկարծ զլուխը պտըտւեց և ուժգնութեամբ փուեց յատակի վրա։ Նրա ձայնից արթնացաւ Դալուսուր։

—Սա ի՞նչ է, սա ի՞նչ է, գոչեց նա, ով ես, ով ես։

Պատասխան չկար։ Նա միայն լսում էր փսոցի և երբեմն տնքոցի ու խռոոցի ձայներ։ Գալուստը բարձի տակից հանեց առունենակը, բռնեց մի ձեռքում, ոտների ծացրերով մօտեցաւ սեղանին և վառեց լուցին։

—Քո տունդ չքանդեի, Սարգիս, բացականչեց նա ծիծաղելով, երբ տեսաւ, որ նա հարբած է։ այ տղակ, էդ դժւ ես, էլ օյին չէր մնացել, բռլորովին վախեցաց։ Տնաշէն, էդքան էլ կը խմե՞ն։ Եդ ի՞նչ օրի ես ընկել։

Սարգիսը դարձեալ չէր պատսսխանում և միայն չանկուտում էր յատակը։ Գալուստը վառեց լամպան, ջուր բերեց, սրսկեց Սարգսի երեսին, լւացաւ զլուխը, յետոյ հանեց նրա շորերը և պառկեցրեց անկողնում։

—Էլ օյին էր մնացել, որ հանես, գլուխը թափահարելով և քմծիծաղ ասում էր ինքն իրեն Գալուստը։ տնաշէն, էնքան խմիր, որ կարողանաս տանել, էլլի։

Սարգիսը դարձեալ լուռ էր։ Անկողին մտնելուն պէս նա սկըսեց խոմիալ։

Հետեւեալ օրը առաւօտեան Գալուստը սովորական ժամին վերկենալով անկողնից՝ կրակ զցեց հեշտաեռը, լւացւեց, հաղնւեց, խմեց թէյը և, Սարգսին քնած թողնելով, գնաց խանութ։ Նա չկամեցաւ արթնացնել ընկերոջը, որ հարբեցողութեան յաջորդող գլխացաւի պատճառով սովորականից ուշ պիտի վերկենար։

Մօտենալով խանութի դռներին, Գալուստը սարսափից մնաց ասլշած և կարծես անզգայացած։ Նա մէկ չհաւատաց իւր աչքերին բայց յետոյ նայեց շուրջը որ տեսնէ, թէ արդեօք ուրիշներն էլ են վկայ զազրելի եղելու թեանը. յետոյ շտապով ներս մտաւ խանութը։ Խանութում համարեա ոչինչ չէր մնացել։ Գալուստը բերանաբաց նայում էր դատարկւած դարակներին։ Նա յանկարծ յիշեց կասսան։ Մօտեցաւ արագաշունչ, բաց արաւ արկղը։ Կողպէքը կոտրած էր և արկղում փող չկար։ Գալուստը ամեն ինչ նոյն զրութեան մէջ թողեց, գունատ դէմքով և ոտն ու ձեռը դող ընկած դուրս եկաւ խանութից ու քայլերը ուղղեց դէպի իւր բնակարանը։

— Սարգիս, Սարգիս, գոչեց նա, շանթահարի նման ներս ընկնելով սենեակը, վեր կաց, տուններս քանդւել է, Սարգիս...

Սարգիսը արթնացաւ և կողքի վրա կոթնած՝ բարձրացաւ տեղից։ Մէկ աչքը փակած, իսկ միւսը կնճիռների մէջ թաղած, բայց բաց, ապշտթիւն և կատարեալ միամուլթիւն արտայացող դէմքով Գալուստին նայեց և խռպոտ ու ծոյլ ձայնով հարցրեց.

— Շըմմ, ի՞նչ է։

— Տուններս քանդւել է, խանութը կտրել են։

— Ի՞նչ... Սարգիսը տեղից վեր թռաւ և աչքերը լայն բաց արած զարմանքով նայեց Գալուստի վկայ։

— Խանութը կտրել են, վեր կաց տեսնենք, թէ ի՞նչ պիտի անենք։

— Խանութը կտրել են, հարցրեց Սարգիսը շնչասպառ, ուղիղ ես ասոււի, պա քո տունը չքանդւի։

Եւ շտապով սկսեց հագն ել։ Կարճ միջ ցից յետոյ նրանք երկուսն էլ դուռս եկան սենեակից։ Հասան խանութ, մտան ներս, այս այն կողմ նայեցին և դատարկութիւնից զատ ուրիշ ոչինչ

շտեսնելով, ոստիկանատուն գնացին։ Կէս ժամից յետոյ նրանք վերադարձան մի օստիկանի հետ, որը տեսնելով կողուղուած խանութը, սկսեց արձանագրել կատարւածը։

—Դու այս բանի մէջ ում վրա կասկած ունես, հարցրեց նա Գալուստին, վեր դնելով գրիչը։

—Առ այժմ ոչ ոքի վրա։

—Օրինակ, ընկերիդ վրա չես կասկածում։

—Ոչ, ես ինչպէս կարող եմ կասկածել ընկերիս վրա, պատասխանեց Գալուստը՝ օստիկանի այդ տարօրինակ հարցմունքից փոքր ինչ վիրաւորւած եղանակով։ Այդ հարցը Գալուստի մտքով իսկի չէր անցել և այժմ նա ինքն իրեն ասում էր՝ «Սարգիսը մի՞թէ էկողիսի անազնւութիւն կ'անի։ Մէկ էլ նա իսկի չէր կարող, քանի որ հարսանիքից շատ ուշ վերադարձաւ տուն և անքան էլ հարգած էր, որ ոտքի վրա հազիւ էր կարողանում կանգնել։»

—Իսկ դու ի՞նչ կ'ասես, դարձաւ օստիկանը Սարգսին։

—Ի՞նչ պիտի ասեմ, չգիտեմ մի է արել և ընկերոջս վրա ես էլ չեմ կասկածում։ Մինչև անգամ մի ամօթանք եմ համարում էկողիսի բան մտքովս անցկացնելու։ Թէ մի է արել էդ անիրաւութիւնը, ես չգիտեմ, երեխ գողերը կը լինեն, հա լիքը գողեր։ Դէ դրանց գտնելը ձեր գործն է։

—Այդ ես լաւ եմ հասկանում, ընդհատեց օստիկանը։ Արձանագրութիւնը պատրաստ է։ Կ'աշխատենք գտնել յանցաւորներին։

Եւ նա թողեց խանութը։

Սարգիսն ու Գալուստը մի քանի օրից յետոյ վաճառեցին խանութում մնացած աննշան ապրանքը։ Նրանց զբաղմունքը այժմ յանցաւորներին որոնելն էր մնացել։ Որոնելու գործում ժրաշան աշխատանք էր ցոյց տալիս Սարգիսը, բոյց զրա հետ միասին նա կամաց-կամաց և մեծ ուստայութեամբ մառանում թագցրած ապրանքը գիշերով տեղափոխում էր իւր ծանօթ առևտրականի խանութը և էժան գնով ծախում։ Այդպիսով նա վաճառեց բոլոր ապրանքը և վեց հարիւր ուուրլի գրանումը դրած շարունակում էր որոնել յանցաւորներին։ Նա յաճախ օստիկանատուն էր գնում խանութը կողուղուղների մասին տեղեկութիւն ստանալու համար; Խորհուրդ էր հարցնում իւր ծանօթ մարդկանցից, բայց այդ ամենը իզուր։

Եւ այն ժամանակ, երբ Սարգիսը ներքուստ ցնծում էր, Գալուստը ամեն բանից զրկւած, եօթանասուն ոռւբլի զրպանում, սլատրաստում էր կոտրւած սրտով տուն վերադսոնալու։ Նա յուսահատել էր, տեսնելով իւր դառն ճակատազիրը. վճռել էր լնդմիշտ թքել քաղաքի վրաց, վաճառականի վեշակի վրաց և գնալ գիւղում ապրուստ որոնելու։ Թէև նա զգում էր, որ իրան կրկին մի ընտանեկան փոթորիկ է սովասում տանը, որ ծնողի և եղօր նախատինքների հեղնղը նրան խեղաելու, ու ժաման է դարձնելու, բայց և այնպէս նա վճռել էր լնդմիշտ թողնել քաղաքը, ուր խեղճ երիտասարդի բախտը երբէք չէր ժպտում նրա երեսին։

Վարջին անգամ տեսնելով Սարգսի հետ, որը ճանապարհուում էր դէպի Անդրկասպեան երկիրը, Գալուստը հարցրեց նորան խանութի գործի մասին։

—Երէկ էլի դնացել էի պրիստաւի մօտ, յետոյ գնացի պոլիցմէյստերի մօտ. ասում էր զողերին դեռ չեն գտել։

—Եղ էլ մեր բախտիցն է էլի։

—Ի հարկէ, պա բախտներիցո չէ, ի՞նչ է։ Ես էլ ամեն բանից ձեռք վեր կալաց, էլ յոյս չունիմ, թէ մի բան կը դանեն։

—Հիմա մեր ես գնում, Սարգիս։

—Գնում եմ Զակասպիյակի կրայ (Անդրկասպեան երկիր), տեսնեմ կարողանալու եմ էնտեղ մի բան շինել, թէ ոչ։ Էսոնեղից էլ փայտա չկայ։

—Գնա, Ասուած քեզ յաջողութիւն տայ, Սարգիս, իսկ ես գիւղ եմ գնում, վաճառականութիւնից բոլորովին զգւեցի, տեսնում եմ որ բախտ չունիմ, մէկ էլ մեզ նման մանր-մունր առեւտրականները բան գաւնողներ չեն։ Կը գնամ զիւղը, եղբայրս հիւանդ է, նրան մի ձեռք էլ է հարկաւոր։ Տան ծանրութիւնը կամաց-կամաց ինձ վրաց է ընկնելու։ Հէնց հիմիկւանից գնամ էլի։

—Որ էդպէս է, քեզ էլ բարի ճանապարհ, յաջողութեամբ տուն հասնես, ասաց Սարգիսը և, համբուրւելով լնկերոջ հետ, մտաւ շոգենաւ։

ԺԱ. ԴԼՈՒՄ

Որպէս զի տանեցոց փոքր ինչ մխիթարած և ուրախացրած լինի իւր դալուստով, Գալուստը ունեցած փողից յիսուն ոռւբլի յառ-

կացրեց մի քանի ծախքերի. իւր համար գնեց մի ձեռք նոր շորեր, հօր համար շալէ պատրաստի արխալուխ և մի մահուդի չուխա, եղբօրը՝ մի սիւրուկ ե. շալւար, իսկ եղբօր կնոջ համար երկու ճակատանոց, երկու չիքիլա և երկու մետաքսի թաշկինակի երեխաների համար գնեց մի քանի մանր ընծաներ:

Գալուստի վերադարձը այս անգամ ամենքին ուրախացրեց, որովհետեւ նրա խանութի և գործերի յաջողութեան մասին վաղուց յայտնի էր տանեցոց:

Հայրը ևս ընդունեց իւր ընծան և օրհնեց որդուն: Ի հարկէ, Գալուստի բերածները Սինոդը համարում էր իսկապէս մի չնչին ու աննշան բան, բաց և այնպէս նա ցուսով էր և հաստատապէս կարծում էր, թէ Գալուստը բացի այդ աննշան իրերից, բերած կը լինի և փողի նսկ երբ անցաւ մի ամբողջ շաբաթ և որդին ոչ մի խօսք չբացեց Սինոդի սրտին մօտիկ հարցի մասին, այն ժամանակ հացը սուխալած եղաւ հարցնելու.

—Որդի, դէ մեզ էլ յայտնի էր, որ դու կարգին խանութ ունէիր և գործերդ շատ յաջողակ էին գնում: Բաց եթէ բերածիդիք եմ նայում, մնում եմ զարմացած ու սառած: Ինքս ինձ ասում եմ. սա ինչ ծածուկ բան է, սա ինչ է նշանակում: Ես կարծում եմ և մինչև օրս յոյս եմ ունեցել, թէ ուրեմն փող ես բերել: Ի՞նչ ես ասում, կրկնեց Սինոդը ծիծաղերես, իմ յոյսերը արդարացի են, թէ ոչ:

Հարցը շատ փափուկ էր: Գալուստը մի րոպէ լուռ մնաց: Նրա դէմքը այլայլեց: Հոգեկան այն փոթորկալի դրութիւնը, որ առաջ էր բերելու հօր մէջ իւր բացասական պատասխանը, նա իսկոյն պատկերացրեց իւր սռած: Գալուստը խոնարհեց զլուխը և չկարողացաւ այլ ևս ուղղակի հօր երեսին նայել: Նա իւր ալեկոծ դէմքը մերթ այս, մերթ միւս կողմն էր գարձնում և գող կառւի նման ճիգ էր թափում խոյս տալ մօտալուտ վտանգից:

—Հը՞ ի՞նչու չես խօսում: Ընդհատեց հայրը որդու լուռ թիւնը:

—Ի՞նչ ասեմ, թող սրտում թաղւած մնայ այն ամենը, ինչ որ գլխովս եկել է:

—Ի՞նչ է պատահել, հարցրեց Սինոդը սարսափած և կարծես մի բոթաբեր լուրի սպասելով:

— Ի՞նչ պիտի պատահի, ինչ որ ունէի, թալանեցինտարան:

— Ե՞րբ, մրուեղ, ճանապարհին, աւազակները...

— Այո, աւազակները: Ընկերովի խանութ ունէինք, մինչև ութհարիւր մանէթի ասդրանք կար մէջը: Գիշերով եկել կողոպանել էին խանութը և համարեա բոլոր ասպանքը տարել:

Սինողը, որ շարունակում էր կնճռոտած դէմքով որդու երեսին նայել և կատաղութեամբ լսել նրա պատմութիւնը, յուզւած ձայնով հարցրեց.

— Պա գողերին չբռնեցիք:

— Զէ, պոլիցիան շատ ման եկաւ, ընկերս էլ, բայց չկարողացանք ոչ գողերին գտնել և ոչ ասլրանքը:

— Գուցէ էդ բանը հենց ընկերդ է արել, շանորդիներից մէկը կը լինի:

— Ես ինչ իմանամ, գուցէ արել է:

— Էլ ինչ օգուցէ, նա արած կը լինի, զլսիդ օյին է զրել, աչքերդ մոխիր վշել ու քեզ ճանապարհ զցել: Նոչազի բան է էլի: Եթէ զու մարդ լինէիր, հիմա էդ օրում չէիր տուն զալ և բոլոր կարողութիւնդ ձեռքումդ պինդ կը պահէիր: Եթէ զու զոչազ տղալինէիր, ընկերոջդ ձեռքիցը զու կը խլէիր ամեն ինչ: Ի՞նչ անեմ, երեի զու ինձ համար մխիթարութեան համար չես ծնւել, այլ ծնւել ես, որ միշտ գառնութեան, ցաւի ու սուզի մէջ պահես ինձ: Ի՞նչ անեմ: վեր կենամ մի երկու վզակոթիդ խփեմ ու տնիցս դուրս անեմ, կ'ասեն վատ հայր է: Պա Աստւած վեր կ'առնի, գնաս քաղաք, տարիներով էնտեղ մնաս, ուժ հարիւր մանէթանոց խանութը ձեռքից բաց թողնես և բոլորովին դատարկ գաս տուն: Մեռնէի լաւ կը լինէր, քան թէ էս բանը տեսնէի:

Վառվառը փորձեց այս անգամ ևս մխիթարել սկեսրացրին և պաշտպանել Գալուստին, բայց Սինողը նրա վրա այնպէս գոռաց, որ խեղճ հարսը լռեց ու քթի տակ —

— Զհաննամը, թէ ինքդ քո ջանը կ'ուտես, ասաց, թող հողիդ դուրս գայ:

Եւ հեռացաւ գնաց իւր բանին:

Գալուստը ոչինչ չպատասխանեց հօրը: Այդ բոլորի մէջ

իրան մեղապարտ համարելով, նա շատ տխուր էր: Նա համարձակութիւն էր անում տանը միայն այն ժամանակ խօսել, երբ հայրը նրան կը խօսեցնէր:

Մոտ մի ամսից յետոյ օտարութիւնից վերադարձած տղերքը լուր բերին Գալուստին նրա ծանօթ վաճառականներից, թէ խանութի կողոպտողը հէնց իր ընկեր Սարգիսն է եղել: Լուր բերողները համառօտ և մասամբ աղաւազւած կերպով պատմում էին Սարգսի կատարած խարդախութեան ու դաւաճանութեան մասին: Գալուստը հաւատում էր այդ ամենին և իր մէջ ասում:

— Ինչ որ եղել է, եղել է, Աստած թող որը արդար է, էնպէս դատի, ով է Սարգսի յետևից ընկնողը: Գնաս, ինչ որ պիտի ստանաս, երկու էնքան էլ դատարանական ծախքեր պիտի անես: Յիմնար չեմ խօսի: Բացի այդ Սարգսի հետ գործ ունենալը շատ էլ հեշտ բան չի: Աղւէսից էլ ուստա է: Լաւն էն է թքել և մռանալ: Ինչ եղել է, եղել է:

Այդ լուրը հասաւ Սինոդի ականջին ևս: Այս անգամ նրա կատարութեանը սահման չկար: Փրփուրը բերանին նա յարձակեց որդու վրա և —

— Տեսար, տեսար, զոռաց, խարել է գլուխդ, ութ հարիւր մանէթը գրպանը դրել և քեզ տաւարի նման արել չուլը: Ախր ինչի՞ ես ապրում, ինչի, մի ասա տեսնեմ...

Այստեղ խօսքերը ընդհաստւեցին և Սինոդը սկսեց ապտակել որդուն: Կարմրեց Գալուստը և լաց եղաւ: Իւր դժբախտ ու ցաւալի վրութեան ճնշման հետ խառնւեց մեղմ ինքնասիրութեան զգացմունքը, որից շարժւեց նրա սիրուը: Գալուստը մի կողմ քաշւեց և սկսեց հեկեկալ:

— Գետինը մտնէիր դու, սրծնէինք քեզնից, զոռում էր Սինոդը բարկութեան գագաթնակէտին հասած: Էնքան յիմար լինես, որ գան ունեցածդ խլին և մեզ խայտառակես: Այս ծնւած օրդ սև լինէր, չնոկելու եմ քեզ եղբօրիցդ, էլ հերիք է, որքան ջանս կերար: Յետոյ էլ նրա ջանը պիտի ուտես: Կը ջոկեմ, գնա աշխատիր ու կեր: Նրա աշխատածը մի կողմ կը դնեմ, ինչ որ առաջ եղել է, էն կը բաժանեմ: Գնա, ջանդ դուրս գայ, փահլութիւն արա: Էլ հերիք է: Հոգիս էստեղ ես հասցրել, — նա իր մա-

ուր կոկորդի վրա գրեց, քեզ է մնում, որ քեզ դուրս անեմ էս տնից և ամեն ինչից զբկեմ: Այ գետինը մտնես դու...

—Դուրս արա, իրաւոնք ունես, ասաց Գալուստը հեկեկալով, միանդամից սպանիր ինձ ազատում էլիս: Ի՞նչ օրեր եմ քաշել քո ձեռքին մինչեւ օրս: Կեանքս միշտ ուե ես արել: Հիմիկւանից եղբօրեղբօր մէջ ուզում ես երկառակութիւն գցել: Ես էլ էս տանը չեմ մնալ: Դուրս կը գնամ: Դու հանգիստ ապրիր: Ոչինչ էլ չեմ ուզում քեզանից, միայն թէ դու կշանաս: Ես փահլութիւն կանեմ, կ'ապրեմ:

Գալուստը վերցրեց գլխարկը և սկսեց դուրս գնալ:

—Եղբայր, էդ ինչ ես անում, ասաց Վառվառը, բռնելով Գալուստի թերից, ուզում ես մեզ խայտառակելու: Հայրդ է, թունդ խասիաթ ունի, ինչ որ ասում է, տար, վնաս չունի:

—Ասր մինչեւ երբ տանեմ: Էշը որ էշ է, երեք անգամ խփելուց արդէն աքացիներ է տալիս: Պա ես մարդ չեմ, պա ես խեղճ չեմ:

—Թող գնամ, թող կորչի էս տնից, գոչում էր Սինոդը դեռ կատաղութեան մէջ, թող կորչի, որ էս տունը մաքրւի և մենք էլ պրծնենք զրա ձեռքից: Դա աշխատանք բերող չի, այլ հաց փշացնող:

—Հայր, զու էլ չես լաւ խօսում, մէջ մատ կրկին Վառվառը: մարդ էդքան էլ թունզ, էդքան էլ անխիղճ կը լինի: Լաւ է, վատ է, քո որդին է, դրա բազգն էլ էդպէս է, ինչ արած, ինքը մեղաւոր է: Ի՞նչ անի խեղճը, որ էնպէս անպիտան ընկերի է պատահել. իր սիրու ուզիդ, նրանը ծուռ, չար: Այ, քար ընկնի էդպէս անիրաւ. մարդու գլխին: Այ Աստւած, ունեղածը իր տաղ կեանքում միայն բժիշկի տայ, մի ուրախ օր չտեսնի: Ի՞նչ անի խեղճ տղան, ինքը հաւատարիմ, իսկ ընկերը նենգամիու: Հայր, ախր մէկ սրանք էլ պիտի միաք անես.

—Ինքը նրան խարէր, ինքը: Կամ թէ ինչու է ընկերին բաց թողել: Որ ասում էի մի բանի պէտք չի: Ե՛կ, հերիք է, ինձ մի խօսցնիլ, սիրոս ճաքւում է:

—Հայր, էլի համբերութիւնը, էլի գոհութիւնը կը տանի: Գալուստին դուրս արեցիր, նա էլ դուրս եկաւ, յետոյ սրա եղբայրը որ դայ, ինչ կ'ասի:

—Եղբացը որ գայ, կարծում ես դրա ճակատիցը պաշելու է: Մի երկու ապտակ էլ նա կը խփի էդ անպիտանի երեսին և կ'ասի՝ «չովկում եմ» յիմար չեմ, որ քեզ նման յիմարի հետ ապրեմ: Ես աշխատեմ, դու գաս ուտե՞ս: Դեռ հիմա մենակ ես, յետոյ որ կնիկ տանես, երեխաներ ունենաս...»: Հազիր հէնց ջոկւելու լաւ ժամանակն է էլի:

—Ի՞նչու ես էդպէս բաներ խօսում, հայր, ասաց կրկին Վառվառը, դու ախր մի մեծ մարդ ես, ինքդ հասկացող: Պա քո խիդար ինչպէս է տանում, որ հիմիկւանից երկու եղբօր մէջ երկպառակութիւն ես զցում:

Վառվառը արտասւեց:

—Սիր դու դրանով մի մեղք ես գործում, շարունակեց նա: գուցէ եղբայր եղբօր հետ սիրով են լինելու, դու ինչու ես հիմիկւանից էդպէս չարչար բաներ խօսում:

—Լաւ, լաւ, կոշտութեամբ ընդհատեց Սինոդը, հերիք է, կարօտ չեմ ձեր լացին ու հաջոցին: Գնացէք սոված կոտորւեցէք:

Փոթորիկը կամաց-կամաց հանդարտւեց և վիճողները հեռացան միմեանցից:

Այդ գէպքից յետոյ Սինոդը այլ ես չէր խօսում ոչ հարսի և ոչ որդու հետ: Տան վրայ կարծես մի սև վարագոյր էր իջել: Անբաւականութիւնն ու արտամութիւնը համարեա ոչ մի օր չէր վերանում այդ ընտանիքից: Ամենքն էլ անհամբեր սպասում էին Համբարձումի վերագարձին, որը արգէն ճանապարհ էր ընկել Թաւրիզից: Նա իւր գալովը վերջ կը տար ընտանեկան երկպառակութեան ու կը պատռէր տան վրա կախւած սև վարագոյրը:

ԺԲ. Դլուխ

Համբարձումն ու իւր ընկերները առանց մի փորձանքի Թաւրիզ հասան: Տեղ հասնելուց երկու օր յետոյ նրանք ներկայացան քաղաքի նշանաւոր բժշկին, որը ազգով գերմանացի էր և որը այդտեղ ահադին ժողովրդականութիւն ունէր:

Բժիշկը չորս հիւանդին էլ քննեց և ասաց հետեւալլ.

—Դուք երկուսդ, որ ոսների վրա վէրքեր ունէք, կարող էք

այստեղ և երկար չմնալ, մանաւանդ որ օտար տեղից էք եկել. Ես ձեզ կը տամ հարկաւոր դեղեր, կը բացատրեմ գործածելու եղանակը, կ'ասեմ ձեզ այն, թէ ինչ փահրիզ<sup>1)</sup> պիտի պահէք և ինչ պայմաններում պիտի պահպանէք ձեր վէրքերը: Յուսով եմ, որ դուք այդպիսով անպատճառ կ'ազատւէք հիւանդութիւնից: Չնայած դրան՝ այնուամենայնիւ ցանկալի է, որ դուք ինձ մօտ ամենապահասը երկու շաբաթ մնաք: Մի առ ժամանակ ես ինքս պիտի խնամք տանեմ ձեր հիւանդութեան համար:

— Նատ լաւ, շնորհակալ ենք, սաղ լինի բժիշկը, ասացին վէրքերով հիւանդները և դլուխ տալով մի կողմ քաշւեցին:

— Իսկ դու, շարունակեց բժիշկը, դառնալով ջրգողով հիւանդին, դու յատկապէս ինձ մօտ պիտի մնաս, որովհետեւ այդ հիւանդութիւնը բժիշկը անպատճառ իր ձեռքով պիտի բժշկէ: Քո բժշկւելը մօտ մի ամիս կը տեի:

Նոյնը ասաց և Համբարձումին ու աւելացրեց, թէ նրա հիւանդութիւնը բարդւած է բաւականին և որ ուրեմն շատ զեղերի գործածութիւն է պահանջում:

— Նրա հետ միասին, շարունակեց բժիշկը, դու ուտելեղէնների մէջ որոշեալ ընտրութիւն պիտի անես: Այդ ես քեզ կ'ասեմ և պիտի ապրես վերին աստիճանի առողջապահական պայմանների մէջ: Այժմ գնացէք, վաղւանից կը սկսեմ բժշկել ձեզ: Ինձ մօտ կը գաք միշտ առտևատեան ժամը 10-ին: Հա, աւելացրեց բժիշկը, դուք հիւանդ մարդիկ էք, անպատճառ մաքուր սենեակներում ալրեցէք և ընդհանրապէս մաքուր պահէք ձեզ: Այս քաղաքը շատ կեղտոտ տեղ է, փող մի խնայէք և մաքուր տեղ վարձեցէք ալրելու համար:

Տղերքը կրկին շնորհակալութիւն յայտնեցին և գլուխ տալով դուրս եկան բժշկի մօտից: Առաջին երկու հիւանդը ուրախ էին, որ շուտ և հեշտ էին ազատւելու իրանց վէրքերից: Նրանք գնում էին առ ջեկից և միասին: Դառնալով միմեանց, նրանք ուրախ ձացնով բացականչում էին.

— Ես որ ասում էի գնանք Թաւրիզ, մեր ճարը Թաւրիզ/

<sup>1)</sup> Պահեցողութիւն:

բժիշկը կը տեսնէ: Խզուր տեղից էնքան ծախսեր արեցինք և մեղ էս դալլաքի, էն դալլաքի ձեռքը զցեցինք:

Զրգողը և Համբարձումը գնում էին յետուից և լուս նրանք երկուսն էլ տխուր էին, որ իրանց բժշկւելը երկար է տևելու: Համբարձումի մտքում շարունակ մի բան էր պատտւում:

— Շանորդի բժիշկը ինչու էդպէս խօսեց իմ մասին: Ինձ ամենից երկար է պահելու և գիտեմ, որ շատ ծախս է նատելու: Էնպէս որ նա էր խօսում, ով գիտէ ես էստեղ օրական ինչքան պիտի մախեմ: Տեսնենք:

Եւ նա շարունակում էր լուս, տխուր ու մտախո՞չ քայլերով անցնել փողոցները:

— Տղերք, ասաց ջրգողը, բժիշկը ախր մեր սենեակի մասին էլ խօսք խօսաց, ասում էր մաքուր տեղում ապրեցէք Բայց էնտեղ, որ մենք ենք ապրում, տաւար էլ կապես, չի մնալ:

— Նատ լաւ տեղ է, պատասխանեց Համբարձումը, բժշկի ամեն ասածին խօմ ա՚խանջ չեն զնիլ: Ամեն մէկս օրական որ հինգ կոպէկ քրէն տաց, էդ մւր կը գնաց: Հացի փող կայ, դեղի փող կայ, բժշկի փող կայ...:

— Հացի փող էլ է ասում, ծաղրեց ջրգողը, քմծիծաղ անելով, ուտելու համար օլական ի՞նչ ես տալիս. երկու շահի: Կերածներս էլ հաց ու պանիր է, կամ հաց ու քիշմիշ.

— Պա ի՞նչ պիտի ուտես, ասա տեսնենք, ամեն օր խոմ եղ չեն մորթելու քեզ համար: Պիտի մի քիչ խնացէնք ախր:

— Համբարձումը ուղիղ է ասում, ձայնակցեց վէրքերից հիւանդներից առաջնը, պիտի խնացնք, պիտի խնացնք:

— Ի հարկէ, ասաց երկրորդը:

— Լաւ, պիտի խնացնք, շարունակեց վիճաբանել Ջրգողը. պա որ բժիշկը հրամայի, թէ ամեն օր միս պիտի ուտեք, իւղեղէն և զանազան ուրիշ-ուրիշ ուտելիքներ գործածէք, էն ժամանակ էլ ինչպէս կը խնացէք:

— Պա, ծիծաղեցին ամենքը միասին, մեծ բան ասացիր, ի՞նչ կ'անենք, չենք առնիլ, չենք ուտիլ, բժիշկը ի՞նչ է իմանալու:

— Եղբայր, պիտի խնացնք, կրկնեց Համբարձումը:

— Ի՞նչ եմ ասում, ի հարկէ, պիտի խնացնք; շուտով համոլ-

ւեց ջրգողը. ի հարկէ, բժշկին շատ էլ ականջ չպիտի զնել: Բժիշկը իր գեղերով պիտի գործ առաջ տանի, թէ չէ, կերակուրները ինչ բան են:

Ամենքն էլ այդ եղբակացութեանը եկան: Շուտով նրանք հասան իրենց բնակարանը, որ գտնւում էր մի նեղ ու կեղտոտ փողոցում: Խսկապէս որ այդտեղ տաւար անգամ չէր մնալ: Դա հում աղիւսից շինած մի փոքրիկ, ցածր ու խոնաւ սենեակ էր, շինութեան ներքին յարկում և փողոցից շատ ցածր: Լոյսը ներս էր թափանցում այդտեղ մաշւած դռան ճեղքերից: Սաստիկ մթութեանը նպաստում էր պատերի ու առաստաղի սեռութիւնը, որը առաջացել էր սենեակի մէջ տեղում շինւած օջախի ծխից: Յատակը քրքրած էր և փոշոտ:

Ահա մի այդպիսի նկուղում էին ապրում մեր հիւանդները:

Անցաւ երկու շաբաթ:

Վէրքերով հիւանդները իրանց արդէն լաւ էին զգում: Նրանք ստացել էին բժշկից հարկաւոր դեղերն ու պատէրները և պատրաստում էին ճանապարհ ընկնելու դէպի հայրինիք:

—Ես էլ եմ ձեզ հետ գալու, ասաց ջրգողով հիւանդը, ես էլ ինձ լաւ եմ զգում:

—Պա չէ որ բժիշկը քեզ ասել է պիտի ամենապակասը մի ամիս էստեղ մնաս:

—Նատ էլ ասել է, իր օգտի համար է ասել էլի: Կը խնդրեմ, ինձ էլ դեղեր կը տայ, կը գնանք: Համբարձում, դու թնչ ես ասում:

—Պա ես ցիմար չեմ, որ մնամ: Խնչքան որ դեղի ու բժշկին փող տւինք, հերիք է: Եթէ լաւացնող լինի բժիշկը, մինչև հիմա պիտի լաւացրած լինի: Երկու շաբաթը քիչ ժամանակ է:

—Քո առողջութիւնը թնչպէս է, Համբարձում:

—Բժիշկը ինձ էլ բաւականին լաւացրել է, ինչու պիտի սուտ խօսամ, հոգիս ացրեմ:

Այդ խօսակցութեան հետևեալ օրը Համբարձումն ու ջրգողը յայտնեցին բժշկին իրանց մտադրութիւնը: Բժիշկը նրանց վրա բարկացաւ, նախատեց ու ասաց, թէ դեռ պէտք է մնան:

—Դուք եկէլ եք ինձ մօտ՝ արմատապէս բժշկւելու, թէ հէնց

մի քիչ ձեզ լաւ զգաք ու թողնէք: Եթէ այդպէս է, այն ժա-  
նակ դուք իզուր ինձ մօտ եկաք:

—Պարոն բժիշկ, խօսաց Համբարձումը, հիմա մենք շատ առ-  
ողջ ենք, մեզ էլ զեղեր տւէք, գնանք:

—Ո՞հ, զայրացաւ բժիշկը, առողջ ենք, շատ ես հասկանում:  
Եթէ դու էլ ես բժիշկ, այն ժամանակ ինքդ քեզ բժշկելր, էլ ուր  
եկար ինձ մօտ: Դուք երկուսդ էլ դեռ կատարելապէս առողջ չեք:

—Ընկերներս դնում են:

—Խնչ անենք, դուք էլ ժամանակին կը գնաք:

—Ախր, պարոն բժիշկ, կակազելով և ծիծաղելով առաց Համ-  
բարձումը, ախր շատ ծախք կը նստի մեզ վրա, եղբանին չենք կա-  
րող դիմանալ:

—Հաա, եթէ դուք ցանկանում էք ձրի բժշկւել, այդ ուրիշ  
հարց է: Ես ձեղ ձրի չեմ կարող բժշկել, բայց էճան կարող եմ:  
Եւ չկարծէք, թէ ձեզնից ես շատ եմ պահանջել դեղի ու վարձի  
համար: Պարտք արեցէք, առողջութիւնից թանդ բան չկաց մար-  
զու համար:

—Զէ, պարոն բժիշկ, էսուզ ոչ ոք չունենք, որ պարտք առ-  
նենք: Մենք պիտի գնանք: Չեր վարձը ստացէք, մեզ ևս զեղեր  
տւէք, խրատներ, պատէրներ տւէք, գնանք:

Բժիշկը մի քանի վայրկեան լուռ մնաց, անց ու դարձ արաւ  
սենեակում, յետոյ կանդ առաւ Համբարձումի առաջ և ուղղակի  
նրա երեսին նայելով, գոռաց.

—Տիսմար, այսուհետեւ էլ ինձ մօտ չգաս, լսեցիր: Հասկացիր,  
իշխութիւն, որ անազնութիւն է այն, երբ գալիս էք մի բժիշկի  
մօտ առողջանալու, կիսատ էք թողնաւմ ամեն ինչ և հեռանում:  
Եւ եթէ յետոյ ձեր գլխին մի փորձանք գայ, այդ գալու է, այն  
ժամանակ կ'ասէք բժիշկը վատ բժիշկ էր, չկարողացաւ բժշկել,  
խաբեց, փող առաւ և այլ այսպիսի լրբարանութիւններ: Ես ձեղ  
կրկնում եմ, մնացէք մի երկու շաբաթ ևս, կատարելապէս բժշ-  
կւեցէք և յետոյ գնացէք, ուր կամենաք: Հայրենիք գնալով դուք  
ձեղ չեք պահելու այնպէս, ինչպէս որ հարկաւորն է: Այդ ես գի-  
տեմ, դուք գիւղացիներ էք: Այդ պատճառով հիւանդութիւնը նո-  
րից կ'արթնանայ ձեր մէջ, որովհետեւ նա այժմ դեռ մեռած է

ձեր մարդում: Ուրիշն կրկնում եմ, բոլորովին առողջացէք և յետոց գնացէք: Այսքանը իմ պարտքն եմ համարում ասելու, մնացածը դուք դիտէք: Դրւք ինձանից ոչ զեղեր կը ստանաք և ոչ պատէրներ:

Եւ նորից սկսեց անց ու դարձ անել սենեակում: Հիւանդները լուս ու մունջ բժշկին էին նայում: Վերջապէս Համբարձումը կը բիշին խօսաց.

—Պարոն բժիշկ, շատ շնորհակալ ենք, բայց դէ պիտի գնանք, չենք կարող մնալ: Դեղեր տուր մեզ, խեղճ ենք:

—Իմ կանոններում չկայ այդ: Կիսատ բժշկւողին ես չեմ կարող դեղ տալ, իզուր էք խօսում: Միայն դու, Համբարձում, հոգով շատ հանդիսու պիտի սպահես քեզ և չափաւոր աշխատանք պիտի կատարես:

Համբարձումն ու ջրգողը վճարեցին բժշկի վարձը և դուրս գնացին:

—Տեսմք շան որդին ինչպէս էր բարկանում մեզ վրա, ասաց Համբարձումը ընկերոջը, ինչ է, գնում ենք, օգտից զրկւում է, նրա համար կատաղում էր: Եզրքան որ ծախս անենք բժշկւելու համար, մւր կը գնայ: Լաւացել ենք էլի, էնպէս չի:

—Ի հարկէ, պատասխանեց ջրգողը: Բայց տեսմք, ինձ ոչ խօսացը և ոչ էլ մի պատէր տեց:

—Եւս էր բարկացել, ով զիտէ, դու իսկի աչքովը չես ընկելր Վնաս չունի, լաւը սա է: Մենք էլ ալսր մեր օգտի մասին պիտի մտածենք: Ես էսօր ապրանք կ'առնեմ ու ճանապարհ կընկնենք:

Հետեւալ օրը երեկոյեան դէմ մեր հիւանդները Թաւրիզից ճանապարհ ընկան դէպի հայրենիք:

Զորս օրից յետոց նրանք հասան Արաքսի ափը: Գիշեր էլ: Համբարձումը իւր ապրանքը թողնելով պարսկական ափում, ընկերների հետ ինքն էլ անցաւ. Արաքսը: Ընկերները դիւդ զնացին, իսկ ինքը մոռաւ պոսաը, որ ճանապարհից մի քանի քայլ վերև էր գանւում: տեսաւ կազակների զլիաւորին, յայսնեց նրան, թէ ապրանք ունէ անցկացնելու և խնդրեց, որ կտղակները նեղութիւն չտան իրեն: Նա կաշառք տեսեց զինորին և խոստացաւ էլի տալ, եթէ ապրանքը յաջողութեամբ անցկացնէ և առանց մի փորձանքի տեղ հասցնէ:

Կազակների գլխաւորը պատասխանեց.

— Դնացէք, անցկացրէք Ոչինչ չի լինիլ, միամիտ եղէք: Ես մնացած զինւորներին կասիմ, որ ձեզ նեղութիւն չտան: Ապրանքը շատ է:

Այս, մօտ չորս հարիւր մանէթի:

Համբարձումը հեռացաւ, հասաւ նաւավարին, կրկին անցաւ Արաքսը և պատրաստի մարդկանց օգնութեամբ բոլոր ապրանքը անցկացրեց ուսական ափը: Այդուեղ նրան սպասում էին գիւղից եկած մի քանի երիտասարդներ իրանց ջորիներով, որոնց իմաց էին տւել Համբարձումի ընկներները: Ապրանքը բեռնեցին ջորիներին և ճանապարհ ընկան:

Երբ Համբարձումը թողեց պոստու ու գնաց իւր ապրանքի յետեից, կազակների գլխաւորին երեք ժամից յետոյ հրաման հասաւ, թէ առաւօտեան դէմ հարիւրապետը այցելելու է պոստը և որ ուժեմն պատրաստ կենան ընդունելու սպացին: Բոլոր կազակներին իմաց տւին այդ և նրանք ամենքն էլ սկսեցին կարգի բերել թէ պոստը և թէ իրենց իրեղները: Գլխաւորը հրամացեց օրապահ զինւորին, որ նա զգոյշ լինի ընդհանրապէս և կասկածաւոր անցորդներին կանգնեցնէ պոստի առջև:

— Գալիս է հարիւրապետը. կանտրաբանդ բաց կը թողնենք և փորձանքի մէջ կ'ընդնենք: Զգոյշ կաց: Կարծեմ քիչ յետոյ մի կարաւան պիտի գայ անցնի: Կը հրամացիս, որ կանգնեն:

Հրամանը տեղ հասնելուց երկու ժամ անցած՝ պոստի առջեւ երեացին Համբարձումի քրէհոտարները: Լոյսը նոր էր ծագում:

— Կանգնեցէք, գոշեց օրապահ զինւորը:

— Ականջ մի դրէք, տղերք, ասաց Համբարձումը կամացուկ, ջորիները քշեցէք:

— Կանգնեցէք, կրկնեց օրապահը, փամփուշտ դնելով հրացանի մէջ: Քրէհոտարները էլ չլսեցին Համբարձումին և կանգ առան: Կանգնեց Համբարձումն էլ: Պոստից <sup>1)</sup> շուտով գուրս վազեցին բոլոր զինւորները, բռնեցին ջորիների սահմանից և քշեցին դէպի պոստը:

<sup>1)</sup> Սահմանապահ զինւորական պահակատեղ:

— Կանուրաբանդա <sup>1)</sup> է, համա, ասում էին սպասնական եղանակով  
մի քանի զինորներ, ախ դուք մաշեննիշներ <sup>2)</sup>):

— Զեր ապրանքը պիտի անպատճառ տեսնենք, ասաց գլւա-  
ռորը, մենք կասկածում ենք:

— Միթէ դու իմ գաղտնիքը չգիտես, փափսաց նրա ականջին  
Համբարձումը:

— Յիմարութիւններ մի' խօսա, և ձայնդ կտրիր, թէ չէ աւելի  
վաս կը լինի:

Համբարձումը յիշեցրեց գլւառորին նրա խոստումը, իւր տւած  
կաշառքը, ասաց թէ այդպիսի վարմունքը անխղճութիւն է, ան-  
ասուածութիւն է, բայց քարասիրտ կազակը ուրանում էր ամեն  
ինչ և յաճախ կրկնում:

— Ես ոչինչ չգիտեմ:

Երբ Համբարձումը սկսեց լաց լինել ու աղերսել, կազակը պա-  
տասխանեց, թէ նա այլ ևս անկարող է օդնել, որովհետև հարիւ-  
րապետը պիտի գայ:

Ապրանքների բռնւելուց մի քանի ժամ յետոց եկաւ հարիւրա-  
պետը և վեց զինորով ապրանք ու մարդկանց ուղարկեց մօտիկ  
գտնուող գաւառական բաղաքի մաքսատունը:

### ԺԳ. Գլուխ

**Այդ լուրը նոյն օրը երեկոյեան հասաւ Սինոդ Վուկասի  
ականջին:**

— Վայ ինձ, դոչեց նա, որդուս ապրանքը բռնւած է:...

Եւ շանթահարի նման գետին գլորեց: Նա ուշքից գնաց:  
Որդին և հարսը սառը ջուր բերեցին, սրսկեցին ծերունու երեսին,  
հարեցին մարմինը և մի կերպ ուշքի բերին փողասէր հօրը:

— Զին պատրաստեցէք, ասաց Սինոդը, ես պիտի գնամ տա-  
մոժնէն <sup>3)</sup>, էսպէս չէ կարելի թողնել, զոնէ պիտի էնպէս անել, որ  
չորիները չկորչեն:

<sup>1)</sup> Ուստական արտասահութիւն կոնուրաբանդ բառի:

<sup>2)</sup> Խաքեբանելու:—<sup>3)</sup> Մաքսատուն:

Սինոդը ուղեղորւեց դէսի զաւառական քաղաքը և ճանապարհին ահա թէ ինչ էր մտածում.

«Կարողանացինք ամբողջ գործը քրէհոտարների վրայ ձգել; Դէ ջորիները ապրանքներով նրանց ձեռքին է բռնւած, ապրանքը թէն կը կորչի, բայց դէ տղաս սուղի<sup>1)</sup> տակ չի ընկնիլ և շորավից<sup>2)</sup> կ'ազառուենք: Տէր Աստւած, դու էս բանը յաջողես: Այ սուրբ Սարգիս, քո զօրութեանը ես զուրբան լինիմ, դու իմ աղին օգնութեան հասիր. մի լաւ ոչխար քեզ պիտի մատաղ անեմ: Խեղճ է տղաս, պա Աստւած վեր կ'առնի, որ նա համ ապրանքից զրկվի, համ էլ շորավ տայ:

Այսպէս էր մտածում Սինոդը, բայց երբ գաւառական քաղաքը հասաւ, տեսաւ որդուն ու նրանից տեղեկութիւններ ստացաւ գործի մասին, յայսերը ամբողջովին խորտակւեցան: Իբրև մաքսանենդ ապրանքի տէր ճանաչւած էր Համբարձումը, համաձայն սպայի յայտարարութեան: Ամբողջ ապրանքը ջորիների հետ միասին ռտորդով<sup>3)</sup> պիտի ծախէին, իսկ գործը պիտի յանձնւէր դատարան:

«Կորաւ, կորաւ ամեն ինչ, մտածում էր Սինոդը, եթէ շորավն էլ մեծ լինի, էն ժամանակ տունս զլիիս կը քանդւի, մոխիր կը դառնայ:

Համբարձումը բոլորովին շշմած էր: Նրա երեսի գոյնը թռել էր:

Երկու օրւայ մէջ աչքերը խոր-խոր էին ընկել: Աչինչ չէր խօսում և ապուշի ու մոլորւածի նման դէս ու դէն էր գնում: Հայր ու որդի միմեանց էին նայում և զլուխները օրօրելով ախ ու վախ անում:

Տորզի օրը Սինոդը կարողացաւ ջորիները էժան գներով յետ վերցնել: Նա խնդրեց մի քանի ծանօթ անձերի, որոնք ներկայ գտնւելով աճուրդին, գնեցին ջորիները և յանձնեցին տէրերին: Հետևեալ օրը ամենքն էլ վերադարձան զիւղը:

Էլ ոչ չէր մնացել ոչ Սինոդի և ոչ որդու մէջ: Երկինքը մթնել էր նրանց զլիխն և նրանք չէին գգում: թէ ճանապարհ են գնում: Վառվառը օտարութիւնից վերադարձող ամուսնուն, փոխանակ սիրով և ուրախութեամբ հանդիպելու, ընդունեց բաւական

<sup>1)</sup> Դատաստան: — <sup>2)</sup> Տուղանք: — <sup>3)</sup> Աճուրդ:

սառնութեամբ և մեղմագին եղանակով սկսեց նախատել Համբարձումին:

—Որ քեզ ասում էի թող էդ զահրումար զաշաղութիւնը <sup>1)</sup> որ ասում էի զրա ժամանակը չի, ինձ չէիր լսում: Էդ ի՞նչ է եղել զոյնդ: Պատի զոյնն է եղել: Մենք էլ ուրախ էինք, թէ զնացել ես թժշկւելու: Ինչպէս զնացիր, էնպէս էլ եկել ես, և էդքան էլ վնասի տակ ընկար:

—Ես որ իմանայի, թէ էսպիսի բան է պատահելու, իսկի ապրանք կառնէի: Նան որդի զազախներին հաւատացի, ապրանք բերայ և էդ ձախորդութիւնը եկաւ գլուխս: Ասենք ապրանքը ջհանամը: իմ ցաւն ու զարդն էն է, թէ սուզը ինչպէս է զործը վճռելու: Եթէ շարաֆի տակ գցեցին մեզ, էն ժամանակ ունեցած ներս պիտի ծախենք, որ էդ շորանֆը տանք:

—Ո՞վ է մեղաւոր, ասաց Վառվառը խռովածի պէս, (և երեսը շրջելով մի կողմ), ագահ մարդու վերջը էդպէս կը լինի, էլի:

Իսկ Սինողը ինքն իրեն մրժնջում էր.

—Տէր Ասուած, հօգիս առ ազատեմ: Ես քանիքանի ցաւեր բերիր իմ գլուխը: Մեծ որդիս հիւանդ, ինքն էլ էդպիսի ձախորդութեան տակ ընկած: Փոքրս անպէտք, չիմար ու դասարի տուն եկած: Եթէ սա փող բերած լինէր, հիմա միամիտ կը լինէի: Եթէ, Ասուած մի արացէ, շարաֆ նշանակեցին, էն ժամանակ ի՞նչ է լինելու իմ ճարը:

Գիւղացիներից շատերը, որոնք խօսում էին այդ գէպքի մասին և ցաւակցութիւն էին արտայացում Համբարձումի ծանր դրութեան առիթով, վերջը աւելացնում էին.

—Ի՞նչ խիզճ, արդար դատաստանը հէնց էդ է. մեր հարեւան գիւղերում քանիսների տունն է քանդել: Սաղ կարողութիւնը վատ ճանապարհով է աշխատել: Էդ պատճառավ ինչպէս որ եկել է, էնպէս էլ մի անգամից ձեռքներիցը պիտի դուրս դայ: Քամու բերածը քամին էլ կը տանի:

Սինողի ամբողջ լնտանիքը անհամբեր ու անհանգիստ հոգով սպասում էր գատարանի վճռին: Ծերունին օրէցօր ոտքի վրա մաշ-

<sup>1)</sup> Մաքսանենգ ապրանք անցկացնելը:

ւում էր: Չարաբաստ դէպքից յետոյ նրա մէջ հանգչել էր ամեն ինչ, ոյժ, եռանդ և յոյս: Այժմ նա զգում էր, որ ինքը օրօրի վրայ մօտենում է գերեզմանի դռան:

Կէս տարուց յետոյ քննուեց Համբարձումի գործը և դատարանը նրան և նթարկեց հազար ոռուրլու տուգանքին Համբարձումը կամեցաւ գործը պալատ զցել, իսկ եթէ այնտեղ էլ անյաջող լինի, սենատ, բայց հասկացող մարդիկ նրան խորհուրդ չտւին այդ քայլն անելու. նրանք պնդում էին, թէ դատաստանական այդ բարձր մասերում տուգանքը անշուշտ կը կրկնապատկեն և գուցէ դեռ ուրիշ պատիժ էլ նշանակեն:

Համբարձումը հազիւ հաւաճայնուեց հասկացողների հետ և տուն վերաբարձաւ: Երբ տանեցիք լսեցին դատարանի վճիռը, ամենքն էլ միմեանց երեսի նայեցին, յետոյ գլուխները գետին խոնարհեցին ու մնացին քարացած: Մի ըոսէ այդպէս արձանացած մնալով, նրանք կրկին բարձրացրին իրանց գլուխները, նորից միմեանց երեսի նայեցին և միութիւն քաշելով գնացին դէս ու դէս:

Միւս օրը Մինոդը այլ ևս չկարողացաւ անկողնից վեր կենալ: Նա սաստիկ տաքութիւն ունէր և հազիւ էր կարողանում խօսել: Համբարձումը մի քանի օրւայ ընթացքում պատրաստեց հազար ոռուրլին և յանձնեց տանուտէրին: Տանուտէրը այդ փողը պրիստաւին պիտի յանձնէր, իսկ նա էլ ըստ պատկանելոյն:

Հազար ոռուրլին լրացնելու համար Համբարձումը ստիպւած էր քաւականին իրեղէններ ծախսել անամիջից և մեծ թւով էլ կենդանիներ: Համբարձումի ձեռքերը ծոցումն էին մնացել: Դլխարկը աչքերը զցած, նա նստած էր տանը և լացում էր իւր սե օրերը:

— Ի՞նչ ես էդքան ախ ու վախ անում, նկատում էր նրան կինը կոշոութեամբ, սուտ չեն ասում, թէ քամու բերածը քամին էլ կը տանի: Ել ինչ հարկաւոր է, ուրեմն, ախ ու վախ անելը:

Համբարձումը ոչինչ չէր պատասխանում և շարունակում էր իւր հառաջանքները: Նա այնքան տխուր էր, որ եթէ սրտին դանակ տայցիր, արին չէր կաթիլ:

Մինոդի գրութիւնը քանի գնում վատթարանում էր: Կատարւած աղէտը և որդու թշւառ դրութիւնը անողոք կերպով տանջում էին նրան: Մի գիշեր տանեցիք բոլորովին ձեռք վերցրին

նրանից, այնպէս որ քահանան եկաւ և սրբութիւն տւեց հիւանդին, բայց հետեւեալ օր առաւօտեան նա կրկին ապրելու նշաններ ցոյց տւեց: Վաղանցուկ էին այդ նշանները: Հիւանդութիւնը արդէն չաղթել էր այդ մարդուն և արծաթաւէր ծերունին այժմ իր հոգու մասին էր մոռածում: Արթնացած խիզձը նրան հանգիստ չէր տալիս և նա տանջում էր ու տանջում:

Երկու որդիքն էլ հերթով պահպանում էին իրենց հօրը և ամբողջ օրը նստած էին մնում նրա անփողնու մօտ: Գուցէ Սինոդ Դուկասը մի քանի օր էլ աւելի ապրէր, բայց մի դէպքի պատճառով յանկարծակի ընդհատեց ուժասպառ. ծերունու փառաւոր կեանքի ախուր վերջաբանը Տրադիկան էր այդ մահը:

Մի երեկոյ, երբ հիւանդը որդոց օգնութեամբ փոքր ինչ բարձրացել էր տեղից և մէջքը դարձրած բարձերին թէք տւածհանգստանում էր, հեալով ներս ընկաւ սենեակը Համբարձումի մեծ որդին՝ Աշոաը, որ տասեչորս տարեկան մի պատանի էր, և բացականչեց.

— Նրկնքովը լոյս անցաւ, երկնքովը լոյս անցաւ:

Համբարձումն ու Գալուստը հետաքրքրութեամբ պատանու վրա նայեցին և պատասխանեցին լոռութեամբ: Սինոդն էլ լսեց թոռան խօսքերը ու հասկացաւ: Նա յանկարծ պղղեց իւր աշքերը: Նրթունքների վրա փաղլեց մի մեղմ ժպիտ և նա շշնջաց.

— Ում տան վրայով էր անցնում լոյսը, որդի:

— Մեր տան, մեր տան վրայով, մեծ, մի մեծ լոյս էր, էնուկու արադ էր գնում որ... Դնաց, զնաց, յետոյ կորաւ:

— Կորմն, պա ոչինչ չխնդրեցիր լոյսից, փող, հարստութիւն:

— Զէ, պապիկ:

— Սինոդի երեսը էլի մուալլւեց, կնճիւները հաւաքւեցին նրա ճակատի ու աչքերի շուրջը, դէմքը մի տեսակ անբաւականութեան, ատելութեան և չարութեան արտայայտութիւն ընդունեց և նա հազիւ լսելի ձայնով ասաց.

— Պա ինչու չխնդրեցիր, այ լիմար: Տէր Աստւած, ինչու էդքան անզութ ես դու: Բայց չէ, զու անզութ չես, մեզայ քեզ... էդ իմ բախտիցն է և կամ մեղքերիս շատութիւնիցն է: Ամեն տեղ ձախորդութիւն, հարստութիւնը դալիս է տանս վրայով անց-

նում և... Այ յիմար, պա չէիր իմանում, որ լոյսից փող ուղես, կը տաց... Պա քեզ չէի ասել... Վայ, վայ ինձ, հոդիս դուրս է չալիս, պառկեցրէք ինձ. յոդնեցի... վայ...

Որդիքը հանդարառութեամբ և մեծ խնամքով պառկեցրին հօրը չիւանդը իսկոյն սկսեց խոկել: Բացում՝ էր աչքերը, անորոշ ոլորումներ էր կատարում, փակում, բաց էր անում բերանը և երբեմն ձեռքը աչքերն էր տանում ու տրորում: Մշտնջենական սև վարագոյրը կամաց-կամաց իջնում էր նրա աչքերի մէջ և ծերունին տրորում էր թանկագին գործարանի կոպերը, որ կարողանայ լոյսը պարզ տեսնել: Մի քանի բոպէ ևս, և անկողնում ընկած էր միայն հիւանդի սառը դիակը:

Թոռան սխալմունքը մի նոր հարւած էր Սինոդի համար, որին նա այլ ևս չկարողացաւ դիմանալ:

Առաւոտեան, երբ խօսք բացւեց երկնքով անցնող լոյսի մասին, յայտնեց, որ դա ոչ թէ մետէօրական երևոյթ է եղել, որը ժողովրդի կարծիքով մարդուն կը տայ այն, ինչ որ նա խնդրէ, այլ հասարակ Փշանդներ, որ դիւզացի երիտասարդներից մէկը զւարճութեան համար վառում և բաց է եղել թողնում:

Համբարձումը փառաւոր թաղումնից հօր դիակը հոդին յանձնեց և ամբողջ հասարակութեանը քելէլու ուտացրեց:

— Ողորմի Սինոդի հոդուն, ասում էին քելէլս ուտողներից ոմանք, բայց դէ լաւ չեղաւ, կեանքի վերջը լաւ չեղաւ:

Եւ դրա մէջ արտայայտում էր մի տեսակ նախատինք ու ատելութիւն դէպի այդ մարդու և Համբարձումի բւնած լնթացքը: Շատերն էլ կատարեալ անտարբերութեամբ միայն ուտում էին և խմում: Այդ օրւայ թաղումը նրանց մէջ ոչ մի մտածմունք չէր յառաջացնում Սինոդի ընտանիքի ներկայ անմիտիթար դրութեան առիթով:

Այդ միևնոյն օրը մեռաւ մեզ ծանօթ ջրգողը, որի մէջ արմատապէս չբժշկւած հիւանդութիւնը կրկնեց և, խիստ կերպարակ ստանալով, կարճ միջոցում սպանեց հիւանդին:

Իսկ Համբարձումը նորանոր ծրագիրներ էր կազմում վայր ընկած դրութիւնից նորից բարձրանալու նպատակով:

“(Վերջ առաջին մասի):”

## ԹԱԹԻԿՆԵՐՈՒԴ ՄԵԶ

Ծ Ա Ն Թ Ի

Յժաթիկներուդ մէջ ձեռքս կը սեղմիս  
Քու տղջկային թոյլ ուժովդ ամէն.  
Ու կոյս յոյզերուդ առաջին թափէն  
Կը ծըփի կուրծքդ աշնան ծովին պէս:

Հայեացքդ՝ նետ մը գարբնած կայծակէ՝  
Կը խրես աչքիս խաւարին մէջ հոծ.  
Ինչպէս արևի ճառագայթ մը բոց  
Որ խոր քարայրի մութը կը ծակէ:

Ու թարմ մարմինդ գրկիս մէջ կ'եռայ,  
Երբ կը սեղմըսի իմ յուղւած լանչին,  
Երբ շրթունքներս բոցովը տենչին  
Սէրը կը գրեն այտերուդ վրայ:

Լաւագիդ, 1893 թ. դեկտ.

# Լ ՈՇ Ի Ա

ՇԱՆ ԹՎԻ

Եռարջս խաւար, հանդարտ ու քուն.  
Եռաք մը անգամ՝ չի դողէլզար.  
Հոն, զիմացս շըշուքներուն  
Մահացումն է լիակատար:

Միակ ձայնը՝ իրարու քով՝  
Ժամացոյցս ու սիրոս է հոս,  
Որ կը համրեն պինդ-պինդ զարկով  
Կեանքիս քայլերն արագահոս:

Դողոստո, 1893 թ. օգոստ.

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Մի ակնարկ ասլահովագրութեան պատմութիւնից մինչեւ  
մեր օրերը

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

### I

Նախ քան զիմենք կեանքի և այլ ճիւղերին վերաբերեալ ապահովագրութեան զործի պատմութեան աւելորդ չէր լինի, եթէ յիշեցնէինք ընթերցողներին «Մուրճ»-ի 1894 թ. 5, 6 և 7-դ ԱՆ-ում զետեղած մեր այն յօդւածները, որոնք վերաբերում էին անհատական և հաւաքական ապահովագրութեանը դժբաղդ դէպքերից։ Այդ յօդւածներում մենք ըստ կարելոյն ցոյց տւինք, թէ որքան համակրելի է դժբաղդ դէպքերից զործարանների բանուորներին, արհեստաւորներին, որպէս նաև առանձին-առանձին անձերին ապահովագրելու գաղափարը։ Բացատրեցինք և այն, որ դժբաղդ դէպքերից ապահովագրութեամբ պարապող թէ ուսւ և թէ օտարազգի ապահովագրական ընկերութիւնները միայն մնաս են կրում և եթէ նոքա չեն գաղափարեցնում ապահովագրութեան այդ ճիւղը, այդ մասամբ այն պատճառով է, որ միւս ճիւղերից ստացած արդիւնքներով, այն է կեանքի և կրակի ապահովագրութիւնների միջոցով, ծածկում են նրանով առաջացած զեփիցիտները։

Բայց որքան համակրելի գոտանք դժբաղդ դէպքերից ապահովագրելու գաղափարը, նոյնը չենք կարող ասել միւս ճիւղերի ապահովագրութեան մասին, ինչպէս նա լինում է սովորաբար։

Հէսց այդ միւս ճիւղերի՝ այն է կեանքի և կրակի ապահովագրութեան մասին՝ մենք կը խօսենք այս անդամ ինչպէս խոստացել էինք:

Բայց սկսենք նաև ապահովագրութեան պատմութիւնից:

Ապահովագրութեան գաղափարը ծնւել է 13-րդ դարու վերջերում և 14 րդ դարու սկզբներում, երբ առաջին անդամ սկսեցին ապահովագրել ճանապարհորդներին դժբաղդ գելքերից, այսինքն պատահարներից և յափշտակումներից:

Ապահովագրութեան իմաստը կայանում էր այն բանի մէջ, որ նախնեաց օրերում ճամբորդները և հեռաստանի ուխտաւորները պայմանաւորւում էին մի որ և է առևտրական ընկերութեան կամ նոյն իսկ մասնաւոր անհատների հետ և իրենց ապահովագրում էին հետեւեալ կերպով: Նոքա, այդ ճանապարհորդները կամ՝ ուխտաւորները, վերոցիշեալ ընկերութիւններին կամ անհատներին վճարում էին մի որոշ գումար, որով իրենց ապահովացրած էին համարում ամբողջ ճամբորդութեան ընթացքում այնպիսի գժբաղդ գէպքերից, որոնք առաջանում էին Մաւրների ու Սելջուկների յարձակմունքով զերի ընկնելուց: Ապահովագրող ընկերութիւնը կամ մասնաւոր անհատը, որոնք ապահովագրել էին զերի ընկածին, որոշ փերկանք էին հասուցանում յափշտակողին և այդպիսի ապահովագրեալ գերիին կեանքն էր ազատում:

Այս տեսակ ապահովագրութիւնը, չնայած իւր համակրելի սկզբունքին, յամենայն դէպս ժամանակի ընթացքում ի չարն գործադրւեց, յեղաթիւրւեց... Նա ընդունեց մի տեսակ ազարտ խաղի բնաւորութիւն:

Որքան սկզբունքով համակրելի էր ապահովագրական գաղափարը նոր ծնունդ առնելիս, այնքան նա բարդւեց և վէճերի նիւթ գարձաւ յետաղայում:

Մենք այդ մասին բայցարութիւն կը դնենք յօդւածի վերջերում, իսկ այժմ ասենք այսքանը, որ, չնայած այն հանգամններին, որ սկզբում ապահովագրութիւնը ծառայում էր իւր նշանաբանին, վերջին դարերում նա այն աստիճան ընկաւ, նոյն իսկ ստացաւ

այնպիսի ազարտ խաղի բնաւորութիւն, որ մինչեւ անգամ՝ գրագռեր էին բռնում թէ իրենց սեփական կեանքով և թէ մի որ և է թագաւորի կամ նոյն իսկ Հառի պապի կեանքով, և եթէ սոցանից մէկը կամ միւսը մեռնում կամ ապրում՝ էր՝ պայմանաւորեալ ժամանակամիջոցից առաջ կամ յետո՞ խաղարկողները սուանում էին միմեանցից փոխադարձ համաձայնութեամբ՝ պայմանաւորեած գումարը:

Նոյն իսկ այդ գրագները այնպիսի մի ծաւալ սուացան, որ 1570 թւականի սկզբներում արգէն արգելման հրաման եղաւ նիդերլանդցիներին Փիլիպպոս II-դ թագաւորից, որով և մասամբ վերջ տրւեց ապահովագրութեան գաղափարը՝ այդպէս այլասեռող խաղերին:

Սակայն ինչպէս միշտ, այս անգամ ևս ամեն ինչ վերջնական վախճան չստացաւ: Եւ նոյն իսկ մինչ օրս էլ այդ և զորա պէս ապահովագրական կոմբինացիաներ շարունակուում են եւրոպական միքանի քաղաքներում: Օրինակ շատերը օրիորդներից իրենց ապահովացնում են չամուսնանալուց և կամ ամուսնական կեանքում ապահովացնարդան տալու դէպքի համար: Ապահովեալ օրիորդին եթէ մինչեւ քառասուն տարին չի յաջողուում ամուսնանալ (սրտով ընտրածի հետ), ընկերութիւնը այդ դէպքում վճարում է նորան պայմանաւորեած որոշ գումար: Հակառակ դէպքում, եթէ օրիորդը ամուսնացաւ մինչեւ այդ պայմանաժամը՝ նորա վճարած տուրքերը լիովին մնում են ընկերութեան օգտին: Նոյն տեսակ պայման կապւում է նաև ապահարզանից ապահովագրողների հետ (կանանց հետ):

Փիլիպպոս II-ի հրամանից յետոյ թէև, ինչպէս ասացինք, ազարտ խաղերին վերջնականապէս վերջ չտրւեց նիդերլանդիայում, այնուամենայնիւ ապահովագրութեան իսկական ձեր և անարատ գաղափարը մնացել էր անխախտելի մի քանի ընկերութիւնների մէջ, որոնք յատկապէս պարապում էին իսկական ապահովագրական գործունէութեամբ և ոչ գրազներով: Նոքա, իրենց նշանաբանին հաստատ մնացած ընկերութիւնները, որոշ գումարով ապահովացնում էին ամբողջ ընտանիքներ գժբաղդ դէպքերից (որ նմանւում է մեր ներկայ ժամանակիս խմբական ապահովագրութեան), ապահովագրում էին անասուններին հիւանդութիւններից, կամ կարա-

սիքը հրդեհից, ապահովացնում էին վերջապէս մարդկացին կեանքը ընական մահից և այդպիսով մվասի կամ դժբախտութեան ենթարկւածը անպայման ստանում էր ապահովագրած գումարը:

Սակայն կամաց-կամաց սահմանափակւեց և այդ ապահովագրական ձեւը. կորցնելով նախնական ապահովագրութեան ձեւը, ընկերութիւնները իրենց գործունէութիւնը ամփոփեցին յատկապէս կեանքի ապահովագրութեան մէջ վարձատրութիւն տալու պայմանաւ թէ մահւան և դժբախտ դէսլքերի և թէ նոյն իսկ հիւանդութեան դէպքում Եւ այդպէս մինչ օրս էլ մեծ մասամբ եւրոպական շատ քաղաքներում ապահովագրութիւնը շարունակում են կամ նոյն ձեռով և կամ ակցիոնէրսկան սկզբունքով:

Հէնց այդ ժամանակներում, այն է 17.դ դարու կիսում, Ֆրանսիայում երեան եկաւ ապահովագրութեան մի նոր սիստեմ, որի իսկական դեկը յանձն արաւ տանել հէնց ինքը պետութիւնը:

\* \* \*

Մի ոմն Լորէնցօ Տոնտի, նշանաւոր իտալական բժիշկ, որ ապրումէր Պարիզում, առաջարկեց մի նոր կոմինացիա, որը բղխում էր հետևեալ հիմքերից:

Ապահովագրւել ցանկացողների մի ստուար բազմութիւն միմեանց հետ պայմանաւորւեցին ակցիոնէրական ընկերութիւն կազմելու, այսինքն ամեն ոք նոցանից անդամ կուլելու համար պարտաւոր էր մի որոշ նշանակած գումար մոցնել ընկերութեան դրամագլխի, այն է կաստաի մէջ, այդ գումարներից առաջացած տոկոսները միմեանց մէջ բաժանելու պայմանով: Միևնուն ժամանակ մի որ և է անդամ եթէ մեռնում էր, նորա բաժնից հանելիք տոկոսները և ակցիան մնում էր յօդուտ միւս ակցիոնէրների և այդպէս շարունակ մինչև այն ժամանակ, երբ մեծամասնութիւնը այդ անդամներից մեռնում էր, իսկ այդ բոլորից յետոյ ամբողջ գումարը վերջի վերջոյ մնում էր յօդուտ պետական գանձարանի:

Բժիշկ Տոնտիի ծրագիրը ամբողջապէս ընդունեց կառավարութիւնից, որը իւր ֆինանսական սուղ միջոցների պատճառով վճռել էր իւր վերայ վերցնել գործի գլխաւոր ինիցիատիւը: Եւ այդպէս

1689—1759 թւականները այդ տեսակ տոնտիններ հիմնեցին մօտաւորապէս 10 հատ պետութեան անունից:

Կարճ ժամանակամիջոցում ապահովագրութեան գաղափարը այնպիսի ծաւալ ստացաւ, որ մինչև անգամ մի քանի նշանաւոր թւաբանների ինչպէս օրինակ Ֆերմախ-Դէւելի և ուրիշ շատերի հետ երեւլի մոտածող Պասկալի ուշագրութեան արժանացան, որոնք սկսեցին լուրջ զբաղւել մահւան հաւանականութեան թէօրիայով։ Կարճ ժամանակում մէկը միւսի յետևից սկսեցին լոյս աեսնել ստատիստիկական տեղեկութիւններ, որոնք որոշում էին թէ ամեն մի տարում որքան մեռնողներ և որքան ծնողներ են լինում և ուրեմն ապահովագրական ընկերութիւնները կարող են արդեօք դիմանալ երկար գործունէութեան (եթէ ի հարկէ բժշկական քննութիւնների ենթարկւեն ապահովագրուելիք անձերը)։ Այդ հաւանականութեան թէօրիայի վրայ հիմնած թւերը վերջնականապէս մշակման և ստուգման տրւեց յայտնի գիտնական Էլւֆֆոն-Հալեին, որի քննութիւնից յետոյ նորա նսլաստաւոր զեկուցումը ընդունւեց կառավարութիւնից։

Առաջին նւագ ընկերութիւն կազմելու գաղափարից օգտւեցին անգլիացիք, որոնք Լոնդոնում հիմնեցին առաջին ապահովագրական ընկերութիւնը, ուր անհատականապէս ապահովացնում էին ապագան. — այրի կանանց թոշակներ տալով։

Ֆրանսիայում սակայն տոնտիննն էր առաջադիմում համագումար (կոլիկախ) կերպով, իսկ Անգլիայում առանձին-առանձին՝ այն է անհատական ապահովագրութիւնը։ Եւ հէնց 17.դ դարու սկզբում անմիջապէս հիմնեց Amicable կամ Perpetual Assurance ընկերութիւնը, որը գոյութիւն ունի մինչև մեր օրերը։

Միաժամանակ հիմնեցին նաև կրակից ապահովող ընկերութիւններ—Royal Exchange Assurance Corporation ընկերութիւնները, որոնք նոյնպէս գոյութիւն ունին մինչև օրս։ Անգլիայում նոյնպէս հիմնեց The Equitable 1830 թ., Ֆրանսիայում Felix (Ֆելիքս)։ Այդ ժամանակներում յետ չմնաց և նոր Աշխարհ։ Ամերիկայում արագութեամբ տարածւեցին ապահովագրութեան ընկերութիւնները, որոնցից այժմ ամենամեծերը «Նիու-Յորք» և կար-

Ճեմ՝ «Սալամանդրան» են, որոնց բաժանմունքները գոյութիւն ունին նաև Ռուսաստանում:

Գերմանիայում հիմնւեց Gothaer Banc (Գոթայի բանկ) բաւականին ձեռնտու պայմաններով, և հէնց այդ ժամանակներումն էր, որ Ռուսաստանում հիմնւեց 1835 թ. Առաջին ռուսական ապահովագրական ընկերութիւնը, (Первое Российское Страховое О-во), որը գոյութիւն ունի մինչ օրերս և յաջողութեամբ, թէև դանդաղ, տանում է իւր գործը:

Եւ այդպէս ապահովագրական ընկերութիւնների գործունէութիւնը ժամանակի ընթացքում մի որոշ ձեւի, որոշ ուղղութեան ենթարկեց. նա ստացաւ իրեն յատուկ ապահովագրութեան բնաւորութիւնը, որով այժմ շահագործում են նաև Ռուսաստանում, և որոնց կանոնադրութիւնները հաստատւեցան պետութիւնից:

(Վեբչը յաջորդ համարում)

## ԲԻԵՐՆՍՈՆԻՑ

Թարգմ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

### I

Կանաչ տերեւով ծառը ծածկւեց  
Եւ կոկոններով քնքոյշ հագնւեց,  
Ու պատաժ ցողով մարդարտանման  
Ուռճանում էր նա շնչովը գարնան.  
Բայց նորա դալար շիւղերին մօտիկ  
Թագնւեց դաժան ծեր-սառնամանիք.

— «Ե՛յ, տուր ինձ, ասաց, մանուկ, կոկոններ.  
Զես տալ, տես զօրով ինքս կը խլեմ...»  
— «Ախ թող մնան հանդիսաց զումաշ բողբոջներ,  
Գոնէ բացւէին նորա ծաղիկներ...»  
Սառնամանիքին ծառը շշնջաց—  
Եւ ողջ էութեամբ արմատից դողաց:

### II

Ահա և կարաց-կամաց բացւեցան  
Անուշ բուրմունքով կոկոն ծաղիկներ  
Եւ արեգակից ջերմ փայփայւեցան.  
Իսկ թռչունների անհոգ երամներ  
Հնչեցին ուրախ սիրահար երգեր.  
Յանկարծ ծառի մօտ թռաւ չար քամին.  
— «Ե՛յ, տուր ինձ, ասաց, սիրուն ծաղիկներ,  
Կը յափշտակեմ թէ չոտս այս ժամին:

— «Ախ ինացիր ինձ, և մի՛ արգելիլ  
իմ ծաղիկներին պողատու լինել...»  
Կառաղի քամուն ծառը շշնչաց  
Եւ ահ ու վախից սարսափից-դողաց։

## III

Ահա և մատաղ պտուղներին խակ  
Զերմացրեց սիրով ամրան արեգակ。  
Եւ ծառը զուգւեց հասուն մրգերով։  
Մօտեցաւ նորան ուրախ ու կամաց  
Հրաշալի կոյսը տապիցը յոգնած։  
— «Ախ տուր ինձ, ասաց, անուշ պտուղներ,  
Զօրով չեմ խլիլ ես քո ընձիւղներ։»  
— Առ քեզ, նազելի, անս իմ ճըղները  
Ծանրացած վաղուց սսչասում էին,  
Որ թեթևանար իմ ծանր բեռը։ —  
Եւ ծառը սիրով նորան ողջունեց  
Ու խոնարհւելով թեւերը կախեց։

4-ն՝ Պեկտեմբերի, 1895 թ.

Թիֆլիս,

## ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ՀԻՒՄԱՅՈՒՆԻՆ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ<sup>1)</sup>

Տիկին ՄԱՅԻԿԱԿԻ ՖՐԻԲԵՐԳԻԻ. Թարգմ. Գրիգոր Վանցեանի

Հիւսիսում մի առած կաէ՝ թէ փոքրիկ վէրքն ու աղքատ ազգական-ներին չպիտի անուշաղիը թողնել. ևս կ'ուզէի դորան աւելացնել՝ էլ աւելի փոքրիկ ազգերին. Այդ պատճառով ահա, ներկաւ եղողներին կ'ուզէի խնդրել աս երեկու ինձ հետ դէպի հիւսիս մի փոքրիկ ազգութեան,— Դանիաց— ացցելութեան գնալ.

Անցեալ աշուն Դանէմարքում մի մեծ տօն կար. Բոլոր հիւսիսակին ազգերը՝ նորւեգացիք, չեղացիք և ֆինները ազտեղ իրանց ներկալացուցիչներն ունեին. աշնտեղ մի աննկարագրելի ուրախութիւն և ոգնորութիւն էր տիրում. Դա ժողովրդական համալսարանի 50-ամեալ լոբելեանն էր ժողովրդի համալսարան, ինչ բան է զա-երեի կը հարցնեն ոմանք, և իրաւունք ունին, քանի որ դոքա չնայելով իրանց մատուցած ահազին ծառաւութեան, արտասահմանում հարաւա-վին Եւրոպայ բոլորովին անձանօթ են. Այդ բարձրագուն զպրոցները լատ-կապէս հասած երիտասարդների կրթութեան համար են, որոնք միջոց չունին համալսարան լամախելու, մանաւանդ գիւղացի հասած երիտասարդ-ների և աղջիկների համար. Եւ որովհետև ալդ ուսումնարանները լատուկ են միայն հիւսիսին և Եւրոպակի միւս մասերում չկան, կ'ուզէի հէնց դոցա մասին մի քանի տեղեկութիւն տալ<sup>2)</sup>.

1) Այս զեղեցիկ և ամփոփ ճառը հանում ենք բերլինի օկանանց-Միութեանո գործերից, որ չետու առանձին զրքովկով էլ տագւց. մինունի բովանդակութեամբ և նոյն խակ ոգեսրութեամբ կը նեղինակը բերլինի մի քանի ժողովներում ճառեր է կարդացել, ամեն տեղ զանելով մեծ հաւանութիւն. հեղինակը մի ֆինլանդացի կին է, Մարիկելի ֆրիբերդ, մի կին, որի նոմանը Գերմանիայում շատ հաղիւ կարել' է պատահել.

2) Հեղինակունին մասամբ միայն իրաւունք ւնի ազտէո կարծելու,

Ազդ դպրոցների հիմնադիրը Դանիացի Սեւերին Դրունգլիդն է. ծնած 1783-ին և մեռած 1872-ին, նա չաղտնի է որպէս պատմաբան, բանաստեղծ և հոգևորական։ Ազդ հիմնարկութիւնների մէջ նա մարմնացրել է իւր մանկավարժական գաղափարները։ Եւ նորա գաղափարները բաւական հեռանում էին մեծամասնութեան մէջ տիրող սովորական համոզումներից։ Եթէ մեծամասնութեան հարցնելու լինինք ուսման ժամանակամիջոցի մասին, հասկանալի է, կ'ասեն որ ամենից լարմարը մանկան հասակն է։ Սակայն, Գրունդիգը կարծում էր, որ ամենալարմարը երիտասարդական հասակն է, 18-ից մինչև 30 տարեկանը։ Մեծամասնութիւնը կարծում է, որ երեսակալութեան ամենալարմարը ժամանակը մանկականն է, Գրունդիգը՝ ընդհակառակը—երիտասարդականը։

Որքան էլ տարբեր լինեն այդ պատասխանները, երկուսն էլ համաձայն են, որ ուսման և երեսակալութեան վառ ժամանակը պէտք է միասին ընկնեն։ Եւ դա բնական է։ Երեսակալութեանն է պատկանում աշակէս ասած այն ներքին աչքը, որով մարդ անտեսանելի աշխարհի տպաւորութիւններն է զգում և որով հեռուի երեսութիւններն ու առարկաներն է հասկանալ կարողանում։ և երեսակալութեանն է պատկանում այն որոշ սոնեղծական գործունէութիւնը, որով մարդ սովորածը ինքնուրուն մշակում և իւր հոգեկան պաշարն է դարձնում։

Գրունդիգի կարծիքով մանուկը զուրկ է այդ պալմաններից, ուստի և նա անարդարացի ու լվասակար էր համարում, որ այդ չքնազ հասակը, երբ բանւորի զաւակն էլ իրան ազնակէս երջանիկ է զգում, ինչպէս թագաւորինը, ծանրաբեռնում ենք չոր դիտութիւնով և պրտորում մանկան պալմառ ու միամիտ աշխարհաչեցողութիւնը։ Երեխալի գիտնականութիւնը որից անբաժան է նաև վաղ հասունութիւնն ու մեծամասութիւնը, անտանելի էր Գրունդիգի համար։ Ի հարկէ, նա գորանով չէր ուզում ասել, թէ մանուկները ոչ մի բան չպիտի սովորեն, —ընդհակառակը։ մանուկը մինչ

---

որովհետեւ եթէ ոչ գիւղական, գէթ քաղաքացի ժողովրդի համար Անգլիակում և Ամերիկականում չատկապէս հանրամատչելի կուրսեր կան բացւած գեր լիտունական թւականներից, որոնց երեխ նա ծանօթ չէ, Այս բոպէին իմ ձեռնին է մի բաւական սուրար զիրք, ուր մանրամասն տեղեկութիւն և հաշիւ կալ Ամերիկայի և Անգլիայի այդ զարոցների մասին, որոնք նոուպէս „Volkshochschule“ (Ժողովրդական բարձր զպրոցներ) են կոչում։ Այդ զիրքը հասեեալ վերնապիրն ունի. Dr. James Russell. Die Volks-Hochschulen in England und Amerika. Deutsch von Otto Wilhelm Beyer. Leipzig 1895.—Ազդ գրքից երեսում է, որ Անգլիան տարեկան մոտ 300,000 ուուլլի է ծախսում ժողովրդական համալսարանների վերաէ Օքսֆորտ, Քէմբրիջ և Լոնդոն։ Ամերիկականում այդ զպրոցներից կան համարեմ բոլոր մեծ քաղաքներում։

Ծանօթ. Թարգմ.

12 տարեկան լինելը պիտի կարդալ, գրել և հաշւել գիտենաչ, մանաւանդ ծանօթ պիտի լինի իւր հայրենի երկրին և բնութեանը, տեղեկութիւններ պիտի ունենաց օտար երկիրների մասին և հայրենիքի պատմութիւնից հառածներ գիտենաւ Հասկանալի է, կրօնառէր ծնողները պիտի չանփութանան մանկան հետ Աստուծու սիրոց մասին խօսելու, բայց ամեն ու վճիռ ու քննադատութիւն պահանջող բան հեռու պիտի մնալ նորանից, որպէս նաև այն, որ անմատչելի է մանկան հասկացողութեանը, Հասակի դարձացման հետ միայն պէտք է կեանքին հարկաւոր բացարութիւններն սկսել, Ազգ ժամանակ միայն արթնանում է ինքնաճանաշութիւնը, մի կարօն ճանաչելու կեանքի նպատակը, ունենալու սեփական աշխարհաւեցք, գտնելու կեանքի փոխադարձ կապը և որոշելու իւր տեղը նորա մէջ:

Այս կարծիքները գուցէ մի քիչ նոր են, բայց նոքա միայն հին ճշմարտութիւններ են, Սոկրատէսը, Հելլէնների մեծ վարդապետը, մանկանց համար ուսումնարան չէր պահում, այլ իւր չուրջն էր հաւաքում հասուն երիտասարդներ, որոնք կեանքի համար լու էին որոնում: Միջնադարեան դպրոցներում սովորում էին մեծ մասամբ հասակաւորներ և չէնց աշօր ամեն մի գիտուն պատրաստ է հաստատելու, որ համալսարան չաճախելու ժամանակը իւր ուսման ամենավճռական ժամանակամիջոցն էր: Արևեստադիմներն ել այն կարծիքին են, որ միայն երիտասարդութեան ժամանակ են իրանց իսկական կոչումը ճանաչել:

Գրունդւիզի կարծիքները, թէ երիտասարդութիւնը պտղի ամենալաւ ժամանակն է, որից առ առ կամ նւազ քաղ պէտք է սպասել, ուրեմն նոր չեն. բայց նորա ծառալութիւնն այն է, որ ազդ օրէնքը նա միայն արևեստագէտների և գիտունների համար պահւած չէր համարում, այլ բոլոր ժողովրդի: Նա կարծում էր, որ նոքա էլ, որոնք մինչեւ իրանց երիտասարդական հասակը եղել են երկրագործ, արհեստաւոր, ծովագնաց կամ վաճառական, որտեղից նոքա ձեռք են բերել կամք, փորձառութիւն և ոչ, սովորելու դեռ շատ բան ունեն. ազգի ազդ ամբողջ երիտասարդութիւնը կրթելով, նա կամենում էր ժողովրդի քաղաքական հասունութեանը նպաստել և կանոնաւոր հիմքերի վերաց դնել: 1830-ի լուլիսեան լեղափոխութիւնից լետոն ամբողջ Եւրոպայում խօսք կար ժողովրդից ներկայացուցիչներ ունենալու մասին: Գրունդւիզը պնդում էր, որ զորան հասնելու համար հարկաւոր են հասուն, հայրենիքի բարելաւութեանը ցաւակից քաղաքացիներ և ոչ լոկ աճանի կարասներ»:

Նա երազում էր բոլոր երիտասարդների համար մի ուսումնարան ունենալու մասին, որը մի ուրախ ժողովատեղի պիտի լինէր բոլոր դասակարգերի համար, որտեղից ապագալում ամեն մինը հասուն գաղափարներով կարող էր կեանք մտնել և ընտրել իւր սիրած մասնագիտութիւնը իրեն ապրուստի միջոց:

Երկու առարկացի առանձնակի արժեք էր տալիս Գրունդկիզը՝ մայրինի լեզվին, գրականութեան հետ և պատմութեանը:

Պատմութիւնը, ասում էր նա, անցիալ իրողութիւնների դուստրն է և ապագակ իրողութիւնների մայրը: Անցիալը պէտք է լաւ ճանաչել, և այն պազմաններին, որոնց մէջ ապրել են նախնիները անցեալում, ծանօթ լինելու Դա միակ միջոցը կը լինէր, որ ոգերործն և գործ կատարել ցանկացող մարդիկ կը խուսափէին իրանց ուժերը քամու ջաղացների դէմ գործակիւուց և կ'ընթանալուն պատմութեան լան և ընդարձակ ճանապարհով: Դա կը լինէր վերանորոգութեան ապահով ճանապարհը, հեռու վտանգաւոր թոփչքներից և վեղափոխութիւնից:

Տեսականից գործնականին անցնելը, սակայն, հեռաւոր մի ճանապարհ է, մանաւանդ եթէ զա մի նոր ուղղութեան առաջին քայլերն է, որ սովորաբար ամենադժւարն է: Ազգակն էլ ալսունդ: Գրունդկիզը ուզում էր իւս զպրոցը Զոր'ում (Sor) Զէէլանդ կղզու վերակ հաստատել, կարծելով որ կառավարութիւնը նորան կը նպաստէ: Սակայն նորա մտադրութիւնը չիրացաւ: Դորա փոխարէն մասնաւոր ժողովարարութեամբ 1844-ին Ռուսակինգում, Խթլանդիա թիրակղզու վերակ, Քրիստեան Ֆլորը բաց արաւառաջին ժողովրդական համալսարանը: Ալդ մարդը սկրոֆեսոր էր Քիլում, բայց ոգենորւած Գրունտափի մանկավարժական զաղափարներով, թողեց համալսարանի ամբողնը և իւր ազնւական կնոջ հետ գնաց Ռոտտինդ, ուր բնակում էր գիւղացի երիտասարդների հետ, 'իհարկ է, նոցա կրթելու նպատակով:

Ռոտտինդի համալսարանում<sup>1)</sup> աշխատում էին կարելոյն չափ Գրունտափի իդէանները իրագործել: Հրաւիրեցին առաջնակարդ վարժապետներ, աշխատում էին հարուստ դասական պիտոլքներ ունենալ, օրինակ, հանքեր, հին զրամներ, բռներ, թափածու կենդանիներ, աշխարհազրական և պատմական պատկերներ և այլն.—Գալրոցին կից կար նաև մի հարուստ դրադարան: Որոշեց, որ երիտասարդ ուսանողները (ըստ մնձի մասին գիւղացի և արհեստաւոր) երկու ձմեռ և մի ամառ ուսանէին, ապրելով դպրոցին կից շինութեան մէջ երկուսը մի սենեակում: Ամեն տարի վարժապետները և ուսանողները ալցելում էին կոպէնհազէն, այնտեղի մուգէններն ու հաւաքածուները տեսնելու և ուսումնասիրելու:

Սակայն, ալդ համալսարանը մեծ զժարարութիւնների հետ պիտի կռւէր. կոպէնհազէնի նացիօնալ-լիբէրալները, որ պրոֆ. Ֆլորի վերակ մեծ

<sup>1)</sup> Աչստեղ գործածող համալսարան կամ գիւղական համալսարան փոսքը չշփոթել սովորական համալսարանի հետ, որի հետ սա չառ քիչ ընդհանուր բան ունի. ալս համալսարանի էութիւնը ընթերցողը կը հասկանակ լողւածիս շարունակութիւնից:

Հաւատ ունինալով փող էին հաւաքել և դպրոցը հիմնելի իրօք նորա տեսդենցիան շատ սակաւ էին հասկանում. մանաւանդ թերահաւատ էր նոցավերաբերմունքը դէպի ուսանողները, որոնք հասարակ զիւղացիներ էին, թէն դպրոցին կից լաւ կազմակերպած զիւղանանուական բաժին էլ կար.

Եւ ահա, երեան է գալիս մի նոր մարդ, հիմնում է մի բոլորավին հասարակ ժողովրդական դպրոց, որը աճնունեան դառնում է մի կամուրջ չրշակաւ զիւղական ժողովրդի և ապագայ յողովրդական համալսարանի միջն. Ակտ մարդը Քրիստուան կողըն էր. Աճապիսի տպաւորութիւն, որ թողել է ինձ վերաէ այդ մարդու կեանքը, ևս քիչ ունիմ ստացած, ուստի կ'ուղէի մի քանի զծեր հաջորդել նորա կեանքից, կողը սիմինարիստ էր, երբ Դանիական պատոր Հասոց Զմիւռնիա գնաց թիւրքերին քրիստոնէութիւն քարոզելու, որին հետեւ և նա: Կողը և՛ ծառալում էր պատորին և՛ օգնում նորան: Ապա նա աճնուել ապրում էր կազմարարութեամբ, աեսնելով որ թիւրքերին քրիստոնէաւ դարձնելը զիւրին չի և իւր ուժերը աւելի պիտանի բաների կարող է գործադրել, Կողը վերադարձաւ Եւրոպա. մինչև Տրիեստ նա եկաւ նաւով, ապա զնեց մի փոքրիկ ձեռնաշարժ սալլակ<sup>1)</sup>, նորա վրալ զրեց պալուսակը և սկսեց թափառել ամբողջ Եւրոպանում, ուր նա ամեն տեղ առիթ ունէր զիւղացի ժողովրդի հետ հիմնովին ծանօթանալու. Դորա հետ միասին նա անասելի ընդունակութիւն և փորձառութիւն ունէր մարդկանց հերքինը ճանաչելու, որ նա ձեռք էր բերել մասսամբ ճամբորդութիւնից առաւել ևս անաչին վարժապետութիւնից, զործ և ել ու մուտ ունենալով առաջնակարգ ընտանիքներուն Բայց որ ամենից զլխաւորն է, նա անձնաւորութիւն էր եւ բնաւրութիւն, ալդ խօսքի լայնածաւալ մտքով. և այլ կերպ չէր էլ կարող ձեռնարկել այն, ինչ որ տեսնում էնք:

Նա վարձեց մի քանի սենեալ և իւր շուրջը հաւաքեց զիւղացի աղաներ: Ի՞նչ էք ուզում ալդ ջահիներից, հարցնում էին հարեան-ծանօթները. «Ուզում եմ նոյցա զարթիցնել», պատասխանում էր սովորաբար Կողը. Մոնրող եպիսկոպոսին նա նոյնպիսի մի հարցի համար հետեւեալ պատասխանը տևեց. «18 տարեկան էի, որ ևս սովորեցավ Աստծոն, հայրենիքս և մերձաւորներիս սիրել. զա ինձ աճնքան բաղզաւոր արաւ, որ ևս այն ժամանակից վճռեցի իմ բոլոր ուժերը և ժամանակը նւիրել ուրիշներին էլ նոյնը ուսուցանելուու: Եւ նա հաստատ մնաց իւր խօսքին: Իրեն վարժապետ նա օմտած էր հազւագիւտ լսակութիւններով. ամեն մի խօսակցութիւն, ամեն մի զասախօսութիւն նա զիտէր համեմել խորիմաստով, արտակալտել հանրամատչելի կերպով և զարձնել հնտաքրքրական ու կենդանի: Նա շատ լաւ զիտէր պատմութիւն. զորանից էլ սկսում էր:

<sup>1)</sup> Schiebkarre.

միացնելով ու կապելով նորան կեանքի դէպերից աշնայիսի սովորական առօրեակ երևոլթներ, հարստացնելով կողմնակի աճնայիսի ծանօթութիւններով, որ զա զառնում էր մի կենդանի խօսակցութիւն։ Յաճախ նա իւր կեանքից ու փորձառութիւնից զանազան միջնադէպէների էր պատմում։ Կրեսկոները նա աշակերանների հետ կարդում էր ինգեմանի պատմական վէպերը կարեսր բացատրութիւններով և անհրաժեշտ լուսաբանութիւնով, միշտ, իհարկէ, կարդացածը կցելով լսողների անձնական հանգամանքների հետ, աշխատելով նոցա մէջ զարդացնել իսկական մարդու իգչալը։

Այս զպրոցում աշակերանների համար առանձին սենեակներ չկացին, ամենքը քնում էին լատակի վերակ, միենուն ունեակում, որի մի անկիւնում վարժապետի մահճակալն էր։ Հասկանալի է, այդ պալմաններում լածախ ուսումը տեսում էր մինչև ուշ զիշեր, մտքերի փոխանակութիւնը լինում էր անընդհատ և նրկարատե։—Ճաճ էլ ապարդին չէր անցնում։ Նա էլ մի նոր միջոց էր ուսանելու, քանի որ բոլորը միատին էին ճաշում։

Առաջին կուրսի վերջը երիտասարդները հարցնում են, թէ արդեօք չեն կարող նաև իրանց քոլբերին, նշանածներին և բարեկամունիչներին էլ կողի մօտ ուղարկել ուսանելու, Շիհարկէ կարող էք», պատասխանում է նա։ Բայց ուսանողները սկսում են վիճել, դա անւարմար է, կողը կը սիրահարսի աղջկանց վերակ։ Կողը նոցա հանգստացնում է հետևեալ կերպով։ ամենի վերակ ես՝ ի հարկ է, չեմ կարող սիրահարել։ ևթէ պատահեցաւ, որ նոցանից մէկին սիրեցի և վակելեցի սիրուս փոխադարձը՝ ես գտած կը լինեմ երկրաւոր բաղզս... երբ և իցէ զա հօ պատահելու է։

Այս հասարակ և պարզ մարդուց ժողովրդական հսմալսարանի օդալին եղած շարժումը շատ բան ստվորեց։ Նա ոչ միայն գրաւել կարողացաւ զիւղական ժողովրդին դէպի ուսումնարանն ու դործը, ազ և նա զորան մի աշնայիսի պարզ ձեւ տւեց, որ ամեն տեղ կարելի էր նմանը բանալ։ Կողին հետեւելով այժմ ամեն տեղ վարժապետը ուսանողի հետ է ճաշում, որը իսկապէս մի շարունակութիւն է ուսման համար։ Կողից առաջ կանանց սեռի մասին ոչ ոք չէր մտածում, մինչեւ անգամ սեծ Գրունդէիզը այդ մասին ոչ մի զաղափար չունէր։

Ինչպէս ձեզ լավանի է, լարգելի հասարակութիւն, տղամարդկանցից շատերը կանանց զատում են իրանց կանանց համեստ։ և Գրունդէիզն էլ ալստեղ մի բացառութիւն չէր։ Նա մի բարի և համեստ կին ունէր, մի կին, որին խօսանոցից ու մանկանոցից աւելի ուրիշ բան չէր հետաքրքրում։ Դէ, Գրունդէիզն էլ կարծում էր թէ բոլոր կանաքերինի պէս են և ուրիշ ոչ մի կարիք կամ պահանջ չունին։ Սական, նա ալրիացաւ, ծանօթացաւ մի ընդունակ կնոջ հետ, ամուսնացաւ, և միայն ալնուհետեւ կանանց նա ցանկանում էր ամեն տեսակ աղատութիւն։

Ալստեղ, ինարկէ, մեծք ամենքս աշխարհի խաղաղութեան բարեկամներ ենք և պատերազմի վերաէ նախում ենք որպէս բարբարոսութեան մի ցաւալի մնացորդի վրաէ. ուստի պատեղ հարկ է վիշել այն կէտը, որի վերաէ ես կանգ առաւ.՝ Դանեմարկը 1864-ին մի անբաղդ պատերազմ ունեցաւ. առանց այն էլ նորա փոքրիկ մարմնից մի կտոր կտրեցին և նրանից երկար ժամանակ պլատի արիւն հոսէր<sup>1)</sup>.

Երբեմն սական անբազութիւնը վրաէ է հասնում մի ժողովրդի արթնացնելու և նորա գործունէութիւնը բազմակողմանի անելու համար. Ալստեղ մարդ սովոր է լսելու Դերմանիալի վերականգման մասին 1813 թւից լետու, Դանեմարկին էլ մի անպիսի վերակենդանութիւն ունեցաւ, միան 1864-ին պարտութիւնից լետու Նա ուզում էր կորցրածը նորանով վերականգնել, որ փոքրացած հայրենիքի իւրաքանչիւր անդամին կին թէ տղամարդ, աշխատում էր կրթել զարդացնել, ինքնաղիտակցութիւն և կենդանութիւն ներշնչել նորան, որքան միան հնար է: Եւ որ միջոցը աւելի նպաստաւոր է դորան քան մողովրդակին համալսարանը: Ալլ Ժամանակից համալսարանները սկսան անպիս բոնել լինչպէս առնկը անձրենից լետու: Պատերազմից առաջ նոցա թիւը 7-ն էր. 1870-ին շ0. իսկ հիմա 70:

Թէև Ֆլորի հիմնածը Ոռոտինգում որ ամենահինն էր, սովորած էր իրան համար ջոկ տեղ որոնել որովհետեւ նորա նախկին տեղը արդէն հայրենիքից կտրւած էր.—նա լետ քաշւեց նոր սահմանից գէպի հիւրիս և սկսեց իւր զործունէութիւնը մի համեստ բնակարանում չափաւոր միջոցներով: Սական, միջոցների չափաւորութիւնը գործին արգելվ չէր, որովհետեւ վարժապետաները մեծ մասամբ նոյն մարդիկն էին և զարոցը պահպանել էր իւր հին հոգին:

Դանիական գիւղակ. համալսարանները ամեն տարի լաճախում են 5000—6000 երիտասարդ և ընդամենը 100,000—120,000 մարդ արդէն ուսել են այդ համալսարաններում: Այս թւերի նշանակութիւնը լաւ հասկանալու. համար պարտք եմ համարում լինելու, որ Դանեմարկը շուրջ 2 միլիոն բնակիչ ունի միան: Ուրիմն մօտաւորապէս 20 հոգուց մէկը ժողովրդական համալսարանում ուսել է, և ամեն հինգ ընտանիքից մէկ անդամը արդէն անցել է որոշ կուրս: Դանեմարկը լաւ օրինակ տևեց հարեան երկիրներին. 1864-ին, Նորւեգիակում զրեց առաջին մողովրդական համալսարանի հիմքը. սակաւ լետու նաև Նորվիակում.—վերջին տարիները

1) Ճառախօս կնոջ ալս ակնարկները այն բանի վրաէ են, որ Պրուսիան փոքրիկ Դանեմարկին չաղթելով նորանից մի անպին կտոր հող խլեց (Նլեզւիգ և Հոլցտան պրովինցները):

ալդ շարժումը հասաւ նաև իմ հայրենիքին—Ֆինլանդիակին և անասելլի արագութեամբ տարածւեց նորս մէջ։ Ֆինլանդիակի ռասանողութիւնը մանաւանդ շատ տաք կպաւ ալդ գործին և ալդ ասպարիզում կարգին անուն ձեռք բերաւ Ուսանողութեան մեծ մասը զէ ամեն տեղ բաւական անմտածող և հսական է։ Նոքա օրերն անցնում են ինչպէս որ կը պատահի և կարծում են թէ հայրենիքին մեծ ծառալութիւն են անում երբ տօնական առիթը եկած բողէին իրանց մեծ հայրենակիցների կենացն են խոնում և հայրենասիրական երգեր երգում։ Սական, վերջին ժամանակները մենք մի դառն շրջան ունեցանք անցնելու։—Եւ այդպիսի ժամանակներում միայն մարդ զգում է թէ ի՞նչ զին ունի սեփական հայրենիքը եւ որքան շերմ է այդ սէրը։ Մարդ սովորում է հասկանավ, որ հայրենիքը արօտներից ու անտառից, սարերից ու ծորերից չէ բաղկացած, այլ կենդանի մարդկանցից, սեփական ժողովրդից, որի լեզով խօսում ես, որի աշխարհայեցողութեան եւ առանձնայատկութիւնների հետ ինքդ սնել եւ ամել ես, որպէս որոյն ազգ, ուրոյն ժողովուրդ։

Բայց ժողովրդի մեծ մասը մարմնական աշխատանքով է ապրում։— Նա բանւոր է, երկրագործ է։ Նա կորւած է ինտելիգենցիակից։— Մօտենալ ժողովրդին, օգնել նորան, նորա համար մի բան կատարել... ալդ էր օրւաէ հարցը։—Այս զգացումը շատ վառ էր համալսարանական ուսանողութեան մէջ։ և նա եռանդուն ու ոգեսորուն զործի կպաւ Ուսանողները (լասքը սովորական ուսանողների մասին է) կազմում էին մեծ զասախօսութիւններ և ընկերական երեկութներ կարենոր դրամը հաւաքելու համար։ Նոքա իրանց լաւագոյն ճառասացներին ուղարկում էին գիւղերը գիւղացիներին զէպի նորաբաց համալսարանները գրաւելու համար։— Նոցանից շատերը զնում էին Դանեմարկ ալնտեղի հիմնարկութիւնների հետ ծանօթանալու համար և ալդ լարուն գործունէութեան չնորհիւ մենք մի քանի տարւաէ ընթացքում 10 ժողովրդական համալսարան ունեցանք և ուրիշ շատերի համար էլ դրամ են հաւաքում ու նախապատրաստութիւն տեսնում։

Ցիշեալ երկիրներից Դանիեմարկի, Շվեդիակի, Նորվէգիակի և Ֆինլանդիակի գիւղակ։ համալսարաններից ամեն մինը իւր առանձին դրոշմն ունի. և դա բնական է. դա կախումն ունի ազգի բնաւորութիւնից և ժողովրդի սովորութիւններից ու կարիքից։ բայց նոքա բոլորն էլ միենան նապատակին են ծառալում։ դրգել երիտասարդութիւնը զէպի ուսում, կենդանութիւն և ոգեսորութիւն տալ նոցա մտքին, բաղդաւոր և առաքինի մարդիկ։ Կրթւած և հասկացող քաղաքացիներ պատրաստել։ Ալդ զպրոցները ցանկանում են, որ երիտասարդութեան հասակը իւր իսկական նպատակին—ուսման—ծառակի, ինչպէս որ ալդ տեսնում ենք իսկական համալսարաններում, ուստի և նոքա էլ կոչւում են «ժողովրդական համալսարան»։

(Վերջը լաջորդ անդամ)

## ՄԻ՛ ԹԱՓԵՔ, ԱՉԵՐ...

ԱՐԾԱԿ ԱԹԱՑԵԱՆԻ

Մի՛ թափեք, աչեր, մի՛ թափեք  
Զեր զժբախտ արցունքն առաջիս,  
Նոցանով զուք մի՛ ցողէք  
Զեզնով տանջւած խեղճ հոգիս...

Ինչու, ասացէք, երկնքից  
Իշաք տառասկոտ այս աշխարհ,  
Որ ձեզ մի սիրտ թունալից  
Ծաղրէր այդպէս անարդար:

Ինչու ձեր միջում եռացին  
Հրեշտակային վաս կըքեր,  
Որ մարդկային բիրտ հոգին  
Անգթաբար կործանէր:

Ինչու այդպէս շուտ խարւեցիք,  
Զարութեան խաւար զիրկն ընկաք  
Եւ անխնայ զցեցիք  
Զեզ քարասիրտ ոտքի տակ:

Եթէ առաջին հարւածից  
Լինելու էլք ուժապառ՝

Ինչու, ինչու երկնքից  
Իջաք փշոտ այս աշխարհ...

Մի թափէք, աչեր, մի' թափէք  
Չեր դժբախտ արցունքն առաջիս,  
Նոցանով գուք մի' այլէք  
Չեզնով տանջւած խեղճ հոգիս...

1895 թ. Ապրիլի 20,  
Թիֆլիս:

## ԽԵԼԱԳԱՐԻ ՕՐԱԳՐԻՑ

ԱՐԾԱԿ ԱԹԱՅՑԵԱՆԻ

Երբ կիջնեմ հովիտը կէսգիշերւայ ժամին  
Երազելու,  
Երբ վշտի աստղը կը ծագի վերստին  
Ինձ տանջելու,  
Եւ երբ կարհամարհէ լոռութեամբ իմ հոգին  
Արար-երկիր,  
Ով դու մոքիս ցնորք, այդ դժբախտ ժամերին  
Ինձ այցելիր!

Եթէ չըկայ հանգիստ երկնքից շնորհած  
Հոգուս համար,  
Եթէ լոկ տանջանքի համար եմ ևս եկած  
Այս մութ աշխարհ,  
Ինձ պէտք չէ ուրիշը—ուզում եմ միայն քեզնով  
Լըռիկ տանջել,  
Քո պատկերն իմ միջում ուզում եմ մաքի ծով  
Ես դարձընել...

Ա՛հ, դու ծիծաղում ես? Երկում է ժպիս  
Քո բաց գէմքին.  
Ծածկում ես ինձանից?... Կաց, կաց, թշւառ հոգիդ,  
Կաց, զոռող կին!

Այդ արհամարհանք է! հեղնութիւն է սպանող  
Սարսափելի!  
Հարւածդ սնգութ է, զգացմունքդ կործանող  
Սի. թունով լի!...

Բայց մահը... հեռու է. դեռ կան թշւառ ժամեր  
իմ խեղճ կեանքում,  
Դեռ կ'ապրի դառնութեամբ իմ սիրող կարեվէր  
Բնութեան գրկում.  
Գոն; թող նորանից քո նսեմ սուերը  
Մնայ անբաժան,  
Կրկին արհամարհիր դու իմ ամբիծ սէրը  
Մինչ յաւիտեան...

1896 թ. Մայիսի 4,  
Թիֆլիս

# ԳՈՅՉԻԹԵԱՆ ԿՐԻՒԾ ՎԵՐԻ ՄԵԶ

(Էլլիզա Օժեշկոյի Շքրենչայ իդիլլի վէպը)

## ՑՈՎՀ. ԳՆՈՒՆՈՒ

Մոռկւալի համալսարանական պրիւատ—գոցենտ է. Խւանով իր լրագրական լոգւածներից մեկի մէջ, խօսք բացելով ՏԻԿ դարու մասին, նկատում է՝ «XIX դարին շատ անուններ կարելի է տալ», —և լեռող առաջ է բերում թէ ինչ «անուն» կարող է տալ զիտնականը, բժիշկը, դործնական մշակը, և ալն, իսկ ինքը, իբրև կրիտիկոս, ասում է՝ «հիասթափում և պեսախմիզմ—ալզ երիւ խօսքերի մէջ է ամիտված ՏԻԿ դարու պատմութիւնը և հոգեբանութիւնը». Սակայն ալդ «անունները» մասնաւորութիւններ են և չեն պատասխանում դրած հարցին որոշապէս: Ալդ տեսակ հարցերին պատասխաններու համար պէտք է ալճպիտի լուծում գտնել, որ բաւականացնի և՛ զիտնականին, և՛ դործնական մշակին, և՛ բժիշկին, և ալն և ալն, մի խօսքով՝ բոլոր մասնագէտներին հաւասարապէս: Իսկ մի ալզպիտի ընդհանուր բնորոշում կարելի է տալ ՏԻԿ դարուն գրելով նրա դրոշի վրա «Դուռութեան կոխ» խորագիրը:

Մեր գործնական դարը գոյութան կուի դար է. և հէնց ալդ է պատճառը, որ մեր դարու գրականութիւնն էլ անդադար տալիս է գեղարւեստական գրւածքներ, որոնց կարմիր թելը լինւած է ալդ անվերջ պատերազմի մանրունքների վրայ: Եթէ մենք թերթենք եւրոպական գրականութիւնները՝ կը տեսնենք, որ առաւելագուն տոկոսը իրան նւիրել է աօրւակ հարցերինու: Կան, ՚ի հարկ է, մարգիկ, որոնք ծաղրում են գրականական ալդ երեսթը, քարոզելով, թէ գեղարւեստի գնրծը չէ մըտնել «կեանքի ետքնկած թշւառ փողոցները», թէ նա պէտք է զրուցի բարձր առարկաների մասին, թէ բանաստեղծն և կամ գեղարւեստ—ռոմանիստը ծնւել է ինչպէս Պուշկինն է ասում,

„Не для житейского волнения,  
Не для корысти, не для блеска...“

աղ՝

„Для звуковъ сладкихъ и молитвъ“.  
„Педите прочь! какое дѣло  
Поэту мирному до вѣсъ“... (նուն).

Թէ ամրոխն ոչ ալ ինչ է, բայց եթէ «ասոր պրոզա», և բանա-  
տակեղծը պէտք է ատելով ատի նրան...“

Բայց, բարեբախտաբար, աղաքէս քարոզողները փոքրամանութիւն  
նն կազմում:

Օրերս մեր ձեռքն ընկառ լեհացի վիպասանունի է. Օժէշկովի „По-  
вѣстіи и разсказы“<sup>1)</sup> „Русская Мысль“ ամսագրի հրատարակութեամբ:  
Աղ զիրքը պարունակում է իր մէջ չորս վէպիկներ, որոնց թարգմանել  
է ամսագրի խմբագիր-հրատարակիչը՝ Վ. Խ. Լաւրով. Աղ չորս վէպիկ-  
ներից ամենահետաքրքիրը, մեր կարծիքով, առաջինն է՝ „Сѣренъская  
идалія“<sup>2)</sup> (Էջ 1—102). Եւ մենք զարմանում ենք, թէ ինչու պ. Գոլ-  
ցեն իր լոդւածի մէջ „О повѣстяхъ Элизы Ожесковой“,<sup>3)</sup> («Էլիզա  
Օժէշկովի վէպիկի մասին»), որ զրած է լարգելի տիկնոջ զրականական  
25-ամեակի առթիւ, չի ել վիշում այդ վէպիկը Խոստավանելով, որ «Գոլ-  
խառուասէս կանդ է առնելու Օժէշկովի վէպիկներում դեր խաղացող կա-  
նանց վրայ»<sup>3)</sup>, —պ. Գոլցեն անտես է առնում լեհացի քերթողի գեղար-  
մեսի այն լատկութիւնները, որոնք ունեն համարդկացին  
նշանակութիւն: Աղդէս, նա ամենին լոհել է, ինչպէս ասացինք, „Сѣ-  
ренъская идалія“ վէպիկի մասին. իսկ այդ վէպիկը, անկասկած, ար-  
ժանի է մեծ ուշադրութեան:

Է. Օժէշկովի „Сѣренъская идалія“ վէպիկը շօշափում է հասարակա-  
կան այն հարցերից մէկը, որ մեր գործնական զարու աօրւակ հարցնու է: —  
«Ֆոլութեան կուր»՝ բողոքում են ձեր գէմ վէպիկի առաջին, երկրորդ...  
բոլոր գլուխները. «Գոլութեան կուր»՝ բողոքում են վէպիկի մէջ գործող ան-  
ձինք: Աղ վերջինները երկոտանի անբախտ արարածներ են, որոնց  
կեանքը կամագնաց պատահականութիւնների ձեռքն է զցել: Խնչպէս ար-  
մեստի որոուղ — այդ վէպիկն մեղանչում է մի քանի պակասութիւններով.  
օրինակ՝ բացի կը բարեխասէից և նրա գուտար Մարցիսից՝ զործող անձանց  
բնաւորութիւններն ամփափ չեն, ոչ ել աւարտած: Այսու ամենաճիւ „Сѣ-

<sup>1)</sup> Աւելի ձիւաց կը լինէր „Сельская идалія“, ինչպէս և ել. Օժէ-  
շկովի մօտ: Թարգմանիչը վէպիկի խորագիրն փոխել է:

<sup>2)</sup> В. Գօլցեվ: „Вопросы для и жанри“, Էջ 146—176:

<sup>3)</sup> Նուն. Էջ 147:

ренъкая идиллія“ գեղեցիկ, օգտաւէտ գրւածք է:—Է, Օժէշկօն իր այդ վէպիկի մէջ զրեթէ չի զբաղւում բնութեան նկարագրութիւններով. իսի ինչ վերաբերում է նրա հոգեբանական չատկութիւններին՝—նրանք անուրանալի են և աչքի ընկնող. Երբ առանձին-առանձին ենք քննում Օժէշկովի վէպիկի մէջ դործող հերոսներին, աչքի է ընկնում բնաւորութիւնների անաւարտութիւնը, բացի ելքէտաչից և Մարցիսից. բայց երբ կշռում ենք ընթերցանութիւնից գուշա բերած ընդհանուր տպաւորութիւնը, արդու տիկնոջ հոգեբանական նրբամտութիւնը մեզ ուղղակի զորմացնում է: Այնպէս ճիշտ, այնպէս համոզիչ է՝ հոգեբանական տեսակի, այս հոգեբանակի վերջին եղբակացութիւնը, որ անում է նա իր փոքրիկ պատմւածքից...

Ամբողջ վէպիկը կենդրունանում է երկու թշւառ որբերի տիրակամարկեանքի վրայ, ճակատագիրը ընկերացնում է այդ երկու որբերին. Մանուկ Վլաղեկը զարկ ծնողական օջախից<sup>1)</sup> ապաստան է գտել իր ազգական պառաւ Վեժբալայր տանը, որի մօտ թեթե ծառալի գեր է կատարում: Փոքրիկ Մարյանին էլ կեանքը այդ պառաւի ճանկն է զցել, նրա մալը, կը քէտան, հեռանալով գործի, իր միակ գուստը պառաւին է չանձնել, խոստանալով, թէ մի երկու տարուց, երբ որ կը կարողանալ հաւաքել մի քանի կոպէկ, կը վերադառնալ և իր աղջիկը ետ կը վերցնի: Երկու վոքրիկներն էլ «կէս-փուր հացի» ծառաւ են.—նացելով դրանց ապրելուն՝ մեր հասարակական կեանքի խոշոր թերութիւններից մէկի հետ ենք պատահում մինք: Մի քանի մարդիկ, բարերարի դիմակով ծածկւած, վելցնում են իրանց հովանաւորութեան տակ անսէր երեխաններ և որդեգրում, աչքի առաջ ունենալով միմիացն իրանց անձնական շահերը: Մենք չենք կարող ելեականէլ մեզ աւելի զառն կեանք երեխանների համար, քան այդ որդեգիրների կեանքը: Օրերով քաղցած, միշտ արտասւաչք, ոտարերիկ, պատառուտած շորեր հագին՝ առաւօտից մինչև երեկոյ պիտի բանեն նրանք, ինչպէս անկեղու անաստաններ, չնամարձակելով ձախն անգամ հանել, երբ «բարերարը» զամչու անողորմ հարւածներից կապտացնում է նրանց մարմինը, թողնելով այդ կիսաւեր մարմնի վրա ուռուցքներ, հաստ ու բարակ առաւակներ: Այդ գաղանութիւնները երբեմն հասնում են իրանց գագաթնակէտին<sup>1)</sup>, եւ այդ բոլորի վոխարէն մի երկու արշին խոնաւ, ցուրտ տեղ՝ գիշերները գլուխ դնելու համար, և մի կոոր ցամաք հաց: Այդ զառն հանգամանքների մէջ է բրած և Վլաղեկի ու Մարցիսի կեանքը: Նրանք շատ շուտ են հասկանում իրանց դրութիւնը, հասկանում են, թէ կեան-

<sup>1)</sup>) Գականիր աւդպիսի դաշտանութիւններից տես այ „Русскія Вѣдомости“, 1895 г., № 249, Судебная хроника.—Московскій окружный судъ: Истязаніе ребенка“, в) նուսակ № 255, „Судебная хроника.—Кievскій окружный судъ: Истязаніе“.

քից վիրաւորւած թշւառականներ են իրանք և թէ «որբ ճնւել են, որբ էլ պիտի մեռնեն»<sup>1)</sup>, —ինչու և աւելի ու աւելի են կապւում, մտերսանում իրար հետ, բանաստեղծի խօսքերով, թէ

«Միմեանց կը սիրեն երկու թշւառներ»...<sup>2)</sup>

Բայց նախքան այդ «երկու թշւառների» պատմութիւնը սկսելը՝ մինչք անհրաժեշտ ենք գտնում ծանօթացնել մեր ընթերցողին այդ մթնոլորտի հետ, որտեղ մեծացել են և որտեղ այժմ մեծանում են նրանք:

Սրտամմլիկ պատկեր է ներկայացնում այն շրջանը, որտեղ ապրում, մեծանում են մեր փոքրիկ հերոսները: Դուք կանգնած էք գեսնափորի զրան առաջ: Ծանր օղը ճնշում է ձեզ, մեծ նեղութիւն պատճառելով ձեր կրծքին: Ձեր չորս կողմը թնդում են բազմատեսակ ճշոցներ, հառաջող վշտի, մղկան կակիծի ճշոցներ... խաւարի հաստ քողով ծածկւած է այդ պատկերը,—և գուք ոչինչ չէք տեսնում... Բայց, ահա, աջակողմնան նեղ ճեղքից ցոլացին աղոս լուսի մի քանի շողեր, փոքր ինչ պարզութիւն տալով պատկերին... (Երեկ արեգակն է ծագել և իր միլիօնաւոր ճառագալթներից մէկը ուղղել է դէպ այդ ողորմելի գետնափորի պատուհանը): Դուք ուշադրութեամբ առաջ էք նախում, կարծես մի քան որոնելով այդ մասախուզի մէջ... Եւ, ոչար ֆորտունա, գուք տեսնում էք, որ ձեր առաջ կանգնած են ձեր քորենքն ու եղբայրները, և հէնց նրանք են ճշոց, հառաջանք հանողները, բայց ոչ թէ որ և է անասուններ՝ ձեզ հետու, անծանօթ, ինչպէս կարծում էիք: Ձեր սիրար լցուում է: Սակայն դրանից ով ինչ մեղքի համար է ընկել այդ երկրային դժոխքի մէջ: Սկսենք մեծերից և համենք վոքրերին:

Վեհմովա պատահն է այդ շրջանի գեկը: Դա ան ցեցերիցն է, որոնք, ընկենելով հասարակութեան այլ և այլ խաւերի մէջ, տարածում են իրանց շուրջը վավաշ, ապականիչ անբարտականութիւն: Ծառավելով իր անձնական շահերին՝ նա ոչինչ չի խնայում հարստանալու համար,—պատիւ, խղճմտանք, ամեն ինչ զուում է նա, միան թէ փնդ, փնդ, փողը շատ լինի: Նա պինդ համոզւած է թէ՝

„Nach Golle drängt,  
Am Golde hängt  
Doch Alles“<sup>3)</sup>,

(Ամեն ինչ ձգաւում է դէպի փողը, ամեն ինչ խօ փողից է կախւած),  
և այդ համոզմունքը խլում է նրանից նրա մարդկաբին կերպարանքը: Նրա

<sup>1)</sup> Ոժէ շկօ՝ „Շքրենյակա սպալլիա“, էջ 83:

<sup>2)</sup> Լ. Սառկաթեան՝ «Բանաստեղծութիւններ», էջ 30. Նոր-Նախիջևան, 1882 թ.:

<sup>3)</sup> Գէօթէ—«Փառւստ»:

բնակարանը դառնում է անբարույականութեան ապաստան, որտեղ համարեա ամեն զիշեր հաւաքւում են զանազան կողմերից ազախիններ, ծառաներ՝ «ուրախ ժամանակ անցկացնելու», վարձատրելով դրա համար տանտիկնոջը, Տանտիկինն էլ իր կողմից կաւատութեամբ է պարապւու Նրա բնակարանը այն տներից է, որոնցով անգան հարուստ են Խոսկւալի և կամ առհասարակ մեծ քաղաքների, սեւ փողոցները, այն տներից, որոնց դռների զլխին ինչ կը սազեր չարել հանճարեղ բանաստեղի «*Lasciate ognī speranta, voi ch' entrate»* խօսքերն<sup>1)</sup>՝ որովհետեւ ալսանդ մանողը էլ չի կարող աշնտեղից մաքուր զուրս գալ. Դրան պարզ ապացուց է էլքրէտան, որը նոյնպէս պառափ զոհերից է: «Գուք անպատճառ պէտք է մի բան անէք ինձ համար, — արտասուզով աղաչում է նա պառափին, — ... Զէ որ իմ անբախտութեան չորհիւ էր, որ զուք փոքր ինչ փող զումարեցիք... Զէ որ... չէ որ... վկալ է Ասուած, որ իմ անբախտութիւնը ալսողն, ձեր տանը սկսւեց, որովհետեւ ևս անիծւած օղու առաջին բաժակը ձեր ձեռքից հմ առել... ևս չի ուզում, զուք համոզեցիք... Խմեցի մէկ, երկու... բաժակ... իսկ իստին»<sup>2)</sup>: —

Սակայն ինչն է ստիպում պատառ Աեմբովալին ծերութեան մէջ անդամ աչդ կեղաստ կեանքը վարել... Դուք, ընթերցող, կարծում էք, որ պահութիւնը, արծաթսիրութիւնը, մասամբ աղպէս է, ՚ի հարկէ, բայց միմիալն մասամբ. առաջին ու զլխաւոր պատճառը հացի ինդիրն է: ՚Նա զեռ չի կշացել աշխարհից. նա ապրել է ուզում, բայց ինչպէս չարունակել կեանքը, երբ որ աչդ կեանքը պահպանելու համար միջոց է հարկաւոր. Եւ նա դառնում է եսական, պահանջելով քանի քանի զոհեր՝ իր եսի քմապաշտ ցանկութիւններին բաւականութիւն տալու Եւ աղպէս, ահա, նրա մէջ մարդկալինը կամաց — կամաց լաղթում է անասնականից...»

Նոյն անանացած զրութեան մէջ է և էլքրէտան, Մարցիսի մալրը, թէպէտ և իր բնաւորութեամբ, իր վարք ու բարքով նա ամեննեին տարբերում է պառափից: Մինչդեռ վերջինն երկու ոտով արդէն թագել է անբարույականութեան անդունդը, էլքրէտան, ընդհակառակը, կարողացիւ է դոնէ մի համակրելի զիծ իր բնաւորութեան մէջ անարատ պահել: Դա էլ նրանցից է, որոնք իրանց գոլութիւնը պահպանելու, իրանց կեանքը առաջ բարչելու համար, հարկադրուած են կրել և՛ անարգանք, և՛ սեւ վաստանջ օրեր: Աղքատութիւն... և ինչեր չի անում նա, այդ անխիզ աղքատութիւնը... աղնիւ, անկեղծ մարդուց խաբելաչ է ստեղծում, անկաշառից — կաշառակեր, աստւածավախից — աւաղակ. նա իսդղում է մեր մէջ մեր խղճմատանքի ձաւնը, բթացնում մեր բարույականութիւնը. հաւա-

<sup>1)</sup> Պանտէ: «Աստւածակալին կատակերգութիւն. Դժոխք», III, 9:—

<sup>2)</sup> „Ծրենъкая идиллия“, Եջ 45:—

տարիմ կնոջ անարատութիւնն է նա պղտորում. մաքուր կուսին նա փողոց է քշում... և ինչեր չի անում նա, այդ անխիզճ աղքատութիւնը։ Շատ անարգանք, շմատ անպատռութիւն, դարդ ու ցաւեր է կրել աղքատ ելժբէտան իր ալէկոծ կեանքի մէջ։ Անբախտացած Վեճբովավի չնորդիւ՝ նա երկար ժամանակ անպատկառ կեանք է վարել, լանձնւելով արբեցնող խմիչքներին և ընկնելով առաջին պատճողի գիրկը. և այդ ամենն նա արբել է «հայի խնդիրն» աչքի առաջ ունենալով։ Իոկ աչժմ, երբ նա արդէն թառամել է, կորցրել իր գեղեցկութիւնը, այն «անցած» օրերից աչժմ մի լիշտակ է միմիան մնացել. զա նրա Մարցիսան է, նրա ապօրինի աղջիկը։ Անսահման սիրում է նա իր միակ զաւակը։ Աչո՛, խեղղելով իր մէջ ամեն մի բարի զգացմունք, նա սական, հաւատարիմ է մնացել մայրական զգացմունքին. ամեն ինչ կարող են մեռյնել, ամեն ինչ բթացնել կեանքի հանգամանքները, միմիան այդ զգացմունքն է, որ միշտ արթուն, առողջ է մնում կնոջ սրտի մէջ... Աւ ինչ հոգեբանական հմտութիւն է ցուց տւել ալստեղ արգու հեղինակը, չըրկելով իր հերոսուհուն ալդ բնական զգացմունքից։ Աչդ տեսակ հմտութիւն մենք կարող ենք պատահել միմիան առաջնակարգ քերթողների մօտ։ Մարդ առհասարակ այնպիս է չինած, որ լինչքան էլ անդութ, անիրաւ լինի նա, բայց նրա մէջ հմուտ հոգեբանը էլի կարող է գոնէ մի առողջ, համակրելի զգացմունք գոնելի բնական է, օրինակի համար, չինչ Շեքսպիրի Մակբեթին, Դուստուեսկու Ռասկոլնիկովին, —համաձայնելու համար ալդ մտքի հետ Ռասկոլնիկովը մարդասապան է։ Իր պատիր, մոլար սլզբունքից դրդւած նա մնեց չարագործութիւն է անում. նա թափում է Ալիօնա իւանովնախի արիւնը, որ նրանից կողոպտած վողերով մարդկութեանը օգտաւէտ գործիչ դաւնաւ։ «Մի կողմից, —մտածում է նա, —աչդ չիմար, չնչին, հիւանդու պառաւը, անսէր, միանակ, որ լինքը չըխտէ, թէ ինչու է ապրում և որ հէնց վար, կարելի է, կը չորանայ կը մեռնի... իսկ միւս կողմից, այն թարմ, երիտասարդ ոչքերը, հարիւրաւոր ովտեր, որոնք՝ զուրկ նիւթական նիցուկից՝ գետին են գլորւում... ու աչդ պէս ամենուրեք<sup>1)</sup>»։ Եւ նա սպանում է աչդ «չնչին պառաւին», որ նրա փողերով ապահովացնի իր ապագան՝ իր բոլոր ոչքերը լիովին մարդկութեանը նւիրելու համար... Նա միջոցը արդարացնում է նպատակով։ Բայց տեսէք, թէ որչափ հմուտ հոգեբան է եղել Դուստուեսկին, որ աչդ կորած մարդու սրտումն էլ կարողացել է դանել մի համակրելի զգացմունք։ Յիշում էք ուժմանի վերջը, այն էջերը, որտեղից մենք իմանում ենք, թէ Ռասկոլնիկովը Առնեալի մէրից վերածնում է, մտաբարձում էք այն բոպէն, երբ նրանք, խոստավանելով իրանց սէրը, խոստանում են ասլագաց կեան-

<sup>1)</sup> Достоевский: „Преступление и наказание“.

քում միասին ապրել ու գործել: Այդ բոպէին անրանց աչքերը արտառւախառն էին,—պատմում է հեղինակը,—նրանք սպրտնել էին և ուժաթափաւել. բայց այդ ուժառպառ, զունատ երեսներին ցոլում էր արդէն խնդառաստ ապագայի մի նոր արշալուս: Աէրը վերածնեց նրանց<sup>1)</sup>—Այդպէս և Մակրեթը. նա չարագործ է, արջնկեր. բայց և չէք մոռացել, ի հարկէ, որ այդ մարդ-գայլի մէջ էլ երբեմն արթնացել է խղճմառնքի ձանը. Կարողացել էք ըմբռնել և հասկանալ նրա հոգու ան բարդ դրութիւնը, երբ նրա որից տապալւած Քանիկօն տեսիլքի մէջ երեսում է նրան: —հոդերանութիւնը դրան կ'ասի բարոյական շւարում:

Սակայն զառնանք գեղի կլճքան: «Փանի՛ գիշերներ ևս ծնկաչոք աղօթել եմ Աստծուն, որ նա ինձ միսիթարութիւն ուղարկի, խեկ զաւակի՞ աղատութիւն! նա աճում մհծանում է, գեղեցիկ, խելօք. բայց ինչ է լինելու նրա վերջը...»<sup>2)</sup>—աղերսում է խեղճ կինը և վճռում՝ գնալ աղախնութիւն անել իր աղջկակ պատիւը աղատելու համար: Եւ նա զնում է, թողնելու իր դուստրը Վեժմալի մօտ, և խոստանում, որ մի երկու տարրոց, երբ որ կ'աշխատի մի քանի կոպէկ, կը դաւ, կը վերադառնուի, ալիսնքի ծանր խաչը նա դնում է իր մէջքին՝ իր աղջկակ համար բախտ որոնելու...»<sup>3)</sup>:

Այդին հարուստ է նոյնպէս շատ երկրորդական անձնաւորութիւններով. բայց դրանք՝ առանձին-առանձին վերցրած՝ անքան վիտքը մարդիկ» են, որ մենք աւելորդ գտնելով նրանց ամեն մէկի վրակ կանգ առնելի կ'ասենք միմիան, որ այդ ափաքը մարդկանց բացասական աղցեցութիւնը միասին վերցրած՝ նոյնպէս դեր է խաղացել Վլադեկի և Մարցիսի ապագակ կեանքի համար:

Այդ թռուցիկ, սակայն լրացուցիչ նկատողութիւններից լւտով մենք կարող ենք շարունակել մեր մանուկ հերոսների կեանքին հետեւելը: Ապրելով այդ ճնշող մթնոլորտի մէջ, նրանք՝ թէպէտ և պատահում էր, որ օրերով քաղցած ծարաւ էին մնում, ալսուամենալիւ ուրախ ժամեր էլ էին տեսնում: Ազդպէս է մանուկ արարածը. ինչքան էլ անբախտ, ապերջանիկ լինի նրա կեանքը, բայց նա այդ կեանքի մէջ անպատճառ կը զանի և զւարթ ուրախութիւն: Այդ ուրախութիւնը մեր երկու փոքրիկներն իրանց լիւբուսի, իրանց սիրուն աղախնու մօտ են զտնում: Որքան զեղեցիկ, որքան հոգեբուզիս են վէտիկի ան էջերը, որանդ ելիդա Օմէշկօն նկարագրում է այդ երկու մանկիկների խաղը Վլւբուսի հետ... Ազդպէս անցնում են ամիսներ, անցնում մօտ երկու տարի, ձակ ստագիրը բաժա-

1) Նոյն. (изд. Маркса, т. V, էջ 545):

2) „Сърпъсая идилия“, էջ 42:

3) Նոյնտեղ. էջ 98:

նում է այդ երկու ընկերներին։ «Մի պարզ երեկոյ»<sup>1)</sup> Վլաղեկն չափում  
է Մարցիսին թէ նրա հօրեղբարը, որ քաղաքում կափէտուն ունի, եկել  
է և թէ նրան տանում է իր հետ քաղաք՝ առևտուր անելու Նրանք բա-  
ժանուում են խոստանալով չաճախ-չաճախ տեսնելի, Այդ վարժունքը մի  
ժամանակ սրբութեամբ էր պահմանւում. սական իսուց կամաց-կամաց  
սկսում է թուլանալ, նրանց տեսութիւնները գառնում են զրեթէ պատա-  
հական։ Բայց որքան սակաւ էին տեսնուում նրանք, անքան էլ աւելի էր  
կամուում Մարցիսան Վլաղեկի հետ, անքան աւելի սիրում նրան։ Զմեր-  
ալին քանի գիշերներ, երբ պառակի մօտ հյորել էին հաւաքւում, խեղճ  
աղջիկը անց է կացրել զրանը՝ ցրտի, ձիւնի տակ, յալով ողբարով իր սի-  
րելի ընկերոջ մասին։ Այդ զգացմունքը ընդհանուր է մարդկանց։ Երբ որ  
մենք սիրում ենք մէկին, և երբ մէկը որ և է պատճառով մի քանի ամիս-  
ներ, տարիներ սովորւած է հեռանալ մեզանից, չէ որ նրա բացակառու-  
թեան ժամանակ մեր սէրն աւելի է ջերմանում, աւելի բոցիչ կալծով  
վառւում։ Այդ կալծը վառւեց և Մարցիսի կրծքի մէջ, մաքնւր, անարմա-  
կած, վաղուց է, ինչ նա չի տեսնել իր սիրելու հետ։ Նա անհամ-  
գիստ է, նա տիսուր է, մի անդամ էլ ուզեց ժապտալ նրան։ Տասնեչորս  
տարեկան օրիորդ էր Մարցիսան, երբ մի օր, վերջապէս, նա արժանա-  
ցաւ իր ընկերոջ այցելութեանը։ Սական ալդ այցելութիւնը վերջինն  
էր, և իր հետ երջանկութիւն բերելու փոխարէն՝ նա սեացնում է անքախա  
Մարցիսի առանց ան էլ մութ օրերը։ Մարցիսան, կարծես, գուշակում է  
այդ։ Անբացատրելի մի լուզմունք ճնշում էր նրա կուրծքը։ Նա փաթաթ-  
ւեց Վլաղեկի վզովը և աշխատում էր ըմբանել նրա դէմքի գծերը...<sup>2)</sup> Ալրպէս թուղթ զունատ էր Վլաղեկի դէմքը, խոր մթութեան միջից (զի-  
շեր էր) տենդային կրակով էին փալուում նրա աչքերը...»

«—Վլաղեկի, իմ Վլաղեկ, ինչո՞ւ ալդքան զարհուրելի ես, ինչ ես  
խորհում, ինչ է լինելու»

«—Ինչ?!... կամ կը վերցնեմ քեզ ու կը դնանք հեռու աշխարհներ,  
կամ թէ էլ երբէք չես տեսնիլ ինձ...» Իւկ ալժմ աղօթիր ինձ համար...  
երկարու...»

«Նա բարձրացաւ սարը և անհետացաւ մթութեան մէջ»<sup>3)</sup>... Այդ-  
պէս են տեսնուում իրար հետ երկու վաղեմի ընկերները։ Որքան փոխել է  
Վլաղեկը, Տեղաւորելով իր հօրեղբօր մօտ՝ նա ընկնում է տգեղ երիտա-  
սարդների շրջանը (ինքն էլ ալժմ՝ 17 տարեկան երիտասարդ էր) և հն-  
թարկում էր նրանց վարքութարքին։ Այդ տգեղ երիտասարդները, որոնց

<sup>1)</sup> Նոյն. էջ 51.

<sup>2)</sup> Նոյնամզ. էջ 84.

<sup>3)</sup> Նոյն տեղ. էջ 85—86.

մնիք կորած մարդիկ ենք անւանում, իսկ ոռար օտքետե, մեծ վնասներ են հասցնում մեր հասարակական բարեկարգութեանը։ Դրանք ոչխարինով փաթաթւած գալլեր», ինչպէս ասել է մեր բանաստեղծը «Հայրենասէր խելազարների»<sup>1)</sup> մասին, մտնելով մատաղ ուրնդի շրջանները, որտում են նրանց իրանց իդէաների զասի — գործնականութեամբ, — և այդ որսած զոհերից ստեղծում կետու ընդհանուրի շահերի դէմ մարտնչող, հասարակութեան մէջ խռովութիւն գցող և նրա խաղաղութիւնը խանգարող անդամները։ Հատ միատեսակ է այդ վնասակար հերոսների ճակատագիրը. վերջ՝ ի վերջու զրանց վարձագրութիւնը կամ բանան է լինում, կամ թէ ինքնասականութիւնը։ Դրանք շահամոլ ընչասէր եսականներ են, մոլեսանդ եսականներ։ Կեսար-Բորջիո՞ի նշանաբանը՝ «Aut Caesar, aut nōn»՝ նրանց ազբուրենն է, Յրինակ, հէնց մեր Վլադեկը. Ֆրանենիի, այդ կորուծ մարդկանց խմբագլխի, առաջարկութեամբ նա այնպիսի վատահ բան է վճռել, որի հետեանքից կարելի է միմիան երկու ճանապարհ սպասել՝ կամ բանտ, կամ հարատութիւն։ Ցնորսելով գոնէ չափշակած փողերի չնորհիւ ազատութիւն դժոնել կեանքի ծանր հալածամնքներից, ողջ և առողջ պրծնել «գործութեան կույր» դաշտից ու ապահովացնել իր ապագան։ Նա վճռում է զիշերով թալանել հարեան պարտիզանի հարստութիւնը, որ թաղցլած էր նրա տան վերնազարկում։ Բայց բախտը դաւաճանում է նրան, նա բունում և բանտ է ուզարկում... Հատ չուտ է հասնում Մարցիան այդ տիբրահուչակ լուրը։ Խեղճ օրիորդը հաւատալ անզամ վախենում էր. ինչպիս, նրա Վլադեկը, սիրած Վլադեկը... Նա իսկոնի թողնում է սպառափի տունը և արագութեամբ քաղաք վաղում։ Անսեղի կարծում էր նա, ամեն ինչ կը պարզէի, ամեն ինչ կ'իմանալ։ Իրաւ որ ամեն ինչ պարզում է, Հասնելով քաղաքի բանտին և, տեսնելով, որ Վլադեկին զինուրները ներս են տանում՝ նա արագութեամբ մօտենում է նրան և բռնում նրա թեից. Վլադեկը «Ես է զաւնում և նաևում օրիորդին... շատ խիստ էր երիտասարդ չանցաւրի գէմքը, շրթունքներն էլ դողում էին. նա կամենում էր խօսել, բայց չէր կարող»<sup>2)</sup>, Նրեի նոր արթնացած խղճմատնքը կատել էր նրա լեզուն... Զինուրը շտապում է ազատել նրան Մարցիսի ձեռքերից և բակը հրելով վակում երկաթապատ դաները — էլ ինչ ես կանգնել բանտի պատերի մօտ, թշնամ օրիորդ։ ինչ ես աչքան զառն լալիս, հալումաշ անում առանց այն էլ մաշւած քո միրտը. Երբ ես տեսել, որ մեռելն չարութիւն առնիր. Խելքը հաւաքիր զլուխտ ու տուն վերագարձիր. ով գիտէ, գուցէ աշնաղ բախտը նորից, մի անզամ էլ ժպտակ աւերակ կեանքիդ։ Դու դեռ անքան ջահէլ ես... Եւ նա՝ ճարահա-

<sup>1)</sup> Ս. Շահ-Ազիզեան՝ «Լեռնի վիշտը», էջ 37—38.

<sup>2)</sup> էջ 93.

տեսլ՝ առւն է զառնում: Մինչդեռ պառաւը իր սովորական հիւրերի հետքագիր էր սեղանի շուրջը: Ելժբէտան վերագարձել էր, այն Ելժբէտան, որ, անձնելով իր դուստրը պառաւին, գնացել էր իր նիհար ձեռքերի աշխատանքով փող դումարելու՝ Մարցիւի ապագան ապահովեցնելու համար: Այժմ խեղճ կինը աւելի թշւառացել աւելի աղքատացել է: Հորերը պատառուած, աչքերը արտասւախառն, դէմքը տկար... Ճակատագիրը, երիի, դրան էլ է խարել: Նա պատմում էր ներկայ և զողներին իր անաջողութիւնները, երբեմն լուսաբանելով իր պատմւածքը տիսնոր երգով, Քարեկցելու փոխարէն՝ ծաղրում էին նրա անբախտութիւնը: Յանկարծ մէկը մնիծ աղմուկով ներս է լարձակում:

«—Օգնեցէք, բարի մարդիկ, 'ի սէր Աստուծով օգնեցէք» <sup>1)</sup>:

Ելժբէտան խկան ճանաչեց... Դա Մարցիսան էր... Բայց վերջինս ախնդէս սաստիկ էր լավչտակւել Վլատեկի թշւառութեամբ, որ՝ չճանաչելով իր մօրը և կամ ուշադրութիւն չդարձնելով նրա վրաէ՝ շարունակում էր կանչել, աղամել՝

«—Աղատեցէք նրան, թէ որ Աստուծ ունէք... Նրան տարան... Բանտը տարան» <sup>2)</sup>...

Ելժբէտան մօտեցաւ իր զաւակին և զողոյջ ձեռքերով գրկեց նրան: «Որ խորշամած, եփած դէմքը նա սեղմեց Մարցիսի դէմքին, իր շրթունք ներսով որսնելով նրա շրթունքները... Բայց օրիորդը արագութեամբ հեռացաւ նրանից, թեքւեց պատին և զարմացած, շւարած աչքերով սկսեց նալել նրա վրայ» <sup>3)</sup>:

Կրկնում ենք, թնդ չզրմանաէ ընթերցողը, որ Մարցիսան չճանաչնացից իր մօրը: Նրա խելքն ու միտքը, բոլոր էութիւնը այնպէս էր լավչտակւել Վլատեկի անբախտութեամբ, որ նա ընդունակ չէր որ և է ուրիշ բան ըմբռնելու, հասկանալու: Նրա հոգու ներդաշնակութիւնը սաստիկ խանդարւել էր: Նրա ուղեղը նսեմացել էր, ծածկւել թանձր մառախուղով: Այդ դրութիւնը առաջին քալն է դէպի խելագարութիւն:

«—Չկատարեցի խոստմունքս, իմ անդին զաւակ, — լալիս էր Ելժբէտան, — չկատարեցի... Ուզում էի ուղղել, բայց... չկարողացակ... Անիծած օդին կրկին մոլորեցրեց... Մարցիսա, հոգիս, մի բարկանար, մի մեղադրիր ինձ...» <sup>4)</sup>—

Արդեօք երեակակնում էք ձեզ, ընթերցող, այն ահեղ դրաման, որ կատարում է թշւառ մօր ալեկոծ կուրծքի մէջ: Բայց և կարողանում էք

<sup>1)</sup> Եջ 98.

<sup>2)</sup> Նոյն տեղ:

<sup>3)</sup> Եջ 99.

<sup>4)</sup> Նոյնտեղ:

мійнінпїн фахімаванівік հասկівінавал աیն վեհ, թէպէտ և թունաւորւած սիրտը, որ անհաւասար կերպով բարախում է այդ կուրծքի տակ. Ի՞նչ զգացմուն-քով էք լցւել դէպի այդ գրեթէ ոչնչացած կինը. կայ ձեր մէջ ալճքան արդարադատութիւն՝ վարձատրելու նրան ըստ արժանուուն. Կը կարեկցէք նրան, թէ կը դարձնէք նրանից ձեր երեսը. Բէլինոկին 1837 թ. օգոստոսի 16-ին մի նամակ է ուղարկում իր բարեկամ Մ. Ա. Բակոնինին, ուր, ի միջի ալլոց, ասում է՝ «Քեզ լաւանի են իմ հասկացողութիւնները մարդ-կանց վերաբերեալ, զու գիտես, որ ես նրանց բաժանում եմ երկու կարգի. մէկ՝ նրանք, որոնք կրում են իրանց մէջ սիրու սազմերը, մէկ է՝ նրանք, որոնք նրանից զուրկ են, և ես պինդ ատում եմ դրանց ներողներին. Բայց երբ որ ես տեսնում եմ բարի զգացմունքի սազմեր սլասում կրող մի մարդ, ինչքան էլ ախտացած լինի նա, միևնուն է, ևս նրան չեմ կարող ատել, եթէ միաէն նա խոստովաճում է իր ընկած դրութիւնը, և եթէ ճշմար-տութեան ինստինկտը զեռ ևս զգոն, արթուն է նրա մէջ»<sup>1)</sup>. —Պահել է, արդեօք, ելքէտան իր որտի մէջ նշանարտութեան բնաղումը. խոստովաճում է, արդեօք, նա իր մեղքերը. Անկասկած, ալո՞ դրան ապացուց վերը գեռ տեղած քաղաքածքը վէպիկից. Ի՞նչպէս կարող ենք, ուրեմն, չկարեկցել նրան, չտանջմալ նրա ցաւով... Թէ որ մեր մէջ զեռ չի մեռած մարդասի-րական կաէցը, մենք, անչուշո, կը կարեկցենք և կը տանջւենք. Զէ որ դա նրա միսկ ուրախութիւնը, միսիթարանքը կը լինի, բայց կարելի է և ազատութիւնը: «Մարդավայէլ վարժունքը, —ասել է Դոստոեվսկին, —կա-րող է մեղմացնել անգամ անպիսիին, որի սրտում վաղուց արդէն նսեմա-ցել է Աստուծու պատկերը. Հենց այդ «թշւառականների» հետ պէտք է մարդավարի վարւել. դա նրանց ազատութիւնը, նրանց ուրախութիւնն է»<sup>2)</sup>. Սակայն այդպէս չի ընթանում մեր առօրեակ կեանքը: Զգալով դէպի այդ թշւառները սաստիկ զգւանք, մենք զրեթէ միշտ ես ենք դարձնում մեր երեսը նրանցից, երբեմն էլ նախատում, անպատում ենք նրանց. նրանց ձեռք մեկնելու մէջ մենք անպատութիւն ենք տեսնում մեզ հա-մար... Մինչդեռ ամենք իրաւունք չունենք ստորագրել և կարդալ լանցա-ւորի դատավճրուը, քանի որ չենք քննել այն հանդամանքները, որոնց հովանաւորութեան ներքու առաջ է եկել լանցանքը. Ո՞վ զիսէ, գուցէ հէնց այդ լանցանքի ծագելու պատճառը ոչ այնքան մարդ-զօհն է եղեւ որքան հանգամանքներն ու չար կեանքը»<sup>3)</sup>: Եւ այդ ամենից լետու ինչ

<sup>1)</sup> А. Пыпикъ: „Бѣлинскій, его жизнь и переписка“, I, 184.

<sup>2)</sup> Достоевскій: „Записки изъ Мертваго дома“. изд. Маркова, № 116.

<sup>3)</sup> Чернышевскій: „Критическая статья“ (Руссій человѣкъ на rendez-vous), № 257. СПБ., 1895 г.

Քրաւունք ունենք մենք գանգատելու, թէ այդ Ելժբէտաներն երբէք չեն ուղղում, այլ իրանց անբարովական կեանքը իրանց հետ զերեզման ևն տանում, ինչնվ հնք մենք առաջնորդում՝ մեղադրելով նրանց այդ բանի համար: Ե՞րբ էք տեսել, որ ուզող ինքն իր ուժով ու խելքով կարողանակ դուրս գալ, աղատել այն ճահիճից, որտեղ պատահմամբ թաղել է: Հոգեկան մեծ ոչքեր են հարկաւոր, մեծ կամք, որ իր ընկած դրութիւնը խոստովանող կինը կարողանակ ինքն իրան դուրս հանել անդունդից: Մինչդեռ այն կեանքը, որ կանակք են գարում, ոչ թէ զարգացնում է նրանց հոգեկան ուժերը, այլ ընդհակառակն, թուլացնում, տկարացնում: մաշած, փոքրոգի, անկամք՝ նրանք ընդունակ չեն և ոչ մի անկախքալի... ամեն ինչ արհամարհելով՝ նրանք աշխատում են աւելի խորը ընկդմւել անառակ, ունակն կեանքի մէջ, նրանք թմրել են փափագում... Եւ ինչ է մեռմ անել խեղճ Ելժբէտավին, եթէ ոչ աւելի խորը ընկդմւել իր անբախտութեան մէջ, որ թմրի, մոռանմակ... Ազդակս էլ հէնց անում է նա: Այն ժամանակ, երբ նրա Մարցիսան, հերքելով իր մօր փափականքները, «իմ Վլաղեկը! իմ թշւառ Վլաղեկը!» սղերսանքով կամննում է դուրս փախչել սենեակից և երբ հիւրերից մէկը բռնում, արգելում է նրան, այն ժամանակ նա՝ օզիի գաւաթը ձեռքին՝ մօտենում է իր սիրած աղջկան, մեկնելով իր ձեռքը:

«—Ա՛ռ, խմիր, զաւակս, դա լաւ. զեղ է այն որդնի դէմ, որ աւելում է սիրտղ... Կը թմրես, կը քննես...»<sup>1)</sup>,

Մեղադրենք, արդեօք, այդ կնոջ անմիտ վարմունքը, եւ ինչ էր մեռմ անել նրան, ասացէք խնդրեմ, եթէ ոչ արբեցող խմիչքով թմրեցնել իր աղջկաց խանգարւած սիրան ու միտքը, որ նա այդ ստոր քնի մէջ գոնէ կարողանակ մի քանի րոպէ, մի քանի ժամ անհոգ, հրջանիկ ապրել... Մարցիսան, կարծես, հասկացաւ իր մօրը: «Խաղաց նրա երակների մէջ մօր արիւնը արդեօք, թէ մի հրապուրիչ լուս ծագեց նրա զլխում՝ յամառդարդը խեղելու, կամ թէ լուսահատութիւնից արդէն արբեցած՝ ինքը չէր հասկանում, թէ ինչ էր անում,—ինչ և իցէ նա խլեց մօր ձեռքից օղու գաւաթը և քամեց նրան:

«—Ա՛ռ...—հառաչեց նա... սական մի ակնթարթից նրա գունատդէմքը ծածկւեց կարմրութեամբ. արտասւախառն աշքերը փակեցին սև աղամանդի կալծով: Նա, կարծես, հանդստացաւ:

«—Սէկ էլ..., խնդրեց նա, պարզելով զատարկ գաւաթը:

«—Անբախտ, թշւառ աղջիկս,—լալիս էր Ելժբէտան,—երեխ քո վիճակն էլ իմ վիճակից չառ չի տարբերելու:

«Նա լցրեց զաւաթը և տեսց Մարցիսին, Մարցիսան ընդունեց ու

<sup>1)</sup> „Ծերենեկայ ուղլլիյ“, Էջ 101.

քամեց, Նրա դէմքի գծերը, կարծես, մեղմացան. անորոշ ժպիտը չորացաւ Նրա կարմիր շրթունքների վրաց: Կր պղտոր գէմքով նա նախց ներ, կաէ եղողներին, և, կարծես, մի բան չիշելով, չանկարծ կոծեց՝ զառն, առանց արտասուքի ու զողոնց ձանով կամաց երգեց .. երգի վերջին տողը հաղիւ լսելի էր... Մարցիսան թեք տեց իր գլուխը սեղանին և փակեց աչքերը... Նա հարբել էր....»<sup>1)</sup>:

Ահա ալդպէս է զոհւում անբախա օրիորդը իրան շրջապատող հաճամանքներին... Դեռ չբացւած կոկոն՝ նա պատահմամբ բնկել էր այդ ձնչող հաճամանքների ձեռքը, և օրէցօր աւելի ու աւելի ձնչելով՝ սպառւած ոչներով նա, վերջապէս, գետին է զլորւել վերջին, ծանր հարւածից... Եւ դա միաւոր, պատահական երեսով չէ մեր առօրեալ կեանքի մէջ, Փորձեցէք զուրս գալ ձեր տաք սենեակից, գնալ մանել այն քաղաքի ետընկած փողոցներն, որտեղ ապրում էք, ընթերցող, և կը տեսնէք այն ժամանակ, թէ ինչ բազմաթիւ, ւաճախակի են այդ երեսովները, Զեր աչքերին կը ներկայանալ այն ժամանակ մի ուրիշ կեանք, տաճանքառանուած մանրունքներով, պէսպէս աղբերով սնուցւած. մի կեանք, որպիսին դուք, երեխ, երազում էլ չէք տեսել: Դուք կը մտնէք այն ժամանակ մի նոր աշխարհ, որտեղ ոչ լուս կաչ ոչ ջերմութիւն, ոչ էլ հանգստութիւն. անտանելի գարշահոտութիւն է բուրում այդ նոր աշխարհից. խոնաւ և նեխած է նրա օղը: Կենդանի միտք, առողջ դատողութիւն, պատ կամք, այն ամենն, ինչից մեր հոգեկան կեանքն է կազմել, խեղղւում է անտեղ և մնում է միմիան մարմնականը, այն էլ արդէն կիսամեռ, աւերակ: Բայց, ի սէր Աստուծոց մի դարձրէք ձեր երեսն այդ անարժան աշխարհից, մօտեցէք, ուսումնասիրէք նրան, մեկնէք նրան ձեր կարեկցական ձեռքը, որովհետև նրա խաւոր խորութեան մէջ գեռ չի մեռած, ցոլում է լուսառան մի կաէ, „bon espoire y dit au fond“—Ռարլէի խօսքերով: Մեր պարտաւորութիւնն է պահպանել այդ կաէքը որպէս մի թլըսիմ: և երբ նա հանդչի, ով է լինելու նրա պատասխանատուն, եթէ ոչ մենք: «Համարակութիւնը, եթէ կամենում է աճել, զարգանալ, պէտք է ապահովացնի իր անդամների կեանքը, չթողնելով և ոչ մէկին նրանցից չքաւորութեան մէջ»<sup>2)</sup>:

Վէպիկն ակամաէ ուշադրութիւն է գրաւում. Նրա գործող հերոսները այն „յնիշենիք և օսկրօլենիք“ անհատներն են, որոնք կամ ճակատագրից և կամ շրջապատող հանգամանքներից հալածւած՝ ամեն կերպ աշխատում են գոնէ թանկ գնով պահպանել իրանց խեղճ կեանքը. Դա

<sup>1)</sup> Էջ 101—102:

<sup>2)</sup> Ch. Letourneau: „L'évolution de la propriété“ (1889).

գոյութեան կրիւն է և, ամեն մարդ կռւում, մարտնչում է աշնակիս. ինչպէս ընդունակ է և կարող Գուք նրանց կը պատահէք այլ և ազ դիմակների տակ Դոստոեվսկու անմահ գրւածքներում. Նրանք ամենքն էլ կարող են կրկնել իմերձ չշժքւաափ դէպ իր դուստրն զարձրած խօսքերը՝ «Որպէս աշնանաւին գիշեր խաւար էր իմ վիճակը»<sup>1)</sup> —

Շօշափելով „Ծերենքայ իդիլլյա“-ի մէջ մեր զործնական դարու տիրապետող հարցը, զարդելի տիկնոջ սուր գրիչը ստիպում է մեղ կանդ առնել և խորն ու երկար մտածել մարդկացին ընկերութեան անքախտ մեծամասնութեան վրայ, որ, մարտնչելով անզերծ պաաերտզմի արընկեր զաշտում՝ իր գոլութիւնը պաշտպանելու համար, անտէր-անտիրական փուստ է աց դաշտի մէջ՝ հարւածւած կեանքի ծանր խարազաններից։ Եւ ինչով է մեզաւոր նա, այդ անքախտ մեծամասնութիւնը. իր որ մեղքերն է քաւում նա, ենթարկելով աց թշւառութիւններին... Ո՛, մեծ է նրա մեղքը և անուղղելի նրա լանցանքը... նա ծնւել է... աղքատ!... և արդէն պատրաստ ժառանգական փող չունենալով իր զրպանում, նա պէտք է կռւի ամի փոր հացիո համար. — Խնչ խելացի և մինուն ժամանակ ինչ դառն աղերտանքով են հնչում տասներկու տարեկան Վլադեկի բերանից հետեւեալ խօսքերը՝ «Միթէ կալ աշխարհիս երեսին արդարութիւն.. Մէկը ամեն կողմից ապահոված է, իսկ միւսը ոչինչ չունի. մէկը պանի (տէր, աղա) պէս է ապրում, լայտնի չէ թէ ինչն, իսկ միւսն ինձ պէս սինլիքորի կեանք է վարում, նոյնպէս լայտնի չէ թէ ինչնւ...<sup>2)</sup>» — Դա ցաւասանջ բողոք է մարդկացին մեծամասնութեան անունից, բողոք այն սոցիալական անարդար կազմակերպութեան դէմ, որտեղ մէկին վիճակւած է ապրել շքեղ պալատների մէջ, իսկ միւսին քաղցից ծարաւից մեսնել մարդաբնակ շրջանների ևտընկած փողոցներում. դա մաքուր խղճմւտանքից գրգռած, բարուական մի բողոք է մեր անբարոչական դարու դէմ, որտեղ „Ջանի ուղարկում—խիզն է խոնարհում կեանքի համեմատ)։

Ընթերցողը, երեխ մտածում է՝ թէ դա նոյնքան հին պատմութիւն է բուք քան հին խորհուրդ է՝ «Որդեակք, սիրեցէք զմիմիանա»; բայց և որքան նոր մինուն ժամանակ, նա հին է, որովհետեւ զեռ առաջին դարուց անդադար կրկնում են, իսկ նոր, որովհետեւ խօսքը էլ հնց մեռմ է, որովհետեւ զեռ ևս ոչ ոք չի իրագործել ալդ բարի ու վերին աստիճանի

<sup>1)</sup> „Ծերենքայ իդիլլյա“, էջ 100.

<sup>2)</sup> Նոյնակ, էջ 12.

<sup>3)</sup> Л. Н. Толстой: „Сочинения“, ч. 13 изд. 4, էջ 511.

մարդասէր խրատը. Բարուզականութիւնը իր զարգացման ընթացքում, ինչպէս ասել է Ցիգլեր՝ Ստրասբուրգի համալսարանի պրոֆեսորը, իրեն շրջանէ ունեցել <sup>1)</sup>։—և դրա վերջին շրջանը, այն, ուր մենք ենք ապրում, քրիստոնէական բարուզականութիւնն է, որ պահանջում է մարդկանցից «հրաժարւել անձնաւկան շահից» այն էի կամքը կատարելու համար, Որ ուզարկել է մեզ աշխարհ <sup>2)</sup>։ Իսկ ամեզ ստեղծողի կամքն էլ ան է որ մենք մեր կեանքը նւիրենք ուրիշին ծառակելուն» <sup>3)</sup>։ Պահանջը պարզ է և հասկանալի. ու նա կը մնալ ամեն մի զարու, զարագլխի համար անփոխու.։։ Աւ մենք միան այն ժամանակ իրաւունք ունենք ասելու, թէ բարուզական կեանք ենք վարում և կամ չենք մեղանչում քրիստոնէական խղճմանքի դէմ, երբ որ ապրում ենք ոչ թէ մեր նիւթական շահերի համար, ալ երբ որ աշքի առաջ ունենք և այն թշւառականներին, որոնք այս կամ այն պատճառով ընկել են փոթորկալից ծովը և անգութ ալիքներն ահա-ահա կամենում են կլանել ոչնչացնել նրանց. «Մարդկանին ընկերութիւն իրարմով կ'ապրի, միան կարօտութիւնն և պակասութիւնը՝ միւսն կը լրացնէ, և աշխարհիս ամէն բան փոխարինութեամբ կը կառավարւի» <sup>4)</sup>։—Արտեղից են առաջ եկել ազգ բոլոր Մարցիսները, Վաղեկներն, Ելբէտաներն.։։ անշուշտ, մեր անբարուզական կեանքից, որն և ստիպել է մեզ չեղւել ուզիլ ճանապարհից.։։ Իսկ ադ ուզիլ ճանապարհի վրայ մենք միան այն ժամանակ կանգնած կը լինենք, երբ որ չենք բաւականանալ լոկ նրանով, որ մենք ողջ և առողջ փախչել ենք «գողութեան կաւի»։ ահեղ զաշտից, ալ կը շարունակենք ալդ ալուիւը»՝ աղատնլու նրա գոհերին.։.

Ելանի աճ դարին, որ կ'իրագործի բարուսականութեան աղ տալ-  
րական գաղափարը. Այն ժամանակ մենք էլ, չիշելով Ա. Պետչելու «Բոլոր  
մարդիկ եղբակներ են»<sup>5</sup>) անդին երդը, ալ ևս չենք սարսափիլ «Գողու-  
թեան կռւից», ոչ էլ խոնարհ կը ծունք մեր վիզը նրա լծի տակ, ալ  
վստահ սրտով կը կրկնենք մի ուրիշ բանաստեղծի խօսքերը, թէ ալ ևս  
....Не будетъ на свѣтѣ ви елсэть, ни вражды

ни рабовъ,  
Ни нужды, беспросвѣтной, мертвящей нужды,  
Ни меча, ни позорныхъ столбовъ”<sup>6</sup>).

<sup>1)</sup> § 62 и Т. Циглеръ: „Что такое нравственность?“.

<sup>2)</sup> Л. Н. Толстой: „Религія и нравственность“.

### <sup>3)</sup> Առնակեղ:

<sup>4)</sup> «Պապիկ և թոռնիկ» դրեց Հայոց Հայրիկ. Էջ 17.

<sup>5)</sup> Տես «Բանաստեղծութիւններ» Ա. Շատուրեանի, էջ 26:

<sup>6)</sup> Надсонъ: „Стихотворенія“, № 48, СПБ. 1895 г.

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՐԻՒԵՐԸ ՓՐԱՆՄԻԱՅՈՒՄ

ԱԽԵՑԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

Ներկայումն Ֆրանսիան անց է կացնում իւր պատմութեան-  
մի վերին աստիճանի հետաքրքրական շրջանը։ Թերեւս այդ շրջանը  
մի ճգնաժամ է, որպիսին երկու անգամ յաջողութեամբ անց է  
կացրել արդէն ներկայիս երրորդ Հանրապետութիւնը, մի անգամ  
երբ, 1877 թւականին, պէտք եղաւ կռիւ մղել միապետականների  
դէմ, որոնց հանրապետութեան նախագահ Մակ-Մահոնը յանձնել էր  
կառավարութեան զեկը. իսկ միւս անգամ ութունական թւական-  
ների վերջը, երբ այնքան անակնկալ կերպով ծագեց բուլանժական  
շարժումը, որը, յաջողութեան դէպքում պիտի հանգչէր կե-  
սարականութեան՝ նապոլէտնների տւած օրինակով։ Բայց գուցէ, —  
և սա է մեզ ճիշդը թւում, — այս շրջանը այն ներքին կռիւների  
շրջաններիցն է, որոնք տանում են մի ազգ դէպի բաղձացած յա-  
ռաջդիմութիւնը, դէպի ներքին վերանորոգութիւնը, դէպի սոցիա-  
լական բարենորոգումները։

Ինչ ելք և ունենան սակայն ֆրանսիական ներկայիս ներքին  
կռիւները, — մի բան միայն հաստատ է, որ դոքա ներկայումն դրւած  
են զուտ գաղափարական հողի վրայ, և նոցա մէջ խառը չէ այս  
կամ այն անհատի քաղաքական ամբիցիան։ Բայց խնդրի այս կամ  
այն ձև ստանալովը — այդ կռիւները կարող են թէ քաղաքական  
մեծամեծ շփոթութիւնների հասցնել և թէ հանրապետութիւնը  
վտանգել, ինչպէս այդ եղած է երկու անգամ վերջին հարիւր տա-  
րիներում, և ի հարկէ՝ ոչ յօդուտ յառաջդիմութեան, այլ ի վեաս:  
Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը 1789 թւականի չմնաց զուտ

բարեփոխութիւնների շրջանի մէջ, այլ անցկացաւ տերրորական սարիներ, որոնք սահղծեցին մի գրութիւն, որից օգտագով եղաւ մի զօրապետ—Նապոլէոն I. և այն տարինները, որոնք յաջորդեցին Նապոլէոնի պետական հարւածին—յեղափոխութեան գաղափարների յաղթանակի տարիններ չէին, այլ ամենախիստ կեսարականութեան, անվերջ պատերազմների, տարիններ՝ ժողովրդի ներքին քաղաքական սորութեան։ Եւ Նապոլէոն I-ին յաջորդած նուրբոնեան միապետութեան վերականգնումը—զօրեղ և վճռողական ուշակցիացի տարիններ եղան, որոնք եկան մեծ յեղափոխութեան դործը աւրելու և պատմութեան մի ամբողջ շրջան հրապարակաւ չճանաչելու համար։ Մի նոր յեղափոխութիւն պէտք եղաւ, 1830 թւականին, որպէս զի միապետութիւնը կերպարանափոխուի դէֆ այնքան, որ մեծ Յեղափոխութիւնը իրը կատարւած իրողութիւն ճանաչէի նուրժուազիան քաղաքական ասպարէզ եկաւ թագաւորական հովանու տակ։ Բայց ազգի կանոնաւոր զարդացման ընթացքը արդէն վաղուց ընդհատւած էր, և նոր զօրեղ ցնցումներով է որ կարելի էին համարում կորուսուը ետք բերել, քաղաքական և սոցիալական յառաջդիմութիւն կատարելու համար։ 1848 թւականի փետրւարեան յեղափոխութիւնը Պարիզում երկրորդ հանրապետութեան դրօշը բարձրացրեց, այդտեղ առաջին անգամ լսւեց նոր ծնունդ առաջ մի դասաւարդի—բանւոր դասակարգի—ձայնը։ Բայց այդ կատարւեց անկերպարան կերպով, որ և բնական էր, քանի որ շարժումը ամբողջ ազգի հասունացած գիտակցութեամբ չկատարւեց։ Եւ այդ երկրորդ հանրապետութիւնը արագութեամբ զոհ զնաց իւր նախագահին, որ մի նոր պետական հարւածով կայսերութիւնը վերահասաւատեց։ Նախագահը դառնաւ կայսր և կոչւեց Նապոլէոն III, որը իւր առհմի հաստատութիւնը բնականաբար պիտի որոնէր ժողովրդի ձեռք բերած քաղաքական ազատութիւնները ի ձիք դարձնելու ջանքերի մէջ։

Եւ պէտք էր 1870 թւականի ահեղ և Փրանսիացոց համար այնքան անաջող մի պատերազմ, որպէս զի այդքան յեղափոխութիւններով ու քաղաքական ցնցումներ կրած մի ազգ նորից ինքնիշխանութիւն ձեռք բերէր։

Եւ հաստատեց այժմեան երրորդ Հանրապետութիւնը։ Սա-

կայն մւր էր մնացել ազգի, ժողովրդի քաղաքական զարգացումը, նորա քաղաքական կրթութիւնը Այդ քաղաքական կրթութիւնը չէր կարող տած լինել ոչ առաջին հարավետութեան տերրորիստակական բռնակալութիւնը, ոչ առաջին կայսերութեան ստեղծած վառօդի և թնդանօթի իշխանութիւնը, ոչ մեծ Յեղափոխութիւնը սկզբունքով հերքող վերահաստատ Բուրբոնների առերես առհմանադրական ուժիմը. իսկ այդ կառավարութիւնները առեցին շուրջ քառասուն տարի։ Աւելցրէք դորա վրայ երկրորդ կայսերութեան մօտ քսան տարւայ ուժիմը—և դուք կը սուանաք մեծ Յեղափոխութիւնից մինչ 1870 թւականը, այն է ութսուն տարինների մէջ՝ վաթսուն տարի քաղաքական անկանոն ընթացք, լիբը կոնուլսիաներով և ճզնաժամերով։ Եւ այդպիսի քաղաքական մթնոլորդի մէջ պիտի ազդը ազատութեան համար կրթւէր։ Ազգը սովորեց քաղաքական յեղափոխութիւնների, բայց ոչ քաղաքական ազատ կեանքի, և որքան յաջողութեամբ գահեր էր գլորում՝ նա, նոյնքան հնազանդութեամբ նա կրում էր բռնակալութիւնը—երբ սա արտաքին փայլի օրէօլով էր ներկայանում ժողովրդի աչքին։

Եւ ինչ գարմանալի քաղաքական կրթութիւն. Ֆրանսիայում այս մի գարում ամեն կառավարութիւն պետական հարւածով է ստեղծւել. ժողովրդի կողմից անակնկալ ասկատամբական յեղափոխութեան համապատասխանել է որ և է իշխանաւորի ազօրինի պետական հարւածը. զա այնպիսի սիստեմ էր զարձել, որ կարծես ժողովուրդը մի կողմից, իշխանաւորները միւս կողմից իրար այդ իրաւունքին ընտելացել էին, և մէկը յեղափոխութիւնը, միւսը՝ պետական հարւածը բնական ու սովորական երեսոյթ էր համարում։ Եւ դեռ աւելցրէք դորա վրայ այն, որ ժողովուրդ ասելով՝ այս գէպքերում շատ անգամ միայն մայրաքաղաք Պարիզի ժողովուրդ պէտք է հասկանալ, և ոչ թէ ազդի հաւաքական ոյժը, ազգի ընդհանրութիւնը կամ մեծամասնութիւնը. այնպէս որ պետական հարւածով կամ յեղափոխութեամբ բաւական էր Պարիզը ընկճել՝ ֆրանսիացի վրայ իշխելու համար։

Այդ ձեի յեղափոխութեան մի զօրեղ փորձ եղաւ նոյն իսկ 1870—71 թւականի պատերազմի միջոցներին։ Գերմանիայի յաղթական զօրքերը գեռ Ֆրանսիացի հողի վրայ, վայր զցած կայսերութեան տեղ հազիւ. հանրավետութիւն հաստատուած, օրինա-

կան կառավարութիւնը և ամբողջ ազգը զեռ կլանւած խաղաղութեան դաշնի իննդրով, քաղաքական դառն և ազգային թշւառութեան օրերում՝ Պարիզում, անսպասելի կերպով, մի յեղափոխական շարժում եղաւ—Կոմմունա—ընդէմ Վերսայլի ազգային ընտրութիւններով վաերացրած օրինական կառավարութեան։ Կոմմունան (Համայնական կառավարութիւն) մի բոլորովին նոր հասկացողութիւն էր, Ֆրանսիան չղիտէր անգամ թէ ինչ էր Կոմմունայի գաղափարը, կոմմունական կառավարութիւնը։ և, չնայած զորան, Պարիզում յեղափոխական կոմիտէնները Կոմմունա յայտարարեցին, չճանաչելով նոր սահմանած հանրապետութիւնը։ և գերմանացիների աշքի առաջ Վերսայլի կառավարութիւնը ստիպւած եղաւ 1871 թ. մարտին ամեն կանոններով սպառերազմ մղել Պարիզի դէմ, նւաճել այդ քաղաքը, և մի քանի տասնեակ հազար հոգու կոստրածով ապստամբութիւնը ընկճել...

Կարելի՞ է արդեօք երեակայել մի աւելի անորմալ բան քան Պարիզի Կոմմունան էր. ինդիրը այստեղ այն չէ թէ ինչ մոռեր կացին Կոմմունայի հիմքում. ինդիրը ազգի համար բոլորովին անակնկալ ապստամբութեան մէջ է, որով Պարիզ քաղաքը և կամ նորանում հաստատած յեղափոխական կուսակցութիւնը կամենում էր ամբողջ Ֆրանսիայի կամքի դէմ մի առանձին կառավարութիւն ստեղծել, ընտրելով զորա համար ամբողջ ազգի սուդի օրերը։ Այդ նշանառ դէպքը, որը մի ողերգական էջ է կազմում Ֆրանսիայի նորագոյն սպառմութեան մէջ, գալիս էր մի նոր վկայութիւն տալու այն քաղաքական կրթութեան համար, որ կարող էր ստացած լինել զրեթէ անընդատ քաղաքական յեղափոխութիւններով և պետական հարւածներով առաջնորդւած մի մեծ ազդ, որը սակայն այն քան զոհաբերութիւններ և հերոսական կոխներ է սրել քաղաքական ազատութեան և հաւասարութեան համար։

Ֆրանսիան որ և է 80 տարում, սկսած մեծ Յեղափոխութիւնից, շարունակ սահմանադրութիւններ փոխեց, առանց կարողանալու ազատութեան օրինակելի երկիր դառնալ։ Հաշւած են, որ այդքան ժամանակամիջոցում նա ունեցել է տամնեհինդ սահմանադրութիւն կամ սահմանադրութեան փոփոխութիւններ։ Միմիայն սահմանադրութեան փոփոխութիւններ։ Միմիայն սահմանադրութեան փոփոխելովը, թէկուզ աւելի և աւելի ազատական ոգի։

մի ազգ չի դառնում աւելի ազատ. դորա համար պահանջւում է որ ազատական ոգին մանի ազգի բարք ու վարքերի մէջ. իսկ դորա համար պէտք է որոշ ժամանակ և համապատասխան դաստիարակութիւնն Աւելի ևս վատ, երբ այդ սահմանադրութիւններից շատերը — ամենաերկարատե եղածները — բնաւ չէին ձեւած ժողովրդի քաղաքական կրթութիւնը առաջ տանելու համար:

Տոյոր եղած կառավարութիւններից ներկայ երրորդ հանրապետութիւնը, որ սկսւում է 4-ն սեպտ. 1870 թւականի, այդ երրորդ հանրապետութիւնը, որի հիմքը գրւեց ֆրանս-գերմանական պատերազմի միջոցին, իւր աւելի քան քառորդ դարու դոյցութեամբ ներկայացրել է ամենաապահով կառավարութիւնը, որ երբ և իցէ ունեցած է Ֆրանսիան վերջին հարիւր տարիների ընթացքում: Այդ ապահովութիւնը միակողմանի չպիտի հասկանալ: Արդէս զի նոր հաստաւած կառավարութեան ձևը կարողանար երկար կեանք ունենալ Ֆրանսիայում, նա պէտք է միաժամանակ համապատասխանէր ազդի գէթ մեծամասնութեան բազմակողմանի ակնկալութիւններին: Պահանջւում էր նախ և առաջ որ հանրապետութիւնը հասկացողութիւն ունենար՝ գետին տապալւած Ֆրանսիայի պատերազմական ոյժը արագ կերպով վերականգնելու համար. նա պէտք է բաւականաչափ վարկ ունենար, որ շուտով ազատւէր պատերազմական հինգ միլիարդ (հինգ հազար միլիոն) ֆրանկի պարոքից. նա պէտք է իւր Փինանսները այնպէս կարողանար կարգի բերել, որ արտասովոր և անլուր ծախքեր անելուց յետոյ՝ թէ պատերազմական պարագը վճարելու և թէ պատերազմական ոյժը վերականգնելու համար — զարձեալ ունենար անքան հարկային եկամուտ, որ պետութեան սովորական ծախքերը ապահովէր առանց զեֆիցիոնների: Դոքա դեռ ամենաանհրաժեշտ և անշետաձգելի պարտականութիւններն էին: Եւ բնաւ չպիտի կարծել թէ այդ պարտականութիւնները լոկ բարոյական էին. ոչ, նոքա ստիպողական էին հանրապետութեան անւան, նորա հեղինակութեան և դորա հետ միասին նորա կեանքի տեսողութեան համար: Առանց հեղինակութեան անհնարին կը լինէր պահպանել հանրապետութիւնը նոյն իսկ միերկու տարի շարունակ Փողովրդի ահազին մեծամասնութիւնը բնաւ չի նայում կառավարութեան ձևին, անունին. և մասնաւ-

բապէս հանրապետութեան մասին երկու անգամ արդէն հանրապետութիւն տեսած Ֆրանսիան ունէր աւելի աննպաստ քան նպաստաւոր կարծիք։ Պէտք էր ձեռք բերել ժողովրդի հաւատը դէպի այս երրորդ հանրապետութիւնը։ պէտք էր ժողովրդին ապացուցել, որ հանրապետութիւնը ընդունակ է մեծամեծ գործերի, պէտք էր ապացուցել որ այս երրորդ հանրապետութիւնը լոկ մի քանի տաք-զլուխների գործ չէ, այլ նա կոչւած է և ընդունակ է ազգի և հայրենիքի վերքերը բուժելու, նորան նորից վերաբարձնելու այն մեծ զիրքը Խւրոպացում, որ նա առաջ ունէր։ պէտք էր ապացուցել որ հանրապետութիւնը ընդունակ է օրէնք յարդել տալ. պէտք էր ապացուցել որ նա ոյժ ունի ամեն մի հակաօրինական ներքին խոռվութիւն զսպել. մի խօսքով պէտք էր ապացուցել որ հանրապետութիւնը դիտէ վարւել ժամանակի պահանջների համեմատ, նոյն խակ եթէ այդ պահանջները բղխած լինեն պատմական բացառիկ բացց ոչ մի թուլութիւն չներող անողօք հանգամանքներից։

Ժողովրդին այդ ապացուցը պէտք էր տալ, որովհետեւ ոչ միայն այլապէս անհնարին կը լինէր ներքին խաղաղութիւն պահպանել, այլ և հէնց ժողովրդին իրեն էր ժողած՝ իւր ընտրած պատգամաւորների ժողովում վճռել թէ ինչ կառավարութիւն և ուհամանսորութիւն պիտի ունենայ Ֆրանսիան. և քանի որ 1875 թ. սահմանադրութեամբ, պատգամաւորների ժողովը ամեն չորս տարին մի անգամ պէտք է նորոգւէր, հետեւապէս ամեն չորս տարին մի անգամ հանրապետութեան լինել-չլինելու մասին հարց պիտի դնւէր։ Նթէ հանրապետութիւնը չապացուցէր իւր կատարեալ կենսունակութիւնը—ժողովուրդը, ազգը, մեծամասնաբար կ'ընտրէր անդամներ պատգամաւորների ժողովի՝ հանրապետութեան հակառակ մարդկանց,—և ահա հանրապետութիւնը կը փոխարինէր միապետութիւնով նամանաւանդ հեշտութեամբ, որ, ժամանակի ու հանգամանքների բերմունքով, սկզբում Ազգային ժողովը, իսկ 1875-ից յետոց սենատը առաւելաբար միապետական անդամներից էր բաղկացած և որ հանրապետութեան առաջին նախագահ Թիէրի անկումից յետոյ (մարտ 1873 թ.) ընտրւ եց միապետութեան կուսակից մարշալ Մակ-Մահոնը։ Հանրապետական սահմանադրութիւնը վերացնելու և աեղլ միապե-

տութիւն հաստատելու համար ուրեմն կացին սենատը և հանրապետութեան նախագահը. կը մնար միայն պատգամաւորների ժողովը արձակել և նոր ընտրութիւններ անել տալ—յուսալով որ ազգը կը խաբւի ու հանրապետականների տեղ՝ միապետականներին պատգամաւոր կ'ընտրի:

Դեռ ևս ուրեմն բաւական չէր հանրապետութիւնը յայտարարել և նոյն իսկ սահմանադրութիւնը ազգից ընդունել տալ. ներքին վտանգը—միապետականների կողմից—դեռ կար. պէտք էր ընկճել հանրապետութեան այդ ներքին թշնամին: Եւ դեռևս զօրեղ էր վերջինս հանրապետութեան սկզբի տարիներում. այնքան զօրեղ, որ սկզբում Ազգային ժողովը<sup>1)</sup>, որ ընտրւեց 1871 թ., մեծամասնաբար միապետականներից էր բաղկացած, և այնքան ընդդիմութիւններ արաւ հանրապետութեան նախագահ Թիէրին, որ սա տոիսուց հեռանալ իւր ժամանակից առաջ, 1873 թ.-ին. և աւելի քան այդ՝ այդ նոյն Ազգային ժողովը հրաւիրեց նախկին ժամանական (Բուրբոննեան) տոհմի աւագ ներկայացուցիչ կոմս Շամբորին թագ ընդունել, և այդ ծրագիրը չիրագործւեց միմիայն շնորհիւ կոմս Շամբորի կամակորութեան՝ սահմանադրութեան վրայ երգւելու: Եւ այդ վտանգը կրկնւեց մի քանի տարի յետոյ, երբ արդէն հանրապետութեան սահմանադրութիւնը ընդունւած էր (1875-ին փետրւ.): Սահմանադրութեան համաձան կատարւած ընտրութիւններից յետոյ՝ պատգամաւորների ժողովը բաղկացած էր արդէն մեծամասնաբար հանրապետականներից, բացց նոր հաստատւած սենատը իւր մեծամասնութեամբ, որպէս նաև հանրապետութեան նախագահ Մակ-Մահոնը միապետական էին: Նոր փորձ փորձւեց միապետութիւնը վերականգնելու. Մակ-Մահոնը արձակեց հանրապետական Ժիւլ-Միմնի մինիստրութիւնը, նորա տեղ միապետական մինիստրներ նշանափեց և սենատի համաձայնութեամբ 16 մայիսի 1877 թ. ար-

<sup>1)</sup> Ֆրանսերէն Assemblée nationale. ազգպէս է կոչւում պարլամէնտը, երբ նա բաղկացած է միմիայն պատգամաւորների ժողովից. իսկ երբ 1875 թ. սահմանադրութեամբ օրէրսզրական մարմինը պիտի բաղկանար երկու ժողովներից, մէկը կոչւեց պատգամաւորների ժողով, միաւ՝ սենատ.

ձակեց պատգամաւորների ժողովը, նշանակելով նոր ընտրութիւններ։ Բայց ազգի հանրապետական մեծամասնութիւնը մնաց հաւատարիմ իւր երկու նշանաւոր առաջնորդներին՝ Թիերին և Գամբետային, և արձակւած պատգամաւորների ժողովի նախակին 363 հանրապետական անդամներին վերտափն ընտրեց, և այսպիսով յայտնեց իւր կամքը հանրապետութիւնը պահպանելու։

Բայց նոյն իսկ պատլամաւորների ժողովում միապետականները կազմում էին կեթէ ոչ մեծամասնութիւն, գեթ շատ խոշոր փոքրամասնութիւն։ Քանի որ այդ փոքրամասնութիւնը գեռ պիտի խոշոր մաս կազմէր—հանրապետութեան համար միշտ վտանգը կար։ Նւ ինչով կարելի եր այդ խոշոր փոքրամասնութիւնը յազմահարել, միմիայն և եթ հանրապետականների խելացի և եռանդուն գործունէութեամբ, որքան հանրապետութիւնը աւելի ու աւելի ապացուցէր որ նա կարող է պատմականապէս անհրաժեշտ գարձած պահանջներին բաւարարութիւն տալ, այնքան նա հաւատացած կարող էր լինել, որ ազգը ամեն մի նոր ընտրութիւններին պատգամաւորների ժողովը աւելի ու աւելի մեծ թւով հանրապետական անդամներ կ'ուղարկէր, և որ վախճանւած սենատորների տեղ՝ նահանդական լնդհանուր խորհուրդները՝ հանրապետական սենատորներ կ'ընտրէին <sup>1)</sup>։

---

1) Պատգամաւորների ժողովի անդամները ընտրուումն ուղղակի ժողովրդից ամեն 70.000 բնակչի վրա ընկնում է մի պատգամաւոր, ընտրելու իրաւունք վայելում է քաղաքացիական իրաւունքներ վայելող ամեն ֆրանսիացի 21 տարեկանից ոկտած։

Ունատի անդամները ընտրուում են ոչ թէ ուղղակի ժողովրդից, այլ նահանդական լնդհանուր ժողովներից (Conseils généraux, Ռուսիակամ գեներալօ) որոնք ան են նահանդի համար, ինչոր, օրինակ, քաղաքացին լինքնալար խորհրդարանները (դումա) քաղաքների համար։ Նահանդական խորհրդների անդամները իրենք ընտրուում են ուղղակի ժողովրդից, ամեն նահանդում (զէպարտման) առանձին առանձին։ Ամեն մի օրինագիծ օրէնք է զառնում աճմամանակ, երբ նա ընդունւած է պատգամաւորների ժողովից և սենատից և ստորագրւած է հանրապետութեան նախադահից։

Պատգամաւորների ժողովը ընտրուում է ամեն չորս տարին մի անգամ, եթէ միաէն վաղաժամ չի արձակւում, որ սակագն սակաւ է պատ-

Դորանով միայն կարելի էր ընկճել և ուժաթափ անել հանրապետութեան այդ ներքին թշնամիներին և հանրապետութեան կեանքը ապահովել:

Երրորդ հանրապետութեան առաջին տարիները մինչև 1877 թւականը այսպիսով ներկայացնում են մի փոթորկալից շրջան, երբ վճռուում էր այս խնդիրը թէ հանրապետութիւնը պիտի ընդունել թէ ոչիքը ֆրանսիացի կառավարութեան մնացուն և հաստատուն ձեւ: Այդ հարցին վերջնական պատասխանը տրւեց 16 մայիս 1877 թ., արձակւած պատգամաւորների տեղ նոյն տարւայ սեպտեմբերին կատարւած ընտրութիւններով, երբ, որպէս ասացինք, ժողովի մեծամասնութիւն կազմող 363 հանրապետականները վերընտրւեցին: Ազդը, ուրեմն, դէմ մեծամասնութեամբ վճռեց հարցը յօդուա հանրապետութեան:

Այս յաղթութեան համար հանրապետութիւնը պարտական էր գլխաւորագէս երկու նշանաւոր քաղաքական գործիչներին—Աղոլվ Թիէր'ին և Լէօն Գամբետուային: Ահադին էր Թիէր'ի նշանակութիւնը: Ծնւած 1797 թւականին՝ նա լիբերալ ժուրնալիստ էր 1823 թւականից: 1830 թւականին մէկն էր յուլիսեան յեղափոխութիւնը կատարողներից, որով հակասահմանադրական միապետութեան տեղ հաստատւեց Լուի-Փիլիպի սահմանադրական թագաւորութիւնը<sup>1)</sup>, որի միջոցին (1830-ից մինչ փետրւ. 1848 թ.)

Հում: Արձակելու համար պահանջւում է նախագահի և սենատի համաձայնութիւնը:

Խոկ սահմանադրութեան մէջ որև է փոփոխութիւն անելու համար հարցը քւէարկւում է ոչ թէ պատգամաւորների ժողովում առանձին և սենատում առանձին, այլ մի լատուկ ժողովում, ուր միասին են հաւաքում թէ պատղամաւորների ժողովի անդամները և թէ սենատի անդամները: Այդպիսի ժողովը կոչւում է կոնգրէս:

<sup>1)</sup> Ֆրանսիայի վերջին թագաւորական ցեղը—Բուրբոննեան տռնմը—թագաւորեց անընդհատ կերպով մինչև 1792 թ., երբ առաջին հանրապետութիւնը հաստատւեց. Նապոլէոն I կայսեր վերջնական անկումից չետու 1815 թ. Բուրբոննեան տռնմը նորից հաստատւեց ֆրանսիալում լանձին Լուդովիկոս XVIII-ի, բայց իր սահմանադրական թագաւորութիւն, սակայն գնալով արքունիքը դառնում էր հակասահմանա-

տիրապետող դասակարգը դարձաւ գործաքանական—կապիտալիստ գասակարգը—բուրժուազիան։ Թիերը եղաւ այդ նոր կառավարութեան ականաւոր գործողներից մէկը, իբր ներքին գործերի, ապա առեւրի և հասարակաց շինութիւնների մինչիստ և երկու անգամ՝

դրական, մանաւանդ Լուգովիկոսին չաջորդած Կարլոս Խ-ի ժամանակ (1824—1830), որը փորձեց վերացնել մամուլի ազատութիւնը և սահմանափակել ընտրողական իրաւունքը։ Յուլիսին 1830 թ. Պարիզում եղած չեղափոխական շարժումների առջև Կարլոս Խ տախուեց հրաժարւել գահից և Անգլիա փախչել։ Նա հրաժարւեց գահից չողուած բուրբոննեան մանկահասակ կոմի Շամբարի Բալլ բարձր ազնւականութեան և ազգային պատգամառների կողմից երկրի խնամակալ նշանակւած Օրլէանեան զուքս Լուի-Ֆիլիպը նորան ներկայացրած նոր սահմանադրութեան վրաէ երդւելով՝ դան բարձրացաւ, Երլէանեանները նուն բուրբոնների կրտսեր ճիւզն են ներկայացնում։ Շնորհիւ այդ հանգամանքի՝ ֆրանսիացում գոլացան թագաւորականների երկու ճիւզ—օրինականների (լեգիտիմիստ) կուսակցութիւնն և Օրլէանեանների կուսակցութիւն։ Օրինականները միակ օրինական ժառանգն էին համարում ֆրանսիակի գահի համար կոմի Շամբորին, որին կնքում էին Հենրիկոս V-ի անունով Բուրբոնները և նոցա հետ օրինականները համարում են թագաւորին աստւածընաբիր, որը չի կարող կապւել որևէ է սահմանադրութեան հետ։ մինչդեռ Օրլէանեան կուսակցութիւնը սահմանադրական թագաւորութիւն է ճանաչում։ Անա ինչու, երբ 1873 թւին Ազգային մողովը՝ բաղկացած մեծամասնաբար միապետականներից, կոմի Շամբորին ֆրանսիական դան էր առաջարկում, կոմսը հաւատարիմ մնալով հին մկրտունքին, հրաժարւեց սահմանադրութեան վրաէ երդւելոց, որով և միապետականների ցանկութիւնը միապետութիւն հաստատելի ի դերե ելաւ Կոմի Շամբորը անզաւակ էր և նորա մահւամբ 1883 թ-ին՝ վերջացու Բուրբոնների աւագ ճիւզը, անպէս որ բոլոր միապետականների ներկայացուցիչ մնաց Օրլէանկան տոնմի աւագը։

Նկատելու է, որ միապետականների (մոնարխիստ) անունով չափոնի են միմիան նոքա, որոնք կուսակից են այդ թագաւորական տոնմերին են կայսերականները, որոնք կուսակից են Նապոլէոնների, որոնց ազգը այժմ պրինց Վիկտորն է։

Ան ամէնքը, որոնք հրապարակապէս չեն չափոնի թէ հրաժարւում են իրենց տոնմավին թագաւորական կամ կալսերական գահաժառանգութիւնից—կոչում են պրիստինդէնուներ, ալսինքն դան պահանջողներ։ Ութուունական թւականների սկզբներում նոքա՝ չատուկ օրէնքով՝ աքսորւած են ֆրանսիացից։

(1836—38 և 1840 թ.) մինիստրութեան նախագահ. 1848—49 թ. ազգային ժողովում նա պատկանում էր Օրլէանեան կուսակցութեան. 1863 թւականին ընարեց պատգ սմաւրոների ժողովի կայսերութեան ընդդիմաղիր անդամ և, որպէս աշգայիսին, 1870 թ. ին նա հակառակ եղաւ պատերազմ յացանելուն ընդդէմ Գերմանիայի: 1845 թ-ից մինչ 1862 թ. նա հրատարակեց իւր բազմահատոր աշխատութիւնը «Պատմութիւն Հիւպատոսութեան և Կայսերութեան», որ զրւած էր մեծ ոգեւորութեամբ դէպի նապոլէոն I և ուր մեծ մանրամասնութեամբ ու հմտութեամբ պատմւած են նապոլէոն I-ի արշաւանքները:

Ահա աշխայիսի անցեալով մի մարդ էր ծերունի թիէրը, դէպի որը յառեցին հանրապետականների աչքերը երրորդ հանրապետութիւնը հիմնելու ժամանակ: Թիէրը ներկայացնում էր դարիս հաստնացած քաղաքագիտական խելքը, և երբ մի ացդպիսի՝ մեծ մասամբ միապետական անցեալով՝ անձ հանրապետութիւնը անհրաժեշտութիւն էր յայտարարում, ամենքը հաւատում էին որ նա այդ անում՝ է ոչ բոսկական ոգեւորութիւնից, այլ ամեն ինչ ծանր կշելուց յետու: Երբ կայսերութիւնը վերացւած հռչակւեց՝ և պատերազմը իւր բոլոր ոյժով շարունակում էր, նա շրջեց եւրոպական դլխաւոր արքունիքները՝ նոցա զրկելու որ միջամտեն յօդուա ֆրանսիայի. բայց իզուր: Ազգային ժողովը, հաւաքւած Բորդոյում, 17 փետր. 1871 թ. նշանակեց Թիէրին սկս գործադիր մարմնի (կառավարութեան), որի իրաւունքով նա խաղաղութեան բանակցութիւններ արաւ Գերմանիայի հետ, որ և հանգչեց Ֆրանկֆուրտի խաղաղութեան դաշնին, մայիսի 10-ին: Այդ կրիտիկական ամիսներում էր, խաղաղութեան դաշն դեռ չկապած Գերմանիայի հետ, երբ Պարիզում սոցիալիստական Կոմմոննան իւր առանձին կառավարութիւնը հաստատեց, որի դէմ Թիէրը ստիպւած էր պատերազմել և նորան ձնշել զինու ոյժով: Ընտրւած լինելով երեք տարի ժամանակով՝ Թիէրը սական ստիպւեց թողնել պաշտոնը այդ ժամանակւայ Ազգային ժողովի ստիպմամբ, որը մեծամասնաբար միապետականներից էր բազիացած: Բայց նա այնուամենայնիւ շարունակեց միալ երրորդ հանրապետութեան սիներից մէկը. և մասամբ նրան են պարտական, որ 1877 թւականին, մոնարխիստները չյաջողեցան

ընդհանուր ընտրութիւններին յաղթութիւն տանել, և 363 հանրապետականները վերստին ընտրեցին, որով հանրապետութիւնը գերծ պահեց միապետականների որոգայթներից։ Մակ-Մահոնը թէե մնաց նախագահ մինչ օրինական եօթնեակ տարին լրանալը (մինչ 1879 թ.), բայց ստիպւեց հանրապետական մինիստրութիւն կազմել և ազգի մեծամասնութեան կամքին հպատակւել։

Ինքը Թիէրը վախճանւեց ընտրութիւնների միջոցին և նապատրաստել էր իրեն ընտրողների առջեւ արտասանելիք ճառը, որը մնաց իր նորա քաղաքական կուպուր։ Այդ գոկումնափի մէջ կարեռագոյն խօսքերը սոքա են. «La République sera conservatrice—ou elle ne sera pas» (Հանրապետութիւնը կը լինի պահպանողական—թէչէ նա կը կորչի)։ Այս խօսքերը վերաբերութիւն ունին 1875 թ. սահմանադրութեան, հարկացին սիստեմին, զինւորագրութեան, եկեղեցական քաղաքականութեան (Կոնկորդաս), որոնք հանրապետականներին իրարից բաժանող կարևորագոյն խնդիրներն էին, և Թիէրը կամենում էր եղած օրէնքները այդ առարկաների մասին անխախտ պահել։

Իւր պահպանողականութեամբ Թիէրը հաւատ էր ներշնչում այն ամենքին, որոնք հանրապետութեան մէջ անվերջ անհաստատութիւն էին տեսնում. նա, կարելի է ասել, դէպի հանրապետութիւն գրաւեց շատերին, որոնք միապետութեանը հարած կը մնացին, հաւատ չունենալով թէ իսկական հանրապետականները կարող լինեն հաստատուն կառավարութիւն ունենալ։ Եւ այդ անվտահութիւնը կարող էր միանգամայն կորստաբեր լինել հանրապետութեան համար, ինչպէս այդ արդէն աեսանք վերև։

Բայց նա, որ երրորդ հանրապետութեան իսկական ողին էր, նա որ ժողովրդական մասսաները ոգեւորում էր հանրապետութեան համար—նա որ թէ կառավարութեան զեկը ձեռքին և թէ լոկ որոկ պատղամաւոր՝ զեկավարում էր հանրապետութեան գործերը—գալէօն Գամբետուան էր։

Ծնւած Կահոր քաղաքում 1838 թ., նա սկզբում փաստաբան էր և հոչակւեց իր քաղաքական հոետոր և իր հակառակորդ երկրորդ կայսերութեան. 1869-ին ընտրեց օնէնագրական մարմին (պարլամէնտի) ամսամ, ուր նա եղաւ մէկը «անհաշտներից»։ Պատե-

բազմի միջոցին, երբ սեպտ. 2-ին 1870 թ. կայսերութեանը վերացւեց, և սեպտեմբերի 4-ին «Ազգային պաշտպանութեան կառավարութիւնը» ստեղծւեց՝ Գամբետոտան նորա անդամն էր իբր ներքին գործերի մինիստր. առաջ իբր պատերազմական մինիստր նա կազմակերպեց «Ճայրայեղ ընդդիմադրութիւնը», ստեղծեց նորանոր զօրաբանակներ գերի ընկածների փոխարէն, վարեց գործերը կատարելապէս ինքնիշխան կերպով. յետ քաշւեց գործերից զինադադարից յետոյ, և այդ ժամանակից ի վեր վրէժինդրութեան (ուղանց) քաղաքականութեան ոգին էր նաև Ազգային ժողովում զօրեղապէս կուեց կայսերականների և կղերականների դէմ իբր ճանաչւած սրարագլուխ հանրապետական կուսակցութեան, և, հանրապետականների յաղթութիւնից յետոյ՝ իբր առաջնորդ հանրապետականների և առաջ (1879 թ. յունւարից) նաև իբր նախագահ պատգամաւորների ժողովի՝ նա էր իսկապէս վարում պետական գործերը իւր խօսքի ոյժով և հեղինակութեամբ: 1881 թ. նոյեմբերի 14-ին նա գլուխ անցաւ կառավարութեան, իբր նախարարապետ, բայց արդէն 13 յունւարի 1882 թ. յետ քաշւեց՝ մի անշաջողութիւնից յետոյ իւր առաջարկած ցուցակային ընտրութեան խնդրի առիթով<sup>1)</sup>: Դեկտ. 31-ին 1882 թ. նա վախճանւեց պատահմամբ և անզգուշութեամբ իրեն հասցրած ռեւոլւերի վերքից:

Թիէրը և Գամբետոտան, մանաւանդ վերջինը, տիրապէս իշխեցին հանրապետական կուսակցութեան վրայ նոր կառավարութեան սկզբի տարիները. մէկը իւր անձնաւորութեամբ ու անցեալով հաշտեցնում էր հանրապետութեան հետ հին սերունդներին և գործարանական

1) Կամենալով որ ազգի ընտրած պատգամաւորները ներշնչւած լինեն երկրի ընդհանուր քաղաքական ոգով և ոչ թէ լինեն ներկայացուցիչ մի ընտրողական վիճակի, ուր տեղական մասնաւոր շահերը գերակշռում են, Գամբետոտան առաջարկում էր որ ընտրութիւնները կատարեն նաև հանգներով և ոչ հատհատ ընտրողական վիճակներով (վիճակավին ընտրութիւն—scrutin d'arrondissement). անպէս որ փոխանակ ամեն վիճակ (գիցուք 100.000 բնակչով) մի պատգամաւոր ընտրի, կէս միլլիոն բնակիչ անեցող նահանգը կ'ընտրէր հինգ պատգամաւոր. այսպիսով ամեն ընտրող քէ կը տար միաժամանակ հինգ հոգու (դա է ցուցակով ընտրութիւնը, scrutin de liste).

ու առևտրական աշխարհը, վստահութիւն ներշնչելով գէպի երրորդ հանրապետութեան ամրութիւնը. միւսը կազմակերպում էր կուսակցութիւնը, նորան կուի պատրաստում ընդդէմ ներքին թշնամիների, ղեկավարում ժողովրդային մասսաները, ոգի ներշնչում գէպի հանրապետութեան կարգերը, զրաւում թարմ սերունդը:

Ներքին թշնամիների դէմ տարած յաղթանակի համար հանրապետականները պարուական էին սակացն այն գործերին, որոնք կատարեցին այդ երկու անձերի ղեկավարութեամբ. իսկ այն գործերը, որ ամենից առաջ պահանջուում էին մի լաւ կառավարութիւնից, գա՞ զինորական խորտակւած ոյժի վերականգումն էր և ֆինանսների կարգի բերելը. սկզբի տարիներում բոլոր մնացած խնդիրները երկրորդակարգ պիտի համարւէին: Հանրապետութեանը այդ գործում օգնեց ֆրանսիայոց հայրենասիրութիւնը ընդհանրապէս, առանց կուսակցութիւնների խորութեան: Զինուորական ոյժի արագ վերականգման և գորա համար գործադրելիք ամեն միջոցների դէմ չէր վստահանալ խօսել ոչ ոք. ահա ինչու. մեծամեծ ծախսերի հետ կապւած այդ գործունէութիւնը պասկւեց յաջողութեամբ, որից հանրապետութիւնը կարող էր օգտուել նաև ընարութիւնների ժամանակ, չախջախելով միապետականներին, որոնք կ'սկսէին ժողովրդին երեւալ լոկ որպէս խոչնդուներ գործ հասկացող հանրապետականներին:

Հանրապետութեանը նպաստեց նաև մի այլ հանդամանք. որքան էլ միապետականները հակառակորդ էին հանրապետութեանը, բայց և այնպէս պետական հարւածին չզիմեցին, երբ կառավարութեան ղեկը իրենց ձեռքումն էր. Մակ-Մահոնը, որ հանրապետութեան նախագահ ընտրւեց մեծամասնաբար միապետականներից բազկացած Ազգային ժողովից, 1873 թ.-ին, եօթ տարի ժամանակով, թէև միապետական էր, բայց օրինականութեան սահմանից դուրս եկողը չէր. նոյնպէս և մայիսին 1877 թ. նորա կազմած կղերական—միապետական մինիստրութիւնը, դուքս դը Բրօցի նախագահութեամբ, որ ստիպւած եղաւ յետ քաշւել նոյն տարւայ նոյնեմբերին, հանրապետականների յաղթութիւնից յետոց, —նա ևս ստիպւած էր օրինականութեան սահմանից դուրս չդալ:

Հանրապետութեան հաստատութեան համար 1877 թ. ընտ-

բութիւնները որոշիչ եղան, և նա կատարելապէս կանոնաւոր լնթացքի մէջ մտաւ Մակ-Մահոնի նախագահութեան եօթամեայ ժամանակամիջոցը լրանալով, որից յետոց հանրապետութեան նախագահ ընտրւեց (30 յուն. 1879 թ.) փորձւած և կուսակցութեան մէջ մեծ զիրք, համբաւ և վասահութիւն վայելող Փիւլ Գրեյ ին:

Դորանով փակւում է երրորդ հանրապետութեան կողմից միապետականների դէմ վարած կոխունների առաջին շրջանը: Դա այնպիսի շրջան էր, երբ ներքին կրթական, սոցիալական ու այլ խնդիրներով զբաղւել անկարելի էր. այդ շրջանում աւելի կամ պակաս չափով պէտք էր միապետականների հետ գործել, որովհետև վերջիններս զեռ մեծ ոյժ էին ներկայացնում. իսկ դոցա հետ կարելի էր մէկ լինել զուտ հայրենասիրական գործերում, որոնք են՝ զինւորական ոյժի վերականգումը, պատերազմական պարտքերի հատուցումը և դորա համար կատարւած ֆինանսական օպերացիանների վերջնական լիկ-ւիզացիան (1875 թւականին) և վերջապէս արտաքին քաղաքականութիւնը:

Ասացինք, որ դորանով փակւեց միապետականների դէմ մղած կոխունների առաջին շրջանը. որովհետև զեռես պատգամաւորների ժողովում, և երկրի մէջ, միապետականները թէկ փոքրամասնութիւն, բայց զեռ խոշոր ոյժ էին կազմում, և կատարելապէս արհամարել նոցա չէր կարելի. զեռ պէտք էր հանրապետական պրոսպագանդան շարունակել, թէկ անմիջական վտանգը հեռացրած էր. և հանրապետականները հասան իրենց նպատակին. ամեն չորս տարին մէկ ընտրութիւններ պիտի լինէին. և ամեն անգամ էլ՝ 1881-ին, 1885, 1889-ին, 1893-ին՝ միապետականները վերագրարկան պատգամաւորների ժողովը աւելի նւազ թւով, իսկ հանրապետականները՝ աւելի մեծ թւով: Եւ մինչդեռ հանրապետականները 1877-ին կազմում էին 363 հոդի, այժմ՝ նոքա թւով մինչ 500 հոդի են պատգամաւորների ժողովում: Յառաջդիմութիւնը անուրանալի է. միայն թէ աւելի քան տասնեւսկ տարի յետոց՝ 1889 թւականին՝ վտանգը նորից ներկայացաւ բուլանժական շարժումի կերպարանքով, որը մի դաւադրութիւն էր ամէն կարդի միապետականների՝ միացած հանրապետականների մի խմբի հետ: Բայց այս մասին զեռ յետով:

Հանրապետութիւնը, յաջողութեամբ անցկացնելով սկզբի տարիների վտանգալից շրջանը, և այսպէս ասած՝ ձեռք բերելով իւր ինքնիշխանութիւնը, ձեռնամուխ եղաւ իւր ապահովման միջոցներին և իւր իդէալների իրագործման։ Եւ հարկաւ, ամենից առաջ այն հանրապետականն երի իդէալների, որոնք կազմում էին նոր կառավարութեան աւագ սերունդը, որոնց ոյժով գլխաւորապէս հիմնւել էր երրորդ հանրապետութիւնը և որոնց հաստատամութեան և տոկունութեան վրայ փշրւել էին ամեն հակառակութիւններ։

Ահա այս ժամանակն էր որ առաջաւոր տեղ է սկսում գրաւել երրորդ հանրապետութեան մի այլ կարևոր գործիչ, որի ֆիգուրը գալիս է կանգնելու Թիէրով ու Գամբէտտայով սկսած առաջնակարդ գործիչների շարքում։ Դա՞միւլ Ֆերին է։

(Շարունակելի)

## Գ. Բ. Ա. Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Ի Խ Ե

ՀԵՅՔՍԼԻ, «Տարերք բնական գիտութեանց»: Թարգմ. դերմաներէն  
իշարգմանութիւնից իս. Յարութիւնեանցի. Թիֆլիս տպ. Ս. Շա-  
րամէի. 1894թ. 160 էջ, զինն է 40 կոպէկ:

Անգլիական նշանաւոր հեղինակի  
ալս գրքովէը, ինչպէս երեսում է գեր-  
մանական մի քանի պաշտօնական  
մարմինների և անձերի լանձնարա-  
րութիւններից, լաւ ընդունելութիւն  
է գտնել: Այսպիս նրանց արտաքայ-  
տած կարծիքները տարբերում են,  
մէկն ալս գիրքը աւելի իբրև մեթոդ  
է առաջարկութղասատուներին, միւսն  
աւելի լարմար է դատում աշակեր-  
տական մատենալարաններին, եր-  
րորդը՝ ժողովրդական (պոտուլէր)  
ընթերցանութեան, հինգերորդը թէ  
իշեալ նպատակների և թէ տարրա  
կան ու միջնակարգ ուսումնարան-  
ների համար Ալս տարբեր կարծիք-  
ները կարդալով մեր մէջ աէտք է  
երկու հարց ծագէր. մէկը, թէ ար-  
դեօք այդ գրքովէը վերուիշեալ նպա-  
տակներից որին է համապատասխա-  
նում ընդհանրապէս և երկրորդ՝ մաս-  
նաւորապէս մեր ուսումնարանների  
ու իրական կեանքի որ պահանջնե-  
րին, Նախ որ դժւար է համաձայնել

Նրանց հետ, որ կարծում են թէ որոշ  
ուղղութեամբ ու սահմանափակ ծրա-  
գրով կազմած մի գրքովկ կարող է  
աղղախով բազմակողմանի նպատակ-  
ների ծառակել: Մեթոդի պարզու-  
թեան տեսակէտից նա կարող է մա-  
սամբ իբրև ուղեցոյց ծառակել ոչ  
միայն ծխական, առև և միջնակարգ  
դպրոցի զասատուն: Ասացինք միայն  
մասամբ, որովհետեւ ընական գիտու-  
թեանց գասաւանդութեանց արդի մի-  
թողը չի կարող աչղքանով բաւակա-  
նանալ. աշակերտների անձնական  
դիտողութիւնը, փորձառութիւնը,  
հղակացութիւնը զասատուի առաջ-  
նորդութեամբ հիմնովին պէտք է  
բնորոշեն դասարանի աշխատու-  
թիւնը:

Ուրեմն ինչ ընաւորութիւն ունի  
ալս գրքովէը և ինչ նպատակի կա-  
րող էր նա ծառակել: 13—38 եր.  
մի տեսակ ներածութիւն է ժողո-  
վրդին մատչելի կերպով գրւած՝ ընդ-  
հանուր բացատրութիւններ զգալու-

թիւնների, իրերի, երեսովիթի, սրա  
պատճառի, ներդործութեան մասին,  
բնական օրէնքների, փարձի, նզրա-  
կացութեան և ալչ վերաբերու-  
թեամբ։ Ֆիզիկաի գասազրքերի ոռ-  
վորական ընթացքին հետեւլով՝ հե-  
ղինակն աՅս վերացական գաղափար-  
ները դրել է սկզբում, մինչզետու ըստ  
մեր կարծեաց՝ աւելի լաւ կը լինէր  
վերջը գնել, բնական իրերի և երե-  
սովիթների նկարագրութիւնները ա-  
ռանց ալդ ներածութեան էլ հաս-  
կանալի, աւելի հետաքրքրական կը  
լինէին սկզբանաւորութեան համար。  
այս փաստերը, թանձրացեալ աւելի  
հարուստ նիւթեր տալուց իւտո՞ւ կա-  
րելի էր այն եղբակացութիւնները  
հանել:

Հետեւեալ 38—58 երեսները ա-  
ւելի հետաքրքրական կը լինեն հա-  
սարակ հազ ընթերցողին, թէի օր.  
20 ու 21 դլ. անձշան, իսկ 22 դլ.  
մասամբ կարող են նոր բան ասել  
նրան. Դատ հետաքրքրութիւն կա-  
րող են շարժել 58—160 երեսները  
ջրի, աղի, գաջի և սրանց կերպա-  
րանափոխութեանց պարզ նկարա-  
գրութիւնները: Վերջապէս ամենից  
աւելի շատ բան կարող է ուսուցա-  
նել Ակենսունակ մարմինները հատ-  
ւածը՝ ցորենի և հաւի կազմութեան  
ու կեանքի մասին և ընդհանրապէս  
անկենդան ու կենսունակ իրերին  
վերաբերեալները:

Աւո բոլոր նիւթերը քննութեան  
աւնելով Նկանք աչն եղբակացու-  
թեանը, որ Նրանք աւելի լարմար են  
ժողովրդական ընթերցանութեան հա-  
մար; Եւ բոլովական ժամանակակից նոյն  
խև տարրական ուսումնարամի աշա-

կերտը բնական պատմութիւնն աւելի  
ընդարձակ ծրագրով անցնելով՝ քիչ  
նոր բան կը գտնի աւս գրքովի մէջ։  
Ալ է մեր ծխալան ու տարաբազ-  
դաբար չաճախ նոյն իսկ միջնակարգ  
ըսումնաբանների աշակերտների  
բնագիտական զարգացման աստի-  
ճանը։ Այս գրքովկը համապատաս-  
խանում է առաջինների պահանջին  
այն էլ ոչ իբրև զօնացուցիչ դասըն-  
թաց, իսկ երկրորդ կարգի ընթեր-  
ցողին մասամբ։

Իսկ ինչ վերաբերում է մեր ընթերցող հասարակութեան մեծամասնութեանը, ալս գիրքը շատ օգտակար կարող էր լինել նրան, մանաւանդ եթէ թարգմանիչը անծանօթ բառերի և գաղափարների բացատրութիւններով աւելի դիւրացրած լինէր մեր ընազիտական ուսմունքից զուրկ ընթերցողի գործը: Բայց, ընդհանրապէս ասած, զրդուկը ինչպէս որ թեթև սճով է գրւած, այնպէս էլ թարգմանւած է նաև:

Մենք տեսնում ու դանդատւում  
ենք, որ ժողովրդի համար պատ-  
րաստած ընացիւտական խնդնուրուն  
ու թարգմանական նիւթերը շատ  
հաջաղիւտ են մեզանում: Բայց  
եղածներն արդեօք ինչ չափով են  
տարածւել բուն ժողովրդական խա-  
մրի մէջ: Անկասկած շատ սահմա-  
նափակ քանակութեամբ: Ի՞նչու  
որովհետեւ մենք դեռ չկիտենք կամ  
չենք զործագրում լուսաւոր երկիր-  
ներում ընդունած զործնական մի-  
ջոցները զիրք տարածելու համար:  
Այդ երկիրներում շրջիկ գրավաճառն  
ամենուրեք է՝ և փողոցում և սրճա-  
րանում, բէստորանում, դրօսափալր-

ում, զիւղացու խրճիթում: Ալդափիսի գրավաճառները նոր ընթերցողներ կն զտնում, նոյն իսկ ստեղծում: Արդէն տեսնում ենք, թէ ինչ աջողութեամբ հեռաւոր տեղերից եկած բողոքական և որու շրջիկ գրավաճառները գործ են լառաջ տանում: Գոնէ մեր Հրատարակչական ընկերութիւնն ինչու չունենար առժամանակ փորձի համար գէթ մի երկու հաւատարիմ ցրտղներ:

Ինչ վերաբերում է բնագիտական գրքերին, կարծում ենք, որ նրանց տարածման հողը մեզանում աւելի անպատրաստ է: Ճողովուրեց առհասարակ, ինչպէս ամենուրեք, աւելի հետաքրքրում է վիպախառն պատմութիւններով: Բնական գիտութեանց համար աւելի հարցափրութիւն զարթեցնելու լաւագոյն միջոցն է, եթէ հնարաւորութիւն ունենալինք, մողովրդական դասախոսութիւնները փորձերով անել, ապա պատկերապարդ զիւղամատչելի գըրքովներ տալ: Տողերս գրողը հիմակ զբաղւած լինելով այս խնդիրներով՝ առժամանակ միան հետեւալը կա-

րող էր ալսուեղ իւր եղբայրութիւններից հաղորդել: Որևէ զիտութեան սիսուէմը ժողովրդին տաւանց ալլնավութեան հետաքրքրել չի կարող, ուստի պէտք է նրա կեանքից, տեսած-լսածից վեր առնել հետաքրքրական երեսովներ, զործիքներ, մեքենաներ, իրեր և սրանց անխնիկականի (արհեստագիտականի) հետկանկանով աւեսականի համար հարցամիրութիւն զարթեցնել: Զրուցատրական: մեթոզով մի շարք երեսովներ ներկայացնելուց ու բացազրելուց հետո՝ պէտք է անմիջապէս ինդիրներ առաջացնել և ապա զրքուկի վերջում անկարողների համար պատասխանները գնել: Ան առթիւ կարդացածս 25-ից աւելի ուռւ ժողովրդական բնագիտական գրքերից քչերի մէջ մասամբ տեսակ ալս ուղղութիւնը: Կան „Եօնձն“ անւանեալներ՝ առանց խնդիրների կամ պատասխանների՝ ուր զոքա հարկաւոր են: Նրանց մեծամասնութիւնը համառօտ սիստեմներ են սովորական դասագրքերի ուղղութեամբ:

Յ. Տ-Մ.

ՀԱՆԹ.—Դուրսեցիները. վէպ. (արտատպած Մուրճ ամսագրից)  
Թիվը 1896. 217 էջ:

Հայ բէլլէտրիստիկական գրականութիւնը վերջին ժամանակներում անքան աղքատացացել է քիչ թէ շատ աչքի ընկնող երկերով, որ շատերը դադարել են փնտուելուց անգամ ալդ պիտիները: Զիան մի զրւածք, որ

կարողանակ հաւատարապէս աղղել ընթերցող հասարակութեան վրայ նրա ուշքը դրաւել, շարժել մըտքեր, որտեւ բարախնցնել, ինչպէս էին իրենց ժամանակ Գամառ-Քամիտիները:

Բաֆֆու «Խենթը», «Կալծերը» և մի քանի տարի առաջ Շիրանղաղէի Մուրճ'ում և առա առանձին գրքով երեցած «Արսէն Դիմաքսեանը»։ Սոքա միմի երկեր են, որոնք պարունակում են իրենց՝ ժամանակակից մտաւոր ուղղութեան նկարագիրը, հասարակական ուշադրութիւն գրաւած խնդիրներ, կամ մոտածունքի հրաւիրող մտքեր բացող նիւթեր։ Արսէն Դիմաքսեան՝ ից լետոյ մենք դեռ չենք ունեցել ուշադրութեան արժանի ակց կարգի մի գրաւածք։

Այժմ որպէս արձագանք մեր երիտասարդութեան խլրտումների, նրա ցանկութեանը մի լուրջ հասարակական գործի կաչելու, նրա զեռթուլ կրիտիկական քալենիրի՝ լայնուում է «Մուրճուի» էջերում, ապա նաև առանձին զրքով նրանից արտատպած, Շանթի «Գուրսեցիները» վէպը<sup>1)</sup>։

Վեսլում պատկերացնուում է կեանքը իւր զանազան կողմերով։ Որքան էլ սուբեկտիւ լինի հեղինակը, աճուամենանիւ նրա զրւածքում անաղին տեղ է բռնում կեանքի իրական նկարագրը, քանի որ իւրաքանչիւր մարդ, որքան էլ օժտւած լինի անհասարական լակումներով, աճնուամեն-

<sup>1)</sup> «Ներկայ զրախոսականը, ապազգուում ենք՝ Շանթի վէպի քննադատութիւնը զեռ ևս սպառւած չհամարելով Մուրճի համար Յօդւածից լապտւել ենք մօտ մէկ ու կէս տպագրական երես քննադատւած զրքին ուղղակի վերաբերութիւն չունեցող տպերը։

Նաջնիւ նա ազդւած է իրեն չրջապատող հանգամանքներից, հանդիսանում է իւր ժամանակւաց կեանքիմի արտադրութիւն։ Ինչ ասել կ'ուզէ ալսպէս ասւած օքեկտիւ հեղինակների մասին, որոնք իրենց անձնաւորութիւնը թագնում են, առաջ քերելով կեանքիք Փակտերը միան։ Սակայն նորագոյն կրիտիկալի եղրակացութիւնն է, որ բացարձակ օքեկտիւ հեղինակ չկայ. քանի որ, որքան էլ ցանկալ հեղինակը անտարբեր լինել դէպի իւր պատկերացրածը, աճնուամենանիւ նա իւր զրածը անց է կացնում իւր հոգու միջով, որով այդ նիւթին տալիս է որոշ լուսաւորութիւն իւր Հոգու լատիկութիւնների համեմատ։ աճնուեց երեսում է հեղինակի պարսաւանքը, քաջալերութիւնը, ծիծաղը, արցունքը, ծաղրը և ազն։ Հեղինակներից ամենահաճարեղը, Շեքսպիրը, որը մինչեալս պատասխանական է բացարձակապէս օքեկտիւ հեղինակի, որովհետեւ նրա ոչ մի զրւածքում չէին տեսնուում նրա անձնաւորութիւնը, այժմ արդէն, Գ. Բրանդէսի քննադատութեանը ենթարկելուց լինու, «Համլէտում» լայնուում է որպէս սուբեկտիւ Բրանդէսը ցուց է տալիս, որ Շեքսպիրն էլ տանջւում էր իր ժամանակակից բռնակալութեան լծի տակ և Համլէտի հոչակաւոր մինախօսութեան մէջ արտապատում է իւր միտքը, արդեօք արժէ տանել բռնաւորների ճնշումները և ազն։ Նրա լնտանեկան պայմանները նման են եղել Համլէտինին, նա էլ խաբւած սիրուց խորտակւած սիրու է ունեցել։ Մի խօսքով հեղինակները սուբեկտիւ են

իրենց գրւածքներում։ Աակալն սուբ-  
եկտիւ լինելով հանդերձ հարազատ  
են մնում կեանքի երեսթներին  
նրանց պատկերացնելիս և դրանով  
մեզ միջոց են տալիս ուսումնասի-  
րիլու կեանքը, կատարեալ բանա-  
տուղծը, վիպատանը նա է, ով կը  
սատկերացնի կեանքը, ինչպէս նա  
է, առանց ծռելու, բայց իւր հոգու  
լապտերով լուսաւորւած, որը կարող  
է լինել զօրեղ կամ թռչ, աչ կամ  
ան զոնի, Օրինակ՝ ուսւ հեղինակ-  
ներից Գոգովը իւր գրւածքներում  
շատ ճիշտ պատկերացրել է քառաս-  
նական թւականների ուսւական  
կեանքը, ծաղրել է, հարւածել է ալղ  
կեանքի երեսթները, առաջնորդւե-  
լով ան զաղափարով, թէ որքան  
ընկի է ժողովրդի մէջ բարեպաշ-  
տութիւնը և ալն. բայց դա չարգե  
լից նրա ժամանակակից Բելինսկուն  
և ուրիշներին Գոգովի տւած կեանքի  
ֆակտերը լուսարաննել ուրիշ կազմից  
բացատրելով զրանց ժողովրդի ազի-  
տութեամբ, ուսւ զիւղացու ճորտա-  
կան զրութեամբ և ալն. Աչ բոլո-  
րից երեսում է, որ գրականութիւնը  
ծառակում է կեանքի պատկերացման,  
բայց ոչ իբրև լուսանկար գործիք,  
ազ իբրև գիտակցական անհատների  
միջոցով կատարւած մի բան, որտեղ  
պիտի լինի թէ կեանքի ճիշտ պատ-  
կերը և թէ ալդ պատկերը տուղ ան-  
հատի հոգու զրօշմը։ Ուրեմն գովա-  
ռանքի արժանի է ան հեղինակը,  
որը տալիս է մեզ գեղարւեստական  
ճիշտ պատկերներով կեանքը, նրան  
լուսաւորած հասարակական լաւա-  
գոն զաղափարների լուսով, ընդհա-  
նուրի շահերին ծառակելու զգաց-

մունքներով, և որանցից հողերա-  
նական և տեխնիկական ամբողջ  
առմամբ տիպերի միջոցով կաղմում  
է մի երկ, որը ընդունակ կը լինի  
ազնիւ ձգտումներ առաջացնելու,  
ճաշակ կրթելու,

Նանթը մեր նոր բէլէտրիստների  
մէջ աչքի է ընկնում արդէն. նա  
գրում է ոտանաւորներ և վէպէր. «Դուքր-  
ուցիները» նրա երկորդ արձակ վէպն  
է (առաջինը «Երազ օրեր» «ԱՄուգ»  
1895թ.)։

Վէպը Կ. Պոլսում ապրող գաւա-  
ռացի երիտասարդների կեանքից է։

Բաղրատը, Կարնեցի երիտասարդ,  
իւր ուսումը Ռուսաստանում աւար-  
տելով, վերագաւնում է իր հայրե-  
նիքը, Կարին, իր գիտութեամբ իր  
ժողովրդին օգտակար լինելու։ Բայց  
վճռում է մի երկու տարի Պոլսում  
ուսուցչութիւն անել, որտեղ ծանօ-  
թանում է իր հայրենակից երիտա-  
սարդների հետ, որոնցից Սարգիսը  
զրականութեամբ է պարտպում,  
զրում է հրապարակախօսական և  
քննադատական լօգւածներ. միւսը,  
Դիորգը, զարձեալ Կարնեցի, ուսուց-  
չութիւն է անում Բագրատի հետ.  
Երրորդը, Վասակը, Տրապիզոնցի,  
իր կրթութիւնը ստացած Տիխիսի  
Ներկինեան դպրոցում, բոլոր խուռ-  
վութիւններին մատակցած և վեր-  
ջընթեր զասարանից արձակւած,  
մի որոշ պարապմունք չունի, կար-  
դում է զլլիսաւորապէս բնագիտա-  
կան գրքեր և սաստիկ հայնուզներ-  
ներով քննադատում հասարակական  
կեանքի պալմանները, բանաստեղ-  
ծութիւնը, հիմնարկութիւնները և

աղն։ Բաղրատն ու Գէորգ վարձում են մի սենեակ մի ֆրանսիացի տիկենող մօտ, որը ունի երկու աղջիկ և մի լուն որդեգրուհի։ Սրանք սաստիկ մօտ չարաբերութեան մէջ են երիտասարդների հետ, շարունակ զնում են նրանց սենեակը, նրանց հետ կատակներ են անում, ընթերցանութեամբ են պարապում հետները։ Սրանցից մեծի, 18 տարեկան, առունն է Լուիզ, լուրջ աղջիկ է։ Նւազում է պիանօ։ Փոքրը՝ Օգիւտա, 11 տարեկան, ուրախ և զւարթ մի արարած։ Որդեգրուհին, Էլինը, առողջ, հսրուտ կազմւածքով մի չարաճնի աղջիկ է։ սա մի առժամանակ զրաւում է երկու երիտասարդին էլ, առաջ Գէորգին և ապա Բագրատին։ Մանկավարժական աւպարէզում, Պոլսի թաղական ուսումնարաններից մինում, Բագրատը չաջողութեամբ զործում է, ձեռք է ընթում ուսուցիչներից ոմանց, իսկ աշակերտների անխստիր համակրութիւնը։ Կիրակնօրեակ դպրոցով էլ իր կողմն է տրամադրում նաև թաղեցի հասարակութիւնը։ Սակայն նրա համբաւը հանգիստ չի տալիս մի քանի սեահոդիներին և թաղի եպիսկոպոսին, որը զանազան արգելքներ չարուցանելով նախ նրա կիրակնօրեակ դպրոցի գէմ և ապա նրա ամբողջը գործունէութեան դէմ, Բագրատին զնում է ացն զրութեան մէջ, որ սա ստիպւած հրաժարում է և կարնից ստացած նամակի համաձան։ Գէորգի հետ հեռանում է Պոլսից, թողնելով այնտեղ նաև Լուիզին, որին արդէն սիրել էր չերմ սիրով, ոլատճառաբանելով, որ իր գնացած

երկիրը անապահովէ, որ նա (Լուիզը) նրան արգելք կը լինի գործունէութեան և աղն։

Բագրատը աղնիւ զգացմունքներով հասարակական օգտին ծառավելու ձգուումներով, երիտասարդական բուռն ողորութեամբ և եռանդով լիցուն մի տղակ է։ Հպարտ, իր արժանիքը ճանաչող՝ Սարդսի խօսքին, որ գնաւ թաղականների մօտ դասեր լինդրէ, Բագրատը պատասխանում է. «...եթէ իրենց ուսուցիչէ պէտք, զոնէ ինծի պարզ նամակ մը թողգրեն։ Ի՞նչ երթամմուրամածպիտի։ «Խնդրեմ ինծի պաշտօն մը, է Քիչնդիմ։ համար այդ մասին սովոր են ուսուցչի հետ ծառակի պէս վարւեն, Ճանչցնելու է վերջապէս անոնց իրենց չափը»։

Իւր տոկունութեամբ Բագրատը, չնայելով թաղականների ու հոգաբարձունների ընդդիմադրութեան, միջոց է գտնում դպրոցի համար մի քանի պատկերներ ու գործիքներ բերել տալու. բերել է տալիս նաև մի մարդկան կմախք, որ վերջներում սաստիկ գալթակդութեան պատճառ է դառնում։ Մեծ եռանդով կպչում է մանկական գրքերի հրատարակութեան միտքը իրականացնելու զործին և որանում իրենց շահը չհասկանալով նրան օգնել չցանկացող մի քանի երիտասարդ վաճառականների ուղղակի երեսներին է տալիս նրանց անհասկացողութիւնը։ Այս ժողովից բարկանալով վերադարձած Բագրատը վէճի է բռնւում Սարգսի հետ, որը աշխատում էր նրան համոզել առժամանակ վաղ անցնել հաստատուն Փոնդ ունենալու մտքից և չվարձարիւ

թարգմանիչներին ու հեղինակներին. այս վէճից մենք ծանօթանում ենք Բագրատի սոցիալականաչեացքների հետ. «...—Հիանալի տրամաբանութիւն. ֆուզ, ալդ հոտած գաղափարներէն, տես, գեռ դուն ալ չես աղատւած. հասարակութեան մէկ անհատը ոչինչ չունի, կարօտ է, խեղճ է. բայց ինչ ընենք, ազգասիրաբար պէտք է աշխատի աղջին գործերուն ձրիաբար. իսկ անդին միւսները հարուստ են, հանգիստ. բայց որովհետեւ անոնք չեն բարեհաճեր հասարակութեանը որ և է կերպով պէտք դալ, անոր համար ալ ձեռք պիտի չտանք անոնց. մէկէն պահանջնք, որովհետեւ արդէն ձեռքէն եկածը կ'ընէ. իսկ միւսը հանգիստ զցինք, որովհետեւ ոչինչ չընէր և ընելիք ալ չունի. համ»

«...Ո՛չ, աշխարհք աղջպէս չէ, միան մենք մարդիկս աղջպէս կ'ընենք. մեր օրէնքները, մեր հազիւ զարգացման ճամբան գտած քաղաքակրթութիւնն է, որ աղջպէս կ'ընէ. Ավո՞ քանի մը անհատներու ձեռքը ստակը քուերալի բացիլներու պէս կ'ածի, մինչ հաղարներու կեանքը գժողք կը գտանալ. իրաւ, այս իրողութիւն է. միթէ պիտի ալդ զաւանանք չինենք, միթէ պիտի ընդունենք, որ ալդ է աշխարհքի բնական ընթացքը. դու չես համոզւած, որ այս բոլորը փոխանցման շրջանի մը մէջ է, չին կեանքին ու նորին մէջ, որ արդէն սկսած է իր գարնան ծիւլերը արձակել. դուն չես հաւատար մարդկալին նոր մէծ վերածնութեան գարին...» և ալլն.

Հետաքրքիր է Բագրատի հա-

նացքը գործունէութեան և աշխատանքի շարժառիթի մասին, և...Այս մարդիկը (գիտնականները) իրենց բոլոր հածուլքները զոհած են մարդկութեան չառաջաղիմութեանը. կամ, աւելի ճիշտ արտաքանութեամբ, իրենց ալդ բաղմաթիւ մանր հաճուքները փոխանակած են մէկ, բայց մէծ, խոր ու անփոխարիննելի հաճուքի մը հետ, մարդկութեան չառաջաղիմութեանը նպաստած լինելու գիտակցութեանը հետ, գիտակցութիւն մը, որ մէծ մարդերուն կեանքին գերագուն հաճուքն է. «...Դուն կը ճանչնաս ամեն մարդու համար սովորական եղող բնական աշխատանքի բնական հաճուքը, կեանքիդ մէջ սիրով-սրտով երբէք աշխատանք ես...» ոչ աշխատանք կը ճանչնասոչ իր հաճուքը. է, ալ ինչո՞ւ կ'ապրիս...» և ալլն.

Հետաքրքիր անձնաւորութիւն է Վասակը, որը բալորովին հակառակ հավեացքներ ունի, քան Բագրատ. Այս մարդը իւր էութեամբ անքան էլ իդէալականութիւնից և ալտրուիզմից զուրկ չէ, բայց սրա միտքը ծուած է դէպի հակառակը, երեսովները իւր տեսակէտով հակառակ բացատրութեամբ է պարզում, ալդ պատճառով էլ Բագրատին նաև առաջարկում է մի ախալիսի հրաժարիմք. «...Դէն, ուրեմն ըսէ ինծի հետ հրաժարիմքը. Հրաժարիմ ի դպրոցէ և զամենան փիմարութեանց նորա. Հրաժարիմ փիմէալէ և չամենան զեզներութեանց նորա. Հրաժարիմ ի բանաստեղծական ցնդաբանութիւններէ, լանուրջներէ և ի չուածներէ...» և ալլն.

Միաւ անձնաւորութիւններից պարզ է զուրս բերւած Գէռորդը. աւելի զգացմունքի՝ քան մտքի մարդ, ողեսորով, բացականչութիւններ անող, սրտաբաց. Բագրատի հիւանդութեան ժամանակ իւր կոլիծը արցունքով է լաւտնում. Սա էլ իւր հայրենակից համաշների հետ ընթերցանութեամբ է պարապում

Անձնաւորութիւններից շատերը հոգեբանօրէն շատ ճիշտ վերլուծութեան են ևնիմարկւած։ Աւկանչն հէնց Բագրատը մի հոգեբանական ամբողջութիւն չէ կազմում։ Ասաերեսութիւն Բագրատը լուրջ, իւր զգացմունքները չափող մի մարդ է, Բայց ինչ է նրա վարմունքը Ելէնիի հետ, որին առանց սիրելու իրեն թուլ է տալիս համբուրիլ։ Եւ լանկարծ, ան Բագրատը, որ հակելու մօտ մերկ թերով կանցնած էլէնի ներկայութիւնից այնքան ազգուում է, որ զրիչը ատամնիկը մէջ ճայթեցնելու չափ սեղմում է։ Նա, որ Վասակի խօսքերից, թէ սէրը ազգ համբուրելու, գգւելու մէջն է, ինչպէս ինքը արեց Մարտիանաւ աղախնին, ազգւած, բոպէապէս նրան ևնթարկւած, երեկոյիան չէ կարտղանում առանց զուգի զրունել, —ու թեր աղջիկ մը ունենալը իրեն պահանջ դարձաւ—ու Ելէնին վերցնելով տանում է պարտէզ և անտեղ առանց սիրոց սկսում է նրան կատաղութեամբ հս մբարիլ ու սեղմըտել, ակդ Բագրատը, առում ենք լանկարծ վերադառնում է հայրենիք, իւր խակապէս սիրած աղջկան, Լուիզին, երեսի վրայ զցած, աղդքան կարողանում է իրեն զազել։ Սա ինչպէս է

լինում, թէ այժմ արդէն «գարնան հովերը» անցած էին, որովհետեւ արդէն օգոստոսի վերջն էր Բայց չէ որ «Յովիերուն» աղդքան ևնթարկւելը հակասում է լրջութեան։ Մինք սովոր ենք տեսնել Բագրատի նման մտքի մարդուն, որ նա զապում է իւր այդ անտեղի զգացմունքները, որ ինքը իւր տէրն է և ոչ ինքը իւր խաղալիքը։

Պարզ չէ նաև Լուիզի բնաւորութիւնը՝ թէ արդեօք Բագրատը Բնչն էր սիրում նրա մէջ։

Աւկանչ կան նաև հիանալի լաջուած կտորներ, ինչպէս օրինակ՝ Բագրատի հիւանդութիւնը, սկսած նաւակի վրայ նրա մտածմունքներից, որոնք խիստ հոգեբանական են, մինչև նրա առողջանալը և առաջին անգամ զարոց զնալը հիւանդութիւնց գետոց։

Հիանալի է Բագրատի հրաժեշտը հայրենիք վերադառնալիս։

Խակնակարագրութիւնների ու լեզվի ճոխութեան և արտալաւութիւնն կողմից Շանթը մեր բանաստեղծների մէջ առաջին տեղն է բռնում։

«Միրուն լուսին գիշեր մըն էր, որ կը տարածւէր, Ծովը լուսնի քմահաճուքն էր գիրկը թափաւած արծաթ զրամներուն հետ կը խաղար, Ու թեթև մը կը քծնէր բալքոնը պահող սիւներուն Նըրեմին ալ մօտէն անցնող նաւակի մը շարժումէն փոքրիկ ճողբին մը կը լսւէր բալքոնին տակու կամ թէ։

«Ու արցունքի երկու խոշոր կաթիլ ակնթարթ մը իր թարթիչներուն վրայ կախւեցան, վերջը զուգընթացաբար սահեցան մինչև ալտին

Վէսը, հոնկէ մէկ կաթիլը յանկարծ զլորւեցաւ աղջկան դոգը, մինչ միւսը ինկաւ շրթունքին քովի սիրու փոսիկը»:

Վէտում կան տեխնիկական թերութիւններ. Բազրատը շատ տեղում կարծես պատէրով է խօսում. Վասակի հետ երկար խօսելուց ինտոք, որը սական սկսում է Վատուկի ցանկութեամիբ և նրա դրած հարցերի վրաց որպէս զի սա մի քիչ ծիծաղի, ինչպէս ինքն է ասում, Բազրատը իւր ասածը վերջացնում է ալսպէս. «Պէհ, հերիք է, քալէ երթանք, գլուխս տաքցաւ», նոխպէս և Սարգսի տանը, երբ վերջինս կարդում է իւր չօդածի վերջին կտորը, Բազրատը դարձեալ սկսում է ճառեւ իսկ շատ անգամ հանդիպում են իրար խօսելու համար միան, որ զատիւարներ արտաշալաւուն:

Որովհետեւ Բազրատը գրքի հերոսն է, և հեղինակի համակրութիւնը դէպի աչդ անձը ակնչապտի է, ուստի կը ցանկալինք մի քանի խօսք էլ ասոկ նրա զործունէութեան յենակէտի մասին:

Բազրատը զործում է, որով հետեւ զա նրան «համածուք» է պատճառում. Բաց սա ինչ գործունէութիւն է՝ համութի, բաւականութեան համար. «ոչ ապաքէն և հեթանոսք զալդ առնեն», Բազրատի կարծիքով «բնական աշխատանքը» ունի իւր «բնական համութը»:

Սիսալ է աշխատանքը համութով բացարելը, այն, համուք է, երբ մենք աշխատանք ենք գործ դնում ձին հեծնելու, ոտերս չալ ժելու, մորակ շարժելու զրուանք կատարելիս. Հա

ճուք է երբ ձեռաքներս շարժում ենք դաշնակի մատերի վրաց մի հրաշալի եղանակ դուրս բերելու և նրանով լագենալու, Բաց միթէ հաճուք են զգում միլլիոնաւոր բանւորները իրենց տաֆանակիր աշխատանքներում, չնչին վարձով աշխատելիս Միթէ հաճուք է զգում զիւզացին արտը ցանելիս, երբ նրա գլխում կայ աչն զարծուրելի միտքը, թէ ինքը գուցէ չտեսնի իւր արտի հուն. Ճր, որովհետեւ հէնց վազը կարող է նրա գլուխը անջատւած լինել մարմինցից քրողի սրով:

Աշխատանքը մի փիզիոլոգիական պրոցէս է, մի բնական պահանջ, որը միջոց է տալիս առողջ մարդի մէջ շարունակարար ամբարւող էնէրգիա-պէն զուրս թափւելու կամ ձևափոխ-ւելու. Առողջ, նորմալ մարդը պիտի աշխատի, իսկ չաշխատողը—անոր-մալ է, հիւանդ է, ինչպէս Օբլոմով-ները, «թամբալները»: Իսկ թէ ինչ-պէս, կամ ինչ ձեռվ կ'արտաքաւուի աչդ էնէրգիան՝ դա կախւած է մասմբ մարդու ակաս ընտրութիւնից, օրինակ՝ նա լանուոր կը դառնայ, թէ կաբինէտում նստած կը գրի, կամ սար ու ձոր ընկած կը մտածի ամարդ-կութեսն փրկութեան մասին»: մասմբ տնտեսական պազմաններից, որոնք մարդուն զարձեալ կարող են գցել կամ համալսարան և ապա նրան փաստաբան զարձնել, կամ փողոց և ապա նրան աւազակ զարձնել. Սո-քա բոլորն էլ—զիտնականն էլ, բան-ւորն էլ, փաստաբանն էլ, աւազ և կն էլ աշխատում են, իսկ աշխատանքը աչս կամ աչն ուղղութեան զարձնելը կախւած է մարդու հոգեկան ընդու-

նակութիւններից.. նաևելով թէ նա ինչ հայեացքներ է կազմել կեանքի մասին, ըստ այնմ էլ կը գործի. Սլուտրուխտ մարդը երբէք չի տատանւի գործունէութեան մէջ. նռ չի սպասի «հաճուքից» իր աշխատանքը դործադարիւր համար. նա արդէն իւր աշխատանքը դցել է բարու աւուն, և ալզպէս էլ տաճում է, նթէ ոչ՝ միթէ հաճուքը կարող է ապանամել բարուական գործունէութիւնը. Ասենք թէ Բագրատը հաճուք էր զգում երբ բարիք էր անում. չէ որ նոչնախոր հաճուք են զգում նաև աւազակը և քուրդը որպնք ընդունակ են ամենալավ օր սպանութիւն անել և ուրիշի սեփականութիւնը չափանակել. Եւ սխալ է կարծում Բագրատը, թէ Վասակը հաճուք չունէր. նա էլ հաճուք էր զգում, երբ աջու ու ձախ հաճուքում էր բանաստեղծութիւնը, մանկավարժութիւնը, Բագրատի ու Սարգսի գործունէութիւնը. Գործունէութեան մէջ ոչ թէ պէտք է առաջնորդւել հաճուքով, որը շատ զանազանակերպ չաճախ միմեանց հակասող գործունէութիւն կարող է առաջացնել նախած թէ ինչ մարդկանց մէջ է առաջնում ալդ հաճուքը, ալլ մի որ և է գործի օգտակարութեան, ընդհանուրի շահերի պաշտպանութեան, հաւասարապէս բոլորի կեանքի ապահովացման համոզմունքով. ահա ալս պիտի լինի հասարակական գործիչի իդէալը.

Ալսալիսով մեր տպաւորութիւնը «Գուրսեցիների» մասին հետեւեալն է. վէպը ընդհանուր առմամբ լաւ տպաւորութիւն է թողնում, թէն, ինչպէս ասեցինք, զերծ չէ նաև պակասու-

թիւններից. Եւ շատ յանկալի կը լինէր, որ չարգելի հեղինակը մեղտ տար նկարագրութիւններ ու տիպեր նաև ջաճկատանի հալոց ընտանեկան կեանքից, որով լցրած կը լինէր մեր մանօթութիւնների այն դատարկ կողմը, որը մենք ունինք Տաճկատանի հալոց մասին ունեցած մեր ծանօթութիւններում.

Վերջում մի քանի խօսք էլ:

«Մշակի» ալս տարւակ 67 և 68 համարներում մի գրախօսութիւն կարծոյն ալս վեպի մասին. Գրախօսը ի միջի ալոց և ալս խօսքերն է ասում.

«Պոլսի կեանքի մէջ դուք (սպարոն Շանթ) ուրիշ բան չգտաք բացի տուփանքից». Նոյն հալոց մենք Կ'առաջարկենք ալդ գրախօսին. «Գուրսեցիների» մէջ. դուք ուրիշ բան չգտաք բացի տուփանքից».

Ալդ գրախօսը «Գուրսեցիները» անւանում է հիւանդու երեակառու. թեան զառանցանք! Բայց «Գուրսեցիների» նման մի բան գրելու համար հարկաւոր է հիւանդու երեակալութիւն, թէ նրանում միմիտանմիք քանի սիրազին տուփական տեսարաններ տեսնելու համար, որպիսիք բերւած են լիշեալ թերթի էջերում. Խնդրին ազդակս նազելու համար, ինչպէս ալդ թերթի գրախօսնէ արել, արդարն հիւանդու երեակալութեան տէր պէտք է լինել...

Մար. Յար.

BOURGET, Paul.—Une Idylle tragique. Paris 1896.

ԲՈՒՐԺԵ, Պօլ.—Մի տրագիկական խղիլիա, 499 էջ. գինն է 3 ֆ.  
50 սանտիմ.

Վերջին ժամանակներս Բուրժէն պրոցեսն է իր վէպերի համար նիւթեր ալզագիների կեանքից, որ նա մեծաւ մասամբ դիտել է խոալիալում և հիւսիսալին Ամերիկայում իր արած ճանապարհորդութիւնների չնորհիւ Խնչպէս չայտնի է, Բուրժէն իրեւ հոգեբանական վիպագրող՝ գիտում և քննում է մարդկանց հոգեկան աշխարհը Բուրժէի ուշադիր ընթերցողը նկատած կը լինի, որ նորա վէպերում արտաքին կեանքի պատմանները, որոնք մեծ ազդեցութիւն ունին մարդկանց բնաւորութիւնների վրայ, աչքաթող են արւած: Բուրժէն վերջուծում է մարդկանց բնաւորութիւնները առանց նկատելու անպալմանները, որոնց ազդեցութեամբ գուցէ նորա կազմել են Բնաւորութիւնների բատկութիւնը որոշելիս՝ Բուրժէն չի որոնում նորա պատճառները, ալ պնդում է, որ նորա բնածին և բատուկ են մարդկակին բնութեանը: Իսկ գալով այդ բնաւորութիւններից ծագող հետևանքներին, որոնք կարող են խիստ վեասակար լինել բարուզականութեան սկզբունքին, Բուրժէն համարում է նոցա անխուսափելի, Փատալիստական, ճակատագրական և նրանց համարում է իբր կախած լոկ բախտից: Հոգեկան գործողութիւնների բացատրութիւնը ալս եղանակով բոլորովին հակառակ է փորձնականութեանը և չառուկ է այն գրողների ուղղութեանը, որոնց մտածողութիւնը վերացական է: Նորա իննուում են բացարձակ սկզբունքների վրայ, որոնք սակայն չեն համապատասխանում կեանքի խոկութեանը և բաւարարութիւն չեն տալիս բարուզագիտութեան պահանջին: Վիպագրուների վիշած ուղղութեան ներկայացուցիչ չամենայն զէպս պէտք է հաշւել Բուրժէին:

Բուրժէի ներկայ վիպում գործող անձնաւորութիւնները ապրում են հարաւային Ֆրանսիակի ծովեզրեաչ Քան (Canne) քաղաքում: Ալատեղ հաւաքում են ձմեռ ժամանակ առաւելապէս անգործ հարուստները զանազան երկիրներից՝ այդ քաղաքի տաք և հրաշալի կլիմաչի բարիքները վայելելու: Քան քաղաքում ապրող մի աւատրիսական արքակազն ամուսնացած է իր մեծ հասակում մի հասարակ գեներալի աղջկակ: Ելի հետ, մինչ դեռ ազդպիսի ամուսնութիւն՝ իշխանական տոհմի կանոններով՝ չհաս է նկատում: Տիկին Ելի այն կանանցից է, որոնք դըժրազդ լինելով ամուսնութեան մէջ, օգտում են իրանց մեծ դիրքից՝ իրանց սիրու անկադ կրքերին լիովին բաւարարութիւն տալու: Այս տիպի արկածախնդիր կանանց սիրավին արշաւանքը շատ է գալթակղեցուցիչ և չարաբաստիկ: Դոցա սէրը երբեմն ստեղծում է կեանքը դառնացնող և

թունաւորող պալմաններ, որոնք խախտում են նրանով քոնւած մարդկանց ամենանւիրական զգացմունքները: Անխիղճ է ադսէրը, անխիղճ են և նորա հետեանքները, որոնք երեան գալիս՝ ազանդակում են մարդկային հաւատարմութեան և ընկերութեան գաղափարը, որ նոյնպէս մարդու բարուական արժանաւորութեան լասկութիւններից միննէ: Տիկին Էլի սիրում է եղել մի ժամանակ մի արարու Օլլիւիէլն, որ կառկածելով տիկնոջ հաւատարմութեան մասին, լանկարծակի, առանց նախազգուշացնելու, թողնում է իր սիրուուն և գնում պատկելու մի շատ պարկեշտ աղջկակ հետ: Բայց Օլլիւիէն պատկում է ոչ սիրուց և հաշւից զրդած, ոչ էլ չարմարութեան տեսակէտից: Նա պատկում է այն սկառնառով, որ նրան զգւացրել և ձանձրացրել էր Էլի նման կանանց հետ ունեցած սիրու աննպատակ և խելացնոր կապը: Օլլիւիէն ամուսնութիւնը սաստիկ զարացնում է Էլիին և գրգռում սրա ողու սատանական չարութիւնը: Տիկին Էլի վրէժ էր հանել իր օրինական անուէր ամուսնուց, ոտնատակ տալով ամուսնական հաւատարմութիւնն ու պատիւր: Նա նոյնպէս ընդունակ է վրէժխնդիր լինել իրան թողնող սիրեկան Օլլիւիէից, խախտելով այս անգամ արդէն ընկերական հաւատարմութիւնն ու պատիւր: Վրէժխնդիր Էլին ծանօթանում է Օլլիւիէն ամենամտերիմ և անձնւէր ընկեր Պիէր Հոտըֆէլի հետ և բոլորովին նւաճում է Պիէրի սիրու, որոնք ոչինչ էլիս է իր կնոջ հետ Քան քաղաքը և ալսուեղ հանդիպում է իր ընկեր Պիէրին: Օլլիւիէն էլ ամսուղևակ էր իր ընկերոջ սիրապին չարաբերութիւնների մասին Էլի հետ և նորա հանդիպումը Պիէրի հետ բոլորովին անկեղծ էր առանց մի որ և է լետին մտքի: Օլլիւիէն լաճախում է իր ընկերոջ և խօսում է ընկերաբարի միջի ալլոց և Քան քաղաքի և ընկերոջ ծանօթութիւնների մասին: Պիէրը իր ծանօթների մասին խօսելիս լիշում է և տիկին Էլիին: Երբոր Օլլիւիէն իր ընկերոջ բերանից տիկին Էլի անունը լսում է, սաստիկ մտատանջութեան մէջ է ընկնում: Նորա կասկածանքը սատոկանում է և այնունետ: Օլլիւիէն սկսում է հետամուտ լինել թէ ինչ լարաբերութեան մէջ է գտնուում իր ընկերը տիկին Էլի հետ: Օլլիւիէն հետախուզութիւնը հասնում է իր նպատակին: Նա գտնում է հաստատ նշաններ, որոնք ապացուցում են, որ Պիէրը Քանում ամբողջապէս կլանած է տրկին Էլի սիրով: Օլլիւիէն խորը վիրաւորւած լինելով այս հանգամանքից, այցելում է իր սիրած տիկին Էլիին և բացատրում է սորան աշղպիսի սիրու վատ և հոգեմաշ հետեանքները, որոնք խախտում և սրբապղծում են անձնէր

ընկերութիւնը։ Խակ ալս բանի մէջ նա զատապարտում և մեղադրում է միան տիկին Էլիին, որ ուզեցել է վլէժխնդրութիւնից շօշափել ընկերական սուրբ պատիւը։ Օլլիւիէն նունագէս ուղղակի չալտնում է ընկերոջ իր ունեցած նախկին սիրոց գաղտնիքը և վիշեցնում նրան լանուն անդրդմէի վիհ ընկերութեան՝ կտրել բոլոր չարաբերութիւնները տիկին Էլիի հետ։

Այստեղ սկսում է ոգեկան կոիւ Պիէրի սիրոց և ընկերական պարտաւորութեան զգացմունքների մէջ, ուր ընկերութեան զաղափարը չաղթում է և վճռել տալիս Պիէրին չրաժարւել այդ ամօթաբեր սիրուց, Տիկին Էլիի սիրամոլ լուսերը պէտք է ալս ելքից անցուշա ի գերել լինէին։ Նովապէս տիկնոջ հեղնական կարծիքը ընկերութեան զաղափարի վերաբերմամբ պէտք է հիմնովին տապալւեր։

Սակայն տիկին Էլիին զարձեալ մի ապացուց էր հարկաւոր իմանալու համար թէ որ աստիճան ընկերութիւնը բարձր է աճ սիրուց, որը նա ապօրինի կերպով փոփոխում է առանց ստատուիանատութեան։ Տիկին Էլիի արքունակի ամուսինը քան քաղաքում պարապում է գիտութիւնով՝ իր լարուատորիակում քիմիական վերլուծութիւններ անելով։ Բայց նա ունի իր մօտ ապրող մի օդնական երիտասարդ դիտնական, որին նա չափազանց սիրում է ընկերական ոգով։ Այս երիտասարդը սիրահարւած է Էլիի տունը չաճախող մի օրիորդի վրա։ Էլին աշխատում է և չաջողեցնում սոյս պսակը, այն-

պէս որ երիտասարդ գիտնականը (Էլիի տամուսնու օգնականը) չնակած Էլիի ամուսնու թախանձանքին՝ թողնում է իր գործը ու հեռանում է Ալդ ժամանակ Էլին նկատում է և համոզւում, որ այդ երիտասարդի գնալը անհուն ցաւ է պատճառում իր ամուսնուն, Արքալազն ամուսնու չկամենալը բաժանւել իր ամենամտերիմ ընկերոջից՝ նոյն պէս մի ապացուց էր Էլիի համար այն հաստատ ընկերութեան, որի համապատկերը նա տեսել էր Պիէրի և Օլլիւիէի բարեկամութեան մէջ, որոնք վճռեցին կարել բոլոր չարաբերութիւնները իր (Էլիի) հետ, քանի որ Էլիի հետ ունեցած կապերը երկու ընկերներին էլ կոկիծ և վիշտին պատճառում, որովհետեւ երկուսն էլ տղեղ սիրոց զսներ էին։ Խակապէս ալս տեսակ զբանատիկական վախճանը կը բաւէր մեզ եղարկացնելու, որ բարուականութեան սկզբունքը շատ ուժեղ է չարեաց դէմ մաքառելու։ Մարդկագին խիզճն էլ թելաղրում է բարձրութեան վրայ պահպանել ապականւած կեանքից այդ փրկող սկզբունքը։ Սակայն Բուրժէն գործ ունի այն կրքու տիպերի հետ, որոնց թէն ընկերական սրբութիւնը առաքինութիւն է երեսում, բայց որոնք իրանց սղեկան խղճութեան և թուլութեան չնորհով զաւաճանում են իրանց պաշտած առաքինութեանը, որ իրուն կրօն պիտի դաւանէր։ Զնակած իր ընկերոջ արած խոստովանքին, որ արկին Էլիի հետ չարաբերութիւն նորոգելը անցանք և դժոխք է, չնակած իր տւած վերջնական խոստմունքին

Օլլիւիէին հաւատարիմ մնալու, Պիերը դարձեալ փորձանքի մէջ է ընկնում և լաճախում է Ելիին։ Խօսք չկայ որ Պիէրի անզուսպ և կրքուա բնազդներով հիւսւած գործողութիւնը չի գիմանում քննութեան բարուական տեսակիտից։ Պարզ է նաև թէ որքան դժւար է նկարազբել Օլլիւիէի ոգու տանջանքը, եթէ սա իմանար Պիէրի զաւաճանութիւնը։ Եւ Օլլիւիէն իմանալով Պիէրի սրբապիղծ արարքը, վճռում է իր աշքով տեսնել իսկութիւնը։ Մի զիշեր Օլլիւիէն հետեւմ է Պիէրին տիկին Ելիի մօտ զնալիս։ Ազդ վայրկեանին Ելիի ամուսինը, գիտենալով արդէն Պիէրի արշաւանքը՝ որոնում է իր տան կից պարաիզում՝ լանցաւորին պատժելու. Փօխանակ իսկական մեղաւորին հարւածելու, որ ազդ բուպէին Ելիի տանն էր զանուում, սպանուում է թիւրիմացութեամբ հրացանի զնողակով Օլլիւիէն, որ նոյն ժամանակ նոյն պարաիզում էր շըրջում։ Պիերին հետեւլիս. Այս սարսափելի դրամալից լետոյ՝ Պիէրը արդարն հեռանում է ընդմիշտ Ելիից և անշաբտանում մի կնոջից, որ անխիղճ և անպատասխանատու սիրոյ մեքենալութիւնների զօրութեամբ՝ զոհերի պատճառ դարձաւ —

Բուրժէի վէպում արտաչափուղ հակեցողութեան համեմատ՝ ընկերութիւնը պիտի բարձր լինի սիլ ուց, որ աշխատում է լաճախ ստորացնել ընկերական կապերը։ Զէ որ Պիէրի ընկերութիւնը սկզբում լաղթանակ էր տանում և վերջ զնում ամբողջ ամօթաբեր պատմութեանը, որ խախտում էր ընկերութիւնը։ Ազդ դրու-

թեան մէջ Պիէրը բռնւած լինելով սիրոց թունաւորող գերբնական ոկտով, որ ալլանգակել էր նորա ոգին, մատնուում է փորձանքի, որ գուցէ հակառակ էր իր բանականութեան։ Հենց Բուրժէի վէպի զլիսաւոր նպատակն է վերլուծել այս տեսակ տիպերի սիրոց վրաց լինւած ոգեկան բատկութիւնները, որոնք նրա կարծիքով մարդկանց համար բնածին են։ Ի հարկէ հոգեբանական տեսակէ։ տից հետաքրքրական է մարդկանց ոգու քննութիւնը նոյն իսկ ներկայ վէպի սիրուէտէպափի վերաբերութեամբ։ Դա մեղ վիշնցնում է մասսամբ մեր սրտերում կատարաւող հազարաւոր գէպեր, որոնք մեծ մասամբ դժւար են բացարձուում։ Բարուազիտական տեսակէտից անհիմն է կարծել, որ մարդկանց բարուական ցաւերին զարման կը տրւի, եթէ վերլուծող քննութիւնը մատնանիշ անի այն փոփոխական զրութիւնների վրայ որոնց ենթակայ է մեր ոգեկան կեանքը։ Բուրժէի տիպերը կազմուում են բարձր և հարուստ շրջաններ, իսկ սրանց հետեւնքները բարուազիտական ամենատղեղ ախտեր և մոլութիւններ։ Իսկ սրանց հետեւնքները բացարձուում համար անշուշտ հարկաւոր է այն եղանակը, որ մի երնութիւններ ջանում է պարզի զրական պատճառներով, բաց երբէք ոչ լոկ բնածին չատկութիւններով, որոնք մեղ զցում են վերացական մտածմունքների գիրկը։ Եթէ վիշած քննութեան եղանակը չէ զործադրուում, այն ժամանակ ոչ մի խնդիր չէ զարթնուամ։ Բուրժէի այս վէպն էլ

իր դրական քննութեան հակասող միաէն մասնակից է անում մի վերաբնատրութեամբ ոչ մի խնդիր չէ յառաջացնում, ալ ընթերցողին փշեցնում է այն անհատական կարծիքը, որ իբր թէ ընկերութիւնը պիտի սիրուց բարձր զասի, թէն հասկանալի է, որ մի ալ աւանդական կարծիք գուցէ սէրը բարձր համարի ընկերութիւնից. Ուրեմն Բուրժէն չէ դնում մի կենսական խնդիր, որ իր ընթերցողին մտածել տաչ մի որ և է հասարակական երևոլթի մասին, որի գոլութեան համար ամեն ընթերցող իրան պատասխանառու համարիւ Բուրժէն իր ընթերցողին

միական զբուանքի, որ ի լուծումն դարսու հասարակական ցաւերի՝ մեր լառաջաղիմութեան ձգտումին գոհացում չէ տալիս, ալ հարուստ շրջաններին առիթ է տալիս իրանց անբութելի մոլութիւններից մի անգամ ես համ առնելու Բուրժուաղիական գրողի լատկութիւններից մինն է՝ համեմել և կրկնել արդէն լատնի բաներ, իսկ լուսաբանել սոցա մեր ժամանակում պահանջւած սոցիալական տեսակետից, դրանից նա խորշում է:

Գրիգոր Վարդաննեանց:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայկական գործերի դրութիւնը.—Թշւառութիւնը եւ նպաստների գործը.—Բ. Դրան գործողութիւնները.—Նոր արտայայտութիւններ (Անզիայում):—Անգլիա:—Ռուսիայի վերաբերմունքը,

### Հայկական գործերի դրութիւնը

Անցեալ անգամ, ոչ շատ աւելի քան մի ամիս առաջ, մենք յայտնեցինք մեր ընթերցողներին որ հայկական խնդրի վերաբերմամբ ոչինչ մի թարական չենք կարող հազորդել: Եւ այս մի ամսում կատարւեցին նորանոր դէպքեր: Հրաժարական տեսք Կ. Հայոց Պատրիարք սրբազն Մատթէոս արքեպոս Խոմիրեան, այդ անդրդւելի և արթուն իշխանաւորը: Նա կարողացաւ մնալ մի պայծառ դէմք, պատիւ բերող իւր ազգին և օտարների յարգանքն ու համակրութիւնը գրաւող թէ դէպի իւր անձը և թէ դէպի իւր գատը: Նորա տեղը գրաւեց մի բարձր հոգւորական, պատրիարքութեան տեղապահի պաշտօնով— Քրուսացի անւանական առաջնորդ Յարդուղի Առաքիսկոսը, և ընտրւեց այդ պաշտօնին մի հակասահմանադրական Խառն ժողովի ձեռքով, որի անդամներին նշանակել էր ինքը թիւրքաց կառավարութիւնը:

Որքան և խոշոր էին և հետեանքներով լի այդ հակասահմանադրական զործողութիւնները, բայց շատ շուտով ընդհանուրի ուշադրութիւնը գրաւեց մի այլ՝ վերին աստիճանի պատասխան ստու և ծանրազին հետեանքներ ունեցած դէպք. դա այն ասպատամբութեան փորձն էր, որ եղաւ հայ յեղափոխականների կողմից Օգոստոսի 14-ին, ոլով նոքա մատղիր էին մեծ պետութիւնների ուշքը զարձնել ըստ երեսութիւն մոռացութեան տրւած հայկական բարենոր լուսականների խնդրի վրայ: Եղելութիւնների մանրամասները ընթերցողները կը դանեն ներքի ամսադրիս սոյն համարում:

Խնդիրը այժմ՝ հետեանքների մէջն է։ ինչ ներկայումս յացո՞նի է այն է որ Կ. Պոլտում՝ օգոստ. 14 և 15-ին հայերից կոտորւեցին մինչ 5.000 հոգի և թերեւս աւելի, ըստ եւրոպական տեղեկութիւնների, իսկ թուրքերից՝ զինւոր թէ խուժան, որպէս սկսվում են մինչ 2000 հոգի. և բացի այդ՝ կառավորութեան հրամանով բոլոր գաւառացի հայերը կարծ միջոցում պիտի զբկւին իրենց հայրենիքը։ Ճիշդ է՝ եւրոպական գետպանատները պիտի մասնակցին այդ գործի համար նշանակւած յանձնաժողովում։

Որ կրէտէի յունական ապստամբութիւնը եկաւ ընդհանուրի ուշադրութիւնը խլելու հայկական առկախ մնացած խնդրից, —այդ անուրանալի է։ Որ հայկական բարենորոգումների մասին բնաւ ոչինչ էր լսում՝ այդ արդէն անցեալ անգամ վկացեցինք։ Կրեուէ կղզին արդէն ստացաւ իւր ինքնավարութիւնը—մինչդեռ ոչ միայն հայկական խոստացւած բարենորոգումները չեն ներմուծւում, այլ դեռ խախուեց հնուց եղածը—և հայոց օրինական պատրիարքի տեղը հաստատւեց մի հակասահմանադրական տեղապահ։

Թէ ինչ պիտի կատարւի հայկական գործի նկատմամբ—այդ մասին եւրոպական պետութիւնները շարունակում են մնալ անմիաբան։ Մինչդեռ անգլիական ներկայ կառավարութեան և պահպանողականների օրդան ճանաչւած Ստանդարտ թերթը այնքան հեռուն է գնում, որ անհրաժեշտ է համարում ամբողջ Թիւրքիայի վրայ տարածել Եւրոպայի վերահսկողութիւնը—ինչպէս այժմ Կրիտէյում է սահմանւած, —զորա հակառակ ուսւաց դիսպումատիայի բերան Բրիտանիա (Nord) Փրանսիական թերթը նկատեց հետեւելլը.

Մի քանի անգլիական թերթեր համեմատում են կրետական խնդիրը հայկականի հետ, գանգառաւելով միաժամանակ այն բանի վրայ, որ մեծ պետութիւնները չեն կամենում հայերի համար այն անել, ինչ յաջողւեց ձեռք բերել կրետացոց համար։

Ըստակայն այդ երկու խնդիրների մէջ մեծ զանազանութիւն կայ։ Կրետացիք արդէն բազկացուցիչ մասն էին կազմում ազատ Յունաստանի և նոցա կղզին վերադարձւեց Թիւրքիային 1830 թ. Լոնդոնեան արձանադրութիւնով՝ Եւրէա կղզու փոխարէն։ Բացի այդ՝ յօդուա կրետացոց պիտի հաշւել Հալեպայի կոմւենցիաները, որոնք հիմք ծառայեցին կղզում այժմ ստեղծած դրութեան։

«Ինչ վերաբերում է հայերին, մեծ պետութիւնները մոռաղիք չեն նոցա իրենց բաղդին թողնել մինչև որ նախապէս նոցա օգտին չեն կատարիլ մի քանի վարչական ռեֆորմներ, որոնք դուցէ հիմք ծառացեն այն ռեֆորմների, որոնք պիտի յետոց շնորհւեն Բ. Դրան անմիջական կալւածները կազմող գաւառներին»:

«Հայկական խնդիրը ներկայումս մոքերի փոխանակութեան առարկայ է մեծ պետութիւնների և օսմանեան կառավարութեան միջև»:

Սորանով և որոշում է խնդրի ներկայ դրութիւնը:

ԱԻ. ԱՐԱՄԱՆԱԿԱՆՅ

### Թշուառութիւնը և նպաստների գործը

Դէյլի Նիւսի թղթակցութիւնից քաղում՝ ե՞լք հետեւեալ տեղեկութիւնները Խարբերդից, ազգաեղ եղած կոտորածներից վեց ամիս յետոց տիրող զրութեան մասին: Խարբերդից ամերիկական և անգլիական բարեզործներից նպաստներ սուացող շրջանում նպաստի կարօանների թիւը համար է մօտ 100.000 հոգու, որոնցից 60.000 հոգու բաժանւած է 25.000 թրքական լիրա (22.727 անգլիական ֆունտ սաերլինգ կամ մօտ 220.000 թղթագրամ սուբլի), ուրեմն ամեն մէկին  $1\frac{1}{2}$  թրքական լիրայից պահաս (մօտ 9 շիլլինգ): Ինկատի առնելով որ ժողովուրդը կորցրել է իւր ամբողջ սեփականութիւնը—շտեմարանները, հագուստը, գործիքները, նոյն իսկ և աները—ապա կը տեսնենք որ ժողովրդի սուացած շատ քիչ է, բաւական՝ լոկ կեանքը կենդանի պահելու համար: Յանձնաժողովի գրքերից երևում է որ նա տւել է կերակրուր, հագուստեղին, անկողին, մի քանի գործիքներ և նոյն իսկ մի փոքր գումար՝ անահետութիւնը վերականգնելու: Գործակալը գրումէ:

Նորիքս ես ալցելեցի ինն (9) զիւզ. մէկում զիւզացիք գերաններ են կորատել զիւզի շուրջը բուսնող անապատից՝ տներ շինելու համար, որպէս զի պատսպարւեն առաջիկակ ձմեռը. միւտում զիւզացիք ցեխից՝ աղիսաներ էին կտրում որմ զնելու համար, մի ուրիշ զիւզում, երբ ես չտեսած տների մասին որ և է հոգածութեան նշան, հարցըրի պատճառը և սուացակ միատեսակ պատասխան. ինչպէս կարող ենք մենք շինութիւն անել

ասում էին նոքա, ոչ փող ուժինք, ոչ փառտ և ոչ էլ ուժ ու սիրտ. մենք վախենում ենք որ մեր վիճակի բարւոքումը մեզ աւելի ևս լիսասի:

«Աշխատաւոր տղամարդկանց և կանանց մի սերնդի գործ ոչնչացրած է և աչմ մարդիկ ոչ լուս ունին, ոչ սիրտ: Բայց եթէ տներ չշնուեն՝ առաջիկաց ձմեռը շատ մեծ զրկանքներ կը կրեմ: Օրինակ կարող է լինել Հովելու հախիկին հարուստ գիւղը: Նա ունի 3 մեծ եկեղեցի, որոնք պատկանում են լուսաւորչական, բողոքական և կաթոլիկ զաւանութիւններին. գիւղի տները շինուած էին հոչակապ, երկու մեծ պահեստատներ կազին բազմաթիւ սենեալներով, սակայն բոլորը աւերւեց. անհուն կատաղութեամբ աւերիչները նաւթով ալրեցին բոլոր տները: Ազմ միայն պատերն են մնացել իրեն վկաներ կատարւած չարագործութեան:

Դարնան ամենալու ժամանակը անցաւ առանց ցանելու, աճնակս որ հունձը չի կարող ապահովել ազգաբնակութեան պէտքերը, և առաջիկաց ձմեռը Խարբերդի ղաշտը թւառութեան մի աշխարհ պէտք է ներկազանի: Մարդիկ հասարակ անկողնից անգամ զուրի են, ամբողջ ձմեռքնել են գետնի վրայ առանց վերմակի, ընտանիքներ, որոնք քամն անկողին են բացում եղել, աչմ կառավարւում են մի անկողնով: Հիւանդ և առողջ միենուն ծածկոցի տակ են հանգստանում: Մարերը երեխակ են ծնում՝ անկողին անգամ չունենալով որ վրան պառկեն: Նպաստի ֆոնդից 4.000 լիրա (3.636 ֆունտ ատերինդ) ծախսած է անկողին և հազուստեղին գնելու համար. բայց զա միայն մի կաթիլ ջուր է... Շատ տներում ոչ մի տման չկաչ, մի քանի տներում նաւթի արկղներ են գործ ածում կերակուր պատրաստելու համար, իսկ շատ զէպքերում ոչ մի կերակուր չի եփւում. մարդիկ բաւականանում են չոր հազոր:

...Նպաստը բաժանել է երեք անգամ ձմեռաւ և գարնան ընթացքում. աչմ փողը հատել է և ամսից աւելի է, որ նպաստ չի բաժանել:

...Ացելութիւնս համուկեց ինձ, որ կարիքը ծարակեղ մեծ է, և աճնապիսի քաղաքներում, ինչպէս Մալաթիա, Արարկեր և Քաղու, եթէ զաղարեցնեն նպաստ տալը, ժողովուրդը պէտք է քաղցից մեռնի: Աշուան գիւղում ես տնէտուն շրջեցի և նաւեցի նոցա օշնակները և շումարանները. տների մեծ մասի մէջ ես դառաւ մի քանի ափ ցորեն կամ ալիւր, մի քանի հաւեկիթ, երբեմն փոքր ինչ ազ և երկու կամ մի հաց. տան պաշարը հազիւ կարող էր բաւել մի կամ երկու օր, իսկ մի քանի տներում որաշարը սպառաւած էր բոլորովին, և ոչ մի տեղից լուս չունին:

Ալորպի գիւղը ամենից աւելի ճշող տպաւորւթիւն թողեց. երբ մենք մօտենում էինք գիւղին, բնակիչները նեռւից նալում էին և վազեցին դէպի մելու նոցա ծերունի քահանան, ինչւած զաւաղանի վրաց կամոնած էր, ժողովուրդը լալիս էր և աղաղակում—ամենք քաղցած ենք, հաց չունինք», ևս անձամբ ալցելեցի տները և համոզւեցի որ հացի պաշարը

սպառւած է. բայց հացից ու խոտից՝ ոչ մի կերակուր չկար. Տները աշցելելիս ես հարցնում էի կանանց՝ արդեօք հաց ունին. Նոքա, անկարող լինելով պատասխանել, լավիս էին ու դուրս գնում. Ամեն տան մէջ ես տեսնում էի խորձերով խոռ՝ բերած զաշտից. շատերի միակ կերակուրը ալդ էր. Մարդկանց երեսը զեղին, նիհար, հիւանդուտ. Մարդերը սղմել էին ծծկեր երեխաներին՝ իրենց կրծքին. իսկ նոցա մօտ ընկած էին խոտի խուրձերու:

**Դէմի նիւս լրագիրը միւս անդամ (մօտ յուլիսի 20.ին հին առմարտվ) հաղորդեց.**

«Ուստմինստրի դուքսը ստացել է նպաստող ֆոնզի Երգումի գործակալից մի նամակի, որ լավոնում է թէ կարօտութիւնը շատ մեծ է և եթէ նպաստ շուտով չնամնի, անկարելի կը լինի եղած միջոցներով շարունակել օգնութեան գործը. Խարբերդի գործակալը տուլիսի 8.ից գրում է, որ նա մինչև այժմ ստացել է 1,000 թիւրքական լիրա. եթէ նպաստները շարունակւեն, նա լուս ունի ոտքի կանգնեցնել խեղճացած ժողովուրդը. Բիթլիսի գործակալը տուլիսի 7.ից գրում է. «Մենք զադս ըեցրինք զիւղերը նպաստ ուղարկելը, որովհետեւ ճանապարհները աւելի անապահով են զարձել, քան անցեալ ամիս. վախի և սարսափի զդացմունքը աւելանում է և պատել է ամինքին. Քաղաքից դուրս սպանոթիւնները սույրական դէպքեր են զարձել. Այն սեղերը, ուր մենք կարողացել էինք օգնել սերմացու հացահատիկներ բաժանելով, այժմ աջող հունձ է ստացել. Սակայն համերը հալիս թէ կարողան հունձ անել, որովհետեւ քիւրգերը անարգել շրջում են ամեն կողմ։ Առաջիկաէ աշնան և ձմեռը ալսուելի վիճակը շատ ծանր կը լինի. բարեհածեցէք խնդրել անգլիական մեր բարեկամիներից, որ շարունակեն մեղ օգնութիւն հասցնել Ֆիւլս Կերըի միջոցով։»

«Նպաստող ֆոնզի խորհուրդը մի նոր հրաւէր է հաստարակել Վասպուրականի կարօտեալներին օգնելու համար. Պահանջւում է 4,000 ֆունտ ստերլինգ, որ կ'ուղարկվի պաշտօնապէս բրիտանական փոխ-հիւպատոս Ուիլսամին՝ բաժանելու համար։»

Մալաթլայի կարօտեալ հայերին օգնելու համար Ուեստմինիստարի գուքսը ստացել էր (ներկայ օգոստ.) հետագրով խնդիրը 2000 ֆունտ ստերլինգ (մօտ 20.000 ռուբլի) ուղարկելու Անգլիական կ. Պոլսի դեսպանատնից լորդ Սալլիսբիւրին այդ առթիւ հետագիր ստացաւ, թէ Մալաթիայի համար յատուկ պահեստագրամից վերցւած է ցայժմ 600 ֆունտ ստերլ., իսկ մնացած 1.400 ֆունտ ստերլ. պէտք է հոգացւի նպաստող ֆոնզից։

Վանի համար Ուեստմինստրի գուքսը ուղարկեց 3000 ֆունտ ստերլինգ։

Վանում այնքան եռանդով գործած ամերիկացի օրիորդ Քիմբլը երկու այլ միսիոնարուհիների հետ թողեց Վանը և ներկայ օգոստոսի սկզբները Բաթումով Ամերիկա ուղևորեց:

Վանում կարգը վերահաստատած էր յուլիսի վերջը. շուկան վերաբացւեց, բողոքականները իրենց դպրոցները բացել են և օգոստոսի 1-ին պէտք է բացէր նաև հայոց մի դպրոց. (թաղական դպրոցները գեռ փակ են մնում): Կոտորածից ազատած բոլոր դիւդացիք իրենց տները զրկւեցին: Հունձը շատ յաջող է կարծւում:

Դիարբէքիրի գործակալից Ռւէստմինիստրի դուքսը նոր տոմարով յուլիս 14-ից գրած այս նամակը ստացաւ:

«Ստացաք ձեր նոր ուղարկած 1000 ֆունտ ստերլինգը. Փոխ-հիւպատոս Հոլուարդի հետ միասին, որ շատ դիւրացնում է գործը, մենք առաջ ենք տանում մեր գործը, որը, պէտք է նկատել, այժմ աւելի քիչ կասկածի է հանդիպում թիւրք կառավարութեան կողմից, քան գարնանը. Ֆարկինում մենք վերաշնեցինք արւած տները. Դա շատ գործնական նպաստ էր Աթէ նոյնը կատարի ուրիշ տեղեր ևս և չաջողութեամբ գլուխ բերի՝ մենք նեցուկ կը լինենք անտուն մնացած հազարաւոր մարդկանց, որոնց առաջը խստաշունչ ձմեռ է կանգնած. Մեզ զրամ է հարկաւոր ցորեն գնելու համար: Յոդ ունիմ որ այս ամաչացած երկիրը մոռացութեան չի տրիլ Անգլիայի մարդասիրութեան կողմից. օրական վեց պէնսը (25 կոտէկ) կարողանում է օգնել վեց հոգուց բազկացած մի ընտանիքի:»

Սիւասից Ռւէստմինիստրի դուքսը ստացաւ յուլիսի 15-ից նամակ, ուր առած է.

Վերջին 12 ամռաւ ընթացքում 18.500 բոլորովին թշառացած հայերի վրա ծախսել ենք 1.200 ֆունտ ստերլինգ. առաջիկայ ձմեռը սական սպառնական է և զրամ է հարկաւոր շարունակւող կարիքները հոգալու համար:

Ամերիկացից Հայաստանի կարօտեալներին մինչ օգոստոսը ուղարկած դրամը, հոստոնի «Independent» (Խողեպէնդէնս, Անկախ) լրագրի հաշւով՝ անցնում է 400.000 դոլլարից (720.000 ռուբլի), Անգլիայից ուղարկւածը՝ 300.000 դոլլար: Այդ ամերիկական թերթը աւելցրեց, թէ Ամերիկայի դժբախտ տարիներից մին եթէ չլինէր այս տարի՝ ամերիկական մարդասէր և քրիստոնեաց ժողովուրդը կէս միլիոն դոլլարով ևս չպիտի բաւականանար:

## Դրան գործողութիւններ

Պոլիս կանչւեց մի խումբ Համբդիէ քիւրդական գնդից, որ օգոստոսի սկիզբները տեղ հասաւ: Այդ գումարտակը բաղկացած է 617 հոգուց, որոնք վերցրած են Ալաշերտի, Բացազէդի, Գարաֆիլիսէի և Տիգրանակերտի շրջականերից: Նոքա մեծ քանակութեամբ բերած են իրենց հետ թալանւած ապրանքներ և ծախուեն հանում դրաբեղէն, արծաթեղէն, մուշտակներ, թանկագին կերպամներ և մինչև անգամ թալանւած գարոցական գասագրքեր:

## Արտայայտութիւններ.

Ծովապետ Փիլլ անգլիական համայնքների ժողովի օգոստոսի 7-ի նիստում ներկայացրեց Եստրուրնի բնակիչների կողմից մի խնդրագիր 6.800 հոգու ստորագրութեամբ: Ստորագրողների մէջ կան անգլիական հոգևորականներ, նոնկոնֆորմիստներ և կաթոլիկներ: Նոքա խնդրում են կառավարութեանը ձեռք առնել անմիջական և եռանդուն միջոցներ՝ հովանաւորելու Ասիական Թիւրքիայի տանջող քրիստոնեանների կեանքը: Խնդրագիրը կարդացւեց պարլամենտի նիստում:

## Անգլիա

Երդ Սալսբիւրի, օգոստոսի 3-ին Դմւերը քաղաքում մի ճառարտասանեց, ուր ի միջի այլոց յացնեց.

«Մոլորութիւն կը լինէր հաստատել որ իբրև թէ ինքը, Սալսբիւրի, պատժելու սպառնալիքներ կարդալով Թիւրքիակին, զորանով պարտաւրութիւն դրած լինի Անգլիակի վրաչ պատերազմ սկսել: Որպէս զի սպառնալիքը կատարվի, անգլիական կառավարութիւնը ոչ մի կերպ չի խանգարում պետութիւնների համերաշխ գործողութիւնները: Զարիքը կարող էր տարածւել մարմնի հիւանդ մասերից առողջ մասերի վրաչ բաց ինքը լուս ունի, որ պետութիւնները ժամանակով կարող կը լինեն վտանգը ոչնչացնել»:

## ՄԻՒՍԱՍԱՄԱՆ

Սորոյ (Հիւսիս) լրագիրը, որ Բրիւսէլում Վրանսերէն հրատարակւող ռուսաց կիսալպաշտօնական օրդանն է, հրատարակեց յուլիսին հետեւելը.

«Անգլիական և գերմանական մի քանի լրագիրների կարծիքով, Ռուսաստանը մտադիր է ինչպէս և լինի, պաշտպանել Թիւրքիային կրետական խնդրում և հայոց գործերի մէջ։ Դա բոլորովին ճիշդ չէ։ Հայկական խնդրում ռուսաց կառավարութիւնը Թիւրքիային բարոյական աջակցութիւն ցոյց տւեց այն հիման վրայ, որ խոռվածթիւնները Հայաստանում կազմակերպել էր մի յայտնի կոմիտէտ, որ գործում էր մի օտար պետութեան ներշնչմամբ։ Ռուսաստանը մինչև այժմ էլ կը պաշտպանէր սուլթանին այդ իննդրում եթէ նա տեսնէր, որ Բ. Դուռը քայլեր է անում իւր նահանգները խելացի կերպով հանգստացնելու համար։ Բայց որովհետև Թիւրքիան կարգը վերականգնելու համար ուրիշ միջոց չունի ի նկատի, բացի միայն այդ նահանգների խաղաղ ազդաբնակութեան արիւն թափելը, ուստի Ռուսաստանը, ի հարկէ, չի կարող պահպանել Թիւրքիային ազդպիսի ճանապարհի վրայ։ Խնչ վերաբերում է կրետական խնդրին, Ռուսաստանը սկզբունքով տրամարդուած էր պահպանել օսմանեան տիրապետութիւնը այդ կղզում, սակայն պայման դնելով ամենալայն զիջումներ և ինքնավարութիւն հաստատել։ Որովհետև Թիւրքիան կրետէում կարգ վերահաստատել չի կարողանում այլ կերպ, բայց եթէ արիւնհեղութեամբ, ուստի Ռուսաստանը, ի հարկէ, չի կարող թոյլ տալ այգախիսի վորձեր ու anima vilis։ Այդ պատճառով Ռուսաստանը պայմանաւորւել է իւր դաշնակցի և միւս մեծ պետութիւնների հետ՝ իրերի այդ վրդովեցուցիչ դրութիւննը վերացնելու միջոցների մասին։»

Ա. Ա.

## ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Պատրիարքական փոփոխութիւն

22 Օդոստոսիւ.

Իգմիրլեան Պատրիարքին հրա Խարականը փառաւոր ապացուց մը կրնակ սեսլւիլ թիւրք դիւնագիտութեան լաղթանակին։ Ամբողջ ազգը, քանի մը տամնեակ հաւերէ զատ, իր փառանութեամբն ու զուրդուրանքով կը պատւէր, կը շրջապատէր իր սիրելի պատրիարքը, որ, ինքն ալ, անձնէր էր իր ժողովուրդին։ Զիսաբանցաւ ան ոչ մէկ խօստումէ. սակայն սկսաւ վերջապէս վճատիլ։ Անոնմով միան պատրիարք էր, ոչ իր բողոքներուն կը պատասխանէր Դուռը և ոչ ալ կ'իրազործէր տարիէ մը ի վեր ծրագրւած բարենորոգումները։ Վերջիրա Պատրիարքարան և Մալր Եկեղեցի դնացող հկողները ձերբակալեցան՝ հայերուն պատրիարքարան դիմելը արգիլելու համար։ Քանի մը «հաւատարիմ և երևելի հաւեր», մասնաւրապէս Նուրեան և Գարակեօղեան Գրիգոր, սկսան հանրագրութիւն մը շրջեցնել ժողովրդին մէջ, որով, հայերուն մեծ մասը իրը թէ դժգո՞ն, կը պահանջւէր իգմիրլեան Պատրիարքին հրաժարականը, զանիկա Պոլիս և բոլոր գաւառները եղած կոտորածներուն ու մեասներուն պատճառ և պատասխանատու համարելով։ Շատ հայեր արդէն ստորագրած էին։ Նուրեան և իր հետեօրդները անմիջապէս կառավարութեան կ'իմացնեն ստորագրել չուրպուները։ Բոլոր աւս թակարդներուն հանդէց զժւար չէ գուշակել թէ ինչեր կը զգար իգմիրլեան Սրբազն։ պատճառարանւած հրաժարագիր մը կուտաս Դռան։ ցնծութեամբ կ'ընդունէի հրաժարականը և հրաման կը տրւի տեղապահի մը ընտրութեան ձեռնարկել։ Այս ընտրութեան համար պէտք էր Ազգային ժողով գումարել մեր սահմանադրութեան համաձայն։ Թաճ մը որ շատոնց ալ գովութիւն չունի Բարձրագոյն Դուռը կ'արտօնէ առժամանակեայ խառն ժողով մը կուգիմել քանի մը «հաւատարիմ» հայ անձերէ, եկեղեցական ու աշխարհական, և ընտրել շուտ մը Պատրիարքական տեղապահը։ Նւ կ'ընտրւի Բարդուղիմէոս եպ։ Զամշեան, բրուսափի նախկին առաջնորդը, Սուլթանին սիրելին, որ առանց պղտիկ դիտողութիւն մը

քնելու իր ապօրինի ընտրութեանը մասին, կուգալ բազմել պատրիարքարան, չուալով որ օր մըն ալ Պատրիարք կ'ընտրւի:

Բարդուղիմէս եպիսկոպոս, Նուրեանի, Գարակեօղեանի, Մեսրոս եպիսկոպոսի և ուրիշ մէկ քանի «ընտրւածներու» հետ կալսերական պալատ գնաց օգոստոս 2-ին և կը չափոնէ իր հաւատարմական զգացումները՝ բոլոր աճն շողոքորթական մեծարանքներով, որ չատուկ է միան տաճիկ-ներուն: Կ'ըսէ թէ մեծ չնորհ մըն է որ Սուլլանը կը բարեհանի յիշել իր վաղեմի հայ ժողովուրդը, թէ հաւերուն կեանքն ու զոլութիւնը ամենէն մնած ապացուցն է իր կալսերական Մեծութեան գթասրտութեան:

Ահա ուղերձը, հաջերէնի թարգմանութեամբ.

Ավեհափառ, ամենակարող և ամենազժած փատիշանս:

Անւաստս ծառանիդ, առանձնութեան մէջ քաշւած, բովանդակ կիանքս նւիրած՝ էի Զերդ Վհնափառութեան համար գիշեր և ցերեկ ազօթելու, երբ առժտոմանակեալ Խառն ժողովին ընտրութեամբը պատրիարքական տեղապահի պաշտօնը կալսերական իրադէով բարեհանցաք ինձի լանձնել: Հիմակ ալ երբ ձեր վեհափառութիւնը չնորհ կ'ընէ, որ նւաստս և չիշեալ կրօնական և քաղաքական ժողովին եպիսկոպոս, վարդապետ և փաշա ընկերակիցներս ձեր ամենաբարձր ներկաւութեան առջև երեխնք՝ Զեր ստրուկն ենք (միւսիւլ): Դա նոր ու փալլան և աներկբարելի նշան մըն է ձեր վեհափառութեան դէպի հայ հասարակութիւնը<sup>1)</sup> ունեցած կալսերական շնորհներուն: ասոր համար, չանուն ընդհանուրին, շնորհակալութիւն և երախտագիտութիւն կը չալանեմ:

Ավեհափառ փատիշանս,

«Ճիեզերքի արարածներուն պէս, որոնք երկինքի արեին կարօտ են, հաւատարիմ հայ ժողովուրդն ալ, ձեր վեհափառութեան շուքին ներքն հովանաւորւած, ձեր կալսերական շնորհներուն և զժութեան պէտք ունի: Ալդ ժողովուրդը, նւաստս և ընկերներս կատարելապէս համոզւած ենք, որ ձեր կալսերական ողորմածութիւնը և արդարութիւն սփոռող ակնարկները պիտի ըլլան դեղ ու սպեղանի մեզ համար, և աներկբատ ենք, որ պիտի արժանանանք ձեր կալսերական շնորհներուն և թուլտութիւններուն: Այս հաւատարմական զգացումներով առլցեալ փառք ու պարծանք կը համարիմ զալ և ձեր երկնաբարձ զահուն առջև արժանարար չալտարարել թէ մեր ստանձնած պարտականութիւնները առժամանակեալ ժողովին հետ անթերի պիտի կատարենք և պիտի ջանանք ձեր կալսերական հաճութեան արժանանալ:

<sup>1)</sup> Էրմէնիթէ միյէթի—հայ հասարակութիւն ըսել է, փոխանակ ըսելու էրմէնի միլլթի—հայ ազգը:

«Բարձրեալն Աստւած, քանի աշխարհս գոյութիւն ունի, ծեր կալսերական վեհափառութեան կեանքը երկարատև ընէ»:

Սուլթանը կը պատասխանէ թէ՝ չատ մեծ վիշտ զգացեր է հաւերուն և թիւրքերուն մէջ վերջերս ինկած ցրտութեանը պատճառով: Գոհ է սական որ ազգը ալ չար դիտաւորութիւն մը չունի քանի որ արժանաւոր Տեղապահ մը կ'ընտրէ, և թէ իր գութը և բարեացակամութիւնը քարտան ու անփոխուն ևն հաւատարիմ եղող իր հայ հպատակներուն համար<sup>1)</sup>:

Զամշեան եալ. և իր հնատեսորդները պատւաշնաններու կ'արժանան:

Իզմիրեան Մրբաղանն ալ նորէն Խւալիւտար փոխադրեցաւ և իր տունը առանձնացած է, 30—40-ի չափ լրտեսներ և ոստիկաններ կը ոլքուան իր բնակարանին չուրջը և ամեն չարաբերութիւններ արդիւած է: Կը խօսւի որ կառաւիւրութիւնը, Ցատեան Յարութիւն փաշալի առաջարկին վրաէ, 30 ոսկի ամսական կապած է: Վերջերս կը խօսւի որ Իզմիրեան որբաղան պիտի աքսորի Տպիալովս, Հիմակուհիմա տեղեկութիւններ՝ կը պակախին<sup>2)</sup>:

Պահ մը շատերը կարծեցին թէ Կառավարութիւնը իր սիրած Զամշեան եպիսկոպոսը Տեղապահ ընտրելով, պիտի սկսի իրապէս գործադրել Բարենորոգութիւնները: բայց պատրանք. ոչ մէկ լուս իրականացաւ: Նուրեանն ալ թեով ուտքով գործի վրաէ է: Խառն ժողովին մէջ կը լայտարարէ եղեր թէ բանստարկւած անմեղները պիտի ազատ արձակւին: Խոկարիկաները (ըսել կ'ուզեն լեղափոխականները) միշտ պիտի մնան:

«Արսելք» գրութիւն մը կը ստանալ հրատարակելու համար թէ բոլոր հայ բանտարկեալներուն սղատման մատին Տեղապահ եպիսկոպոսը ինչդրագիր մը պիտի մատուցանէ Սուլթանին: Քիչ վերջ հրաման կուգաէ որ հրատարակւի միան կարգ մը հայ բանստարկեալներու աղասոման և մվասւողներէ 2 տարի տուրք չառնելու մասին միան: Նուրեանն է ալ վերջի տնօրէնութիւն ընողը: «Արիկանները» պէտք է միշտ բանստարկւած մնան:

Պատրիարքական տեղապահը զրեթէ բնաւ պատրիարքարան չի ջներ ժողովները իր տունը կը գումարւին: Բնակարանին զիմացն ալ պահականոց մը շինած է եղեր: Ու սկսած է զբաղել զիտէք ինչ խնդիրներով: իրեն արեւիք ածականովք: գերապատիւի տեղ բարձրաշնորհ պէտք է զրւի: իրեն համար հայ խմբագիրները պէտք է չաճախս զովասանական աղլոր չողւածներ ստորագրեն: Կը խորհի Պեշիկթաշի Հալոց գերեզմանատունը կառավարութեան լանձնել փոխարէնը Բանկալթիի Հալոց գերեզմանա-

<sup>1)</sup> Սուլթանի պատասխանը ընթերցողները կը գտնեն ներկա թղթակցութիւնից լետով տպւած բարզուղիմէսուի, Նուրեանի և աւլոց հանրագրի մէջ:

<sup>2)</sup> Ակ լուրը հերքւեց:

տան մատուռը մեծցնելու համար, ու, ինչ որ ամենէն նշանաւոր գործը պիտի ըլլալ, Գարակէօղեան նոր կտակն ալ ոչնչացնել՝ նուրեանի և Գարակէօղեան Դրիգորի հետ:

Գաւառներէն սկսան նորէն չնորհակալութեան ուղերձներ համնել:

Ահա Բարզուղիմէոսի շրջարեականը, որ կարդացւեցաւ Կ. Պոլսի հաջեկեղիներուն մէջ օգոստոսի 4. ին:

«Գերապատիւ (այս անուն)

«Եւ Մեծ. Ատենակեան թաղական խորհրդու (այս անուն):

«Առժամանակեալ Խառն ժողովու այս օրւան նստին մէջ տրւած որոշման համաձայն կարենոր դատեցինք հաղորդել ձեզ այն միջարական և լուսատու խօսքերը. որք՝ մեր Օգոստափառ Կալսեր շրթունքներէն բըդիսեալ՝ հաղորդւեցան մեղ, երբ գացած էինք ի կալսերական սալատն, լուս գահորից նորին Վեհափառութեան մասուցանելու մեր չնորհակալիքն՝ տեղապահական պաշտօնին հաստատութեան սութիւն:

«Ահաւասիկ Նորին Վեհափառութեան խօսքերն.

«Հայերն ու խամները արժանավիշատակ սուլթան Օսմանի օրէն ի վեր իրերաց հետ իրրի եղբայր կենակցեր էին, այս վերջին ատեններս ու է կերպով անոնց մէջ այն աստիճան ցրառութիւն գուացաւ որ ինձ մեծ վիշտ պատճառեց: Վերջին ընտրութեամբ հաջոց ազգը ապացուցած է թէ չար դիտաւորութիւն մը չէ ունեցած. կը չնորհաւորեմ նորընտիր տեղապահը. թող ջանաչ հալոց և խալամաց մէջ վաղեմի սէրն ու համերաշխութիւնը վերահաստատելու. վասն զի երկուքն ալ իմ զաւակներս են, Հալոց ազգը թող վատահ լինի որ իմ կալսերական ակնարկս միշտ պիտի տարածի իր վրալ Դիտէ ինք (տեղապահը)՝ թէ ինչ եղանակաւ պիտի կատարէ իր պարտականութիւնու:

«Կը տեսնէք որ Նորին կալսերական Վեհափառութիւնը կը բարեհածի էիշել իւր վաղեմի հաջ ժողովուրդն՝ որ անչափ դարերէ ի վեր ուըրտագին փարած կը գտնէի Օսմանիան Գահուն: Պատրաստ եմք լաւելու որ կալսերական կառավարութիւնը՝ թարգման Նորին Վեհափառութեան սուն թաճկագին զդացմանց՝ փութացած է բացորոշ հրահանգներ ուղղել առ գաւառական իշխանութիւնս, որպէս զի ընեն, ինչ որ անկ է իրենց՝ վերահաստատելու համար ժողովրդեան զանազան դասերուն և ի մասնաւորի իւլամաց և հալոց մէջ վաղեմի վատահութիւնն և բառնարու աջն ամեն արգելքներն որ ցարդ իւափան ելան երկրագործական, վաճառականական և առետրական գործառնութեանց և միով բանիւ ապահովելու ամենուն օրինաց պաշտպանութիւնն և կալսերական իշխանութեանց հոգածութիւնն:

«Հետեաբար կ'աղաջեմք որ թէ ձեր և թէ ձեր իրաւասութեան ենթարկեալ եկեղեցեաց մէջ ընթեռնուք մեր լրջաբերականն, որպէս զի բարձրաձան հոչակելին նորին կախերական վեհափառութեան ապ աւետաւոր խօսքերն, և միանգաման իւրաքանչիւր ոք ամեն պարագայի մէջ մեր նախահարց օրինակին հետեելով գործ զնէ ամեն նախազդոչ միջոցներ՝ որք կը ծառալին տէրութեան վստահութիւնն անխախտ պահելու, զի անու միան կարելի է իւրամ ժողովրդեան հետ հաստատել եղբայրական լարաբերութիւններ և ընդունել կախերական իշխանութենէն ցաւոց դեղն ու զարմանը, դիմելով անոր Բարձրագոյն խնամքը»

«Մնամք աղօթարար Պատրիարքական տեղապահ  
Բարթուղիմէոս եպ.

«Պատրիարքարան հայոց Կ. Պոլիս

Համար 5ու

ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ:

### Կ. Պոլսոյ Պատրիարքական կրիզիս

Ահա նաև մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ։  
Մատթէոս Պատրիարք Իզմիրլեան հրաժարական ուեց յուլիսի 22-ին։ Դաւանութեանց մինխառին ուղղած թաքրիրին (որ տրւած էր Բ. Դրան այն ազգարարութեան առիթով, որով հայկական շարժումների և կոտորածների պատճախանատութիւնը գցւում էր Պատրիարքարանի և Խառն ժողովի վրայ) պատասխանը, չնայած որ 15 օր էր անցած եկած չէր, որպէս Դուռը սովոր էր պատրիարքի թաքրիրներուն չպատճախանել։ Յուլիսի 22-ին Պատրիարքը իւր հրաժարականը զրկեց սստրազամին։ և կառավարութիւնը անմիջապէս լնդունեց այդ հրաժարականը։ Սուլթանը իրադէ հրատարակեց, որով լուծեց վարչութիւնը և հրամայեց որ հայ երեւելիները պատրիարքարանի մէջ ժողով գումարելով՝ տեղապահի ընտրութիւն կատարեն։

Դա խախտումն էր սահմանադրութեան, որը պահանջում է որ տեղապահի ընտրութիւնը կատարի Կրօնական և Քաղաքական ժողովներից կազմած Խառն ժողովը։ (Հրաւիրւած անձերն էին եկեղեցականներից՝ Բարդուղիմէոս եպ, Զամիչեան, Մելիքսեղեկ եպ, Մուրադեան, Էտիհնէի առաջնորդ Մեսրոպ եպ, Սուքիասեան, Վահրամ եպ, Մանկունի, պատրիարքական փոխանորդ Պարրիել վարդ-

ձեւահիբնեան, Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ Գէորգ վարդ. Երեցեան, Մկրեան Յովհ. քահանան և Խւկիւտարի Գարբիէլ քահանան. աշխարհականներից՝ Արքահամ փաշա Երամեան, Նուրեան էֆ, Մտքսուտ Սեպուհ բէց, Չայեան Ելիաս, Գարակօգեան Գրիգոր, Գաբամամի Կարապեռ, Կիւլպէնկեան Պատրիկ և Մանուկեան Տիգրան:

Ժողովի մէջ դաւանութեան տեսուչ Զիցւէր պէց կարդացել է մինխոտրի (Ծիծաթ փաշացի) հրամանագիրը, ուր ասւած էր թէ՝ Ժզմիրեան պատրիարքի հրաժարականը ընդունած լինելով՝ ներկայ հրաւիրւածները կոչւած են պատրիարքական տեղապահի ընտրութիւնը կատարելու՝ Կրօնական և Քաղաքական ժողովների պաշտոնավարութեան շրջանը աւարտած և նոցա անդամների մեծ մասը հրաժարւած լինելու պատճառով:

Ճշմարտութիւնը այս է, որ Խառն ժողովը դեռ կէս տարի ունէր մինչ իւր լիազօրութեան լրանալը:

Սակայն այդ առաջին ժողովում չաջողւեց Նուրեանին և արքանեակներին ընտրութիւնը կատարել: Երկրորդ գումարումը կատարւեց յուլիսի 27-ին (?), ուր և հակասահմանադրական ժողովը ընտրեց Պատրիարքի տեղապահ Չամչեան Բարդուղիմէոս եպիսկոպոսին:

Բարդուղիմէոս հակասահմանադրական տեղապահը օգոստոսի 2-ին ներկայացաւ Սուլթանին: Այդ մասին Կ. Պոլսի թիւրք լրագիրները տպեցին հետևեալը.

«Հաւոց պատրիարքական տեղապահ Բիւթթէթլու Բարդուղիմէոս էֆէնտի հազրէթլէրի, պատրիարքական տեղապահութեան պաշտօնին նշանակւելու առթիւ, կազմերական գահուն իւր երախտազիտութիւնը և ծառակական զգացումները չափոնելու համար, Վեհ. Սուլթանի կողմից չնորհեալ արտօնութեամբ, ուրբաթ օր, օգոստոսի 2-ին, սելամլըքի հանդէսից լետոյ, Ն. Վեհափառութեանը ներկայանալու պատվին արժանացաւաւ:

Բարդուղիմէոսի հաստատման բէրամթը տեսոց սովորականը ընտրութիւնից անմիջապէս չետու, լուկիսի 29-ին երկուշաբթի օրը:

Յուլիսի 30-ին Բարդուղիմէոսը իջաւ Մազր-Նկեղեցին և աղօթեց սովորականի համար Եկեղեցում ժողովուրդ չկար, այլ միան հետաքրքրուող ներ. եկեղեցու ներաը և զուրսը ոստիկաններ և լրտեսներ էին վիտում: Բարող ասաց, ուր ակնարկելով հոգկական շարժումները՝ աջապէս խօսեց.

«Արեգական լուսաւոր և կենսատու ճառագալ Թները հաւասարապէս կը տարածւին տիեզերքի լուլոր արարածներուն վրակ. սակաէն երբեմն սեւ

ամպեր մեր ու արևին մէջ մտնելով, կուգան ծածկել ալդ ճառաղալթները և վաղրկեան մը կ'արգիլեն անոնց կենսաւէտ ջերմութիւնը. կրնանք ասկէ հետեւցնել, որ արեօք գոլութիւն չունի. Արեօք սուլթանն է, ոև ամպերը հայկական խնդիրն է: Հիմակ որ ալդ սև ամպերը հալածւած են, հորից զոնը պալծառացած է, արեն ալ առաջւան պէս փալուն և կենսատու է:

Չորեքշարթի օր, չուլիսի 31-ին Աշըղեան եկաւ պատրիարքարան՝ Բարդուղիմէոսին չնորհաւորելու համար: Նոյն օրը չունաց պատրիարքարանից մէկը եկաւ ացելութեան: Յաջտնի է որ չունաց աչժմեան պատրիարքը Բարդուղիմէոսին համամիտ անձն է:

Առժամանակեաց Խառն ժողովը շրջաբերականով պատվիրեց Պոլսի հակ եկեղեցիներին, որ սկսեն փշել պատարագի մէջ Բարդուղիմէոսի անունը: Ժողովի մէջ Մանկունի եպիսկոպոսը հակառակել է ալդ որոշումին: Ժամանակաւոր Խառն ժողովը նշանակեց Մեսրոպ եպիսկոպոսին հսկող պատրիարքարանի թղթակցութիւններին և քննիչ Հայաստանից առ պատրիարքարանը ուղղած նամակների:

## ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ՄԵԾ ԽՐԱՎՈՒԹԻՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Ահա դէպի մասին Ռէքտերի գործակալութեան տւած տեղեկութիւն։  
Ները.

«Այս ժամանակ, երբ դիպլոմատիան արդէն համարեա համեմում էր  
իւր նպատակին կրետական խնդիրը կաբաղրելու գործում, և երբ չարա-  
քերութիւնները թիւրքերի և հաջերի մէջ սկսեցին նկատելի կերպով լա-  
ւաճալ, ֆանտակոս փեղափոխականների մի խումբ աշխատեց փչացնել  
գրութիւնը».

«Օգոստոսի 25-ին (հին տոմ. 13) հայ փեղափոխականները, որոնք անւանում  
են իրենց «Հայ Հազրենասիրական Դաշնակցութիւն», ուզարկեցին դեսպանա-  
անները և պալատը վշատակագիր, որի մէջ հաջերի դրութիւնը անտանելի  
են անւանում և պահանջում են ռեփորտների մտցնելը։ Որպէս զի կարո-  
ղանան ուշադրութիւն դարձնել տալ այդ գոկումչնու։ վրայ, այդ փեղա-  
փոխականները որոշեցին զրաւել Օսմանեան բանկը, գետնեղել նորա ներք-  
նայարկում զինամիտավին ուումբեր և ապա սպաննալ օդը թոցնել շինու-  
թիւնը նորա մէջ դանուղ բոլոր հարատութիւններով, եթէ իրենց պահանջ-  
ները չկատարին։ Ազդ ծրագիրը զլուխ բերելիս 30.ից մինչև 40 հայ փեղա-  
փոխականներ<sup>1)</sup> օգոստոսի 14-ին (հին տոմ.) կէսօրից էնտոք երկու երկու և  
երեք-երեք հոգով գնացին բանկը և նստեցին առաջուց պաշմանաւորւած տե-  
ղերում։ Մօտ տասներկու և կէս ժամին ինչ որ մշակներ բերեցին տոպրակներ  
փողով, ինչպէս կարծում էին բանկի պաշտօնեանները։ բայց իսկապէս՝ այդ  
տոպրակներում ռումբեր էին։ Շուտով զրանից իստոք, տւած նշանի համա-  
ձան, դաւադիրները բէւուէրների հարւածներով սպանեցին բանկի շինու-  
թեան մէջ գտնուղ ժանդարմներին և դռնապաններին՝ բանկի մուտքի

1) Մուրօնի լատուկ տեղեկութեան համաձան Օտառոմանեան բանկը  
ներս մտած փեղափոխականների թիւն էր 36 հոդի։ Բանկի շինութեան  
մէջն է նաև Ծխախոտի ռեժին բազմաթիւ ծառացողներով։ բանկի և ռե-  
ժիի ծառալողների թիւը այդ շինութեան մէջ համարում էր 300.իւ

մօտ, փակեցին և բարրիկազներ սարքեցին դռների մօտ և ապա բանկի զլխաւոր դահլիճում զցեցին մի քանի ոռումբեր՝ ծառազողներին վախեցնելու համար, որոնք սարսափով սկսեցին փախչել. Նոցանից շատերին աջողեց փախչել աները, բայց բանկի վարչութեան երկու անդամներ և մօտ 80 ծառազողներ չկարողացան հեռանալ և մնացին որպէս պատանդ չեղափոխականների մօտ, որոնց կարծես թէ հրաշքով աջողել էր ներքնալարկում գնել կէս պուդ զինամիտ և մարդ կանգնեցնել՝ լանձնարարելով պալթեցնել նորան տռած նշանի համաձան. Բանկի գիրեկտոր անդուցից սըր Եզգար Վինցէնտ'ին և վարչութեան ուրիշ անդամներին աջողեց փախչել և ազատւել:

«Յեղափոխականները այդ միջոցին բարձրացան բանկի տանիքը և այդ տեղից կրակ էին աճում և ոռումբեր էին արձակում զինուրների վրաք ամեն անդամ, երբ նոքա մօտենում էին բանկի մուտքին».

«Այդ մինենոն ժամանակ կ. Պոլսի շատ տեղերում չեղափոխականները կազմակերպել էին անկարգութիւններ և կրակ էին անում ատրճանակներից թիւրքաց զօրքի վրաէ և ոռումբեր էին զցում. Այդ բանը անմիջապէս վրէժինողութիւն առաջ բերեց մահմետականների կողմից. Հաւաքւեցին բազմաթիւ մահմետականներ, որոնք փախերով և դաշոցներով կարծակւեցին հանդիպած բոլոր հաների վրաէ և սկսեցին խփել, չզանազանելով անմեղին և մեղաւորին. Ամրողջ կ. Պոլսում սարսափ տիրեց. Խրենց զրասենեակներում գտնւող անձինք փակւեցին և չէին համարձակում զուրտ գալ, առևն զնալու համար. Քրիտանական պրոտատան զրասենեակի պաշտօնեանը մի քանի ժամ բանտարկւածի պէս էին:

«Սըր Եզգար Վինցէնտ և ալ. Մաքումով, վերադառնալով Խլզիզ-Կեօսկից, երկար ժամանակ բանտկցութիւններ էին անում չեղափոխականների պարագլուխիների հետ <sup>1)</sup>, որոնք խօսում էին ատրճանակները ձեռքին. Այդ պարագլուխիները վիշեցրել են պ. Վինցէնտին, որ նոքա իրենց ձեռքումն ունեն իրք պատանզներ բանկի վարչութեան երկու անդամներին և շատ ծառալսղներ. Նոքա լալոնեցին, թէ գրաւել են բանկը ցուց անելու նպասակով ոչ թէ թիւրքերի և բանկի, ալ միաւն երուպական պետութիւնների դէմ, որոնք երեսի վրաէ են ձգել հաներին».

Լրացնենք այս հազորդազրութիւնը մեր սեփական անդեկտութիւններով.

Կարայրած համաձանութիւնից չետու, որով երաշխաւորւում էր անձնական ապահովութիւնը, չեղափոխականները օգոստ. 15-ին զուրս եկան բանկից, ոռումբեր և ատրճանակները ձեռքին և կառքեր

<sup>1)</sup> Պոքա էին, Մուրճ'ի լապուկ տեղեկութեան համաձան, իրենց կեղանուններով՝ Արմէն Գարօ, (կամ Դարօլիան) Հրաչեալ և Բարկէն Աիւնիւ և Միւ.

նստեցին, որոնց առաջինում՝ ուրբ Եղպար Վինցէնտ և երկու լեզափոխական և կառքի կողքերն ևս ուղղով երկու հողի երկրորդ կառքում՝ ուռուսց դեսպանատան դրոգուման Մակսիմով, երրորդում՝ բանկի Փրանսիացի երկրորդ անօրէնը՝ ամէն մէկը չըրտչորս հոգով և ալսպէս մի քանի կառք ես: Նոքա տարւեցին Փրանսիական «Ժիրոնդ» նաւը, որով ուղեորւեցին Մարսէլլ ետքը Ամերիկա կամ Անգլիա գնալու նպատակով: Մարսէլլ հասան 16 հոգի: Նոքա ամենքը լաւ հագնւած երթասարդներ էին, ոմանք երպարկան կրթութիւն ստացած և վարժ Փրանսերէնում:

36 Երիտասարդների Օտտոմանեան բանկը մտնելու միջոցին Սամաթիա թաղում սկսւեցին կոլուներ հայերի և թիւրք ոստիկանների միջե, և այդ անեց երկու օր Հայերը կռւում էին ոռոմքերով, որոնք մեծ կոսորած էին անռւմ թիւրք զինւորների և վրաչ հասած թիւրք ամբոխի միջ Ղալաթա և Պերա քաղաքամասերի բոլոր խանութները փակւեցին և ամեն մարդ մի-մի տեղ ապաստանեց: Ղալաթայի կամուրջի երկու կողմերը թիւրքերը զրաւեցին և սպանեցին անցնող ամեն մի հայ: Թիւրք խոժանը զինւած էր ճոկանով փաշտերով, զանակներով և ալճ: Թալանի առնեցին շատ խանութներ և խաներ, ուր շատ հազ կոսորւեց: Երկու օր անցած Սուլթանի հրամանով թիւրք զօրքը և խոժանը դադարեցին սպանութիւնները և կողովուար: Խասդիւղի մէջ հրէաները առաջնորդելիս են եղել թիւրք խոժանը հայերի աները ցուց տալու համար և իրենք էլ թալանին մասնակից են եղել:

#### Անհամար ձերբակալութիւն եղաւ

Օգոստոսի 16-ին ուրբաթ օր սելամլըքի արարողութիւնից վերադառն զինւորների մէջ Պերակում ռումբ նետւեց, որը մեծ սարսափ զցեց: Ցուցի առաջին օրը Ղալաթա-սէրաչի մեծ պահականոցին ներս նետւեց մի ռումբ, որ 10—15 անձ սպանեց:

Ապաստանող հայերին պաշտպանել են թէ ոմանք թիւրքեր, Թաթալաչի լոյները, եղուանները, պարսիկները և մանաւանդ ռուսաց դեսպանատունը, որ լիփիցուն էր հայերով ցուցից նաև շատ օր լիտով: Օգոստոսի 18-ից սկսած աչկես ձերբակալութիւններ չեղան: Սակայն կառավարութիւնը որոշեց մինչ երկու ամիս բոլոր գաւառացի հայերին իրենց հայրէնիքը ուղարկել:

Սուլթանի գահակալութեան տարեղարձին արգելեց հրովթներ արձակել: Շատ օտարներ, ինչպէս օրինակ Բոն-Մարշէ վաճառատունը մի լապտեր անգամ չփառեցին: Պարսկական դեսպանատունը բնաւ լուսաւորութիւն չարաւ:

Եղան կրօնափոխութեան դէպքեր: Վասմ-փաշալում մի քանի ընտանիք, որոնք թիւրքերի տներն էին ապաստանած խալամութիւն ընդունեցին: Հայերից շատերը փակւել էին ձեւալպէս խանը, ուր դանւում են

շատ հաչ վաճառականներ և Ռւնձեան Արիկ էֆէնդու դրասենեակը, թիւրքերը խանը (քարանսարան) մտնել ուզեցին, բայց ոռոմքեր վայր ընկան ու շատ թիւրքեր սպանւեցին. երբ սական հավերի ոռոմքներն ու գնտակները հատնեցին՝ թիւրք խուժանը և զինւորները ներս մտան. բայց ներսինները մեռած զտնւեցին. դոքա թուն էլու ընդունել՝ անձնատուր չինելու համար:

Ընկած հակերից լիշտակենք երկու երիտասարդ ուսուցիչներ՝ Արտաշէս Անդրէասեան և Գնունի, որոնք թուն բնդունեցին, երբ իրենց մօտ եղած բոլոր գնդակները վերջացան. (Ակդ Գնունին նա էր, որը Գնունի Գէորգ անունով դուրս է բերած Շանթի «Դուրսեցիների» մէջ):

Մեռած հակերի թիւը հաշում են մինչ 5000 հոգի, լուներինը՝ 200. թիւրքերի կորուստը հաշում են մինչ 2000 հոգի, որոնց մէջ շատերը զինւոր:

Բարդուզիմէոս տեղապահը, Նուրիան էֆէնդի և ժամանակաւոր Խառն մոզովի մի քանի ալլ անդամներ Արդարադատութեան նախարարին արդ դէպքերի առթիւ զրկեցին տաճկերէն դրած հետեւալ գրութիւնը:

Վամանակէ մը ի վեր խել մը հաչ ոճրագործներ, որոնք հաչ էկադափուսական կոմիտէներու կը պատկանին, ատտին անդին, մանաւանդ Պոլիս, ամեն տեսակ ոճիրներ կը զործին: Երեկան չորեքատթի օրը ալս անձերը, մազրաքաղաքին զանազան կէտեւուն վրաց, չանդինած են եղեռնական ընթացքներու մէջ զտնւիլ, չեղափոխութիւն մը ծննդնելու նպատակով: Ասկէ զատ, ատոնցմէ խումք մը չարսոգործներ չորեքշաբթի օր կ'սպաննեն Օսմանեան Պանքալին պահապանը, զինւորները և ալս հաստատութեան պահապանութեանը սահմանւած ուրիշ անմեղ անձեր, նւիրեւնով ամենէն նողկալի ոճիրներու, որոնք սոսկում և զգւանք կը պատճառեն ամենուն: Սական չնորհիւ Վեհ. Սուլթանի հրամանած աղջու միջոցներուն, խուլութիւնը զսպած է, առանց խանգարելու հանրապին անդորրութիւնը:

«Յաւոնի է թէ էկադափուսական ընկերութիւնը իր ընթացքովը, սկզբունքներովը և նողկալի ոճիրներովը, իր վրաց կը հրաւիրէ օրէնքին առջն մեծ պատախանատութիւն մը, հասարակաց, պետական և կազմերական կառավարութեան իրաւունքներուն տեսակէտով և թէ իր զործերը արժանի են ամենախիստ պատիժներու: Եթէ ալս անձերը կը կարծեն գործել հաչ հասարակութեան անունով, արդ հասարակութիւնը, որ իր Վեհադին ունեցած հաւատարմութեան նւիրական պարագերը կատարելապիչ կը ճանչնալ, ալս չաւակնութիւններէն կը գարշի, չանուն կրօնի, ազգութեան, խղճի և աշխարհի ամենէն ուրբ զգացումներուն: Ակդ զործերը ամենքէն ալ պախարակեցան, զի ալս ոճրագործներուն կողմէն չարուցած շիոթութիւնները և խուլութիւնները կրնալին խուլաներու և ժողո-

Վերդի ուրիշ զասակարգերու աչքին, կազմել ցաւալի ղեպերու դուռ բառ ցող վիճակ մը, ինչպէս որ անցնեալին օրինակներովը ապացուցւած է. Ուրիմն կը փափագինք, որ աչ լատնի ոճրագործները, որոնք ձերբակալւած են և որոնք պիտի ձերբակալւին, ամենք ալ առանց բոպէ կորսընց ներու պատժւին, ինչպէս քիչ մը փերը խնդրած ենք, այն ամեն խառութիւններով, որոնց արժանի են: Այս միջոցով, հաւատարիմ հաչ հասարակութիւնը, իսլամ և քրիստոնեակ ժողովուրդներուն առջև ազատ պիտի մնաչ ամեն արատէ և անպատճենէ, պիտի կապւի իր իսլամ եղբայրներուն, որոնց հետ 600 տարիէ ի վեր լաւ լարաբերութեան մէջ կ'ապրի, և այս կերպով պիտի լատնէ իր մշտնջենաւոր կապակցութիւնը և անընկելի հաւատարիմութիւնը վեհ: Սուլթանին նւիրական անձին:

«Վերջապէս պէտք է որ հաչ հասարակութիւնը ազատ մնաչ հաւատարիմութեան արատ բերող ո և է փորձէ, և որպէս զի աչ ճշմարտութիւնները կալսրութեան ամեն ժողովուրդներէն ալ ճանչչին՝ կը փափագինք որ ներկայ խնդրագիրը, զոր ձեզ կը մատուցանենք լանուն մեր հասարակութեան, հրատարակւի պաշտօնապէս, մեր ըրած աղաջանքները ամբողջովին ուշադրութեան առնելին և այս մասին փութով և ազգութեամբ ճանուցումներ ըլլան կուսակալներուն, կառավարիչներուն և գաղմազամն երուն: Կ'աւելցնենք, ձեր նւաստ ազօթարարը և Պատրիարքարանի արդի արջութեան անդամներս, թէ մեր կողմէն որոշած ենք, լանուն Քրիստոսի, մալրաքաղաքին և պետութեան բոլոր հաչ եկեղեցիներուն մէջ, այս անխծեալ ոճրագործներուն նկատմամբ եկեղեցական ամենախիստ միջներ տնօրինելու:

Դէպքի մասին թիւրք թերթերի մէջ 16 օգոստոսի տպւեց հետևեալ պաշտօնական գրութիւնը.

—«Չորեքշաբթի օր քանի մը անխելք համեր հրապարակական և չանկարծական չարձակումներով համարձակած ըլլալով մալրաքաղաքին զանազան կէտերուն վրա ոճիրներ գործել, կալսերական կառավարութիւնը անմիջապէս զօրաւոր միջոցներ ձեռք առաւ հանրավին կարգը պահելու Յանցաւորներէն մեծագոյն մասը պատժեցան և հանրավին ապահովութիւնը վերահսկուեցաւ: Կանոնաւոր զօրքի և ոստիկան-դիմուրներու շրջուն գունդեր կազմակերպեցան մալրաքաղաքին բոլոր մասերուն մէջ և ամենակատարեալ կերպով անդորրութիւնը ապահովեցին: Ուրիմն, ժողովրդավին բոլոր զասակարգերը պարա են իրենց զործերովը զբաղիւ որովհետեւ կառավարութիւնը միան իրաւունք ունի աւաղակները և ոճրագործները բանելու և պատժելու և ոչոք կընայ միջամատութիւն ընել: Հետեաբար, ամեն անոնք, ինչ զասակարգի ալ պատկանէն, եթէ համարձա-

կին միջամտել ազնայիսի գործերու, որոնք կառավարութեան միայն կը վերաբերին, ապահնքն եթէ ժողովրդի դասակարգ մը ուրիշ դասակարգի մը մարդերուն վրայ լարձակի և զանոնք կեղեքէ, անմիջապէս պիտի ձերբակալին անոնք և օրէնքին վերջին խստութիւններուն համաձայն պատժւին:

Ալ ճռական հրամաններ տրւած են բանակին սպաներուն և ոստիկան դինուրմներուն անմիջապէս ձերբակալելու համար այն ամեն անձերը, — ինչ ցեղի և կրօնքի ալ պատկանին, — որոնք այս հրամաններուն հակառակ ընթացքի մէջ կը գտնւին և ուրիշ կրօնքի պատկանող անձերու դէմ ուժերնին կը գործածեն. Ամեն մարդ թող հնաղանդի այս հրամաններուն և իր առուառութեալ ու արհեստովն զբաղվիա:

Բացի ալդ պաշտօնականից՝ հրատարակւեց նաև հետեւալ պաշտօնական գրութիւնը.

— «Մինչդեռ Վեհ. Սուլթանին բարձր հոգածութեան ներքև ամեն դասու հպատակներ արդարութեան ամեն բարիքները վաճելելով իրենց գործերովը կը զբաղին, հայ հասարակութենէն քանի մը անմիտ անձեր, անձնական շահու նպատակով և նույն իօկ իրենց կրօնակիցներուն անէծքներուն արժանանալով հանդերձ, ժամանակի մը ի վեր բաղդախնդիր ընթացքի մը կը հետեւին. Այս խոռովութիւնները զզվանք պատճառած են հայ հասարակութեան պարկեցած մասին, որ ալդ կարգի չարագործներուն պատժւիլը խնդրած է:

«Ալդ անձերը, որոնք սովորութիւն ըրած են անվակել գործեր ընել թէպէտ զանազան առիթներու մէջ պատժւած են, ուակայն մինչև հիմակ կ'երեի թէ տակաւին սթափած չեն. Ալսպէս, վերջին չորեքշաբթի օր քանի մը հայ չարագործներ գործի պատրակով մտած են, թէ առանձին առանձին և թէ զոգ-զոգ, Ղալաթիա, Յամանիսան Բանքային շէնքը և աննպատակ չիտթութիւն մը առաջ բերած. Աական, կառավարութիւնը առաջուց տեղեկութիւն առած ըլլալով, կազմակերպած էր զինուրներու, ոստիկաններու և ժանգարմայի պահակագունդեր, որոնք անմիջապէս զէպքին վայրը փոխադրւեցան. Ուրիշ գունդեր ալ փոխադրւեցան նոյնպէս զանազան կ'տերու վրայ Զարագործները, որոնք Բանքան մտած էին, արտաքսւեցան և անկարգութիւն ծաւալելու հնարաւորութեան առջևն առնւեցաւ ուրիշ տեղեր. Ալդ չարագործները ձերբակալւելով արդարութեան լանձնած են:

Անհետաքըքրական չէ իմանալ նաև թէ չիշած դէպքերի մասին Շնուսաց գործակալութիւնը ինչ հեռադիրներ հաղորդեց Կ. Պոլսից:

Կ. Պոլիս, 15 օգոստոսի. — Օգոստոսի 14-ին հայերը յարձակ-

ւեցան Օսմանեան բանկի (Banque Ottomane) վրայ. սովանեցին մի քանի ծառայողներին և սպասաւորներին: Դրանից առաջ եկան անկարգութիւններ և կողոպտումներ Ալամթիայում: Ռատիկանութիւն և զօրք կոչւեցան: Քաղաքում սարսափ է տիրում: Նատ սպանւածներ և վիրաւորւածներ կան:

Կ. ՊՈԼԻՍ, 15 օգոստոսի.— Օսմանեան բանկի շինութիւնը տակաւին ապաստամբների ձեռքին է: Անզլիական «Ժիզարդ» պահականաւը Թերապիայից դուրս եկաւ ուղղելով Պոլիս նոյնը կանեն ֆրանսիական և խոտալական պահականաւերը:

ՊԱՐԻԶ, 15-ին, Օսմանեան բանկը վկայում է, որ իւր վարչութեան մէջ ոչ ոք չզոհւեց անկարգութիւններին: Ոչինչ չեն կողոպտել: Խոռվութիւնն ուղղւած չէր բանկի դէմ: Նա քաղաքական բնաւորութիւն ունէր և հաւանական է, թէ հայ անիշխանականների ձևոնարկութիւնն էր: Ֆրանսիական տէրութիւնը վճռեց կոչել երկրորդ պահականաւ, որ այժմ Կրետէումն է գտնւում: Ֆրանսիական գործոց յանձնարարեալլ հրամայեց «Flèche» պահականաւին 12 նաւազ իջեցնել, որոնք զգուշութեան համար դեսպանատան մէջ զետեղւեցան:

ՊՈԼԻՍ.— 15-ին: Այս օրւայ անկարգութեանց ժամանակ սպանւել են Օսմանեան բանկի պահականն ու երկու պաշտօնեայք: Գանձապահը ծանր վիրաւորւած է: Բանկի շէնքն ու ծառայողներին սրահումնում են ոստիկանութիւնն ու զօրքը: Տաճիկ ոստիկանութեան վկայութեամբ, գնդակները արձակւում էին հայոց աներից: Ռատիկանութիւնն էլ նոյնպէս հրացանաձգութիւն սկսեց և այս տեսք մինչեւ կէս գիշեր, բայց առանց հիւպատոսների թոյլութեան ոստիկանութիւնը վստահութիւն չունեցաւ տների մէջ խուժել: Հայերից որոնք որ ձերբակալեցան, տեղնուածեղը սպանւեցան: Մահմիներով զինւած մահմեդականներ օգնում էին ոստիկանութեան: Կէս օրից յետոյ ժամի 3-ին անկարգութիւն սկսւեց Թոփ-խանէում և հայոց խանութիւնների աւարը Ալամթայում: Հէնց Աւստրօննագարական դեսպանատան կշտին հաւաքւեց մեծ բազմութիւն, որին որ յըրւելու իրը թէ ջանք էին անում ոստիկանութիւնն ու զօրքը: Իսկ ականատեսները վկայում են, որ ոստիկանութիւնն ու զօրքը անգործ էին կեցած: Ալամթայ սարայում ձգւեց ոռումը,

որով երկուսը սպանւեցան և մի քանի հարիւր մարդ վէրքեր սոսացան; Սպանւածներն ու վիրաւորները տարւեցան ապրանքի սալիբով; Պերայի, Նալաթայի, Ստամբուլի բոլոր խանութները փակեն: Երեկոյեան ժամի 6-ից սկսած մահակներով զինած մահմեդականները թափառում էին փողոցէ փողոց և հալածում էին զերծանողներին: Երիխող կայ թէ զիշերը մեծ կոտորած կը լինի: Աւստրո-Ռւնգարեան փոստառունը Ստամբուլում փակ է: Նալաթայի փոստառունը պահպանւում է Տաւրիս-ի նաւազներով: Անկարգութեան տատճառը առ տշժմ ծշտիւ որոշել կարելի չէ, և ոչ իմանալ նրա իսկական չափ ու ծաւալը, որովհետև հայոց շատ թաղերից տակաւին ոչ մի տեղեկութիւն չի ստացւած: Սպանները հայերին ազատում էին: Լսում է, որ բանկի վրայ յարձակողները Ալբանացիք են եղել. իսկ ոմանց ասելով—քուրդեր են եղել: Եւրոպացիների մէջ խիստ սոտիում է տարածւել:

Կ. ՊՈՂԻՄ, 16-ին օգոստոսի.—Օգոստոսի 15-ին անկարգութիւնների միջոցին սպանւած են Օսմաննեան բանկի գունապանը և երկու պաշտօննեայ. գանձաւահը ծանր վիրաւորւած է: Բանկի շինութիւնը և պաշտօննեանները ոստիկանութեան և զօրքի պաշտպանութեան ներքոյ են:

Կ. ՊՈՂԻՄ, 16 օգոստոսի.—Երեկուայ անկարգութեանց ժամանակ, Պերայի ոստիկանութեան կից տնից հայերը ձգեցին մի ռումբ, որով սպանւել են վեց ժանդարմներ և մի քանիսը վիրաւորւել: Ռւրիշ տեղերումն էլ ձգւել են ռումբեր: Հայերը գնդակ էին արձակում ոստիկանութեան և զօրքի վրայ Օսմաննեան բանկից և կից տներից Վալաթիայում: Այժմ ստուգւած է, որ անկարգութիւնները ձեռնուրկել են հայերը օտարի միջամտութիւնը դրզելու համար: Մի քանի օր արդէն լուրեր էին պատում, թէ հայոց մասնաժողովը մի պատրաստութիւն է տեսնում երիտասարդ տաճիկների մասնաժողովի հետ, բայց հաւատ չընծայւեց: Երէկ հայոց մասնաժողովը բոլոր զեսպաններին հաղորդագրեց մտադրւած բռնի գործերի մասին:

—Օսմաննեան բանկի մէջ մտած հայերը սպառնում էին յօդացնկել բանկի շէնքը. բանակցութիւններից յետոյ, նրանք հաւանութիւն ստացան ազատորին հետանալ բանկի կառավարչապետ Վիլ-

սէնտին պատկանող զբօսանաւը: Բանկը ծանր վեասներ չկրեց: Այսօր շարունակւում են պարապունքները: Երէկ անկարգութիւններ եղան նաև Պռամատիի և Ենի-գափուի մէջ: Որքան յացոնի է, գիշերը բաւական խաղաղ անցաւ: Մի քանի տեղերում գնդակ էին արձակում: Ռատիկանութիւնը հետիոտ և ձիաւոր զօրքի հետ փողոցներն էին պահպանում: Մի քանի դեսպաններ իրենց նաւերից զօրք բերել տւեցին պահպանութեան համար:

Կ. Պոլիս. 17 օգոստոսի Հայոց պատրիարքի տեղապահը շըջաբերական է հրատարակել բոլոր հայ դաւադիրներին եկեղեցուց բանադրելու մասին:

—Գիշերը ռուսաց դեսպանատան մօտ հրդեհ սկսւեց: Ռուսաց նաւը 30 զինւած նաւազ իջեցլեց: Խանութների մեծ մասը փակւած են: Նոյն օգոստ. 16-ին առաւօտեան մահմեդական խուժանը վոկզալի առաջ Ստամբուլու մսպանեց 21 հայ արհետուորներ և համալներ:

—Երբ որ Օսմանեան բանկի կառավարչապետ Վինսենտը և ռուսաց թարգման Մաքսիմովը սուլթանի պալատումն էին, տեղեկութիւն ստացւեց, թէ Օսմանեան բանկին տիրող հայերը համաձայն են անձնատուր լինել այն պայմանով, որ նրանց չարգելւի ծաճկատանից հեռանալը: Վինսենտը և Մաքսիմովը գնացին քաղաք և բանկի պատուհանով բանակցեցին անկարգութիւն պատճառողների հետ. վերջինները յացոնեցին, թէ բանկը այն նպատակով չուրեցին, որ ցոյց գործեն բանկի դէմ, այլ ընդդէմ պետութեանց բողքելու համար, որոնք հայերին մատնել են բախտի բերման: Ուժանակի ռումբերը նրանք կը յանձնեն: Պայմաններն ընդունեցան: Կէս զիշերին հայերը անձնատուր եղան Վինսենտին և Մաքսիմովին: Նրանց իսկոյն տեղափոխեցին զբօսանաւը, ուր որ գիշերեցին: Անգլիական պահականաւը և տաճկի լրաբեր նաւը պահպանում էին զբօսանուը: Տակաւին անհնարին է որոշել երէկ սպանւածների թիւը: Նատերը նրանց թիւը հասցնում են մի քանի հարիւրի կամ մի հազարի: Պոլմա-բախչի և Թոփիխանէի մէջ փողոցները պատերազմի դաշտի էին նմանում: Այսօր քաղաքը աւելի հանգիստ է: Կէսօրից յետոյ անկարգութիւնները նորոգւեցան: Դալաթան և Պերան զօրքերով են պահպանուում: Հեծելազօրը խումբ-խումբ շըջում են փողոցներում: Խանութները գտնի են:

—18 օդոստ. «Temps»-ին օդոստ. 16-ից հաղորդում են, որ առավոտեան հաստատած խաղաղութիւնը կէս օրին կրկին խանգարւեց: Պերայի փաղոցներում արիւնհեղութիւնը երեկոյեան ևս շարունակւեց: Զօրքը համարձակ գնդակ էր արձակում անդէն հայերի վրայ: Զոհերի թիւը 2000-ից աւելի է: Բոսֆորի գիւղերում անցեալ գիշեր ընդհարութիւնը տեղի ունեցան:

Կ. ՊՈԼԻՍ, 19 օդոստ.—Երկու օր առաջ Դոլմա-Բախչի շրջակացքում չորս տաճիկ յարձակւեցան մի հայի վրայ և սպանեցին, երբ որ երեք զեսպանութեանց թարգմանները սպաշտոնական դործով գնում էին Խլդիդ-Քեօշքը: Ռուսաց զեսպանութեան թարգման Մաքսիմովը, կառքից գուրս պրծնելով զինաթափ արեց և նրանց տարաւ յանձնեց մօտակայ ոսափկանութեան: Երբ որ վերջինը հրաժարւեց կալանաւորել մարդասպաններին, Մաքսիմովը թէ մարդասպաններին և թէ նրանց կալանաւորելու հրաժարւող ոստիկանին ուղարկեց Խլդիդ-Քեօշք, ուր յացնեց, որ չարազործներից մէկը պալատի սպասաւ որ է:

—Զանազան հանդամանների յայտնութիւններից երևում է, որ երկու օր առաջ պատահած ուռւմբի պայմումը տաճիկների ձեռքով է կատարւել, որոնք ցանկութիւն են ունեցել արդարացնել հայերը հալածելու գործը և աւելի ևս կատաղեցնել խուժանին: Ստուգուած իրողութիւն է, որ ոստիկաններն սպասում էին հացերի կողմից ինչ-որ բւնութիւններ և խուժանին զգուշացրել էին, որ պատրաստ լինին հալածանքի համար:

—Պահապան զօրքի վրայ չորս վաշտ է աւելացւած: Դեսպանները պահանջեցին Թիրապիայի համար զինուրական պահպանութիւն:

—Վերջին դէսքերի պատճառով, սպասաւում է զինուրական մինիստրի արձակումը: Նրա յաջորդ են անւանում Կրետէի զօրաց նախկին հրամանատար Վրդուլահ վաշային:

—Երէկ հանգիստ անցաւ և վաճառականներից շատերը խանութները բաց արին: Փողոցների տեսքը հանգստացուցիչ է: ամբոխումն չկար: Երեկոյեան Վալաթաչայի մի քանի պատահարները դրութիւնը ծանրացրին: Օսմանեան բանկի հին շէնքի մօտ խուժանը յարձակւեց պարապմունքից ազատ նաւազին զինուորների

հետ մի հայի տան վրայ, իսպառ. աւերեց, սպանեց տղամարդկան և մանուկներին։ Զօրքն ու ոստիկանութիւնն անգործ մնացին։ Լուռում է թէ բանկի գիմացի առևտրական բնակարանից դուրս ձգւեց ոռումքը, իսկ ապա առորճանակներից գնդակները թափւեցան զօրքի վրայ, որ նոյնպէս պատասխանեց և զէնքը ձեռին բլունեցին պահւած հայերին։ Միւս առևտրական բնակարանից ևս գնդակ էին արձակում զօրքի վրայ։ Սա հրացանաձութեամբ պատասխանեց, բայց տուն չմտաւ։ Աերջին երկու պատահարների ժամանակ զօրքերը կարգին վարւեցան։ Խուժանը չէր մասնակցում։ Զերբակալւած են 30 հայեր։ Վիրաւորւած է 1 սպայ և 2 զինւոր։ Զոհերի թիւը հասնում է արդէն մի քանի հազարների, որոնց մէջ 60 մահմեղականներ։

— Հայկական մասնախումքը սպառնացել է ուժանակներով վրէժ առնել, եթէ 2 ժամաց ընթացքում շղաղարկեցնեն անմեղ հայերի կոտորածքը։ Նոյնը հազորդել են և զեսպաններին։

— Վեհրի փաշան նշանակւել է բերդապահ Պերայի, մարշալ Նաքիր փաշան—բերդապահ Ղալաթայի։ Զինւորական զգուշութիւնները շատացել են։ Զելալ-բէյի զլիսաւորութեամբ՝ արտաքոյ կարգի մասնաժողովը նիստեր է կազմում արդարադատութեան նախարարութեան մէջ այն մահմեղականներին զատելու համար, որոնք բռնութիւն են գործել հայերի վրայ։ Առ այժմ կալանաւորւած են 400 մարդ։

## Կ Ր Ե Տ Ե

Կրետէի ապստամբութիւնը կարելի է վերջացած համարել։ Այդ եղաւ շնորհիւ մեծ պետութիւնների միջամտութեամբ կղզուն տրւած մի տեսակ ինքնավարութեան, որ կը բերենք ներքեւ։ Ահա այդ կղզու մի ամփոփ պատմութիւնը սկսած թրքակոն տիրապետութեան օրից մինչև այժմ։

Կրէտէ (կամ Կանդիա) կղզի է Միջերկրականում։ 268 կիլոմետր երկար, 15—55 կիլոմետր լայն։ միջից անցնում է մի լեռնաշղթայ։ Բնակիչները՝ մեծ մասամբ քրիստոնեաց՝ թւով շուրջ կետ միլիոն են։ Կրետէն Տաճկաստանին միացաւ սրա վերջին աշխարհակալութեանց ժամանակ Ներոպայում։ Նա առնեց վենետիկեցիների ձեռքից 1669 թւականին, երբ որ Օսմանեան տէրութիւնը արդէն նսեմանալու շրջանն էր մտել։ Կղզու պահպանութիւնը տաճիկներին խիստ թանդ նստեց՝ թէ դրամով և թէ մարդկանց զոհերով, և լիովին ընկճել չկարողացան։ Տաճիկ զօրքերը յաջողութիւն չունեցան, որ մանեն ներսի բարձրաւանդակները։ Սփակիայի և Ապոկորոնի վայրագ լեռնականները միշտ պատրաստ էին զէնքով զիմադրելու ամեն մի տանձգութեան։ Մեր զարու զրեթէ իւրաքանչիւր տասնամեակ մի-մի արիւնահեղ ապստամբութիւն է տեսել այդտեղ, ամենամեծ անդթութիւններով երկու կողմից։ Ինչպէս յայտնի է, տաճիկ ձեռքն անցնելուց յետոյ՝ կղզու բաղմաթիւ յոյն բնակիչները մահմեդականութիւն ընդունեցին, որպէս այդ պատահել է Տաճկա-Հայաստանում շատ յաճախ, և նոյն խիկ այժմ մեր աչքերի առաջ, և որպէս այդ եղել է ալբանական և բռնիական սպահիների հետ, Ռոդոպի բուլղարական պոմակների հետ, մասմբ բռնութեամբ, մասամբ ահից և շահասիրութիւնից։ Ինչպէս որ միշտ պատահում է այսպիսի դեպքերում, նորագարձ մահմեդական-

ները բուն մահմեղականներից էլ աւելի Վանատիկոսութեամբ և և հաւատապաշտութեամբ վառւեցան։ Նոքա սրտի խորքից առեցին իրենց քրիստոնեայ աղդակիցներին, բայց ոչ պակաս զազրելի դարձան վերջինների աչքում, որպէս ուրացողներ եկեղեցուց և աղջից։ Այժմ Կրետէում յոյնացեղ մահմեղականը ըստ ամենայնի տաճիկ է համարւում։ Ահա այս հանգամանքը—այլաղէն և արտօնեալ փոքրամասնութեան գոյութիւնը՝ միշտ խոռվութիւններ է առաջացրել կղզու մէջ։ Արոտքին ազդեցութիւնն էլ պակաս դեր չէ կատարել, որովհետեւ ցամաքում ասլրող յոյները միշտ աշխատել են յեղափոխական շարժում արծարծել իրենց եղբայրակիցների մէջ։ Բայց մինչդեռ Սամոս կղզին՝ շնորհիւ իւր միապաղաղ յոյն ազգաբնակութեան և այն բանին, որ պետութիւնները անմիջապէս նորա օգտին միջամտել էին՝ արդէն իւր ազատութիւններն ունէր, Կրետին իւր առաջին ազատութիւններն ունեցաւ 1808 թւականին միայն, շնորհիւ մի մեծ ապստամբութեան։ Այն ապստամբութեան մէջ, (1821 թ.) որ վերջացաւ յունաց թագաւորութեան հիմնադրութեամբ (1827—30 թ.), Կրետացիք նշանաւ որ բաժին ունէին, բայց պետութիւնները բարւոք գաւաեցին կղզին թողնել սուլթանի իշխանութեան։ Կրետէն Սուլթանի կամքով ընկալեց եկիսպական զօրքերով։ 1840 թ.-ին եղիսպական կառավարութիւնը ետ տւեց Կրետէն Սուլթանին, և թէպէտ պետութիւնները ջանք դրին քրիստոնեայ բնակիչներին պաշտպանել տառապանկներից, բայց ոչ մի բարւոքումն չերևաց մինչև 1868 թ.։ Երեք տարի (1866—68) ապստամբութեան դէմ կուելուց և 6 միլիոն ոսկի ծախսելուց յետոյ միայն 1868 թւականին պետութիւնների միջնորդութեամբ կազմէ եց բարեփոխութեանց ծրադիր Սահմանադրութիւն անունով։ Այս օրէնքը գէրտ առ երեսյթ տալիս էր կղզուն բաւական չափով ինքնավարութիւն, նման Աւելանտայի կիսա-ինքնավարութեան, բայց նիստ բարդ կազմութիւն ունէր և երեք չգործադրուեց գոհացուցիչ կերպով։ Նորա դատական դրութիւնն այնպէս խճողւած էր, որ արդարութեան քամահարում դարձաւ, իսկ ազդացին ժողովը ջլատուած հաստատութիւն եղաւ։ որովհետեւ արդելւած էր քննութեան առնել որ և իցէ խնդիր, մինչև որ կանխաւ աւագ նահանգապետի հաւանութիւնը չունենար։ Ոտու-տաճկական պատերազմի ժամանակ կղզու մէջ քարողւեց Յունաստանին միանալու գաղափարը։

Ասկայն միակ արդիւնքն այն եղաւ, որ Բերլինի վեհաժողովում, Անգլիացի առաջին ներկայացուցիչ՝ Դիզբաէլի'ի (լորդ Բիկոնսֆիլի) առաջարկութեամբ՝ դաշնադրութեան 23 յօդւածով Բարձր Դրան պարտաւորեցրին, որ բարեխզճութեամբ դործադրէ սահմանադրութիւնը մի քանի փոփոխութիւններով։ Կրետացիք հասկացան, որ սահմանադրութեան գործադրութիւնը այդ կերպ տրւած լինելով պետութիւնների խմբական և անորոշ երաշխաւորութեան ներքոյ՝ զոհ պիտի դնացին տաճիկին և նորից՝ եռանդով և այս անգամ՝ լիտկատար կերպով ապատամբուեցին 1878 թւականին։ Ապատամբութեան ժամանակ, 1878 թ.՝ ամառը, երկու կողմն էլ գործում էին սովորական անդթութեամբ. տաճիկ զօրքը հրով ու սրով ապատամբութեամբ էր Ապակորոնան, իսկ մահմեդական շինականները ապատամբութերին։ Վերջապէս կրետէի առաջնորդները դիմեցին Անգլիացի միջնորդութեան, որի արդիւնքն եղաւ 1878 թ. Դռնից հաստատւած Հալէպետն դաշինքը<sup>1)</sup>։ Այս դաշինքի՝ մանաւանդ երևմախց յօդւածները՝ աչքի ընկնող թերութիւններ ունեին, բայց հնար չկար Բարձր Դռնից տւելի զիջում ստանալ։ Դուռը ջանացել էր ացդ դաշինքի մէջ պահպանել նախկին սահմանադրութեան բոլոր անիրազործելի և գործը բարդեցնող յօդւածները, պարզ է որ գրանից օգուտ քաղելու համար՝ դաշինքը չգործադրելու։ Եւ ահա ացդպիսի սահմանադրութեամբ է որ կազմեցին Կրետէի պարլամէնտները մինչև 1889 թ.նը։ Երկու կուսակցութիւնները՝ մահմեդականները կամ պահպանողականները ու քրիստոնեանները կամ սահմանադրականները՝ մրցում էին իշխանութեան համար՝ վալիների խնամակալութեան ներքոյ, որոնց սակայն վացը էր գցում սուլթանի պալատը՝ նոցա տեղը բռնելու համար։ Երբ քրիստոնեաց վալին շատ էր անբաւականացնում իւր հաւատակիցներին՝ ձեռաց անբաւականների կողմն էր անցնում սուլթանի պալատը, որը այսպիսով ձեռնտու էր լինում մի դաւադրութեան, որին շտապում էր օփնել զօրքերի հրամանատարը, որ միշտ տաճիկ էր։ Այլպիսի ինարիգներս էր որ մէկը միւսի յետելից վալիները ետ էին կոչում, օրինակ՝ Ֆո-

<sup>1)</sup> Հալէպա՛ն գիւղ է Կրետէ կղզում։

տիադէս փաշան։ Պալատը, օրինակ, խոստացաւ ծածկել պակասորդը, եթէ մաքսերից, գոյացած գումարի կէսը բաւականութիւն չտայ կղզու վարչութեան ծախքերին, գորանով նա խրախուսում էր պաշտօնեաների գողութեան, և ազգայիտով տեղի տալիս, որ շարունակ դիմեն արտաքոյ կարգի եկամուտներին, որով մնանկանում էր երկիրը։ Վերջապէս 1889 ժւականին մահմեդականները, որոնց վարչական ճնշումներով յաջողւել էր 11 տարի շարունակ մեծամասնութիւն կազմել Կրետէի ժողովում, կորցրին այդ մեծամասնութիւնը Սարտինսկի փաշայի կառավարութեան ժամանակ Բանկի եց ագուամքութիւն, և մի քանի ամսում սպանեցան 1000 քրիստոնեաց և մահմեդական, այրեցան 9 հազար տուն, 152 ուսումնարան, 57 մզկիթ և 14 եկեղեցի և մեծ քանակութեամբ կայք ոչնչացաւ։ Այս անգամ քրիստոնեաները պարտեցան և կորցրին արտօնութեանց մեծ մասը, որ այնքան զոհաբերութիւններով զնւած էին։ Դուռը եռանդով սկսեց գործը, խորամանկութեամբ կարողացաւ կղզու նշանաւոր ռազմագիտական տեղերը զօրքերով բռնել, ապա թէ խոստութեամբ ընկճեց ապստամբութիւնը։ Նաքիր փաշան—մահմեդական և զինուորական—նշանակւեց վալի զինուորական իշխանութեամբ, կղզին հրատարակւեց պատերազմական դրութեան մէջ, ալբանեան ոստիկանները զետեղւեցան քրիստոնեաց զիւղերում և Ֆիրման հրատարակւեց Հալէպեան դաշինքի կարևորագոյն յօդւածների գաղարման մասին։ Բացի սրանից Դուռը իրան սեպականացրեց կղզու մաքսատան բոլոր եկամուտը, մինչդեռ պէտք է միայն կէսն ատանար։ Ընտրութիւնների մասին յօդւածները փոխւեցին այն կերպ, որ փոքրամասնութիւն կազմող մահմեդականները կորողանան ժողովում գերակշիռ լինել։ Վերջին հինգ տարին կառավարութիւնը բռնաւորական էր. վալին զործում էր ըստ հաճոցից, փոյթ չունենալով, թէ ազգային ժողով կայ։ Իրաւ է, նշանակում էին ժողովի ընտրութիւններ, բայց քրիստոնեանները յամսութեամբ հրաժարւում էին մասնակցել։ Մահմուդ-Զէլալ-Էդղին-փաշայի բռնակալութիւնը և դատարանների վրայ ճնշում զործելը ի նապաստ մահմեդականների՝ ամբողջ կղզին ոռքի կանգնեցմեց 1894 թ. և պետութիւնների ուշքը գրաւեց։ Նոցա պնդելով Դուռը նոյն 1894 թ. նահանգապետ նշանակեց քրիստոնեաց կարաթէօղորի փաշոյին։

Սակայն, չնայած սորա ժողովրդականութեան՝ գործերը վատթարացան, քանի որ կախումը նլղիզ-Կէօշքից շարունակւում էր: Վալին կրետական ժողովը գումարեց, և զտաւ ժողովը որ Թիւրքիան, որը տարեկան հազիւ 750.000 ֆրանկ էր աւելացնում մաքսային եկամուաների վրայ՝ ամբողջ կղզու վարչական ծախքերի համար, թոյլ էր տեղ որ 1889-ից սկսած մինչ 1894-թը բարդել 120.000 թրքական լիրա գեֆիցիտ, և որ կղզում ծախտող ծխախտոի համար տարեկան 12.000 թրքական լիրա է վերցնում եղել իր հարկ, մինչդեռ Սամսո և Կրետէ կղզիները, միջազգային դաշնադրութիւններով ազատած են կայսերութեան մէջ լինելիք տնուղղակի հարկերից: Տանեակ տարի այդ ապօրինի հարկը հաւասարւել էր ճիշդ Կրետէի պարագի գումարին, և այդ կղզին այսպիսով իրեն ծանրաբեռնած տեսաւ աւելի քան 100 միլիոն ֆրանկ պարագավ:

Այդ ժամանակից է ահա (1894-ից) որ սկսւեց ռեֆորմների կոմիտէի («Հապիտրոսպիտառ-յի») յեղափոխական գործողութիւնը: Իլղիզ-Քէօշկի ինստրիգներով՝ Կարաթէոլորի փաշան ետ կոչւեց և տեղը վալի նշանակւեց Թուրիստն-փաշան (այժմ՝ մինիստր արտաքին գործերի), որը սակայն Կրետէի մահմեդականների ուզած մարդը չէր: Նոցա հարկաւոր էր գեեւաւուրներին դէմ մի զինւոր, մի Արդուլլահ-փաշազորա նշանակւելուց ի վեր, չնայած տրւած ամնիստիայի, սկսում են Վամսոի պաշարումը, վրէժիսնդրութիւնը Սեմյոնայի, Այիօս-Վասիլիսի դէմ, անհաշիւ սպանութիւնները Ութիմնո գաւառում և Հերակլէյիոն վիճակում, Կանէայի կոտորածները (մայիսի 13 ներկայ 1896 թ.) և այլն: Յեղափոխականների կոչին ձայն տւեցին շատ յունական լաւ ընտանիքներ և տիկիններ: Յունական երիտասարդներից շատերը զրւեցին յեղափոխականների շարքերում: Դեռ ևս ներկայ ապստամբութեան սկզբներում՝ մեծ պետութիւնների նաւերը լողացին դէպի Կրետէն: Յունաստանը աներկրայելի խօսքերով յայտնեց որ պիտի միջամտի եթէ թրքական զազանութիւնները շարունակւեն: Դեռ ևս լինչեւ ներկայ օգոստոսի կէսը ապստամբութիւնը իւր ամբողջ ոչքի մէջ էր: Դուռը սկսեց բանակցութիւններ, բացց խոկոն նկատեց որ Թիւրքիան բնաւ հեղինակութիւն չունի ապստամբների համ բանակցութիւնների մէջ մտնելու, քանի որ ամենքը հասկանում էին Դրան խօսքերի արժեքը: Անկատկած վախենալով

գործի վատ ելքից՝ Դուռը ներկայ օգոստոսի 11-ին հազորդեց գեսպան-ներին որ «թախանձում է» պետութեանց միջամտութիւնը Կրետէն անդորրացնելու համար։ Վերջը սուլթանը, որ արդէն ետ էր կանչել Աբգուլլահ փաշացին և կղզու վալի նշանակել Սամսոնի կառավարիչ իշխանին, ստորագրեց ներքոյ դրած սահմանադրութիւնը, որին իրենց համաձայնութիւնը տւին Կրետէի քրիստոնեաց պատգամաւորները, ձեռք ձեռքի տւած էպիտրոսէի (յեղագիոխական կոմիտէի) հետ (օգոստ. 24). դորանով, որով առժամանակ դոնէ դրութիւնը խաղաղւեց։

Կրետէի համար պետութիւնների մշակած սահմանադրութեան ընդհանուր կէտերը հետեւեալն են։

1. Սուլթանը քրիստոնեաց ընդհանուր-նահանգապետ է նշանակում օ տարի ժամանակով, պետութիւնների համաձայնութեամբ։

2. Ընդհանուր-նահանգապետը վետօ-ի իրաւունք է վայելում ազգային ժողովի վճիռների և տեղական օրէնքների գործադրութեան վերաբերմամբ։ Բացի սահմանադրութեան փոփոխութիւններից, որոնք նախապէս պիտի հաստատւին սուլթանից, նոր օրէնքներն իրենց վերջնական զօրութեան մէջ մուած են համարւում երկու ամսից յետոց այն օրից, երբ արդէն նոքա ընդունւած կը լինին ազգային ժողովից։

3. Ընդհանուր-նահանգապետը նշանակում է զինւորական ասորին պաշտօնեաններին, իսկ բարձր պաշտօնեաններին նշանակում է սուլթանը։

4. Սպանների ընդհանուր թւի երկու երրորդական մասը պէտք է քրիստոնեաններից լինի, իսկ մնացած մասը—մահմեղականներից։

5. Կղզում անկարգութիւններ եղած ժամանակ ընդհանուր-նահանգապետն իրաւունք ունի անօրիննելու տաճկաց զօրքերը։ Վերջիններս մնում են իրենց սովորական տեղերում։

6. Ազգային ժողովի ընտրութիւնները կատարւում են իւրաքանչիւր երկու արաւոց յետոց։ Ազգային ժողովին նառաշընը տարեկան պիտի լինի առնւազն երկու անգամ 40—50 օր տեղութեամբ։ Ազգային ժողովը քւէարկում է բիւշէն և զբաղւում է ընդհանուր-նահանգապետի առաջարկների քննութեամբ։ Սահմանադրական օրէնքների մէջ փոփոխութիւննը մնացնելու համար պա-

հանջում է ձայների երկու երրորդական մասը։ Ազգային ժողովից դուրս ոչ մի նոր օրէնք չի կարող մոցնել երկո՞ի մէջ։

7. Բիւջէի աւելացման մասին առաջարկները չեն կարող քննել, եթէ այդ առաջարկները չեն արել ընդհանուր նահանգապետը, վարական խորհուրդը և պատշաճառոր իշխանութիւնները։

8. Իւր զօրութեան մէջ է մտնում 1887 թ.ին Փիրմանի մէջ յիշատակւած իրաւունքը, որով մաքսային եկամուտների կէսը գործադրում է կղզու օգտին։ Դուռը իւր վրայ է առնում բիւջէի այն յօդածների լրացումը, որոնց Կրետական ժողովը համաձայնութիւն չի տալ։

9. Ժանդարմերիան վերակազմում է մի յանձնաժողով, որի կազմութեան մէջ մտնում են նաև եւրոպացի սպաներ։

10. Դատական գործի վերակազմութիւնը յանձնում է մի յանձնաժողովի, որի աշխատանքներին մասնակցում են նմանապէս օտարերկրեաց իրաւաբաններ։

11. Ընդհանուր նահանգապետը, օրէնքներին համաձայն, թուլառում է զրքերի և լրագիրների հրատարակութիւնը, նմանապէս տպարաններ հիմնելը և գիտական ընկերութիւններ կազմելը։

12. Գաղթականներն Աֆրիկայոց կարող են բնակւել կղզում միայն ընդհանուր նահանգապետի թուլառութեամբ։ Օտարերկրեաց հապատակներին տրւած իրաւունքները չխանգարելով, ընդհանուր նահանգապետը կարող է կղզուց հեռացնել ապրուստի միջոց չունեցող և հասարակութեան համար պահապահ անձերին։

13. Կրետական ժողովը իր գործունեութիւնը կըսկսէ այս զիջումները հաստատւելուց վեց ամիս յետոյց Ընտրութիւնները պէտք է կատարեն 1888 թ. օրէնքի համաձայն։ Իսկ մինչեւ այդ՝ ընդհանուր նահանգապետը, վարչական խորհրդի համաձայնութեամբ, ժամանակաւոր հրամաններ կարձակէ այդ օրոշումները կատարելու վերաբերմամբ։

14. Պետութիւններն ապահովում են այս զիջումների իրագործումը։

Ա. Ա.

## ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Ղազախ գաւառի գիւղացիների ներկայ դրուժինը. Կոթի գիւղը

### ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Մի որոշ դադափար կազմելու համար Ղազախ գաւառի գիւղացիների, նրանց նիստ ու կացի, կենցաղավարութեան և մնտեսական դրութեան մասին, իրեւ օրինակ վերջնում եմ նոյն գաւառի մեծ գիւղերից մէկը—Կոթի գիւղը, որը պարունակում է իւր մէջ 200 ծուխ կամ տուն և համարում է իրեւ առաջնակարգ գիւղ. Դանաւելով Ղազախ քաղաքից շէ վերստ հեռաւորութեան վերակ՝ Թիֆլիզից ճանապարհորդը և ժամանակաց համարում է ալդ գիւղը:

Գիւղացիք պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ, որը նրանց բերքի գլխաւոր աղբիւրն է. պարապում են նաև անասնապահութեամբ և ալգեգործութեամբ. որոնցից սական շատ քիչ են օգտում: Ազատեղ գըռ մուտք չի գործել որևէ է կատարելագործութիւն, թէ հողագործութեան և թէ միւս արգիւնաբերութիւնների մէջ. մի կատարելագործած գութան չկաչ ալդ երկուհարիւր տուն ունեցող գիւղի մէջ: Հողը պարարտացնելու մասին գաղափար անգամ չունեն: Անառողնների աղբը տների առաջ կուտակւած է անաղին քանակութեամբ և գուցէ ալգակօն էլ մնաւ մինչեւ խոլերավի նորից երեալը: Ալզիները մնում են առանց նոյն իսկ փորեւլու, զինի պատրաստել բոլորովին չգիտեն: Նրանց գինիները աւելի կւասի, կամ ինչ որ թթաշրի համ ունեն: Խոզ, մաճաւանդ պանիր պատրաստելու եղանակը նոյնպէս չգիտեն: Ամբողջ գիւղում մի կտոր լաւ պանիր չի գտնվի: Մեծ մասամբ գիւղացիք սննդում են գարու կամ գարեխառն ցորենի հացով. կերակուր եփելու սովորութիւն չկաչ. մեծ մասամբ միայն Զատկին, նոր տարուն և մի քանի տօն օրերն են պատրաստում կերակուր, ան էլ Աստած կերակուր համարի: Բացի հաւերից ու ճուռերից ոչ սի ուրիշ կենդանի չեն զոհի լատուկ իրանց սննդի համար, ալ կամ մատաղ պէտք է լինի, կամ գալից վեասւած, կամ ժարուից

գլորւած ջարդ ու փշուր եղած, կամ որեէ հիւանդութիւնով վարակւած և ալին. մի խօսքով միսը իբրև կերակուր շատ հազրագիւտ է, կան տներ որոնց համար նա նոյնիսկ գոյութիւն չունի, Որքան աղքատ են կերակուրի կողմից, նոյն քան էլ աղքատ են հագուստի կողմից. Նրանց հագուստը այն է միան, ի՞չ որ իրանց հագին է, և նա մնում է կաշւի վերաէ աճնքան, մինչեւ որ փթում է ու ոչնչանում. շաբաթական մի անգամ տաք թռնիրում թափանարկելուց գատ, ոչ մի փոփոխութիւն չի կրում: Եթէ արխալուզը կամ չուխսան կարկատելու են՝ իրանք շապկանց են մնում. եթէ շապիկն է կարկատելու—նորան փոխարինում է մի որեէ կտոր, իբրև կրծկալ — Տաք ջրով լողանալու ստվարութիւն չունին, նոյն իսկ գլուխները տարին մի անգամ հազիւ լւանան: Մաքրասիրութիւն ասած բանը նրանց համար գոյութիւն չունի: Մի գիւղացու տանը ճաշու էլ էլ, սփոռոցը զգւանոք բերելու չափ կեցառու էր: Հաւերը նոյն տանն են ձու ածում ու թուխս նոտում: Կանկարասիքը շատ կեղաստ են ու աղքատիկ, տեղաշոր համարեա թէ գիւղի կէսը չունի. սրանք զիշերում են թաղիքի և կապերի մէջ: Մի գեռահաս հարս հիւանդ էր թոքերի բորբոքումով. նա պառկած էր թաղիքի վերաէ վրան զցած էր մի չուլ վերինակ, իսկ զլիսի տակ ձիու թամբը: Մի երեխան էլ նոյն տանից, որը սաստիկ հազում էր, նոյն հարուի հետ միասին էր պառկած, ուրիշ տեղաշոր չըլինելու պատճառով: Խեղճը մեռաւ. և քանի քանի ալգալիսի աղքատութեան զոհեր են գնում:

Տները գետնափոր են և խոնաւ: Ուղիղ նրա կենտրոնում չատակի վրաէ գիշեր, ցերեկի, ձմեռ ժամանակ վառւում է կրակը. այս տեղը կոչում է «օջախ»: տան պատերը և տանիքը սաստիկ սեացած են ծիխից ու մրից, օջախի գէմը տանիքի կենարունում բացւած է մի քառակուսի բաւականին մհմ անցք, որտեղից գուրս է զնում ծուխը ու ներս է թափւում թէ անձրես և թէ ձինը և որը ծառալում է իբրև միակ լուսամուտ: Տունը միշտ սառնամանիք է. նա դրսի օդից շատ քիչ է զանազանուում: Տնեցիք կրակի շուրջը նստած կարմրեցնում են իրանց սրունքները և անց են կացնում գիշերները: Այժմ մի քանի տեղ արդէն կառուցւում են փոքր ի շատէ լարմար աներ:

Տգիտութիւնը ալստեղ թագաւորում է իր բոլոր ոլժով: Մարդկանց չարաբերութիւնը կանանց հետ անտանելի է. վերջիններս զեռ ստրկական շրջանումն են. բայց այս մասին ես կ'աշխատեմ աւելի փաստերով խօսել ալի անգամ:

Անցնում եմ գիւղի կառավարութեան մասին: Դիւղը կառավարում է մի տանուտէրով որին տեղացիք քոփւա են կոչում և երեք հաշտարար դատաւորներով, որոնց կոչում են ռուսերէն բառով սուղեա: Մրանք ընտրում են ձաշների բազմութեամբ տեղական պլիստաւի նախագահութեամբ երեք տարի ժամանակով: Թէ տանուտէրը և թէ սուղեաները ուս-

Ճիկ չեն ստանում, բայց միայն ազատւած են իրանց համելիք հարկերից։ Բացի սովորական վճիռներ կաւացնելուց, գիւղի չալտնի մարդկանց հետ մլախին, ընարում են հաշւետեսներ՝ տեղական խօսքով «թովջիքար», որոնք կազմում են հարկի ցուցակը ու բաժանում են ծուխերի վերակ ըստ կարողութեան։ Բայց մեծ մասամբ զեղծումներ են պատահում, և սա մի չարիք է գիւղացիների համար, որի չնորհիս սրանք դառնում են համարեա վերջին աղքասներ։

Իբրև օրինակ ազդ ցուցակներից ես կը բերեմ ակտեղ ուղղակի բնագրից թովջու (գիւղական հարկերի և ծախքերի) հաշիւը։

1891 թւի յունեարի 30-ին, Թովջի։

Թուրքի. Կոպ.

|                                                                    |       |
|--------------------------------------------------------------------|-------|
| Հահնեանց կարապետին պարուք (գիւղը պարտ է)                           | 335   |
| Եգոր Բեգին նոյնակս                                                 | 50    |
| Հաքար Աղին »                                                       | 350   |
| Վորդչուն (արօտատիղերին հսկող գիւղից նշանակւած ոռօճիկ)              | 15    |
| Արզմանց Շաքարին անցեալ տարւակ տոնլուղը (ոռօճիկը)                   | 7     |
| Պաղւողին բեզար <sup>1)</sup>                                       | 35    |
| Ալբեգանց Ամրիսանին պարտք                                           | 3     |
| Խեչկանց Ալիսանին տոնլուղը                                          | 21    |
| Անցիալ տարւակ զարաւուլին                                           | 15    |
| Ուհանէս Թումանովին զորուղի (կապալ արօտատեղի)                       | 55 33 |
| Նահնանց Օսէփից ստացած զեմլամօր մասին <sup>2)</sup>                 | 1     |
| Ռոկանի զուքնի ծախս (պոլիցիականների համար)                          | 28 5  |
| Լզարանց Դրիգորին և Թումանովին (ուսումնարանի լուսամուտի համար)      | 5 60  |
| Բալրամանց Ղուկասին նրա առած հաւ, ձու և ալին (պոլիցիականների համար) | 7 20  |
| Մամանց զուքանի ծախս Պոլիցիականների համար)                          | 7 90  |
| Վալնանց թողլուն (մի տարեկան զաւը) (նոյնակս)                        | 2     |
| Վերկանց Ուհանէսից առած ծիու քրէհը (նոյնակս)                        | 1     |
| Հեպնանց Ստէփանին արագի փող (նոյնակս)                               | 60    |
| Գողնանց թողլուն (նոյնակս)                                          | 2     |
| Նիկողոսի ծիու քրէհը զեմլամօր համար (նոյնակս)                       | 2 50  |
| Զանւելանց Առաքելի և Բարանց թողլուն (նոյնակս)                       | 4     |
| Արզմանանցից չարչով ռամկէկ                                          | 3     |

<sup>1)</sup> Պետական ճանապարհներ շինելու համար գիւղը փոխանակ սակեր ուղարկելու վճարում է փողով։

<sup>2)</sup> Զեմլեմէր=երկրաչափ։

|                                                                                                                 |            | Ոռութիւն | Կուպ. |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------|------------|----------|-------|
| Ծախուռ զործելի (աճուի)                                                                                          | (նունակէս) | 30       |       |
| Սեփլսանանց Ուհանսին զործելի մասին                                                                               |            | 6        |       |
| Մկրտումի դուքանի ծախս                                                                                           | (նունակէս) | 12       | 30    |
| Մաթումին գինու փող                                                                                              | (նունակէս) | 4        |       |
| Արովեանց Մուսին մորեխի մասին ծախսած                                                                             |            | 1        | 60    |
| Զալնանց Սէրդնին պարտք.                                                                                          |            | 3        |       |
| Ռէւազի ձիու քրէչ:                                                                                               |            | 1        |       |
| Ուհանանց Պետրոսին սանաթի <sup>1)</sup> զեմլամոր համար                                                           |            | 10       |       |
| Ղաղնանց Աթինի արզի <sup>2)</sup> փողը (գանգատի).                                                                |            | 7        |       |
| Քոխուին ու եսաւուլներին ռոճիկ <sup>3)</sup>                                                                     |            | 170      |       |
| Վերիներին <sup>4)</sup> .                                                                                       |            | 20       |       |
| Դարբնանց Ահակին պարտք                                                                                           |            | 6        |       |
| Հոռկանց Սարքսի ծախսածը                                                                                          |            | 10       |       |
|                                                                                                                 |            | 1.278    | 58    |
| Սրա վրաէ աւելացնենք տէրունական հարկի կիսամեակը.                                                                 |            | 961      | 46    |
|                                                                                                                 | Ընդամէնը   | 2.240    | 4     |
| Ստորագրած են 10 մարդ, — Ուհանէս Սեփլսանով, Օսէփ Ղազարով,<br>Սհակ Ղաղարով և այլն. տանուտէր Ղարիբով (իւր կնիքով). |            |          |       |
| Կրկին 1891 թ. 10-ին մարտի. Թովքի.                                                                               |            |          |       |
| Ուսումնարանին                                                                                                   |            | 45       |       |
| Բաղեղզի (աւաղակներից գիւղը զերծ պահելու համար վճա-<br>րում է տարեկան 20 ռ. կառավարութեան)                       |            | 60       |       |
| Սլահւի թուրքին                                                                                                  |            | 40       |       |
| Քոխուի ռոճիկը                                                                                                   |            | 150      |       |
| Պատւոտին (բեզար)                                                                                                |            | 26       |       |
| Ոսկանի պարտքը                                                                                                   |            | 150      |       |
| Ուհանէսի պարտքը                                                                                                 |            | 111      | 50    |
|                                                                                                                 | Ընդամէնը   | 602      | 50    |
| Կրկին 1891 թւականի 21-ին սեպտեմբերի. Թովքի.                                                                     |            |          |       |
| Եաքար աղի տղին պարտք.                                                                                           |            | 1.636    |       |
| Ալեքսի Սարատիկովին պարտք.                                                                                       |            | 1.083    | 40    |

<sup>1)</sup> Սանադ—մուրհակ, —<sup>2)</sup> Արզա—գանգատ,

<sup>3)</sup> 1891 թւին տանուտէրը նշանակւած էր կառավարութեան՝ կողմից,  
որը և ստանում էր զիւղից ռոճիկ իւր երկու եսաւուլների հետ միասին:

<sup>4)</sup> Զինւորակոչութեան համար:

|                                              | Ոռութիւն | Կոպ. |
|----------------------------------------------|----------|------|
| Խարջի վերջին տրէտը <sup>5)</sup> .           | 1.644    | 68   |
| Գանջի ուսումնաբանին <sup>7)</sup>            | 91       |      |
| Պաղւոտի փող (բեղար)                          | 50       |      |
| Պոլեսովչեկի համար <sup>8)</sup>              | 64       |      |
| Բազեզզնի <sup>9)</sup>                       | 60       |      |
| Էլի իրան                                     | 45       |      |
| Զինւորագրութեան վեքիներին                    | 20       |      |
| Նիկողոսի գողացած ձիու փոխարէն <sup>10)</sup> | 44       |      |
| Աղբեզանց Գրիգորի գողացած եղներին             | 50       |      |
| Պրաւիտելսուենինի ստարշնին <sup>11)</sup>     | 111      |      |
| Գիւղի պարտքը Պողնանց Ուհանին                 | 40       |      |
| Պրիատուալի համար զառներ                      | 4        |      |
| Քոխւի ուօճիկը մի ամսւան                      | 50       |      |

Հ.093 8

Ուրեմն մի տարւակ ընթացքում հարկի անունով գիւղից հաւաքել է 7.935 ոռութիւն 62 կոպէկ, որից հանելով խակական հարկը, այն է 2.506 ռ. 14 կ., մնում է 5.429 ռ. 48 կ., ալ հասարակաց ծախքերո դա մի այնպիսի ծանր պահանջ է 200 տուն ունեցող առանց այն էլ աղքատ ժողովի գից, որ այն լրացնելու համար պարզ է որ գիւղացիք կը նկատի զարնութիւնի սոկոսուաբեր պարտքերի տակ, որից ինչպէս ստորև կը պարզէի, տընքում է նա ալսոր Գիւղը մի անգամ դժբաղզութիւն է ունեցած վերև վշած Շաքար աղի տղից և Ալեքսուց պարտք վերցնել. սա այնպիսի հանգամանքներում է վերցրած, երբ գիւղը համարեա ամբողջապէս թշւառ դրութեան մէջ է եղել, ոչ ոք չի կարողացել իւր բաժին հարկը վճարել և ստիպւած պարտք են վերցրել ամբողջ գիւղի անունով: Շաքար աղի տղից վերցրել են 1.100 ոռութիւն 25  $\%$ -ով. թէ որքան է վճարւած՝ չկարողացաւ որոշ իմանալ, միան ակսքանը որ բացի այն 1.986 ոռութուց, որ նիրկաէ տարւակ հաշուի մէջ է մտնում, այս ըստէիս էլի նա պահանջում է 1.400 ոռութիւն:—Ալէքսուց վերցրել են 900 ոռութիւն 40  $\%$ -ով,

<sup>5)</sup> Տրէտ (Երես) ոռուաց բառ—քառամնեակ:

<sup>7)</sup> Տարեկան 91 ոռութիւն գիւղը վճարում է Գանջանակ քաղաքի արհեստաւորաց զպրոցին. և մինչև հիմա գիւղը ոչ մի սան չի ունեցել այլ զըպրոցում:

<sup>8)</sup> Անտառապահի՝ համար, որ այժմ չկաւ:

<sup>9)</sup> Ճանասկարհածախս անտառապահին:

<sup>10)</sup> Գիւղն է վճարում եթէ գողացողը չի բռնւում:

<sup>11)</sup> Տէրութիւնից նշանակւած աւագ:

որը և այս տարի վճարած է։ Երեք տարւակ մէջ միան տոկոս է տրւած 1.100 ռուբլի, ուրեմն ընդամէնը նա ստացել է 2.000 ռուբլի։

Հետաքրքրիր է իւր բովանդակութեամբ նունպէս 1895 թ-նի երկրորդ կիսամեակի հարկի ցուցակը որը կազմւած էր նուեմբեր ամսւակ մէջ։

1895 նոյեմբեր 5-ին Թովչի։

|                                                        |          |
|--------------------------------------------------------|----------|
| Ղազնանց Օսէփին պարտքը որը տւած է լեզզուն <sup>1)</sup> | 88       |
| Պրիստաւի բռնած րազեզդնի (թղթատար)                      | 53       |
| Սալդաթի վեքիլներին (զինորակոչութեան)                   | 20       |
| Պրիստաւի համար ծախս Օհանէսի գուքանից                   | 17       |
| Ուկանի գուքանից                                        | 7 90     |
| Խւզ Բարանց տանից                                       | 2        |
| Ճուտ, ձու                                              | 1        |
| Թողլի (որդ զառներ)                                     | 11       |
| Գանւելոնց Օսէփից թողլի                                 | 2        |
| Անտօնանց Զաքարից արագ                                  | 80       |
| Պրիստաւի ձիերի համար խօս Բարանց Ղահրամանից             | 3        |
| Պրիսքտաւի-Միխակի գուքանի ծախս                          | 3        |
| Զանւելոնց Եզորի գուքանի ծախս                           | 1        |
| Զիմիսաչանց Դիգոլից չաչչաքար                            | 2 20     |
| Մելքանց Զաքարից արագ                                   | 50       |
| Ալիւր Մէջնանց Օւհանէսից                                | 1        |
| Քոխւէն ծախսել է պաշտոնական գործերում                   | 15       |
| Դիլիջանում քոխւի ու սուզիաների ծախսածը                 | 13       |
| Դարձեր քոխւին խարջլուղ (ձեռաց փող)                     | 10       |
| Երկրորդ կիսամեակի հարկը                                | 1.409 40 |
|                                                        | 1.690 70 |

Աչղքան շոալ ծախսած փողերը գուրս են գալիս օրւակ հացի կարու մերկ ու թշւառ գիտացուց։

(Վերջը լաջորդ անգամ)

<sup>1)</sup> Այս լեզզուց գիւղը դարձեալ առաջին կիսամեակի հարկի համար վերցնում է պարտք 720 ռուբլի 40% Յ ամիս ժամանակով, այն պայմանով որ եթէ ժամանակին չվճարւի գիւղը պարտաւորում է օրական 8 ռուբլի տուգանք վճարէ (ԱԵՍՏՈՋԷԹ)։—Ուշացնում են ժամանակից 12 օր գործը ընկնում է գանգատի և այդ լեզզին դատաւորի վճուի հիման վրա ստանում է տուգանք՝ զ 888 ռուբլի, այնպէս որ Յ ամիս 12 օրւակ մէջ 720 ռուբլին տալիս է տոկոս 168 ռուբլի որ անում է 95%.

## ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

ԲԺ. ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

Վիճակագրական տեղեկութիւններ Մոսկվայի համալսարանը  
եւ Տեխնիկական Ուսումնարանը աւարտած հայերի մասին:

1895 թւականի սեպտեմբերին Մոսկվայի հայ ուսանողութիւնը մտա-  
դիր էր տօնել «Ժողով»-ի գոյութեան 40 ամեակը և ազդ նպատակով պատ-  
րաստութիւններ էր տեսնում՝ 1) «Ժողովի» պատմութիւնը կազմելու,  
2) Մոսկվայի հայ ուսանողների մասին վիճակագրական տեղեկութիւններ  
հաւաքելու և 3) չքաւոր ուսանողներին նպաստելու գործը աւելի հաստատ  
հիմունքների վրաց գնելու:

Առաջին և երկրորդ նպատակի համար մշակւած էին մի շարք հար-  
ցեր, որ առանձին թերթիկներով տարածւած էին Մոսկվայի նախկին  
հայ ուսանողների մէջ: Մասնախմբի հրաւրին, որ պատասխաննեն ազդ հար-  
ցերին, արձագանք էին տևել միմիացն 12 հոգի: Տարաբաղդաբար, ազդ  
պատասխաններից էլ հնարաւորութիւն չունեցանք օգտւելու: Մի քանի  
պատասխաններ գրւել էին բաւականին ընդարձակ և կարող էին լաւ  
նիւթեր առաջ Մոսկվայի հայ ուսանողութեան պատմութեան համար:

Մտադրած տօնը չկատարւեց թէ նիւթի պակասութեան պատճա-  
ռով և թէ ան սուզի պատճառով, որով համակւած էր ամբողջ հայ ու-  
սանողութիւնը հայ հասարակութեան հետ միասին, ողբալով Տաճկառականի  
նահատակներին: Բայց վիճակագրական տեղեկութիւնների համար  
մի քանի նիւթեր հաւաքւել են, որ և աւելորդ չեմ համարում լուս ըն-  
ձանել:

Մոսկվայի համալսարանի ուսանողներին վերաբերեալ տեղեկութիւնները վերցրած են „Ծույզու ստուդենտու Մոսկովսկаго Պատրութիւններից“ հրատարակութիւններից, Ձոկելով հայերին միաւ ազգու-  
թիւններից: Մենք կարողացել ենք օգտւել միան 1862 թւականից մին-  
չ 1894 թւականի ցուցակներից,—ընդամենը 33 տարւար միւս թւա-

կաններինը՝ 1862 թ.-ից առաջ և 1894 թ.-ից լետու ցուցակները չկարողացանք ձեռք բերել:

Որպէս զի ընթերցողի համար հեշտ լինի միանգամից հարցի հետ ծանօթանալ, մենք մեր ամբողջ աշխատութիւնը ներկայացրել ենք ստորև բերած աղիւսակի մէջ. ճախից դէպի աջ կողմը տողերը ցուց են տալիս՝ թէ որքան ուսանող է մտել իւրաքանչիւր տարի Մոսկվակի համալսարանի ամեն մի բաժինը և նրանց ընդհանուր թիւը. վերսից ներքետողերը ցուց են տալիս այդ թմբի ելեկչները տարէցտարի. ներքեի տողը ցուց է տալիս հաչ ուսանողների ընդհանուր թիւը 33 տարւաւ ընթացքում՝ թէ ամեն մի բաժնում առանձին-առանձին և թէ բոլոր բաժիններում միասին:

### Ա Հ Ի Ւ Ս Ա Կ

| Թւական | Բժշկ. | Իրաւար. | Պատմ.   | Բնագ. | Մաթեմ. | Ընդհանուր<br>թիւը. |
|--------|-------|---------|---------|-------|--------|--------------------|
|        |       |         | լեզւագ. |       |        |                    |
| 1862   | 5     | 3       | 1       | 2     | —      | 11                 |
| 1863   | 6     | 3       | —       | 1     | —      | 10                 |
| 1864   | —     | 4       | —       | 2     | —      | 6                  |
| 1865   | 1     | 7       | 1       | 3     | 1      | 13                 |
| 1866   | 3     | 7       | —       | —     | —      | 10                 |
| 1867   | —     | 7       | —       | —     | —      | 7                  |
| 1868   | 5     | 6       | —       | —     | —      | 11                 |
| 1869   | —     | 7       | —       | —     | —      | 7                  |
| 1870   | 2     | 1       | —       | 1     | 1      | 5                  |
| 1871   | 5     | 1       | —       | —     | —      | 6                  |
| 1872   | —     | 3       | —       | —     | —      | 3                  |
| 1873   | 2     | —       | —       | —     | —      | 2                  |
| 1874   | 2     | 1       | 1       | —     | —      | 4                  |
| 1875   | 4     | —       | —       | —     | —      | 4                  |
| 1876   | 7     | 3       | —       | —     | —      | 10                 |
| 1877   | 2     | 2       | 3       | —     | —      | 7                  |
| 1878   | 5     | 2       | 2       | —     | 2      | 11                 |
| 1879   | 10    | 2       | 3       | —     | 1      | 16                 |
| 1880   | 10    | 4       | —       | 1     | 1      | 16                 |
| 1881   | 9     | 5       | —       | 1     | 1      | 16                 |
| 1882   | 8     | 3       | —       | 1     | 4      | 16                 |
| 1883   | 2     | 8       | 4       | 2     | 1      | 17                 |
| 1884   | 3     | 7       | 2       | 2     | 2      | 16                 |
| 1885   | 4     | 8       | 4       | 3     | 2      | 21                 |
| 1886   | 6     | 4       | 1       | —     | 3      | 14                 |

| Թւական        | Բժշկ. | Իրաւաբ. | Պատմ. | Բնագ. | Մատեմ. | Ընդհանուր<br>թիւը. |
|---------------|-------|---------|-------|-------|--------|--------------------|
|               |       | լեզւագ. |       |       |        |                    |
| 1887          | 4     | 12      | 1     | 1     | 2      | 20                 |
| 1888          | 10    | 11      | —     | 1     | 2      | 24                 |
| 1889          | 15    | 4       | —     | 1     | 9      | 29                 |
| 1890          | 4     | 11      | —     | 2     | 2      | 19                 |
| 1891          | 5     | 6       | 1     | —     | 1      | 13                 |
| 1892          | 7     | 8       | 2     | 4     | 1      | 22                 |
| 1893          | 11    | 7       | 2     | 1     | 2      | 23                 |
| 1894          | 9     | 10      | 1     | 5     | 6      | 31                 |
| Ընդհանուր թիւ | 166   | 167     | 29    | 34    | 44     | 440                |
| %             | 37,1% | 38,0%   | 6,6%  | 7,7%  | 10%    |                    |

Այս ազիւսակից երեսում է հետևեալը.

1. Իրաւաբանական և բժշկական բաժիններում հայ ուսանողների թիւը եղել է ամենաշատը և երկու բաժնում էլ համարեա հաւասար. 38% իրաւաբան, 37,7% բժշկ. Երրորդ տեղը բռնում է Փիզիկօմաթեմատիկական բաժնի մաթեմատիկական մասը—10%, չորրորդ տեղը—Փիզիկօմաթեմատիկական բաժնի բնագիտական մասը, և վերջին տեղը միայն պատմական-լեզւագիտական բաժինը:

2. Հայ ուսանողների ընդհանուր թիւը Մոսկվակի համալսարանում 33 տարւակ ընթացքում եղել է 440, որ ասել է թէ իրաքանչիւր տարի Մոսկվակի համալսարանը միջին թւով մտել է 13—14 հայ ուսանող. Մոսկվակի համալսարանը մտնող հայ ուսանողների թիւը աւելանալով՝ վերջին 1894 թւին հասել է 31, իսկ վերջին 3 տարում՝ 20-ից չի իջել:

Այս բոլոր ժամանակամիջոցում հայերը կազմել են Մոսկվակի համալսարանի ուսանողների ընդհանուր թվի 2—3%:

1885 թւականից մինչև 1895 թ. Մոսկվակի համալսարանում եղել է 212 հայ ուսանող, 1885 թւից սկսած մենք ունինք ուսանողների մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ. Վերջիններից երեսում է որ հայ ուսանողները բաժնում են ըստ զասակարգերի հետևեալ կերպով.

Հոգևորական 12 հոգի (5,7%), գեղջկական (քրեստյանское) 9-ը (4,2%), տոնմական պատւաւոր քաղաքացի 15, վաճառակի. 38, մնչանին 33, քաղաքացի 23, աղնաւական 18 (8,5%), պաշտօնաւորների (чиновники) ուրիշ 64 (30,2%). Եթէ մենք տոնմական պատւաւոր քաղաքացիներին, մնչանիններին և քաղաքացիններին միացնենք վաճառականների հետ, կարծում ենք որ մեծ սխալ արած չենք լինի. այդ կարգի մարդիկ անազին մեծամասնութեամբ հայերիս մօտ պատկանում են վաճառական

դասակարգին, այն ժամանակ վաճառականական ծագումով կ'ունենանք 109 հոգի, որ անում է 51,4%<sub>0</sub>, ազսինքն Մոսկվայի համալսարանի հայուսանողների կեսից աւելին:

1884-ից մինչև 1895 թւականը (11 տարում) Մոսկվայի համալսարանում եղել է 232 հայ, Դրանք բաժանում են ըստ նահանգների այս կերպով. 74 հոգի հիւսիսային Ռուսաստանի և միջին Ռուսաստանի քաղաքներից են, այսինքն՝ Եկատերինողարից, Ստարոպոլից, Ն. Նախիշեանից, Արմափիրից, Մողդոկից, Պղլարից, Հաշտարխանից, Սիմֆերոպոլից և ուրիշ. զբանք կազմում են ընդհանուր թվի 31,9%<sub>0</sub>. Երկուուր Կ. Պոլսից են: Խակ մնացած 156 հոգին, 68%<sub>0</sub>—Անդրկոմիկասի նահանգներից, այն է Թիֆլիսի նահանգ 60 հոգի (2 5., 9%<sub>0</sub>), Երևանի նահանգ 43 հ. (18, 5. %<sub>0</sub>), Գանձակի 37, (16%<sub>0</sub>), Բաքվի 4, (1, 7%<sub>0</sub>), Դերբենդի 4 (1, 7%<sub>0</sub>), Ղարաբի 5 (2, 1%<sub>0</sub>), Քութափիսի նահանգից 31 հոգի (1, 4%<sub>0</sub>):

Տեղեկութիւններ Մոսկվայի Տեխնիկական ուսանողներից աւարտածների մասին <sup>1)</sup>:

Մոսկվայի Տեխնիկական ուսումնարանի ուսանողների թաւում առաջին անգամ հայ աւարտում է 1875 թ-ին, մի Ներքին Ազուլեցի. մինչև 1880 թ. ազնու հայ չի երեսու. այնուհետև 1880 թւականին աւարտում է 2 հոգի, 1881-ին 2 հոգի, 1883-ին 1, 1885-ին 2, 1884-ին 1, 1885 ին և 86-ին չկայ, 1887-ին 1, 1888-ին 1, 1889-ին չկայ, 1890-ին չկայ, 1891-ին 1, 1892-ին 4, 1893-ին 2, 1894-ին 2, 1895-ին 3. Ընդամենը մինչև 1895 թիւը Տեխնիկական ուսումնարանը աւարտել է 23 հայ. 1895 թ. Տեխն. ուսումնարանում ուսանում էին 19 հայ, որ կազմում է ուսումնարանի բոլոր ուսանողների 3, 5. %<sub>0</sub>:

Այդ 23 աւարտածներից 9-ը ծառայում են Բաքվի գործարաններում, 3-ը ուսուցիչ են, 2 ը ծառակում են երկաթուղում, 2-ը վախճանաւած են, մէկը վաճառական է, միւսների մասին տեղեկութիւններ չունինք. Մինչև 1895 թ. Տեխնիկական ուսումնարանը աւարտել են 1.500 հոգի, նրանց մէջ հայերը կազմում են 1,6%<sub>0</sub>:

Վերև բերած վիճակագրական տեղեկութիւնները Մոսկվայի հայ ուսանողների մասին շատ քիչ նիւթ են, տալիս եղբակացութեան համար բայց եթէ նոյն տեսակ տեղեկութիւններ հաւաքւեն միւս բարձրագուն ուսումնարաններում աւարտած հայերի մասին, այն ժամանակ կարելի կը լինէր ստանալ շատ շահեկան եղբակացութիւններ:

<sup>1)</sup>) Տեխն. ուս. ուսանողների մասին տեղեկութիւններ հասցրել է ուսանող Աղ. Աղամեան, այժմ աւարտած.

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑԻՑ

Վ. ՓԱՓԱՉԵԱՆԻ

VI

Լոնդոն.

Իմ այս նամակը, հաւաստի եմ որ, շատ շատերի համար չոր է լինելու, որովհետև նւիրելու եմ Բրիտանական միւզէի նկարագրութեան։ Ինչ որ է լինէր, եթէ մեծ հասարակութիւնը լորանջելով կարգաչ նրան, դրա հակառակ, պատմութիւնով, մանաւանդ արեելնան հին աղղերի պատմութիւնով, հետաքրքրողներին՝ իմ նկարագրութիւնը մի քէ չպիտանի կարող է լինել։

Բրիտանական միւզէն մի քանի երեսների նկարագրութիւնով չէ կարող ներկայանալ ընթերցողի առաջ։ Նրա բովանդակութեան ցանկը, չոր ցանկը միայն՝ մի մեծահասոր զիրք է կաղմում։ իսկ ինձ 5 օր, օրական 4 ժամ պէտք եղաւ, մի թեթև հայեցք ձգելու համար ինչ որ տեղաւորւած կաչ այդ հսկաչ շէնքի մէջ։

Կենդանի պատմութիւն և էտնոգրաֆիա է նա, պատմութեան, մանաւանդ նախապատմական (պրեհիստորիզմ) քաղաքակրթութիւն։ Ընդհանուր առամամբ Բրիտանական միւզէն կարելի է անւանել հին աղղերի պատմաէնողրաֆիական թանգարան։ Ազդտեղ մարդ կարող է կատարելապէս ուսումնասիրել նդիպտոսն ու Ասիրիան, Յունաստանն ու Հռոմելը, աչնպէս որ ոչ մի զիրք չէ կարող նրա մասուցած ծառալութիւնը կատարել։

Մի մաւալ օր էր երբ առաջին անգամ միւզէն մտավ։ Մի վանդակորմ, ապա մի կարճ բագ և ահա երեկո մեր առաջ շէնքի երեք նախագաւիթների վեհափառ երեք եռանկիւնի ճակատները, որոնցից միջինն էր մուտաքը, Նրանց ծագքը, դրւած բարձր ու կրկնակի իոնական սիւների վրա գետնից բարձր՝ լիշեցնում են լուսական պարզ ու վսեմ տաճարների աչն սիւնագարդ նախագաւիթները, որոնք յրջապատում են՝ որպէս պատշգամներ՝ բուն տաճարը և որոնցից մէկի սիւնի մօտ կանգնած՝ մարդ հաղիւ մի մրջիւնի մեծութեան է երեսում։ Մարդ իրեն երևակալում է

Պարթենոնի մուտքի ռուաջ՝ ԶԷ որ Պարթենոնն էլ Միներւալի այդ շքեղ տաճարը, ունիքը ազգիսի մի մուտք դորյական կրկնակի սիւների վրայ ազպէս եռամսկինի ճակատ (fronton) և այդ ճակատի վրայ մի շարք (46) բարձրաքանդակներ (հօ-ու-ըլիէֆ) Օլիմպը ներկալացնող. իսկ այստեղ Բրիտանական միւզէն իր մուտքի ճակատի վրայ ունի շարած 7 մուսաների բարձրաքանդակները.

Ծուխից սեացած սիւների թուխ գոնը և նրանց պատկառանք ազդող բարձրութիւնը, տիրող լուսութիւնը՝ նորոգում էին իմ մէջ Ակրոպոլը իր աչժմեան թէն գրեթէ աւերակ՝ բաց անցեալի մեծութիւնը պատմող տաճարներով. Գլխարկս վերցրի. անցանք լուռ կանգնած զոնապանի մօսով. մուտքը ձրի է—ե մեզ գտանք ներքին չարկի մեծ սրահների մէջ, ուր դէպի ձախ մարդ տեսնում է լուսական-ու-ումանական սրահը Տիբերիոսի, Անտոնիոսի, Սեպտիմոսի, Կարակալլայի և այլ հոռոմէական պատմական անձնաւորութիւնների բիւտերը պատերի տակ, այլ կոպիտ լիշատահարների մօտ զրւած:

Բաց մի քանի քալլ—ե ես գտնուում էի հին, Քրիստոսից հակարաւոր տարիներ առաջ ծաղկած արեելիան քաղաքակրթութեան մէջ:

Մը լաճն մուտք բացւում է դէպի Նգիպտական երկար սրահները. Մուտքի երկու կողմը ցցւած են մարդազլուխ ցուլեր և առիւծներ, որոնք հօ-ու-ըլիէֆներ են միակտուր քարերի վրայ, իսկ ֆոնում ունին անհամար քանակութեամբ բեռուազիր արձանազրութիւններ. Այդ թեաւոր ցուլերը, որոնք զրւած են եղել ասիրիական թագաւորական պալատի մօտ, հանւած են Նիմրուդի պալատից հոչակաւոր Լազերդի ձեռքով. Խնչպէս քիչ լետոց պլատ տեսնենք, Լազերդին շատ բանով է պարտական Բրիտանական միւզէն. Նիմրուդի պալատը պատկանում էր ասորոց Ասսուր նազիր Պալ թաղաւորին (885-860 Ք. ա.):

Երկրորդ առիւծը, որին կպցրած կաէ Խորսաբագից տարած Ասսուր ասորական աստուծոց կիսաքանդակը (բա-ըլիէֆը), գտել է Ռէլնսընը՝ Ազպիսի թեաւոր ցուլի պատկեր անշուշտ տեսած կը լինի իւրաքանչիւր անձ որ քրքրել է մի պատկերազրդ պատմութեան գիրք. Նրանք զըն-լում էին պալատների և տաճարների մուտքերի երկու կողքերում որպիս պահապաններ, և մի տեսակ կերպարանափոխւած եգիպտական սփինքսներ էին:

Ասորաստանի քածինը միւզէի մէջ՝ ազպիսով բացւում է երկու թեաւոր առիւծներով և նրա զիմաց՝ երկու թեաւոր ցուլերալի, որոնց միջն անցքը տաճում է դէպի մի այլ աւելի նեղ որահ, նւիրւած բացառապէս Խորսաբագից հանւած լիշատակարանների, Սարգոնեան կիսաքանդ սկների և մանր ու մեծ Ասսիրիական մնացորդների:

Դէպի ձախ է որ մտնում է Ասսիրիական մեծ բաժինը՝ մուտքի մօտ

ունենալով Ասսուր-Նազիր Պալի մի օբելիսկը, վիշտակարանը, կիսաքանդակների մողելներ և Ասսուր աստուծոյ մի ուրիշ կիսաքանդակը:

Բայց, ինձ թւում է որ, ակտուկ հար աւոր է ընթերցողին մի համառուս գաղափար տալ Ասսիրիական քանդակագործութեան մասին:

Ասսիրիական մեղ հասած մի քանի չնչին ամբողջ արձանները (statue) ապացուցանում են որ արձանագործութիւնը ծաղկած չէ եղել և արհեստի ամբողջ ովժը՝ ի գործ է գրւած քանդակագործութեան վրայ Ամբողջ արձաններ մի քանի հատ միացն մեզ հասել են, և դրանցից ամենազգիսաւորն է Բրիտանական միւզէում իմ տեսած Ասսուր-Նազիր-Ապալինը, որ Ներկայացնում է այդ թագաւորին՝ իր առաջը բաց պարեղուսով և առանց զարդերին Մօրուքը և մաղերը չարդարած են. արձանը շինւած է շատ անարւեստ կիրարու:

Դրանց փախարէն ասսիրիացիք շինում էին օբելիսկներ, որոնք մի տեսակ կէս կիսաքանդակ (բառըլիէֆ) և կէս արձան են. Դրանցից մեացել է միւզէում զտնուղ Սամսի-Բասման Ռ-ի կոթողը (stèle) որ միակտուր քար է տրապեզաձե, դրսի կողքերը բնեռածե արձանագործութիւններով լիքը, որոնք պատմում են թագաւորի ամբողջ գործունէութիւնը, Ներքին երեսում գտնում է թագաւորի բարձրաքանդակը (հօ-ըլիէֆ) շատ աւելի դուրս ցցւած կերպով քան ուրիշ բարձրաւանդակներ. Այս զրեթէ-արձանը շինւած է նրբութեամբ և համարձակ ձեռքի գործ է, Բուն օբելիսկներ, որոնք սկի նման չեն եղիաբական հսկալական կոթողներին և որոնք աւելի փաքը են և խղճալի, Ասսիրիական էլ կանգնեցնում էին ի վիշտակ մի պատերազմի կամ մի չաղթութեան, ինչպէս այդ անում են այժմ էլ:

Ինչ որ բնորոշում է Ասսիրիական քանդակագործութիւնը զա ոչ թէ ամբողջ երեսով կամ գոնէ  $\frac{3}{4}$  պրոֆիլով պատկերներն են, այլ կէս դէմքով և կէս մարմնով քանդակած ուլիէֆները:

՚Ի դէպ է ասել որ չնակելով Ասսիրիական աւելի մօտ է եղել լեռների քան Քաղցեան և աւելի չարմարութիւն է ունեցել գործածել իր շէնքերի ու քանդակների համար քարեր, սական նինւէի գրացիութեան մէջ գըտնելով ալեբաստր, նա այլես չէ դիմել ուրիշ երկիրներից քարեր կամ պորֆիր բերելու, ինչպէս որ քաղցէացիք անում էին: Ալեբաստրի վրաէ քանդակագրծութիւնը շատ հեշտանում էր, որովհեած նա մի տեսակ կրաքին կաւ էր, որի վրաէ քանդակագործի գրիչը կարողանում էր հեշտութեամբ շարժւել ամէն ուղղութեամբ:

Ասսիրիական կիսաքանդակների վրաէ ներկաչացող գրէթէ բոլոր պատկերները կրում են մինչեւ ոսք ձգւող երկար պարեղուսներ, բազուկների վրաէ ունին ապարանջաններ, իսկ երկար մազներն ու մօրուքները գուղղացրած են ու չարդարած, կարծես շարք-շարք գործած-հիւսած:

Բոլոր կիսաքանդակները մեծ մասամբ կրօնա-դիցաքանական

(mythogique) բովանդակութիւն ունին. հազիւ են երեսմ պատերազմական կամ այլ բովանդակութեամբ: Բոլորը կամ աստւածացրած դիւցազներ են, կամ մարդկացին մարմնով արծւալին գլխով և թերով ոգիներ, կամ առիւծներ և ցուեր թեաւորած և կամ կրօնական նւիրաբերութիւններ և զարգերութիւններ: Այնքան շատ են դրանք, այնքան անհամար, որ հաջւած է՝ եթէ միան Սարգոնի Խորսաբագում ունեցած պալատի սրահների կիսաքանդակները միմեանց կրղքին դրեն—կը կազմն երկու կիլոմետր տարածութեամբ մի պատւական մալթ: Միմիան Թրիտանական միւզէի մէջ մարդ լոգնում է նուն իսկ մի հաշեացք նետելով այն բաղմաթիւ քանդակների վրայ, որոնք սրահների մէջ էլ բաց պատ չեն թողել:

Պարզ է որ նկարները նախնական են, ալսինքն չաճախ զուրկ պերսպեկտիվից. այնուամենաշնիւ կան քանդակներ, որոնք սքանչելի նրբութիւն ունին: Օրինակ՝ Տիգլատ-Պելէսերի ժամանակւաց մի քանդակ, որ ներկալացնում է եղան սալեր, վրան մանուկներ ու կանաքք, ետեւց ոչխարներ ու այծեր... աչդ բոլորը խիստ նրբութեամբ քանդակած: Նորբ է կերտուած նաև մի իսկական մեծութեամբ առիւծի հօռը՝ էֆը, որ գտնուում է միւզէի մէջ: Առիւծի դլումն ու մարմինը ամեն կողմից կատարեալ են, ճիշտ է նաև պոչը, բացառութեամբ փնջիկի, որ չարդարած է որպէս ասսիրիական մազեր: Ամենամաքուր մնացած և մեծ ճարտարութեամբ արտադարտող կիսաքանդակներն են նրանք, որոնք ներկացնում են Ասուր-Նազիր Պալը՝ ետեւին ունենալով արծւագլուխն Ասուր պահապան աստւածը և կամ թագաւորներ, որոնք նւէրներ են կախում մի միստիկական նւիրական ծառի ճիւզերից: Փաղլէալի ժողովրդին գիտութիւնը սովորեցնող և մարզկութեան մէջ արնեսաները ներմուծող Օհաննէս անունով Զուկ-աստւածը, որ ցերեկով մնանում էր մարդկանց մէջ և զիշելով ծովը<sup>1)</sup>, ունի մի կիսաքանդ սկ միւզէի մէջ որ բարական լաւ է շինած:

Նոր սրանումն է որ շատ կան պղնձեալ ու բրոնզեալ մնացորդներ, արշաւանքների կամ պատերազմական տեսարաններ ներկաւացնող քանդակներ: Դրանք բոլորը խնամքով և ընտրութեամբ է որ հաւաքւած են: Երկրորդ սրանք բովանդակուան է իր մէջ Կոչունջուկի պալատից համուած քանդակներ, որոնք ներկալացնում են Միննախների արշաւանքները: Միծաղ է շարժում մի կատր, ուր քանդակւած կաէ զօրաբանակի մի ծովի կողքով անցնելու տեսարանը: Ծովը քանդակած է կոր և կանոնաւոր ալիքաձև գծերով, սրոց մէջ շատ պարզ երեսում են ձկներ. և դրանով միան հաստատում է որ քանդակը ծովի և ներկաչացնում: Անտառը ներկալացնում է հովանարածն տերեններով մի շարք կոտրած ճիւզեր օդի մէջ:

<sup>1)</sup>Չէ չիշեցնում արդեռք աւետարանի Ցովհաննէս Մկրտիչը—եթէ միան պարագոքս չէ աչդ համեմատութիւնը:

Նրանցից էլ մի մի զուգ մեծ փնջեր, որոնք պտուղներ են իբր թէ: Երեսում են զինուրներ, ապա թագաւորը կառքի մէջ և ձիերը ինքը կառավարելիս: Ծովի վրայ կան նաւեր մեծ թիելով (galère): Անտառը փըշանոցի նման, չաճախ վարագներով լիքը, որոնց իւրաքանչիւրը աւելի մեծ է քան հինգ քանդակած ծառ միասին վերցրած, զինուրները քիչ հեռւում քաշում են գերաններով լիքը ուզեր, լաստեր պաշարներով, մեքենաներ քալ նետող և մեծ նետ արձակող բարաններ... Մի ամբողջ արշաւանքի տեսարան է դա, վերջին ծալրումն էլ քանդակած պատերազմը, որ մի ազգանդակ խառնուրդ է կոտրտած ճիշերի, անբնական դէմքերով և դիրքով մարտերի և ազեղների:

Ամէնից հետաքրքիրներն են սական նրբանցքի մէջ գտնւող ասսիրիական ձեռագիրները:

Բոթթա, Լոֆտուս, Օպսկերտ, Լազեարդ, Շառւլիսոն և այլ զիտնականների չնորդիւ լաջողւնց կարգալ բենուածե արձանագրութիւնները և արդպիսով կարելի եղաւ Ասսիրիական պատմութիւնը, նրա հետ նաև ասիրական մի շարք այլ ազգերինը (Հալոցն էլ) հանել Նինւէի, Նիմրուդի, Վանի և այլ աւերակներից, կարդալով թէ քարերի, թէ պորֆիրների ու ալիբաստրների և թէ թրծած աղիւսի տախտակների վրայ գտնւած անհամար գրերը: Բնեռագիրների ընթերցմանը օգնոց Բիսիրթիւնի արձանագրութիւնը (Պարսկաստան, Քերմանչանի մօտ). Նրանից վետոչ մինչև այժմ այլ ևս գրէթէ ոչ մի առեղծւած չունի. նա ընթեռնելի է և եթէ երբեմն չփոթութիւններ է չառաջանում, զրա պատճառը այդ զրւածքների տառերի ոչ թէ միանչիւն, այլ վաճակական լինելն է և լեզուն (Ուրարտեան գրերը). մի տառը ոչ թէ մի հնչիւն է արտապատում, այլ մի ամբողջ վանկ, Առհասարակ, Ասսիրիական գրականութեան վրայ մի գաղափար կազմնը զժւար է, չնաելով որ շատ և շատ մնացորդներ կան աղիւսակին գրքերից: Բոլորը գիտեն որ Ասսիրիացիք Եղիսպատացոց ողէս պապիրուս չին զսրծածում զրելու համար, այլ բարակ՝ թրծած աղիւսի տախտակներ: Լազեարդը Նինւէի աւերակների մէջ երեան է հանել Ասսուր Բանի պալի ամբողջ գրադարանը, որ բաղկացած է բաղմաթիւ քառակուսի, քառանկնիւնի և տափակ աղիւսէ տախտակներից, վրան խիտ առ խիտ և նրբութեամբ քանդակած—փորագրած (ի հարկէ կաղապարներով) բենուածե գրեր: Ազ գրքերը ճառում են ամէն տեսակ գլուխութեան ճիւղերի վրայ: Քերականութեան, աստեղագիտութեան, բնական գիտութիւնների, բժշկականութեան, մաթեմատիկայի մասին եալին... կան նաև շատ լաւ պահպանւած մուլհակներ, բժշկական պատէրներ (բէցէպտ), ազօթքներ... այդ բոլոր տախտակների մեծութիւնները զանազան են, մկան քառորդ ձեռքի, մինչև երկու և երեք ձեռքի չափ երկարութեամբ: Ազդ ամբողջ հակական գրադարանն էր ահա որ Լազեարդը զրեց Բրիտանական միւզեում և որի առջև հասել էի ևս կիսաքանդակները զննելուց իստու:

Գրադարանի կողքին է որ գտնուում է խոր, բայց ապակեալ առաստաղով, աստիրիաբանութեան համար լատկացրած դասախիօսութեան սըրահը: Սրահի մի ծալրում, մի մեծ ապակեալ պահարանի տակ դրւած կան Սալմանասար Ա-ի (859—824) արշաւանքներից տեսարաններ բրոնզի վրաէ քանդակած, աւելի ճիշտ կը լինէր ասել՝ կաղապարած: Նրանցից մեծ մասը հետաքրական են առանձնապէս մեզ՝ հակերիս համար, որով հետեւ նրանք ներկայացնուում են Սալմանասար Ա-ի արշաւանքները Հայաստանում, Ուրարտեան թագաւորութեան վրա:

Ես ազևս կանգ առի, որովհետեւ լոգինել էի. բացի զրանից, գիտակցութիւն ունէի որ զեռ շատ բան չէի տեսել...

Այդ բոլոր քանդակները թէ կուլունջուկի, թէ նիմրուզի Խորստաբաղի կամ Կալալի՝ համեմատութեան մէջ եթէ զնենք, ամփոփենք, չնայելով մի քանի տչքի խփող միօրինակութիւների, ասսիրիական արևետի էւօլիցիսան կարելի է մի քանի որոշ պերփողների վերածել: Ասուր-Նազիր Պալի ժամանակ տեսարանները կամ դէմքերը ստանում են աւելի համարձակ արտավագառութիւն, բայց շարժումները անորոշ թէն ճիշտ: Պատկերների (ալյնքն քանդակած դէմքերի և ազլն) մարմնի մի մասը սովորաբար լիքն են լինուած բնեռածն արձանագրութիւնով, որ բացատրում է ներկայացրած տեսարանը: Դորան իր օրինակ կարող է ծառաւել միւզէի մէջ զտնող կապիկ խաղացնող մի աստիրիացու կիսաքանդակը: Սարգոնի և Աբնասիրիի ժամանակ քանդակագործութիւնը աւելի գարգանում է, դէմքերը աւելի շատ են և ընդհանուր գործողութիւններ են ներկայացնում: և Ասուր բանիպալի ժամանակ քանդակագործութիւնը աւելի գարգանալով՝ նկարները մօտենում են բնականին:

Այդ բոլոր քանդակները, որպէս և իտապաէ դարերի լունական ու հառմէական նուրբ գործերը ոչ թէ անհատների գործեր են, ազ մի խումբ արհեստաւորների, որոնք երբեմն վարձելով մի անտրպբէնեօրից (ձեռնարկողի, որ զուցէ երբեք զործել զգիտէ)՝ միանց սրանց անունն է որ վառք է վախելում, պատմութ: մէջ դրոշմուում լո՞նչ արած: Հնորհիւ պատմագիրների, մասնաւոր անհատների զերը պատմութեան մէջ աէնքան չափազանցածրած է, մեր բոլոր հին պատմութիւնները աէնքան աւելի նման են անհատների խոշորացրած կենսագրութեան և աշնչքան անխնալ ու կեղծութեամբ մի խումբի գործունէութիւնը բարդել են մի անհատի վրաէ, որ կարծիս աղ անհատները եղել են կիսաստածներ և ֆէնոմէններ, որոնցից մեր զարերում ազ ես չեն ծնւում: Օրինակներ անհամար են թէ հին և թէ միջին դարի պատմութեան մէջ: Հետաքրքիր է նկատել օրինակ, որ շատ արափառներ ունին ընդհանուր անուններ: Պոլիկանու, այդ մեծ լոյն քանդակաղողի անունը, նշանակում է «շատ հոչակաւոր»: Պոլինոս մեծ նկարչի անունը՝ թարգմանում է «շատ լաւանի»: «Իա ենթադրել է տալիս որ այդ անուն

ները պատկանելիս են եղել ոչ թէ մասնաւր անհատների, առ չկոլաների, գպրոյների (Մուժէօլ «Les problèmes de l'histoire»). Պիդիասը, օրինակ, որ լունական քանազակագործութեան աստւածն էր, հրաշալիքը, նշանակում է «կառավարիչ, ղեկավար»։ Կան պատմագիրներ, որոնք Միքէլ Անջելօֆն նկատում են որպէս մի հարուստ ձեռնարկող, որ իր ձեռքի տակ ունէր իսկական լաւ արտիստներ, բայց որոնք անգատ էին, որովհետև ինքն էր բանակցում զրայի հետ, պատւէրներ ընդունում... մի զործարանատիրոջ աէս, որի զործարանից դուրս եկող բոլոր լաւ զործերը իր անունն են կրում, չնաև լով որ զործարանատէր ազան մատով իսկ չէ գործել հաշակւած արտադրութեան վրայ։

Պատմութիւնը լավանում է որ Պիդիասը, Պերիկլեսի ժամանակ, Աթէնքի մէջ շինւող չէնքերի վերակացուն էր նշանակւած...»

Շատ կանգ առի Ասսիրիական բաժնի վրայ, որովհետև ալդ բաժինն է որ Բրիտանական միւզէի հարուստ և հետաքրքիր մասն է, չնաև լուլ։ որ Եզիպտան էլ ունի շատ մեացորդներ թանգարանի լայն սրահների մէջ։

Երբ մարդ մտնում է Եզիպտական սրահը, առաջին բանը, որ գրաւում է տեսքը, զա Ռոզկտտաչի քարն է, որ որպէս մի որբութիւն դրւած կաէ ապակեաչ պահարանի մէջ՝ մուտքի առաջ։ Դա այն նշանաւոր քարն է, որ դրւած լինելով երեք տեսակ լեզով, բանալի դարձաւ իերոզլիֆները կարդալուն։ Ամենից առաջ 14 տող իերոզլիֆ տառեր են, որոնց հետևում է ուսմիական կամ զեմոտիք կոչող եղիպտական տառերով 33 առդ. զրանից լսառէ քարի կէսը, համարեա, բռնուած է լուսարէն լեզով արձանագրութիւն։ աչս վերջին ծանօթ լեզոն բաց արաւ իերոզլիֆի զաղտնիքը, որպէս Եզիպտական պատմութեան վրայ սփուեց այն մեծ լուսը, որից ծագեց արեելեան ազգերի ճշգրիտ պատմութիւնը, նախապատմական քաղաքակրթութեան ազրիւմները։ Ազդ թանգագին քարը քի կոտրտւած է, բայց տառերը գեռ պարզ են և ընթեռնելի։

Սրահի մէջ դէպի աջ ու ձախ, դէպի ետ, պատերի տակ, լիքն են Եզիպտական արձանագրութեան անպիսի վիթխարի լիշատակարաններ, որոնց քարերը բերելու, կերտելու, քանդակելու և կանգնեցնելու համար զոհում էին և ոտի տակ արորում հազարաւոր մարդկալին արարածներ։ Հսկալական միապաղաղ քարերից և դրանիտից կերտւած ամենաշատ արձանները Եսոստարիս (Խամզէս) Ա-ի ժամանակակից և իրեն Սեսոստր Ա-ի արձաններն են։ իսկ սե կամ կարմիր գրանիտներից բազմաթիւ Սեկիտ աստւածները իրենց կովալին զլուխներն են դուրս պարզում սրահի ամեն կողմներից։

Մարդկալին արձանները ունին իրենց որոշ Եզիպտական այն անշարժ ձեւը, որից դուրս ենելը, լանուն կրօնի, թուլատրւած չէր։ նատած, ծնկները միմնանց կպցրած, ձեռքերը ծնկների վրայ, անշարժ, առանց

արտականութեան սառը դէմքեր—ահա ազդ նւիրական ձեւը, որից Նգիպտոսը գրեթէ երբէք դուրս չ'եկաւ։ Ազդ տեսակ կերտուած արձանները դանւում են մեծ քանակութեամբ։ Բոլորը ամբողջ դէմքով են և ամբողջաքանդակ արձաններ (statues)։ Կիսադէմքեր կամ բարձրաքանդակներ ու կիսաքանդակներ՝ չկան։ արձանադորձութեան ազդ ձեւը սկսում է միմիան Աստիրիակից։

Հարկաւոր է որ ընթերցողը մի որոշ դադարիար կազմէ արձանագործութեան տեսակների վրայ ըմբռնելու համար այն էւոլիցիան, որին ննթարկել է քանդակագործութիւնը, սկսած նախապատմական ժամանակից՝ երբ մարդիկ զծում էին ոսկոռների և քարերի վրայ միմիան զծերով—մինչեւ լուսա-ռոռվմէական ժամանակը, երբ քանդակագործութիւնը իր կատարելութեան հասաւ։

Արձաններ (statues) կուտում են այն քարեաչ, կճեակ և այլ ձևերը, որոնք ներկայացնում են պատկերը իր բոլոր կողմերից ամբողջապէս և որոնցից Նգիպտոսում շինում էին ամբողջ գրանիտից, տալով նրանց կամ բնական մեծութիւն և կամ—նայելով անձնաւորութեան մեծ դիրքին՝ բնականից աւելի մեծ հասաւ։

Քանդակներ (relief), նրեք տեսակ են լինում։ Յածրաքանդակ (bas-relief), միջակ-քանդակ և բարձրաքանդակ (haut-relief) Նրանք ունին իրենց ֆոնը ներկայացրած քանդակի վրայ և չնն ներկայացնում առարկան ամեն կողմերից, այլ միայն մի կողմը։ Յածրաքանդակը իր ֆոնից հաղիւ քիչ դուրս ցցւած, ներկայացնում է մարմինի գրեթէ երեսը—մի քառորդը։ միջակ քանդակը կամ կիսաքանդակը՝ մարմինի կեսը, իսկ բարձրաքանդակը՝ ֆոնին կացրած թողնելով մարմինի հազիւ մի քառորդ կամ  $\frac{1}{8}$  մասը, դուրս ցցւած է ներկայացնում ամբողջ  $\frac{3}{4}$  մասը։

Քանդակների (relief) արևեստը սկսում է Աստիրիակից, ուր նա քիչ զարգանալուց լինու անցնում է Յունաստան։ Ազդ երկրում նա կատարեալագործում է և տալիս է արևեստագործութեան։ Պարթենոնի արտաքին բարձրաքանդակ երիգը (frise), որի թէ մողենները և թէ մնացուրդները մինչև աչժմ էլ հիացնում են, դրւած լինելով զանազան միւզէներում։ Ազդ երիգը Պիդիասի առաջնորդութեամբ է շինած, ալտինքն մի խումբ ճարտար քանդակողների գործն է, որոնք Ակրոպոլն էին զարդարում և որոնք Յունաստանը դարձրին արևեստների օրպան, կատարելագործելով այն բոլոր արևեստները, որ Արեելքից անցել էին Արևմուտք։

Արևեստների սաղմնաբանութիւնն է ահա, որ իր երկրորդ Փափի մէջ կարելի է ուսումնասիրել Քրիտանական միւզէի եղիպտական սրահներում, անցնելով սև գրանիտեակ սարքովագների (դամբարան), սֆինքսների, Պալղոմէսան կոթողների միջով։ Տուամէս III-ի գրանիտեակ մի անհեթեթ մեծութեամբ գլխից մարդ հեշտութեամբ կարող է դադարիար կազմել թէ

որքան մեծութեամբ էին շինւում արձանները։ Այս զլսից նաև կարելի է եղակացնել հին եղիպտական մարդկային դէմքի մասին։ Գլուխը կրում է մի պղնձեալ զլսարկ։ Եղիպտա-նուբրիական շատ նրբութեամբ քանդակած դէմք է։ Երթունքները հասու, քիթը կարծ և քթածակերը լավ։ ճակատը նեղ, ալտերը դուրս ցցւած։

Այդ սրահից լեռով, վերի լարկը տանող սանդուխների տակ դանւում են բաղմաթիւ այլ մանր լիչատակարաններ, իերոգլիֆ արձանագրութիւններով լի քարեր, որ նք կրում են գունզգոտն տեսարաններ կանանց խրնձուքների և ալւն։ զրանք եղել են տապանանկարներ խոր քանդակներով, որոնք պատում են մնուած թագուհու փառքը և դործերը։

Եղիպտական գեղարեսատի և գրականութեան բաժինը մուղեսում գտնւում է վերին չարկի սրահների մէջ։ ալնտեղ դարսւած կան բազմաթիւ մումիաներ, պապիրուսներ, տապանալին հողէ դէմքեր, կատեր, չան, կոկորդիլոսախ և ալւն զմուսւածներ, փալտեալ զաւրարաններ և դագաղներ, Օզիրիսի, Ֆտահի ամենամանրից սինչեւ ամենասկզ բրոնզեալ անհամար քանակութեամբ՝ ընտանի պաշտամունքների ծառալած՝ արձանիկներ, եղիպտական ճոխեղիներ, տնական պարագաներ, արկղեր, զէնքեր, ամանեղէն, լաղճապակեալ զարդեր, օղեր, փալտէ և չարդեալ աթոռներ .. մի խօսքով ամբողջ Եղիպտոսի Եթնոգրաֆիական բաժինն է որ մարդ կարող է գտնել վերին չարկում։ Դրանց մէջ ամենից հետաքրքիրն է Յ մետր երկարութեամբ մի պալիրուս, որ պատկանում է Վալեսի իշխանին (Յնգլիակի թագաժառանդին)։ Այդ պալիրուսը գտնւած է Յէքրեում և ներկալացնում է ՀՀԼ-րդ դինաստիայի (1100 թ. Ք. ա.) Նեղիմխախ թագուհու թագուհու թագումը գունաւոր Նկարներով։ Պապիրուսի ոկղբում կաչ նկարած Օզիրիսը իր գահի վրայ, ապա նրա դատաստամը—ոզիների կշռելու տեսարանուը։ զրան հետուում է մի թափոր և մի կառք, որը քաշում են մարդիկ և եղներ։ Դա թագուհու դիակառքն է։ Պապիրուսի մէջ տեղ, իերոգլիֆով կան զրւած կտորներ «Մեռեալների զրքից»..։ «Ես ոչ ոքի չհարստահարեցի, ես ալրի արտասուքը չտելացրի, ես թշ առներին չզրկեցի...» և ալւն չքմնդանքներ, (տես նաև Սրեել, ազգերի հին պատմ. Ա.և. Արատիսանեանցի էջ 24) որոնց ասելը գուցէ ներելի լինի ամեն մարդու, բաց ոչ երբէք հին թագաւորների կամ թագուհիների, որոնք իրենց բռպէսական հաճուքների համար հաղարտւոր մարդկանց էին ոչնչացնում և մարդկացին արիւն թափելով զւարձանում..։

Քանի որ վերի սրահները բարձրացաւ, հարկաւոր է մի թեթև զաղափար գոնէ տալ նրանց էթնողրաֆիական հարսւատ, տարիներով ուսումնասիրելու նիւթ պարունակուղ բովանդակութեան մասին։ Մի առ մի նկարագրել, շթողնել շատ բան՝ անհնար է։ հարկաւոր պիտի լիներ զրքեր զրել, ամբողջ էթնողրաֆիան, ազգերի քաղաքակրթութեան, արևստաների, լնկերական կեսնքի պատութիւնը տալ...

Եղիսպական էթնոգրաֆիական բաժնից լետու, անցքը բացւում է Աստիրիական էթնոգրաֆիական բաժնի վրայ Ազդտեղ պիտի տևմնել տնաշխն անհամար քանակութեամբ պարաղաներ զանազան պերիոդներից մնացած, իրևոց էւոլիցիալի զանազան ժամանակներից կարասներ, հողէ ճրագներ, ամանեղէն, արձանիկներ, աղիւսի կամ կաւի կտորներ ու ցիլինդրներ՝ թեռապրերով ծածկւած... Ուշադրութեան արժանի են ան աղիւսակին մնացորդներն ու տախտակները, որոնք մի առանձին զարանի մէջ են դրւած և Հայաստանում են գտնւած. օբինակ մի տախտակ արձանագրութիւն կայ, որը հակոց Մինուա Վանի թագաւորը (Քրիստոսից 700 ա. առաջ) աղօթքի պէս նւիրել է Խալզիա (Հալղիա) աստծուն. Դարանի մէջ են դրւած նաև Վանում գտնւած բրոնզեալ վահանի կտորներն ու զանազան պատերազմական իրեղէնները, որոնց պեղել է Վանի անզ. Հիւպատոս Քլէթնը Զըմի-զըմի մազարափից:

Աստիրիականից լետու գալիս են Հնդկական, Չինական, Փինիկեան, Ետրուսկեան և այլն բաժինները, միշտ հարուստ, միշտ հետաքրքիր և լիքը ուսումնասիրելու նիւթերով. Հուսկ ուրեմն, որ պէտք էր ամենին առաջ տեսնել, և ահա նախապատմական (primitif) պերիոդի էթնոգրաֆիական սրահումն էր որ կանգ առինք:

Ազտեղից էր հարկաւոր սկսել տեսնելու մարդկութիւնը իր վայրինի, նախնական զրութեան ժամանակաւ կեանքից. իր անտաշ ու խղճալիքարէ զէնքերով, իր կիրակուրների մնացորդներով, որոնցից կոտեր էին կազմում բնակութիւնների մօտ:

Մենք, հին կենդանաբանութեան դրքերի մեթոդի պէս, փոխանակուազմակին վիճակից սկսելու, թարս էինք սկսել մեր ացելութիւնը. բացինչ որ էր, Քրիստոնական միւլքէտում նախապատմական մասը շատ էլ հարուստ չէ, մի շատ փոքրիկ սրահ միան ունի, ուր սական ընտրանօք դրւած են հետաքրքիր ժողովածուներ. Ազդ շնչանից մնացորդների մէջ ամենքից լաւ հաւաքածուն է արմտիքների, պատուզների սեացած կտորներ, ճոթեր, սերմեր, որոնք գտնւած են Լաքիւսոր-լճերի վրայ շնչած մնակութիւնների տեղերում...

Մենք վերջացրինք մեր թեթև ացելութիւնը.

Մարդկան մաքի, կեանքի, գեղարւեստի ու պահանջների էւոլիցիան, նրա ամբողջ զարգացման պատմութիւնը Բրիտանական միւլքէն կը տաէ ցանկացողին գործնական կերպով. Ընկերաբանական մի ճոխ լաբարատորիա է նա, մի անդիմի լաբարատորիա որ հեշտութեամբ կարող է ուսումնասիրելու նիւթ ընծանել մասնագետների իսկ:

Դեռ ևս ինչեր մոռուցաւ ևս նկարազրել. մոռացաւ ունական մասը, մոռացաւ ձեռապիրների սրահը, նումիզմատիկական (դրամաբանութեան) բաժինը, միւլքէի մէջ եղած ճոխ դրադարանը իբր օժանդակող ուսումնա-

սիրողներին և ապա մոռացակ թւել միւզէի մէջ եղող ամէն չարմարութիւնները... ամբողջ օրով ալնտեղ անցկացնելու գիւրութիւնները... բաց դրանց բոլորի նկարագրութիւնը ինձ շատ հեռուները կը տանէր:

Առանց էն էլ այս նամակը շատ երկարեց:

Ինձ մնում է խօսել եկող անդամ «Փրկութեան բանակ» անւանող մեծ ընկերութեան մասին և ազդիխով վերջացնել այս Անգլիական նամակների շարքը...

---

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

Կանանց հարցը. — Կինը որպէս ընտրող. — Ազատ սէր եւ դրա մասին եղած գրականութիւնը. — «Ա. Փրիկարան մի ապարակ», «Անհամաձայնութիւն» եւ միւս վէպնը ազատ սիրոյ մասին. — Ո՞վ է աւելի ստախօսը, կրօնը թէ տղամարդը. — Կնոջ ստախօսութեան պատճառներ. — Փիւ Սիմոնի յօդածը՝ «Պիտի կին մնալ», — Լոմբրոզոի նախորդ Սամուել Ֆուչսիուսի գիրքը. — Դիմագիտութիւն. — Ճակատ, խորշումներ եւ աչքեր. — Վիկտոր Հիւգօի մի անտիպ բանաստեղծութիւնը:

«Ճւեք կնոջը աւելի լազն ասպարէզ, աղատ կացուցէք նրան խոհանոցից, մանկանոցից... և աչն ժամանակ կը տեսնէք թէ նա ինչեր կարող է անել...»:

Ազագէս է ասում Բերէլը իր «Ակինը և սոցիալիզմը» գրքում:

Բերէլի ասածը փորձով է երեսում այժմ Անգլիայում, Ամերիկայում և մանաւանդ Աւստրալիայում, ուր, Նոր-Զելանդիայի մէջ, 1893 թւից ի վեր կինը արդէն քւէարկում է քաղաքական գործերում: Ամերիկայի Վիօմինգի կանտոնում 1889 թւից սկսած կանալք գտնուում են կրթական գործի կառավարչութեան մէջ և միսս Ռիլը ժողովրդավին լուսաւորութեան նախարարն է: Կոլորածոյում, պարլամէնտի անդամ են Ընտրւել Յ կանալք, մոռացաց ասել, որ Նոր-Զելանդիայի Օնիգունդ քաղաքի քաղաքապետը մի տիկին է, միսսիս Յատիս անունով:

Ազագէս ուրեմն կինը մրցում է և աշխատում է ձեռք բերել քաղաքական իրաւունքներ, առանձնաշնորհումներ և պահանջել տղամարդուց՝ իր արտօնութիւնները: Թէ Գերմանիայում և թէ Ֆրանսիայում, կանանց հարցը օրւաչ ալրող հարցերից մէկն է և հէնց ալժմ Բերլինում կանալք կոնգրէսի են նստած:

Ամենից առաջ, կինը աշխատում է առ այժմ ձեռք ձերել քաղաքական արտօնութիւններ օրէնսդիտական մարմինների և ալլ ընկերական հաստատութիւնների մէջ:

Այդ բոլորը կատարում է այժմ Անգլիայում ու Ամերիկայում, ուր

հսկայական պրոպագանդներ են լինում կանանց կողմից, ուր կան լրագիրներ ազդ մասին և երեան է գալիս մի մեծ գրականութիւն ի պաշտպանութիւն կանանց ազդ մտքերի: Սոցիալիզմն էլ միւս կողմից ոչ է տալիս ազդ տեսակ չգտումներին:

Անգլիակում աչ րոպէիս երեան են գալիս բազմաթիւ բրոցիւրներ ամուսնական ազատութեան մասին. մինչև իսկ բանաստեղծութիւններ են գրում և մանաւանդ վէպեր:

Բայց տեսէք թէ ինչ է ասել Ժորժ Սանդի պէս մի հեղինակ, որանից տարիներ առաջ:

«Ամուսնութիւնը—ասում է նա իր ծառ վէպի մէջ (տպ. 1834 թւին) ամենաբարբարս հաստատութիւններից մէկն է, որ մտածել է ունենալ մարդկութիւնը: Անշուշտ կը գալ մի օր երբ մի աւելի մարդկացն և աւելի պակաս անփրական» կապ կը փոխարինէ դրան և կարող կը լինի միս կողմից էլ ապահովացնել մի մարդից և կնոջից ծնւած մանուկի գոյութիւնը»:

Ժորժ Սանդից շատ առաջ, զանազան մտածողներ խօսել են ընդէմ ամուսնութեան, քայլ խնդիրը այն է որ ոչ Ժորժ Սանդը և ոչ էլ իր նախորդները չեն առաջարկել մի ուրիշ միջոց, ուրիշ կապ, որ փոխարինէր դրան և մարդկացն ընկերութիւնը ապականութեան չհասցնէր:

Տեսնենք ինչ միջոցներ է առաջարկում, ամուսնութեան ոչնչացումը պահանջող նոր գրականութիւնը:

Ամենից աւելի լաջողութիւն ունեցող վէպն է միսս Օլիվ Շրէնէրի (Olive Schreiner) «Աֆրիկական մի աղարակի պատմութիւնը» (The story of an African farm):

Ո՞ր ջանիլ աղջիկը ունենում է սիրական և սական մերժում է նրան ամուսնանալ: «Զեմ ուզում—ասում է նա—որոքհետք չեմ կարող կապած լինել. բայց տարեք ինձ, եթէ կ'ուզէք. երբ այլ ևս կը դադարենք միմեանց սիրել, միմեանց «երթաս բարե կ'ասենք» և... պրծաւ գնաց:

Բանը այն է որ աղջիկը ինքն էր առաջին «երթաս բարե» ասողը իր սիրականին: Խակ սա, երբ տեսաւ որ իր սիրուճին լդի է, առաջարկեց նրան, աղաջնց իսկ ամուսնանալ, բայց աղջիկը խստութեամբ մերժում է ասելով որ ամուսնութիւնը առանց սիրոց աշխարհս անպատող մի ամենակեղուս առետուր է...» Ուրիմն, գաղարելով նրան սիրել, անհնարպիտի լինէր նաև ամուսնութեան միտքը:

Ահա միսս Շրէնէրի վէպի նիւթը: Եւ երբ մարդ մտածում է թէ մի քանի ամսւագ մէջ այդ վէպից հարիւր հաղարաւոր օրինակներ ծախւցին:

Ազդ վէպից չետու երեան ևկաւ տիկին Մաննինգտոն Կաֆֆինի (Mannington Caffyn) ումանը Jellow Aster վերնագրով: Այստեղ դուրս է բերած մի օրիորդ, որ սաստիկ զալրութ է զգում ամուսնութեան հանդիսակատարութիւնից, նկատելով նրան որպէս ծէս՝ իր ամարմինը ուրիշին:

ծախելու» համարու Ազդ զայրութը հետզհետէ մեծանում է նրա մէջ. նա չէ կամենում «պատկանել» իր ամուսնուն—մի շտղամարդի, որպէս «ձին, որ պատկանում էր նրան»: Բայց արդէն ուշ է, աղջիկը մնում է ցղի և մարդինելու ժամանակ ահա ինչեր է խորհում:

«Ի՞նչպէս է եղել որ աչսպիսի հետեանքը երբէք խելքովս չէր անցել. Աչսպէս ուրիմն, ես, Գլինս, մի տղափի մայր եմ լինելու... Սարսափելի է, ստորացուցիչ՝ երբ մանաւանդ աչքի առջև եմ բերում որ ես չէի միրում այդ տղամարդին, որը ամուսինս է կոչւում. Ա՛հ, եթէ երիտասարդ աղջիկները գիտենալին այս, եթէ նրանց հասկացնելին այդ, անժամանակ անշուշտ ամուսնութիւն չէր լինիլ, առանց բացարձակ սիրու»:

Մի երրորդ վէպ են—«Անհամաճայնութիւն» (Discords) վերնազրով, հեղինակութիւն Ժորժ Վիլիբրէն:

Նոր ամուսնացած աղջիկը վազում է իր մօր մօտ և սկսում է նախատել նրան, որ նա իրեն չէր բացարել ամուսնութեան ինչ լինելը. Եթէ նա գիտենար «ամեն բան», այն ժամանակ չէր ամուսնանալ իր անապիտան ամուսնու հետ և կը սպասէր մինչև որ սիրէր մի մարդու «իր բոլոր մարմնով», իր բոլոր «մոգով»:

Ազդ վէպի մէջն է, ուր կարդում ենք աչսպիսի տողեր.

«Կամանց մեծ մասը խարում են իրենց ամուսիններին... Չեմ նախատում նրանց. այդպէս կը լինի մինչև անքան ժամանակ, որքան որ ամուսինը «կը պահանջի» իր կնոջից «իբր իրաւոնք» ան՝, ինչ որ նա «ստանում է» իր սիրուհուց իբր «չնորհ»...

Ես զանց եմ առնում մի խօսք իսկ ասել անդիմական լայտնի մի հեղինակի—Թոմաս Հարդի (Համարձակն Թոմաս) «Dude l'Obscur» վէպի մասին: Դա խսկապէս որ մի շատ համարձակ վէպ է, որ լիսլին ոչնչացնում է ամէն կապ և քարոզում բացարձակ ազատ սէր...

Ահա այդ խաչակրական արշաւանքն է գրականութիւնով, ժողովներով և լրագիրներով արւած, որ սպասնում է հիմն ՚ի վեր տապալել հին հասկացողութիւնները ամուսնութեան վերաբերմամբ:

Ժիկէ Սիմոնն է, որ երեան է գալիս կանանց շարժման դէմ: Նոր էր որ մեռաւ ֆրանսիական այդ մեծ փիլիսոփան և անշուշտ ան չօգուածը որի մասին խօսելու եմ, իր ամենավերջին դրւածքն է:

«Պէտք է կին մնալ» (il faut rester femme), ահա այդ չօգուածի վերնազրը: Միաժամանակ նա տպւած է երկու ամսագիրներում:

«1848 թւն—ասում է նա— զանգատում էին թէ իգական սեռի կը թութեան գործը անխնամ է, թող է: Աչժմ զուցէ զանգատում են թէ այդ զործը շատ հեռու է տարւած: Մէկ ծալրահելպւթիւնից միւսն ենք անցել... ևս կ'ուզէի տեսնել փիլիսոփայութեան մի զասագիրք վարժուհիներին ուղղած, նրանց ապացուցանելու համար որ որքան կինը զանա-

պանում է տղամարդուց... Եթէ իգական սեռի կրթութիւնը արականի նման լինի—ամեն ինչ կորսւած է... Նունքան անմիտ բան է մի աղջկայ սովորեցնել ալդէբրա կամ եռանկիւնաշափութիւն, որքան և անմիտ է տղակին սովորեցնել կար կամ կերակուր եփել: Ինձ համար, ասում եմ համարձակ, գդզո՞հ կը լինէի եթէ կինս կամ սիրուհիս գիտութիւնների դոքտոր լինէր (docteur ès sciences)...

Չմոռանամ ասելու որ Ժիւլ Սիմոնի աչս կարծիքները մի տուար մեծամասնութիւն կազմող մարդկութեան (Շի հարկէ տղամարդկանց, լաճախ էլ կանանց նուն իսկ) կարծիքն է:

Ակաբանիսը—շարունակում է նա—մի քիրք է գրել որի մէջ նացոց է տալիս թէ ամեն բան կնոջ մէջ—նրա մարմնը, նրա հոգին, նրա քնաւորութիւնը՝ բնութեան հեղինակից (Աստուծոյ) պատրաստւած է մայր լինելու համար: Հարկաւոր էր խորհել աչս գրքի վրաէ Սեւրբի միջնակարգ դպրոցի մէջ (օրիորդաց դպրոց) և հարկաւոր է համոզել որ դէպի կինը գործած ամենամեծ անիրաւութիւն կը լինէր՝ փոխարկել նրան տղամարդին...

Ինչ վերաբերում է կանանց իրաւունքներին, առա Ժիւլ Սիմոնի կարծիքով միակ վերաբերները»: «Իրթութեան գործի մէջ, աղջկան վերաբերեալը մայրը աւելի կամ հաւասար ձախն կարող է ունենալ, բայց ուսման զործի համար՝ հայրն է միայն սրչողը և վճռողը: Կինը իրաւունք չունի որդիների կրօնի համար ընտրութիւն անել, իսկ աղջկան կամ տղակին ամուսնացնելու խնդրում հայրն ու մայրը միասին համաձայնւելու են—եթէ չամաձայննեցին՝ հօր ձախնը գերադասելի է... Մենք կնոջը ոչ թէ գերի, այլ թագուհի ենք կոչում, մենք նրան լարգում ենք, միան ասում ենք նրան «Ով մօրուք ունի, ուժը նրանն է»...

Ցիշում եմ, որ երր նեւցարիալում կանանց հարցի չափնի պաշտպան պրոֆ. Բրիգէլը (Ժընէւի համալսարանում) Լոզան էր գնացել և մի դասախոսութիւն արել կանանց աղասութեան մասին, Լոզանցի կանալք մի հանրագրութիւն էին կազմել Բրիգէլի ղէմ, ուր ասում էին աղապէս: «Մենք չենք ուզում, պ. Բրիգէլի ասածի պէս, իրաւունքներ ձեռք բերել հաւասար մեր տղամարդկանց, մենք ուզում ենք նրանց միշտ հպատակ մնալ...» Եւ այդ սկի էլ զարմանալի չէ. մինչև 1828 թւականը, հէնց նոյն խսկ այդ Լոզանի կանտոնում (Վ.օ՛ի կանտոն) կինը ընդունւում էր իրը «վէս-մարդ» և երկու կնոջ վկանութիւնը միայն համարում էր հաւասար մի տղամարդի վկանութեանը:

Բայց տեսնենք թէ Ժիւլ Սիմոնը ինչ է ասում ամուսնալուծութեան, կինը անտեսական անկախութեան և նրա քւէարկութեան իրաւունքի մասին: Ես երկար եմ կանգ առնում նրա ասածների վրասկ, որովհետեւ—կրկնում եմ—Ժիւլ Սիմոնը արտաշալտում է չալտնի կուսակցութեան համարում եմ—Ժիւլ Սիմոնը արտաշալտում է չալտնի կուսակցութեան մէջ:

Հակառակ Լըգուէչի, որի շատ առարկութիւնների հետ նա համաձայն է, նա ամուսնալուծութեան կետում հակառակ է նրան։ Ժիւլ Սիմոնը չէ ընդունում ամուսնալուծութիւն։ նա ազդպիսի մի օրէնք նկատում է որպէս մի տժրաղղութիւն և մինչև իսկ անիրաւութիւն դէպի կինը։

Խնչ վերաբերում է, տնտեսական անկախութեանը, Ժիւլ Սիմոնը հեռու չէ գնում ասիացու հասկացողութիւնից։ «Բժիշկ-կին—ասում է նադա հասկանալի է, մինչև իսկ օգտակար կը լինէր դա կանանց հիւանդութեան համար և լաւ կը լինէր որ տատմալրները քիչ աւելի սովորէին բժշկութիւն, իսկ տեսնել կնոջ՝ փաստաբանի փոխարէն—դա սկի հասկանալի չէ»։ Իսկ աշխատութեան համար, ահա նրա խօսքերը, ականաք կոնկուրէնցիա են անում իրենց ամուսիններին, աւելի պակաս ռոճիկով աշխատելով... Այդ բոլոր աշխատութիւնները հեռացնում են նրան ընտանիքից։

Մնում է կնոջ քւէարկելու իրաւունքը, ահա թէ խնչ խօսքեր է ասում ֆրանսական ակադէմիականը։ Ականաք դրախ համար չեն... Կանաք եթէ քւէարկութեան իրաւունք վաճիւն, քւէն կը տան իրենց սիրականների կամ բարեկամների համար... Նրանք մինչև իսկ խորհուրդների ժամանակ սիրահարութիւն կ'անեն, բարեգործութեան և կրթական խորհուրդների մէջ միան նրանք պիտանացու են, պալմանով միան, որ փոքրամասնութիւն կազմեն, Ուրիշ ամէն տեղ նրանք խռովութիւն կը ձգեն։ Ֆրանսականը ամէն կը տառ նրանք ունենալին քւէ տալու) հետաքրքիր հնտեանք զուրս կը գար. կանաք, ընտրող կամ ընտրուղ կառավարութեան զնիը կը տապին կրօնաւորութեան ձեռքը!»։

Ուրեմն... սպէտք է կին մնալ—գոչում է նա վերջացնելով լոդւածը։ «Բարեփոխնենք կնոջ դրութիւնը, բայց չփոփոխնենք, զգուշանանք տղամարդ դարձնելու նրանց։ Նրանք դրանով շատ բան, իսկ մենք ամեն բան կը կորցնէինք, բնութիւնը ինչ որ անում է, արածը լաւ է. ուսումնասիրենք ալզ արածը, զարդացնենք նրան... Շատ են աղաղակում աղմանան ամուսնական օրէնքների դէմ։ Ընդհակառակը ամուսնութեան մէջն է գտնում ամենաքաղցր և ամենազեղեցիկ բանը։ Ամուսնութիւնը՝ ընտանիք է, և ինչ է ընտանիքը. դա ժպտող առաքինութիւնն է, դիւրին առաքինութիւնը...» և ալլն և ալլն։

Երբ մարդ ժիւլ Սիմոնի այս գրւածքն է կարգում, ամեն խնչ վարդակուն է տեսնում. կարծես թէ իսկապէս դառն, վշտալից ու վատ ոչնչ չկատ ակմանան ընկերական կազմակերպութեան մէջ, կարծես թէ ամեն ինչ լաւ է և սրանից լաւին ցանկալ չէ կարելի... բայց երբ աչքիդ առջն են զալիս 100-ից 90 ընտանիքի սոսկալի կեանքը չնորդիւ ամուսնութեան անքականելութեան և երբ, նոյն իսկ մինչ մեզ նման մի նահապետական ազգի մէջ, իշում ես Վեհական կաթողիկոսի մի նշանաւոր խօսքը

թէ «խնդրագրերի դէպեր եմ ստանում և ազդ խնդիրների մնծ մասը ամուսնական են, որոնք պահանջում են լուծումն, շուտափովթ լուծումն...» աճն ժամանակ մնում է գոչել օ sancta simplicitas!

Յւ. իսկապէս Ժիվ Սիմոնը անգամ լաւասես է (optimiste) իր ոգեստրած կեանքով, աճնքան անհշմարելի է թողել հաղարաւոր թշւառների, մարդկութեան ամենամեծ մասի ողորմնելի վիճակը, որ ամենաչն միամտութեամբ զոչում է.

«Ոչ, կեանքը լաւ է (la vie est bonne), բարելից է, ժպտուն, պահմանավ միայն որ մարը և ամուսն-կինը մնան իրենց աճն տեղում, որը բնութիւնը նրանց վիճակել է և որը Աստւած է գուացրել»...

\*  
\* \*

Դեռ էլի շատ բան կարելի էր ասել կանանց հարցի ներկաչ զրութեան մասին, օրինակ հէնց Լոմբրոզօի վերջերա հրապարակնետած խնդրի վերաբերութեամբ. բայց շատ կ'երկաշել, և ով ռուսաց կամ եւրոպական լրադիրներ կարդում է, նա անշուշտ ըշնթացիկս կը լինի. Բանը աճն է որ Լոմբրոզոն հաստատում է շատ ակներեւ փաստերով, թէ կինը շատ աւելի ստախօս է քան տղամարդը. Ազդ մասին մի վիճարանութիւն է սկսել թերթերի մէջ. ռուսներ էլ են մասնակցում:

Որ կինը շատ աւելի ստախօս է — դա ֆակտ է. բայց ինչու է ստախօս աւելի. Հէնց աղտեղ է խնդիրը և մի ընկերական ծանր խնդիր. Կինը դրւած է աճնպիսի անբնական, նեղ դրութեան մէջ, նրան տալիս են աճն աստիճան թուլամորթ կրթութիւն և նա Փիզիքապէս աճնքան թուլ է, որ գոլութեան կուլի դիմանալու, իր պահանջները կամ փափառները առաջ տանելու համար — մի խօսքով ապրելու համար, ստիպւած է ստել. Ատելը նրա պաշտպանութեան ամենազօրենդ զէնքն է և նրա մէջ նա վերին աստիճանի նրբացած է, Խորագէտ պիտի լինել կին-ստողից չխաբելու համար.

Ազդ մասին ես բաւական եմ համարում առ ալժմ: Լոմբրոզօ ասելով, իշեցի որ համերից գուցէ շատերին լաւանի չէ ազդ նշանաւոր գիտնականը. 'Սա մարդաբան է (anthropologue) և մանաւանդ ոճրագործական մարդաբան: Քսան տարի առաջ երբ նա հրատարակեց իր «Ոճրագործ մարդը» վերնագրով աշխատութիւնը, մի ամբողջ չեղափոխութիւն ձեց ոճրագործների մասին մինչև ազդ ժամանակ եղած հասկացողութեան մէջ. 'Նա ստեղծեց մի նոր շկոլա, որ թէն օրէնսդիտութեան մէջ գեռ մուտք չէ դործել, սական արդէն սկսում է հասարակական կարծիքի վրաչ ազդել.

Ոճրագործական մարդաբանութիւնը ոճրագործներին ընդունում է ոչ թէ իբր գիտակցական, անակընկալ չանցաւորների, այլ որ նրանք պատ-

կանում են մի որոշ խմբի՝ ոչ միայն իրենց մարմինի մի քանի ձևերով, այլ և ոգով, մտաւոր կարողութեամբ և որ ազդ խումբը մի չետադարձ քայլ է գէպի կենդանիների ֆիզիօլոգիական դրութիւնը. ակսինքն որ ազդպիսի մարդիկ ժառանգել են իրենց շատ հեռաւոր նախնիք-անասուն-ներից—նրանք անամուական, գաղանական չատկութիւնները և որ մարդասպանը արդիւնք է ազդպիսի մի հրէշաւոր մնացորդի:

Արդ, մարդասպանը, առհասարակ ոճրագործն ուրեմն, արդիւնք է ազատառման զէպի չետադարձ անասութիւնը. նրանց ուղեղը օրգանիզմը կանգ է առել զարգանալուց և մարդկութեան աստիճանի հասնելուց...

Արդեօք որքան շատ են ազդպիսի անասնակին տիպեր, չետադարձ հրէշներ անտեղ, ուր վերջին ժամանակներում հարիւր հազարաւոր զոհեր ընկան...

Բայց այդ մասին տեղը չէ աչստեղ երկար բացատրել. ալսքան միայն կասեմ, որ Լոմբրոզօն իր եղրակացութիւնները անում է ոճրագործ. ների կազմւածքի, ուղեղի չափի, ճակատի, աշքերի և ալլ վրայ Ուրեմն էլի մի անդամ ճշտում է այն առածը թէ անրեսի գոնը և ոտների քայլը չախտում են մարդու ինչ վիճելը»:

Այս առածը առահել է 1800 տարի առաջ և նա զեռ միշտ զօրութեան մէջ է մնում. Լոմբրոզօն գիտնական հիմունքի վրայ միայն զրեց բոլոր հին հեղինակների, Հոմերոսի, Արիստոտէլի, Պլինիոսի, Պլատոնի և ալլոց գիտողութիւնները այդ մասին, միտակեցի առակ առաւ և հաստատեց ոճրագործական մարդաբանութեան գիտութիւնը բազմաթիւ փաստերով. Մի մարդու ձեռքի ձեռ, ճակատի զիրքը, աչքերի կողնը, ծնոտի չափը, գանգի մեծութիւնը և ալլ—սրանք բոլորն էլ համամիտ են նրա ուղեղալինին, նրա ջղալին կազմութեան: «Որպէս պատեանն, աճնպէս սուրբ ասում է մի լաւ առած ևս չիշում եմ որ ազդ միենուն հասկացողութիւնը կաց թէ մեր և թէ այլ ժողովուրդների մէջ և որ չաճախ հասարակ ժողովրդի մէջ երեան են գալիս հանճարեղ գիմագէտներ, որոնք ամենաամաշան զարտուղութիւնը ուշադրութեան առնելով մարդու վրայ, որոշում են նրա բնաւորութիւնը, չափութիւնները, և ալլ:

Ահա ազդպիսի մի հանճարեղ գիմագէտի գրածք է, որ զտել է չափոնի հնագէտ Մանտովանին և որի մասին խօսում է իտալական Emporium (Ժմակիս 1896) ամսագիրը, տալով գրքի մէջ եղած աճնպէսի պատկերներից, որոնց կոչմաքերը իրը նմուշ է զծել հեղինակը:

Գրողը կոչւում է Ֆու չիփուս Մամուէլ: Ահա նրա գրքի—այդ հին լատիներէն գրւած գրքի—առաջարանից մի կտոր.

«Զսպեցէք ձեր ձանը, ով մահկանացուներ, և պահպանեցէք նրան կրկնակի պատնէշներով, ատամներով և շրթունքներով—ինչ հոգ. ճակատի գաղտնի ճանապարհով ձեր հողին կը մերկանալ առանց գիմակի, առանց կեղծութեան:

«Ճակատերը կարող են գէմքը ալվակերպել, բայց ճակատը՝ երբէք»:

Եւ առա նա սկսում է նախ ճակատի մասին: Մէջ եմ բերում կտորներ, իւրաքանչիւր ընթերցող թող փորձէ ստուգել, թէ որքան ճիշտ է հանձարեղ մարդաբանի ասածը, որոնցից մեծ մասը ալժմ թէ լոմբրոզօն և թէ միւս մարդաբանները հալզարաւոր փաստերով հաստատում են: Ճակատ: Փոքրիկ ճակատից միայն փոքրիկ բաներ կարելի է սպասել, փոքրիկ և կանացին ջամախ բաղար ժամում է հէնց աղջ փոքր ճակատ ունեցողներին և հազիւ է որ նրանք իրենց արժանաւորութեամբ են ձեռք բերում իրենց փառքը:—Փոքրիկ ճակատ ունեցողները բարկացկուտ են, ցանկատէր վրէժինդրութեան, հետաքրքրուղ և բոլորովին անհանդիստ, շատ լաճախ էլ լու ու ախորժելի առակախօսներ են լինում: Արկար ճակատը արտաքայտում է բարի մարդկանց խստութիւն և համեստութիւն:—Ընդարձակ, լայն ճակատը (spacieux) արտաքայտում է անդիթութեան և անդուսպ բարկութեամբ լի լատկութիւն, ազդակիսի անձի քիթն էլ ու գէմքն էլ փոքր է լինում:—Նեղ ճակատը չէ արտաքայտում ոչ մի վսեմ բան: անշարժութեան, թուլամորթութեան նշան է:

Իրը միջանկեալ ասեմ որ վերջերս անթրոպոլոգ Ֆէրրին չափելով ճակատներ, զտաւ որ բնդհանրապէս մարդասպաններն ու աւաղակները ունենում են ամենաքիչ տրամագծով ճակատներ:

«Եթէ, չարունակում է զիմագէտը՝ խոչորութիւնը, սուարութիւնը (rotondité) չափազանց է, զա նշան է չափաղանց բարկացկուտութեան, անհանդառութեան, նոյն իսկ կատաղութեան:»:—Քառակուսի ճակատը առիւծալին տեսակին է պատկանում: նշան է մեծ առաքինութիւնների, աղնիւ ողու և լարատու ազեւութեան:—Սաստիկ դոգաւոր, ուռուցիկ (convenex) ճակատը նշան է լիմարտութեան, անհեռատեսութեան և նման է իշալին ճակատի:—Ձինջ, մաքուր ճակատը նշան է մաքուր ոգւզ:—Հեղ ճակատը (placide) նշան է մեծ քնաւորութեան և երկնալին չատկութիւնների: Արազող ճակատը լավանում է մի չանդուգն, կատաղի, սարսափելի քնաւորութիւն, որ նման է մեծ չների կամ ցուերի քնաւորութեան»:

Ազմմ ճակատի խորշունների մասին: «Դժւար և տաժանելի հողսերով զբաղւած ճակատի կ' ճիռները համուռ են մինչև քթի արմատը: Եթէ ճակատը կնճռուում է դէպի բարձր և եթէ կաշին անդադար դէպի վեր է կնճռուում՝ զա խենդութեան լավանի նշան է: (Մարդը կը խենթանաչ),

Դրանից չետու նա զուշակութիւններ է անում չօնքնի, բիրերի վրաց արտևանունքների համեմատ և աչքերի զոնների: «Մանուկները՝ ասում է նա—ունին բաց գոնուզ աչքեր, բայց քանի մնածանում են, ստանում են որոշ գոններ, որոնք երբէք չեն փոփոխւում: Սև աչքերը արտաքայտում են պարկեցտութիւն և արևեստականութիւն (?). Ջրի գոյն աչքերը նշան են զւարթութեան և պարզութեան. չեկ գոյնովը արտաքայտում են քաջութիւն և ուժգնութիւն»:

Մի քանի խօսք էլ աչքերի ձևերի համար և բաւական է: «Լաւ ու դեղ ունեցողի աչքերը անշարժ չն մնում, բայց և անդադար չեն շարժում, ըստհակառակն չափը պահում են: Անհանգիստ, խոռոշ, խոնաւ աչքերը արտավախում են տրամադրութիւն խաղի և զարժութիւնների: Անկալուն, բոչարձակ և մի տեսակ թափանցիկ աչքերը սպառնում են անգթութիւն, աւազակութիւն և անսրտութիւն: Լարուած աչքերը, երբ երկար բաց են մնում—չափնում է մի խորհրդածութիւն, որ առաջանում է հիացումից կամ վատ արարքի մասին մտածելուց: Դէպի բարձր ուղղւած աչքերը չաճախ արտավախում են արթեցողութիւն և ջղածգութիւն (ըրկեցում)»:

Սրանք բոլորը դրէթէ ստուգւած, ապացուցւած դիտողութիւններ են:

\*  
\* \*

Այս բոլորից կետու արժէր կարդալ Վիկտոր Հիւզօփ անտիխ բանասեղծութիւններից մի սքանչնի կտոր, որ տալիս է մեզ ֆրանսական «La Nouvelle revue» ամսագիրը: Ով ծանօթ է փոքր ի շատէ ալու մեծ քերթողի բանաստեղծութիւնների հետ, անշուշտ կատարեալ հիացումով է միշտ կարդում նրան, սքանչանալով նրա մտքի անսահման թուիչքների, նրա խօսքի առատութեան ու պերճախօսութեան, նրա բառերի հնչունութեան և առատութեան և մանաւանդ նրա ոտանաւորների ոչ միայն գեղարւեստական կատարելութեան, ալլ և հոգեբանական ամենանուրբ դիտողութիւնների վրայ: Աստւածակին, երկնալին են նրա բոլոր տողերը, նրա չարագանութիւնը, նրա անհուն ոլացումը դէպի վեր, դէպի բարձր... բայց պէտք է բնագիրը կարդալ: Փրանսերէն լիզով: Թարգմանութեան մէջ նա կատարելապէս ոչնչանում է, կորցնում է իր գեղեցկութիւնը: Ես կը տամ արձակ կերպով թարգմանւած ալդ կտորը, որի վերնագիրն է «Զգուշացէք թալերից» (Redoutez les faibles): Աչա նա, բառացի կերպով թարգմանած:

«...Երբ մի ժողովրդի սրտի մէջ նա տիրապետել է ամէն բան,—Մի չնչին բան բաւական է չանկարծ պալթեցնելու այն ճակատագրական և երկնալին լեզափոխութիւնները—Որո՞ք լուսեր են սփոռում և որո՞ք աւերակներ են կազմում:

«Աչդպինի օրերում, ինչպէս որ մեղ էլ վիճակւեց,—Ամենաչնչին պատճառը ամենավատ արգիւնքներ ունի:—Այս դարում, ուր չարիքը, ինչպէս նաև բարիքը ազատ է, —Ուր հաւասարութիւնը ական է փորում և փըլեցնում հաւասարակշռութիւնը,—Ամէն բան խնդրի տակ է: Ինչ ենք տեսնում լաճախ? —Դիպւածի մեծ հարւածներ և քամու մեծ հարւածներ:—Հակինք ուրեմն: Մենք ապրում ենք անպիսի ժամանակում, ուր ոչ մի մարդ փոքր չէ, —Ուր ամէն ոք առասարակ կասկածելի է:—Փայտը

կրակն է մնուցանում և ատելութիւնը մնուցանում է,—մարդկապին բոլոր վաս բնազգումները—Վախիսցիր հոգուց (esprit), վախսեցիր սրտից, ուր, շուքի մէջ առատանում է և կուտակւում՝ Ատելութիւնը՝ որ ամենափոքր կաչից բոցավառում է,—Երբեմն, մի մուրացիկ, որ ձեզ քայլ առ քայլ հետեւմ է,—Մի երազող՝ ցնցուիներով, որին դուք չէք տեսնում,—իր անծանօթ և զոռող հոգու խորքում,—Նա ունի մի ամքողջ անտառ բարկութեան և ատելութեան,—Որ միան մի կաչաքարի շիման է սպասում, որ մի բոպէի մէջ, —Լցնի հորիզոնը լաճնարձակ գրաւումով!...

Այս շքեղ բանաստեղծութիւնը գրւած է 1871 թւականին:

\*  
\* \*

Ես մտազիր էի խօսել նաև ուրիշ շատ բաների մասին, օրինակ հէնց մի լատարարութեան, որը հրաւէր է կարդում զերացնել զէնքերը, իսկ վէճերը վճռել միջազգացին ընկերական—հաշտարար ատեանով (arbitrage), իսկ դրանից լիտու նա առաջարկում է Ալզաս-Լորէնի հարաց վերջացնել իրենց բնակիչներին հարցնելով թէ որին են ուզում պատկանել, գերմանացոց թէ Փրանսիացոց, Յալտարարութեան հեղինակը ալդ եղակացութիւնը անելու համար առաջարկում է հրաւիրել Ալզաս-Լորէնի բնակիչներին՝ քւէարկելու:

Ի՞նչ լաւ բան կը լինէր, եթէ ալսուհետեւ բոլոր փոքրիկ ազգութիւնները ալդ կերպով վճռէին իրենց ստրկական շղթաները բանող տէրերի հարցը:

Ես կ'ուզէի նաև խօսել Լետուրնոի մի հետաքրքիր դասախոսութեան մասին՝ կրթութեան ասլագալի վիրաբերեալ, իտալացի մի կին բանաստեղծուհու—Աղդա Նեգրիի լուղի, ժողովրդի թշւառութիւնները անքան զգացմոնքով և սրտաշարժութեամբ նկարագրող գրւածքների մասին... բայց թողնում եմ նկող անդամւաց համար, այս անդամ էլ երկարեց քրոնիկը և մեղաւորը կանակք են... նրանց հարցը:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-ի ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ: Զնայած որ «Մուրճ»-ի բաժանորդաց գրութիւնը ներկայ 1896 թ. գերազանցում է ըոլոր նախկին եօթ տարիներից, բայց մի հանդամանք ստիպում է մեզ փոխառութեան դիմել: Այդ հանդամանքը նախկին տարիների գեֆիցիսներից գոյացած պարտքերն են, որոնք ամենամեծ մասամբ արգեն ծածկւած են, բայց որոնց համեմատապէս փոքրիկ մասը, սակայն, դեռ ևս ծանրացած է խմբագրութեան վրայ: Կանոնաւորել այդ մնացած պարտքի հատուցումը—ահա այն հոգու, որ մեզ հարկադրում է փոխառութեան դիմել: Այդ փոխառութիւնը միակ կարող է մեզ հնարաւորութիւն տալ՝ ժամանակը լրացող վճարումների համար չծանրանալ ամսագրի ներկայ տարւայ բիւշէի վրայ: Փոխառութեան զումարը խոշոր չլինելով՝ (2500 ռուբլի) մենք ցոյս ունինք որ «Մուրճ»-ին համակրող աւելի ունիոր անձինք չեն զլանալ փոխառութեանը մասնակցել, առնւազն հարիւրական (100) ռուբլիով իւրաքանչիւրը՝ երկու տարւայ ընթացքում կրկին յետ ստանալու պայմանով: Մասնակցել ցանկացողները թող բարեհաճեն դիմել խմբագրութեանը, որը կը տայ ամեն մի փոխառութին պարտամուրհակ երկու տարի ժամանակամիջոցով, խմբագրի-հրատարակչի ստորագրութեամբ (Հրատարակած «Մուրճ» № 1-ից 1896 թ.):

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ խնդրում է մեզ տպագրել հետեւալ բացատրութիւնը «Մուրճ» № 6-ի լուրերում տպւած էք որ արտասահման եմ զնայու Ազգ մասին լուրը խմբագրութեանդ ես էի հաղորդել. ալժմ էլ հազորդում եմ որ մի անակնկալ հանդամանքի չնորիւ արտասահման զնալը անորոշ ժամանակով լետաձում եմ: Առաջմ կը լինեմ Կովկասում:

Նե. ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՂԵԽՈՐՈՒԹԻՒՆՆԻ ԵՒՐՈՊՈՒ, Կալսոր Նիկոլաւ Ա  
և Կալսերուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնա օգոստոսի 13-ին Պետեր-  
հոփից ուղեւուեցին Վիեննա, ուղեկցում էին՝ պալծառափ, իշխա-  
նուհի Գոլիցինա, Ֆրէլինա Վասիլյիկովա, Կալսերակ, պալատի  
մինիստր Կոմս Վորոնցով-Դաշկով, արտաքին գործերի մինիստր իշխ.  
Լոբանով Ռոստովկի, գեներալ աղյուսանտներ Ռիխտեր և Գէուէն,  
հոֆմարշալ գեներալ կոմս Ռենկենդորֆ, հոֆմէջստէր կոմս Գենդ-  
րիկով, Փլլոգէլ աղյուսանա իշխան Գոլգորովկի, իշխ. Օբոլէնսկի,  
Նորին Մեծութեան բժիշկ Հերշ, սենեկապկատ Կոպըտկին, Կալսերակ.  
պալատի քարտուղար Դիւբրէօ-Լշապար և կամէր-իւնկէր Մամոնտով:

Կալսերական զնացքը հասաւ Վիեննա Օգոստոսի 15-ին ժամ  
10<sup>1</sup>/<sub>2</sub>, Երեք կիլոմետր տարածութեան վրայ ճանապարհի երկու  
կողմով երեք-երեք շարք զօրք էր բանել, Կալսերակում դիմաւորեց  
Ն. ՄՄ. ին Կալսոր Ֆրանց-Յովսէփ, Ամբողջ ճանապարհին Կալս-  
րանից մինչև Հոֆբուրգ պալատը ժողովուրդը ողերւած դիմաւորեց.  
Հոֆբուրգ պալատում Կալսորը ընդունեց Ֆրանց-Ֆերդինանդըն, կոմս  
Գոլզուխովկուն և միւս մինիստրներին, Ապա Ն. ՄՄ.-ը զնացին  
ուսւաց գեսապանատուն, ուր նախաձաշ էր պատրաստաւած, որից լե-  
տույ Նորքա ալցելութիւններ արին, Ժամ 5-ին Հոֆբուրգում հանդի-  
սաւոր ճաշ արւեց, երեկուան հանդիսաւոր օպերային ներկայացում  
եղաւ և առա ընթրիք Հոֆբուրգում: Օգոստոսի 16-ին տեղի ունե-  
ցաւ որս Լայենցում: Աւատրիական Կալսորը և առա կոմս Գոլզուխո-  
վկին ալցելեցին իշխ Լոբանով-Ռոստովկուն, Կալսորը մնաց նորա-  
մօտ 20 րոպէ, Գոլզուխովկին՝ երկար ժամանակ: Ուսւաց Կալսորը  
շնորհեց աւստրիական արտաք. զործ. մինիստր Գոլզուխովկուն  
Ալէքսանդր Նեւսկու շքանշանի աղամանդեալ նշանները, իսկ աւստ-  
րիական կալսորը շնորհեց իշխ. Լոբանով-Ռոստովկուն թանկազին  
վազա, քանի որ իշխանը արդէն ունէր ամենաբարձր շքանշան  
Ս. Ստեփանոսի 1 աստիճանը:

Օգոստոսի 17, զօրահանդէսից լետոյ Ն. ՄՄ. ըր ուղեւորեցին  
Վիեն, ուր հասան օգոստ. 19-ին առաւօտակ 10 ժամին, (Ճանա-  
պարհին, Վիենի մօտ, կալսերական զնացքի վագոնում, 19-ին, վախ-  
ճանեց ուսւաց արտաքին գործերի մինիստր իշխ. Լոբանով-Ռոս-  
տովկին, սրտի պալթիւնից):

Վիենում 20-ին կատարւեց մեծ զօրահանդէս, առա 21 ին  
Պոտիպովսկու մենաստանում կալացաւ մալր եկեղեցու հիմնարկութիւնը  
լանուն Ս. Նիկողակոսի, և առա օծւեց Նիկոլայ Ա կալսորի արձանը.  
լետոյ Ն. ՄՄ.-ը ալցելեցին համալսարանը ու նորա մատենա-  
դարանը, 22 ին ալցելեցին վաճառականաց ժողովարանը և երաժ-  
տական ընկերութիւնը, ուր տրւեց կոնցերտ.

Կիեւից ՆՆ. ՄՄ.-ըը ուղևորւեցին Վարշավի վրայով գերմանիա, Բրեմլաւ քաղաքը, ուր 23.ին գերմանական կալսր Վիլհելմ II և Կալվուհին ժամանեցին Վիլհելմ I-ի արձանի բացման հանդէսին:

ՆՆ. ՄՄ.-ըը ժամանեցին Բրեմլաւ օգոստ. 25, առաւ. ժամ 9.ին. կալարանում զիմաւորնեցին գերմանական կալսերական զուգը պրինցներ Հենրիի, Ֆրիդրիխ, Լեոպոլդ, Ալբրեխտ, առև պրինցներ և պրինցուհիներ, կալսերական կանցլերը, ոտասու-սեկրետար Մանչալ գեներալներ և բարձր իշխանութիւններ. ՆՆ. ՄՄ.-ըի հետ Բրեմլաւ ժամանեց մեծ լշխանուհի Օլգա Նիկոլաևնա: Հասարա-կութիւնը ցուց տեղ սրտագին ընէռնելութիւն, Կալացաւ զօրահան-դէս, 26.ին պետական կանցլէր իշխ. Հոհենզոլէ ալցելից ուռւաց ար-տաքին գործերի մինիստրի պաշտօնակատար, ոտասու-սեկրետար Շիշ կինին և ազգ տեսից կէս ժամ: Երեկոյեան տրւեց մեծ ճաշ 325 հոգով համար: Վիլհելմ II խոնց ՆՆ. ՄՄ.-ըի կենացը, որին պատասխա-նեց Կալսր Նիկոլաէ I Փրանսիրէն, և ի միջի ալլոց ասաց. Ակարող եմ հաւատացնել թագաւոր, որ ես ովերուած եմ նոյն աւանդական զգացումներով, որպէս և Զեր Մեծութիւնը»:

Օգոստ. 26 ին առաւ. 8 ժամին ՆՆ. ՄՄ.-ըը գերմանական կալսերական զուգի հետ Բրեմլաւից ուղևորւեցին Գերլից, ուր կա-լացաւ զօրահանդէս և ճաշկերովիթ: Ապա ՆՆ. ՄՄ.-ըը ուղևորւեցին Կոպէնհագէն:

Կոպէնհագէն հասան օգոստ. 28.ին «Պոլեարնակա Զւէզլա» կա-սերական նաւով: Նաւամատուցի մօտ զիմաւորնեցին դանիական թա-գաւորը և թագուհին (կալսեր պապը և մեծ մայրը մաշրական կող-մից), թագաժառանգը, սորա ամուսինը, Ուէլսի իշխանուհին և ու-րիշ Օգոստափառ անձեր Բերնստորֆ աւերցում ՆՆ. ՄՄ.-ին զի-մաւորեց մայր կալսրուհի Մարիա Ֆէոդորովնա:

Կոպէնհագէնում ՆՆ. ՄՄ.-ըի մնալը ունեցաւ ընտանեկան բնաւորութիւն: Սեպտ. 9.ին Կալսրը և Կալվուհին նոր շինուած «Ստանդարտ» նաւով ուղևորւեցին Անգլիա, ուստից ալա ուղղեոր-ւելու են Պարիզ՝ Շերբուրգ Փրանսիական պատերազմական նաւա-հանգուտի վրայով:

### ԷջՄիԱԾՆԻՑ:

Միւռոնի օրնութեան հանդէսը, որի մասին լակտարարւած էր թէ սեպտեմբերի 29-ին է կատարւելու, լետաձգւած է, աւելի լարմար ժամանակ կատարելու համար:

Դպրոցական, Ներքին գործերի մինիստրութիւնից չալտնւած է Վեհ. Կաթողիկոսին, որ Պետերբուրգից էջմիածին պիտի ժամանէ օստար դաւանութիւնների վարչութեան տեսուչ պի Մասալով, իոնի

օգնական ունենալով զՊետերբուրգսկիչա վեղոմստի» օրաթերթի  
խմբագիր իշխան Ռևստոմսկուն, որոնք պիտի դիտեն մեր դպրոցական  
հաստատութիւններից մի քանիսը՝ Պր. Մասալով սեպտեմբերի 8-ին ար-  
դէն դուրս եկաւ Պետերբուրգից Ա. Էջմիածին գնալու

Վեհ. Կաթողիկոսը օգոստ. 26-ին Բիւրական ամարանոցից իջաւ  
Ա. Էջմիածին:

Տպարանական: Այսուհետև Մայր-Աթոռի տպարանում տպագըր-  
մելիք բոլոր գրքերը պէտք է Կովկասեան գրաքննութեան հաւանու-  
թիւնն ստացած լինեն:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ: Օգոստոսի 21-ին կառավարչապետի  
օգնական կ ոմ Տատիշչեր նորից արձակուրդով ներքին Ռուսիա ու-  
ղևորւեց. նորա տեղ կառավարչապետի պաշտօնը լանձնւեց Կովկա-  
սեան զօրարանակի հրամանատու իշխ. Ամիլախւարի ին:

ԵՐԿՐԱՇԱՐԺ. ԹԻՖԼԻՍՈՒՄ: Սեպտեմբերի 10-ին, առաւտեան, Թիֆլիսում  
եղաւ սաստիկ երկրաշարժ, որ ունեցաւ քաղաքում դեռ շտեսնւած  
հետեանքներ. Առաջին հարւածը եղաւ առաւտեան լուսածազին  
ժամ 4 և 30 րոպէին, երկու սեկունդ տեղողութեամբ. նա ալիքաւոր  
էր, հիւսիս-արևմուտքից զէպի հարաւ-արևելքու Բաւականին երկար  
ժամանակ ալիք առաջին հարւածից վետով լսում էր ստորերկրեազ  
խուլ ձանու ժամ 7 և 44 րոպէին եղաւ երկրորդ աւելի սաստիկ  
հարւած. իսկ մի րոպէ ես անց՝ ժամ 7 և 45 րոպէին եղաւ երրորդ՝  
ամենասաստիկ հարւածը՝ երկուն էլ ստորերկրեազ խուլ ձաներով  
ուղեկցած: Երկրորդ և երրորդ հարւածների միջոցին՝ գետնի տատա-  
նումը ալ ես ալիքածն չէր, ալ էլիաստիկական, զարկաւոր, երկրորդ  
հարւածից տատանումը տեսեց 10 սեկունդ, երրորդ հարւածից՝ 15  
սեկունդ: Մանաւանդ երրորդ հարւածը ազնքան ուժեղ էր, որ  
քնածներից շատերը անկողնից վայր են ընկել առարկաներ են վայր  
զլորւել, ամանեղին է փշրւել, սամովարներ են ընկել և ալն: Տնե-  
րում լսեց սաստիկ ճարճաթիւն, որ անի մէջ զցեց բնակիչներին,  
որոնք աշխատեցին պատսպարւել աւելի ապահով կարծւած տեղե-  
րում, տան գաւիթը կամ փողոցը դուրս վայել: Հաս տներու մառա-  
տադիների սւաղները վայր թափեցին, շատերի պատերը ճաքճքւե-  
ցին, աների փասաղից և կորիզորներից թափեցին ալիքասորի  
զարդեր, կարնիզներ և ալն: Աչը շատ մեծ էր. վախից երեխանե-  
րից շատերը լացում էին, կանանցից տնանք ուշաթափ եղան: Աշա-  
կերուները ալն զպրոցներից, ուր պատերը մեծ ճաքեր էին տւել՝  
արձակւեցին արդ օրը (առաջին արական և առաջին իդական դիմ-  
նազները):

Ամենից շատ վիաստած շինութիւնները հետեւալներն են. առա-

ջին արական գիմնազը (առաստաղի ճաքճքւելուց փոչի էր դուացել վերին լարկի սենեակներում, դրսի արևելեան պատը ծռւեց շատ տեղերում, ճաքեր գոչացան մի-մի վերշոկ լախութեամբ, սւազների ընկնելուց կոտրեց մեծ սեղանը և ազն). առաջին խական գիմնազը, ուր սւազները առաստաղներից շատ տեղերում վայր ընկան, աղջկերանց ինստիտուտի մեծ շինութիւնը, որ երեք տարի առաջ եղած երկրաշարժից ճաքեր էր տևել, այս անդամ համեմատապէս լաջող անցկացրեց. դատաստանական նոր մեծ շինութիւնը ճաքեր առեց. իշխ. Մուլուրանսկու անից (ուր գետեղաւած, է աֆողովարանը կամ հալոց կլուք) կտուրից վայր ընկաւ ցեմենտից շինած կէս փութանոց վազան և ընկաւ տրոտորարի վրայ շինած մուտքի մեջտը կտուրի վրայ, ծակեց վերջինիս և ինքը փշտկեց. Կառավարչապետի պալատում կտուրից վայր ընկան մի քանի ծխնելոչզներ, սենեակների առաստաղները ճեղքեր աւելն, շատ վեսաւեց պարսկական դահլիճը Քաղաքավին տան մէջ մւազը տեղաեղ թափւեց, պատերը շատ տեղ ձեղքեր ստացան. հրդեհաշէջ տան շինութիւնը ճաքեր ստացաւ Ռուրցովի վարդցում Միրզոււի տնից, ուր «Աւակագ» հիւրանոցն է դէպի շտաբի շինութեան բակը վայր ընկաւ պատի կարնիզը և պատի մի մասը քառակուսի սածէն մեծութեամբ. Վնասուեցին նաև շատ ալ աներ. Ամենից շատ վեսաւածը Յուրի աջ կողմի մասն է մանաւանդ Սոլովակի Ֆրէլինեան և Լաբորատորնի փողոցներում. իսկ Կուկիալում, Սաղում և Հաւլաբարում համեմատապէս աւելի թեթև անցաւ. Քաղաքի հին մասում վեսաւը քէչ լինելու պատճառը մասամբ վերագրելու է ան բանին, որ վերջին ութ ամսաւ ընթացքում ոստիկանութիւնը այլտեղ նաև է 200-ից աւելի տուն, որոնցից 100-ը քանզել էր տեղ.

Կան սական անձեր, որոնք երկրաշարժը թեթև կերպով են զգացել:

Ոստիկանութիւնը և քաղաքավին տեխնիկները սկսեցին խուզարկութիւններ վեսաւած տների վրայ ուշադրութիւն դարձնելու համար:

Երկրաշարժը նոյնպէս սաստիկ եղել է Գանձակում և Թիֆլիս-Բաքու երկաթուղու դժի շատ կաքարաններում, ուր վեսաւած են կաքարանների շինութիւններից ոմանք:

Թիֆլիսի Թեսի ՀԱՅ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆԸ. Թիֆլիսի թիմակալ առաջնորդը ստացել է ԱԷՀ. Կաթողիկոսից կոնդակ 6-ն տուվան № 959 թւագրած, որով էականուամ է թէ հալոց հկեղ. ծխական գպրոցների փակման պատճառով ալ ես վերանում է թեմական անսչի կարիքը.

ՈՒՍՈՒՅՉՈՂԱԿԱՆ ՌԱԾԻԿՆԵՐԻ Մարմնաւոր իշխանութեան կարգագրութեամբ  
հալոց եկեղեցական-ծխական դպրոցներից շուրջ 160 ի փակւելուց  
իւսուչ վեհ։ Կաթողիկոսը ապրիլի 18-ի № 587 կոնդակով հրամանել  
է, ո եկեղեցական գումարներից վճարել արձակւած ուսուցիչների և  
ուսուցչուհիների այն ոռոգիլը, որ պիտի համեմեր նոցա մինչ ուսում-  
նական տարւակ պարմանաժամի լրանալը, այն է մինչ օգոստոսի  
վրիջը։ Որքան բարտի է՝ այս հրամանը ի կատար է ածւել ընդ-  
հանրապէս, շատ տեղ սական դժւարութիւնների հանդիպելով։

ԿՈՎԱՅՄԱՆ ՄԱՍՈՒՆ ԱՐՔՈՒՆԻ. Վրաց կտորի շաբաթամերթը, խմբագրութեան  
խնդիրքի համաձայն, ներքին գործերի մինիստրից թուլաւութիւն է  
տուցել ընդարձակելու իւր ծրագիրը, եղածի վրաւ աւելցնելով քա-  
զաքական և հաստրակական բաժիններ։

«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ԴԱԴԱՐՈՒԽՄԸ. Հայրենիք օրաթերթը (Պոլսում), որի նոր-  
ից հրատարակելու մասին անցեալ համարում ծանուցինք մեր ըն-  
թերցուներին, թիւրքաց տպագրական տեսչութիւնից ստացաւ մի  
աղդարարադիր այս ձև զրած։ «Հայրենիք լրագիրը իր վերջին թվին  
մէջ օրէնքի հակառակ ընթացքի մը հետևած ըլլալուն, արտոնա-  
տէրը կը բանդիմանէի և կրկնութեան պարագային մէջ իրեն կ'աղ-  
դարաբւի թէ խիստ անօրինութիւն մը պիտի գործ դրւի»։

Այդ աղդարարութիւնից մի քանի օր անց՝ կառավարութեան  
հրամանով Հայրենիք թերթը առ միշտ դադարեցնեց։

ՆԵՐԻՄԱԲԵՐՈՒԹԻՒՆԵՐ ԵԼ ԿՏԱԿՆԵՐ. Կարազիս Գեմիրչեանց (Եկատերի-  
նողար) կտակել է Եկատերինողարի հալոց եկեղեցուն 10.000 ռուբ։  
ՊԱՐԱԿԱՍԱՆԻՑ. Յուլիսի 7-ին նոր Շահին, սորա ամարանոցում, ներ-  
կալացան հայ պատղամաւորներ՝ առաջնորդական փոխանորդ Այվատեան  
վարդապետ թէնքանի հայերի կողմից, Թումանեան առնատրական տան  
ներկայացուցիչ Բ. Մելիք-Արքսեան՝ Առրավատականի հայերի կողմից,  
Միքա Մկրտիչ խան Համադանի հայերի կողմից։ Թարգմանի պաշտօն  
կտարում էր կտուավարութեան կողմից նշանակւած Յովհաննէս  
խան Մասէնեան։ Ընդունելութիւնը կտարեց զեսպամական շքով,  
տուաջնորդութեամբ շահի արարողապետի։ Ներկասանալուց առաջ  
պատգամաւորները հիւրասիրւեցին թէնով։ Ունկնդրութեանը ներկաէ  
էին Մալիք-Ազամը, ուրիշ մինիստրները և այլ բարձր պաշտոնեաներ։  
Պատգամաւորութեան անունից խօսեց հայր Ազվատեան, որ թւեց այն  
բարիքները որ վակելում են հայերը Պարսկաստանում։ Շահը լայտնեց իր  
բարիացակամութիւնը հայերին և ցաւակցութիւնը հայկական կոտո-  
րածների առիթով Տաճկաստանում։ Շահը պ. Մելիք-Արքսեանի  
հետ խօսեց առեսրի մասին, իսկ սաղրազամը (առաջին մինիստրը)  
գովեց թումանեաններին, իբրև Պարսկաստանի վաճառականութեան  
մեծ զարկ տւողների։ Ամբողջ ունկնդրութիւնը տեւեց 20 րոպէ։

Զենք կարող չնկատել որ Պարսկաստանի հայ գիւղական և արհեստաւոր դասակարգերը չեն ներկազացւած այդ պատգամաւորութեան մէջ, աճնպէս որ հայերը իրենք իրականութեան և իրենց շահերի հակառակ, ամեն տեղ հաստատում են այս վնասակար միտքը թէ հայերը լոկ կրօնական և առևտրական ազգ են:

Նոյն օրը կէսօրից լետոյ Սադր-աղամին ներկազացաւ մի պատգամաւորութիւն Թեհրանի քրիստոնեաների (Եւրոպացոց և հակերի) կողմից, պատգամաւորութիւնը մատուցեց նրան մի ուղերձ՝ որով չնորհակալութիւն է լատոնում նրա հմուտ կառավարութեան համար, որի չնորհիւ քրիստոնեաները խաղաղ կեանք են վարում:

—Միրզա-Ռիզա Քերմանի կախաղանով մահու պատիճ ստացաւ լուլսի 31-ին, Թեհրանում:

—Շահ Մովզաֆֆար-Եղղին մտադիր է զօրքի մէջ զինւոր վերցնել ո՞միան պարսկահպատակ մահմեդականներից ալ և պարսկահպատակ քրիստոնեաններից:

**ՄԱՍՆԱԽՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ:** Հայոց ծխական-եկեղեցական դպրոցների մեծագոյն մասի փակման հետևանքներից մէկը այն եղաւ, որ անգործ մնացած ուսուցիչներից ոմանք մտածեցին մասնաւոր զպրոցներ բանալ գաւառական կենտրոններում, թողլտութեամբ կովկասեան դպրոցական շրջանի հոգաբարձուի, որի իշխանութեան ներքոյ են գտնւում, բացի արքունական դպրոցներից՝ նաև մասնաւոր դպրոցները։ Ազգականի մասնաւոր դպրոցներ, որ հիմնւած են փակւած հայոց դպրոցների ուսուցիչների ձեռքովի մեր ստացած տեղեկութիւնների համաձայն բացւած են Ալեքսանդրապոլում, Նուխում, Գանձակում։

**ԲԱՆԽՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԾ ՊԵՏԵԲԲՈՒԽԻՇՈՒՄ:** Այդ մասին մենք արդէն Մուրճի անցեալ համարում լիշտակալութիւն արինք, Պորանից լետոյ «Կառավարչական համբաւարեր» ուռւաց պաշտոնական թերթը ընդարձակ տեղեկագիր տպեց։ Այդ տեղեկագրի համաձայն գործադուլը սկսեց մայիսի 24-ին, աճեց մինչ լունիսի 5-ը ըմբռնելով 19 գործարաններ և աստիճանաբար նւազելով վերջացաւ լունիսի 19-ին։ Պործադուլին մասնակցողների ընդհանուր թիւը հասաւ 14.712 հոգու։ (Պետերքուրգում բոլոր գործարանների թիւն է 484, որոնց մէջ բանում են 79.157 բանաւոր, չհաշելով երկաթուղաքին արհեստանոցները և արքունի գործարանները)։ Պործադուլի սկզբնական պատրակը եղաւ աճն տարածանութիւնը, որ տեղի ունեցաւ գործարանների և բանաւորների մէջ սրբազն թագադրութեան տնի տեղութեան առթիւ։ Գործարանական տեսչութեան ցուցմունքների համաձայն՝ գործարանատէրերը դադարեցրին աշխատանքները մալիսի 14-ին, տալով բանաւորներին այն օրւակ վարձը, ալ և թու

տալով նոցա՝ գործարան չգալ մալիսի 15-ին և 16-ին, բայց առանց նոցա ալդ օրերի գարձը տալու։ Բանւորները սական պնդում էին որ ալդ երկու ազատ օրերի համար ևս պիտի վարձ ստանան։ Չորս գործարաններում ալդ օրերին աշխատանք չեղաւ։ իսկ մալիսի 17-ից սկսած մի ամբողջ շաբաթ բոլոր գործարանները բանում էին։ Մալիսի 23-ին «Ռուսական բամբակագործարանի» 102 աշակերտներ (երեխաններ կոչւած) պահանջեցին թագաղրական 3 օրերի վարձը և բաւարարութիւն ստացան։ Բացի ալդ՝ նոքա պահանջեցին վարձ նաև այն աւելորդ ժամանակի համար, որ նոքա բանում են պականից աւելի վաղ՝ օրեկան մօտաւորապէս 20 րոպէ՝ մեքենանները գործի զնելու համար։ Գործարանական վարչութիւնը խոստովանեց ալդ պահանջի արդարացի լինելը։ այնուամենաճնիւ նոքա մալիսի 24-ին բանեցին միայն մինչև ճաշը և նորից եկան միայն մալիսի 27-ին։ և ալդ օրը բանելով կէսօր՝ նորից գործը թողին, վերջնականապէս դաշտարեցնելով իրենց պարապմունքը։

Դորանից սկսեց ընդհանուր գործադրութ, Դեռևս մի շաբաթ առաջ Նկատերին-հոփեան զործարանի մանողները պահանջում էին որ բանւորական օրը կրծատւի՝ փոխանակ բանելու առաւօտեան 6-ից մինչև երեկոյեան 8 ժամը՝ մի ժամւակ ընդհատումով ճաշելու համար։ Բաւարարութիւն չստանալով՝ մալիսի 27-ին դադարեցրին աշխատանքը, նոցա օրինակին հետեւեցին ուրիշ գործարանների բանւորները, որոնք պահանջում էին որ բանւոր օրը լինի 12 ժամ, առաւոտեան 7-ից մինչև երեկոյեան 7-ը՝ 1<sup>1</sup>/<sub>2</sub>, ժամւակ ընդհատմամբ ճաշւայ հանգստեան համար, որ ճշտութեամբ որոշվի պարապմունքների սկիզբը, և որ մեքենանների մաքրելը տեղի չունենայ ճաշւայ հանգստեան ժամանակ։ բացի ալդ՝ նոքա դանդատւեցին վարպետների կոպիտ վարմունքների և քարգահների կաշռակերութեան դէմ։

Բանւորների այս գործադուլին ոմանք կամենցան քաղաքական ընաւորութիւն տալի Հրապարակ եկան 25 տեսակ արգելած թերթիկներ՝ «Դաշնակցութիւն բանւոր գասակարգի աղաստութեան», «Բանւորական դաշնակցութիւն», «Մոսկվայի բանւորական դաշնակցութիւն» և ալլ անուններով, ամենաառաջինը կրում է մալիս 30 ամսաթիւը, ամենաավետինը լունիս 27։ Զբաւականանալով բանւորներով թերթիկների շարադրողները դիմում են հասարակութեանը, հրաւէր կարդալով նոցա միամսալ «ոռուս սոցիալ-զեմոկրատներին»։ Սական իւր ժամանակին արւած լորդորները և մալրաքաղաքի ոստիկանութեան ու գործարանական տեսչութեան կողմից ձեռք առնւած նպատակալարմար միջոցները՝ կարծ ժամանակում վերացրին։

ինչպէս աշխատանքի ընդհատումը, աճնայէս և զործարանատէրերի և բանւորների մէջ տեղի ունեցած թիւրիմացութիւնների մերձաւոր պատճառները. Աշխատանքը վերսկսել չցանկացողներին չափարարւեց, որ նոքա վերջացնեն իրենց հաշիւը, ստանան անցագիրը և վերադառնան իրենց մշտական ընակատեղին Յակտարաբաւեց որ գործադույի հիմք ծառալած պահանջները կը մնան առանց քննութեան, մինչև որ բանւորները չեն վերսկսիլ պարապմոնքները:

Բանւորները ենթարկւեցին կառավարութիւն ցուցմունքներին, Արդէն վերջացած գործադույի հետ կապւած բոլոր հանգամանքների քննութիւնը չանձնաւած է գործարանական տեսչութիւնն և Պետերբուրգի քաղաքապետութեան պաշտօնեաններին,

ՆՈՐ ՆԱԽԹԱՏԵՎԱԵԲԻ. Պետրովսկ քաղաքից 12 վերաս հեռու դժնւած է նաւթ: Ֆիրմա Նախորեկո և Ընկ., որ ազդ նա թատելի գտնողն է, շուտով պիտի սկսի հոր փորել: Նաւթ գտնւած է նաև Սղնախոսմ: ՇՈՒԾՆԻ: Պր. Թամիրեանց իւր հաշով 20 վերաս հեռաւորութիւնից ջրանցք է անցկացնում Շուշի քաղաքը. Էրանցքը, որ օրական 110.000 վեդրո ջուր պիտի տակ, արդէն կառուցւած է 19 վերաս:

ԱԽԱԼՔԱՍԱՐԻ ԱԽԱԼՔԱՍԱՐԻ օչ ոստ. 4.ին բնտրւեց ալ. Արշակ Գրիգորեանց, ՈՒԶՈՒՆ-ԱԴԱ. նաւահանգիստը կասպից ծովի արեկեան ափում վերացւեց, նաւահանգիստ արդէն քանդւում է. Ուղղուն-Ադախի տեղ իրը

նաւահանգիստ Անդրկասպեան երկրի համար լինելու է Կրասնովոդսկի: ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵԲԿՐԻ ԱԶԳԱԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ, 1894 թ. կազմում էին 352.191 հոգի, որից բնիկներ 325.253, եկտորներ՝ 26.938 հոգի: Բնիկների մէջ թուրքմէններ էին 255.861 հոգի, կիրգիզներ՝ 59.392: Ըստ ազգութիւնների եկտորներից կազին ոռու՝ 10.229, պարտիկներ՝ 6.257, հայեր՝ 3.789, թուրքիր (թաթար) 3.437, ալլ ազգեր՝ 3.206:

ԱՐՁԱԳԱՆՔ ԵԽ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ, Արծագանք լրագրերաբար բանում է մի շաւ, որ կարող ենք «լեզվի ցաւ» անւանել: Ազդ թերթը շատ չաճախ տալիս է անդրագիտութեան կատարեալ նմուշներ, և ծածկելու համար ազդ ամենը՝ տարին 3—4 անգամ խոչշոր տառերով երկար լողւածներ է դրում հայերէն լեզվի մաքրութեան կամ աղճատման մասին: Ազդ լողւածները Արծագանքում գրում են միմիան լուսին նպատակներով, ուելամ անելու համար սեփական փուած ապրանքին և նսնմացնելու ուրիշներին: Ալդակի, օրինակ, Ղազարս Աղայեանց դուրս է բերւած իրը հայերէն լեզուն աղճատող, Բաֆֆին նողնպէս. իսկ Առողջ-ում իրը թէ ապւած է մօտաւորապէս ակսպիս նախադասութիւն: «իմ տունը, որ ինձ է պատկանում, նորոգեցի» (Նկատեցէք, որ մօտաւորապէս խօսքը Արծագանքին է. օրինակ են բերում—մօտաւորապէս): Բայց մնաք որ օրինակներ բերելու լինենք

Արձագանքի դրողների լեզվից, չենք բաւականանալ մօտաւոր ձշութեամբ, ալ կը բերենք օրինակները իրենց կատարեալ հարազատութեամբ: Նոյն ադր չողւածում, ուր անկոչ տեղից ջատագովութիւն է անում հակերէն լեզվի մաքրութեան համար, Արձագանքը դրում է հետեւալ անհասկանալի ու անզբագէտ նախադասութիւնը. «Այդ համեմատութիւնից կը տեսնենք, թէ Թարդմանութիւնը թւարանական հաշով չի կատարում, որքան բնագրի բառ՝ այնքան հայերէն բառերով բան չի դուրս դալիս. մենք սեռ չունինք, գեր դերանունների դործածութիւնը ալլ է...» և ալլն: (Տես Արձագանք, 21 օգոստոսի. «Հարկ է փոքր ինչ հակերէն սովորելը չօղւածը, թերթի երկրորդ երես, 5-րդ սիւնեակ, տող 4—9),

Այժմ արիք ու մի մտէք Արձագանքի խմբագրութեան դրութեան մէջ, երբ սա իւր չողւածը վերջացնում է ալս խօսքերով. «Արդեօք հասկացւեցաւ մեր կարիքը. մենք հայ ենք, բայց հակերէն չդիտենք»,

Այդ հարցին մենք պատասխանում ենք—ալո, հասկացւեցաւ ձեր կարիքը, և նոր չէ որ ձեր ցաւը հասկացել ենք, թէն մինչ այժմ աւելորդ ենք համարել խորամանկութիւններով հիւսւած ձեր ալլ կարդի դրաւծներին որ և է պատասխան տալ:

ԵԱՆԹԻ Վ. ԵՊԵՐԸ: Շանթի «Դուրսկցիները» վէալի Մուրճից արտատպած հրատարակութիւնից մնում է ընդամէնը 125 օրինակ:

Շանթի «Երազ Օրերը» արդէն տպագրուում է առանձին դրքով և հաւանականօրէն լուս կը տեսնի սեպտեմբերի վերջը,

ԵՊԱՆԱԿԻԾ ԹԻՖԼԻՍՈՒԹԻՄ: Ամառաւակ շոքերին, որ անեցին մինչ օդուտոսի 25-ը՝ Ռէօմիւրի ջերմաչափը ցուց էր տալիս Մուրճի խմբագրատանը առաւտոները 21—22 աստիճան, հասնելով մինչև 25 աստիճան աւելի շոք ժամերին: Օգոստոսի 25-ից եղանակը սկսեց նստել և սեպտեմբերի սկզբին Ռէօմիւրի ջերմաչափը կէսօրին ցուց էր տալիս արդէն 18 աստիճան (Ցելսիուսով 22—23 աստիճան):

† Խճի. ԼՈՒԲՆՈՎ-ՌՈՍՈՎԱԿԻ, ոռւսաց արտաքին գործերի մինիստր, վախճանեց 19 օգոստոսի (տես Ն. Ն. Մեծութիւնների ուղևորութիւնը). Հանդուցեալը վարեց ոռւսաց արտաքին քաղաքականութիւնը ընդամէնը երկու տարի:

### ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԲԵՐ

- 1) ԿՌԻԼՈՎ, թարգմանութեամբ Գաբրիէլ արքեալ. Այլաղեանի. — Առակք Քռիլովի, վիճն գիրս. — Երկրորդ տպագրութիւն. Վաղարշապատ. տպ. Մայր Աթոռոց Ա. Էջմիածնի. գինն է 80 կոտէկ.
- 2) ԿՈՍՏԱՆԵՍԱՆՑ, Կ. — Ս. Լուսաւորչի աջը. (Արտատպած «Արարատ» ամսագրից),

- 3) Ս. Ա. Է.—Միսիոնար Հալր Դամիան Վէլստէրի կեանքը: Թարգմ. անգլիերէն, բնագրի ռուսերէն թարգմանութիւնից, Հրատ. Գ. քհ. Մկրտումնանց, Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանց և Ընկ. 1896թ. գինն է 10 կոպէկ:
- 4) ԽԱԼԱԹԵԱՆՑ, Գր.—Ա. և Բ. Մնացորդաց գրքերի նորագիւտ հայ թարգմանութիւնը, (Արտասպած «Արարատ» ամսագրից), Վաղարշապատ. տպ. Մալր Աթոռու Ս. Էջմիածնի:
- 5) ՇՈԹԱ. ՌՈՒՄԹԱԼԻՔԻ' Ընձենաւորը (արէմա), հեղինակի կենսագրութեամբ և կարենոր տեղեկութիւններով և երկու պատկերով. համառութեց Յ. Միրիմանեանց, (Արտասպած «Մուրճ» ամսագրից), Թիֆլիս, տպ. Մ. Խոտինեանցի, 1896թ. գինն է 15 կոպէկ:
- 6) ԺԻՒՌՈՒՎԱԿԻ.—Անձրև և ձիւն: Ռուսերէնից թարգմ. Ռուբէն Մելիք Մուսեանց, հրատ. Պետերբ. հաչ ուսանողների:
- 7) СОВЕТЪ СЪЕЗДА НЕФТЕПРОМЫШЛЕННИКОВЪ. Օօզоръ Бакинской нефтяной промышленности за 1895 г. и свѣдѣія о нефтяной промышленности въ Грозномъ, Кубанской области, Америкѣ и Австро-Венгрии. Съ приложеніемъ въти графическихъ таблицъ и карты. Баку. Типogr. Аорпъ 1896 г., цѣна 3 руб.
- 8) TIGRANOFF. Nicolas.— Orientalweisen. № 1. Drei armenische Rundtänze: Findjan. Faten-ki-tam. Thars-par. (Երեք հայկական կլոր պարեր՝ Ֆինչան, Ֆաթէմ քի տամ, Թարս պար). № 2. Drei armäniische Tänze: Eriwaner trengi, Usun-dara, Doi-doï.—№ 3. Tun-ari, Ver-ver.—Գնելն են՝ իւրաքանչիւր տեսրը 50 կոպէկ:
- Նոյն.—Baiathi-Schiraz. գինն է 60 կոպէկ:
- 9) ԲԼՈԿ, Մ.—Մհծ մարդկանց մայրերը. Ալէքսանդրապոլ. տպ. Սանտիան, 1896թ. գինն է 50 կոպէկ:
- 10) ՇԻՐՎԱՆԶԱԴԵ.—Կրակ (վէպ): Բաքու, տպ. Արօր. գինն է 30 կոպէկ:
- 11) ԲԱԲՈՒՐԵԱՆՑ Գէորգի հրատարակութիւն.—Փոքրիկ զրոցներ. Թիֆ տպ. Վրաց. Հր. Ընկ., գինն է 10 կոպէկ:
- 12) ԱՐԱԲԵԼԵԱՆ, Հ.—Զէլթուն. տեղագրական, աղդագրական և վարչական տեսութիւն, Թիֆլ., տպ. Մարտիրոսեանցի, 1896թ. գինն է 20 կոպէկ:

## ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿԻ:

Կ. Պոլիս. Խաչ-Պապեան: Ձեր նամակը հասաւ մեղ օդոստոսի վերջը, երբ համարը պատրաստ էր. թղթակցութիւնը զետեղելու համար ուշացրինք համարի լուս ընծակելը. բայց Ձեր նամակի մեծագուն մասը մեզնից անկախ պատճառներով չտպաղրւեց: Զավադրած մասը փոխարինեցինք այլ աղբիւրներից բայց մեծ մասամբ Ձեր թղթակցութիւնից քաղած տեղեկութիւններուն:

րգի.  
ը՞.  
6 թ.

հայ  
լուր

լուս.  
ալմա.  
ծիփ.

լիք.

• Ба-  
неб-  
Аме-  
ниыхъ  
—б.  
ische  
պահ  
Drei  
№ 3.

անդ

լուս  
ծիփ

լուս  
ծիփ

անդ  
լուս  
ծիփ  
անգա  
անմի

# ՄԱՐԴԻԳՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՌԱՐԱԿՈԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻ տարեկան **10** ռուբլի, կամ **30** ֆրանկ:  
Դիմել՝ Թիֆլիս, Վելեամինեան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներից՝  
Տիֆլիս. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.  
Արատահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue  
„MOURTCH“. և կամ հետեւեալ անձերին.

ԲԱՔՈՒ—պ.պ. Ֆրիդրիշ Մարգանեանին և Սեդրակ Թառայեանին:  
ԲԱԹՈՒՄ—պ. Արգիլս Մակարեան, Ծովիանեանի բանկ. գրասենեափ  
ԵՐԵՒԱՆ—պ. Գէորգ Ղարաջեանցին. Առեար. բանկի ճիւզը:  
ԿԱՐՍ—պ. Աբէլ Ապրեսեանին, գործակալ «Նադեժդա» ընկ.  
ԱԳՈՒԿԻՍ—պ. պ. Ստեփան Արամիանեանց և Աւետիս Դաւթեանց:  
ՆՈՒԹԻ—պ.պ. Աբրահամ Բունիաթեանց և Խաչատրուր Խոջամիրեանց:  
ՂՋԱՐ—պ. Հմայեակ Մաժինեան:  
ԵԿԱՏԵՐԻՆՈՐԱՐ—պ. Արամ Հապովալեան:  
ՄՈՍԿԻԱ—պ. Ալեքսանդր Ծատուրեան, Մ. Շորշորովի գրասենեափ:  
ՊԵՏԵՐԲՈՒՐՓ—պ. Քր. Բաշինջակեանին (Гостино. дворъ № 7):